

ԷԶՄԻԱԾԻՆ



Ա
2006



ԿԲ ՏԱՐԻ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՅՈՒՆՈՒՍ
2006

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա
2006

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ**

(Սուրբ Էջմիածին, 2006 թ. Յունուարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

*«Տեսէք որպիսի՝ սէր շնորհեաց մեզ Հայր, զի
որդիք Աստուծոյ կոչեցուք մեք»:*

(Ա. Յովհ. Գ. 1)

Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Աստուածայայտնութեան սքանչելատես խորհրդի առջեւ վերստին կանգնած՝ յուսառատ ու բերկրաշատ հոգով ողջունում ենք ձեզ եւ աշխարհասփիւռ մեր բոլոր զաւակներին «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» աւետիսով եւ կրկնում առաքելի խօսքը. «Տեսէք, ինչպիսի՝ սէր շնորհեց մեզ Հայրը, որպէսզի մենք կոչուենք Աստուծոյ որդիներ»:

Աստուծոյ սիրով միաւորուել են երկինքն ու երկիրը: Աստուծոյ ողորմութեամբ երկինքն է բացուած: Աստղի պայծառ լոյսն է Բեթղեհէմից վեր, լոյսերի հետ՝ օրհներգութիւն հրեշտակների, որ լցնում են պարզ մտուրը, որտեղ իմաստուն մոզերն ու մաքրասիրտ հովիւները խոնարհում են մանկացեալ Աստուածորդուն: Խնդութիւն է, յոյսի աւետում, քանզի ծնունդ է Փրկիչն աշխարհի:

Փրկչի յայտնութեան աւետիսը քարոզում է երկու հազարամեակ՝ ուսուցանելով ի լրումն ժամանակի մարդու փրկութեան համար Աստուծոյ Միածին Որդու մարդեղանալու, աշխարհ գալու եւ մարդկանց մէջ բնակուելու մասին: Նրանով մարդկային բնութիւնը միաւորեց աստուածայինին: Ով յաւիտեաններից առաջ է, մտաւ ժամանակի մէջ, որպէսզի բացայայտի պատմութեան եւ մարդկային կեանքի իմաստը, եւ լինի նոր մարդ ու նոր աշխարհ, հաւատարիմ ու հարազատ՝ Աստուծոյ սիրող, արարող եւ օրհնող Էութեանը. «Նրանով ճանաչեցինք Աստուծոյ սէրը մեր հանդէպ», Աստուծոյ փրկարար կամքը: Ի՞նչ ունի պատասխանելու մարդը այս շնորհին, բացի հաւատարմութիւնից: Ի՞նչ ունի կառուցելու աւելին, քան իր հոգու մէջ տաճար Աստուծոյ:

Աշխարհի անցուդարձի մէջ մենք յաճախ դժուարանում ենք լսել Աստուծոյ ձայնը, դըժուարանում ենք տեսնել Տիրոջ ճշմարիտ դէմքը եւ յաճախ աւելի ապաւինում ենք մարդկային մեր ուժերին, որ միշտ տկար են առանց Աստուծոյ: Աւելի ապաւինում ենք տարբերակելու, գնահատելու մեր ունակութեանը, որ անկատար է առանց Աստուծոյ: Առանց Աստուծոյ նիւթապաշտութիւնն է իշխում սրտերին, ատելութիւնն է յաղթանակում եւ առաջնորդում մարդկանց գործողութիւնները: Այսօր էլ խաղաղութիւնը վտանգուած ենք տեսնում շատ տեղերում, արհամարհուած են մնում մարդկային իրաւունք, ազատութիւն ու արդարութիւն, մրցավազքերի ճանապարհներին մարդը հեռանում է մարդասիրութիւնից, աշխարհը՝ իր Արարչից:

Այսօր Աստուծոյ յայտնութեան, մարդկանց մէջ ներկայութեան, աշխարհի փրկութեան Սուրբ Աւետիսն է հնչում: Շնորհն ունենք ժառանգակից լինելու մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսին, Ով գալիս է խաղաղութեամբ, արդարութեամբ, ողորմութեամբ, որպէսզի չցամաքի սէրն այս աշխարհից, գալիս է աստուածային զօրութեամբ՝ անվախճան լոյս սփռելու եւ կեանք: Աստուծոյ հետ է կենդանութիւնն ու յաւերժութիւնը, բարին ու բարիքը: Նա է Տէրը եւ հայրական տնօրինութեամբ դէպի փրկութիւն է առաջնորդում տիեզերքը: Նրանն է իշխանութիւնը, որ այսօր վերստին Սուրբ Ծննդեան խորհրդով երեւում է մեզ փառքով ու զօրութեամբ: Լրացել է ժամանակը: Փրկութեան շնորհով թագադրուած է տիեզերքը, աստուածային սիրով ու սրբութեամբ նորոգուած է մարդկային կեանքը: Արդ, ամենը, ինչ խորհում ու գործում է մարդը, սիրով թող լինի, Աստուծոյ համար լինի, եւ կլինի աշխարհի խաղաղութեան ու շինութեան համար եւ կլինի մարդկանց ուրախութեան ու երջանկութեան համար՝ արժանի Տիրոջ գովասանքի խօսքին ու գնահատանքին. «Քաղցած էի, եւ Ինձ կերակուր տուեցիք, ծարաւ էի, եւ Ինձ ջուր տուեցիք խմելու, օտար էի, եւ Ինձ ձեր մէջ առաք, մերկ էի, եւ Ինձ հագցրեցիք, հիւանդ էի, եւ Ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ Ինձ այցի եկաք ... քանի որ Իմ այս փոքրիկ եղբայրների համար արեցիք, Ինձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ. 35-40):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, «Անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձաւորութեան» այսպիսի վստահութեամբ մեր հայրերն ապրել են, ստեղծել են հաւատով ու յաղթանակել հաւատով: Փրկչին ապաւինած՝ խաւարների մէջ լոյս ենք գտել, մահերից՝ վերածնունդ: Դարեր, ձիգ դարեր օտարների ասպատակութիւններից, կեղեքումներից ու ջարդերից հալածական ու աշխարհով մէկ սփռուած՝ հաւատով միասնական ենք մնացել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու թելերի ներքոյ՝ հոգու մեր հայեացքը միշտ ուղղած դէպի Արարատի շուրջ տարածուող հայրենի մեր երկիրը բիրիական: Մեր հաւատի մարմնաւորումն են այսօր Հայաստանի պետական անկախութիւնը, Արցախի ազատութիւնը եւ Սփիւքի կեանքում ազգային ու հոգեւոր նորագարթօնքը: Հաւատով ձեռքբերուածը հաւատով պիտի պահպանենք, ամրապնդենք եւ զարգացնենք՝ սիրով, միաբանութեամբ: Ճանապարհ ունենք դեռեւս անցնելու: Պատուիրանասիրութեամբ, քրիստոնէական բարոյականով ու արժէքներով ընթանանք դէպի մեր ժողովրդի միացեալ, վստահութեամբ լեցուն ու լուսաւոր գալիքը, դէպի նոր օրը մեր Հայրենիքի, որպէսզի մեր կեանքում իրողութիւն դառնայ աւետարանական ճշմարտութիւնը. «Եթէ սկիզբը սուրբ է, սուրբ է եւ զանգուածը, եւ եթէ արմատը սուրբ է, ապա և՛ ռստերը» (Հռոմ. ԺԱ. 16):

Այսօր գոհութեան մաղթանք եւ օրհներգութիւն ենք մատուցում Մարդացեալ Աստուածորդուն, որ փրկութեան աստուածային շնորհին ու յոյսին ապաւինած ազգս՝ ցեղասպանութիւնից վերածնունդ, անկախ պետականութիւնը վերականգնած՝ իր ներդրումն է բերում պետութիւնների ու ժողովուրդների բարի յարաբերութիւններին ու համագործակցութեանը եւ տարբեր ազգերի ու մշակոյթների կողքին մասնակից է մարդկութեան խաղաղ, ստեղծագործ կեանքին:

Շնորհանորդ այս օրը հայցում ենք, որ Փրկիչն ու Տէրն ամենայնի բարօրութեան ու հոգեւոր պայծառութեան մէջ պահի մեր ժողովրդին, յաղթութեամբ պսակի Արցախի ազատ ապրելու իրաւունքը եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման արդար պահանջը: Աղօթում ենք, որ ամենախնամ Իր զօրութեամբ ան-

փորձանք պահպանի աշխարհը համայն, բոլոր ժողովուրդներին, հեռու՝ աղետներից, աղքատության չարիքից, պատերազմի ու ահաբեկչության արհաւիրքներից ու սարսափներից եւ օրինի ժողովուրդների բոլոր ջանքերը աստուածսիրության ճանապարհներին, ուր յոյսն է գալիքի եւ բարիքը մարդկության:

Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Հայոց Բեթղեհեմից, եղբայրական սիրոյ Մեր ողջոյնն ու բարեմաղթանքն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր ողջ դասին:

Տիրոջ Սուրբ Ծննդեան աւետիսով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում հայոց պետական աւագանուն՝ գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի: Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք յղում Լեւոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին եւ պետական այրերին: Օրհնում ենք Հայրենիքի պաշտպաններին, զինուորեան, կրթութեան, մշակոյթի ու արուեստի գործիչներին, եկեղեցական վարչութեանց անդամներին ու հաւատաւոր մեր ողջ ժողովրդին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աւետիս է Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Աւետիս է կեանքի նորոգութեան ու փրկութեան: Աղօթենք միասին, որ Աստուծոյ կենդանարար Հոգին բոլոր մարդկանց հետ լինի, եւ յաւելի ու առաւել եւս յաւելի հաւատ եւ յոյս, մխիթարի նեղութիւնների մէջ, զօրացնի դժուարութիւնների մէջ, պահպանի հաստատուն ու հաւատարիմ աստուածասէր ճանապարհներին: Եւ թող այս աշխարհում միշտ օրհնեալ լինեն ու առատ պտուղներ տան խաղաղութիւնը, ժողովուրդների եղբայրութիւնը, մարդկանց մէջ սէրն ու հաճութիւնը:

Սէր է շնորհել մեզ Հայրը, որպէսզի Աստուծոյ որդիներ կոչուենք: Մնանք աստուածապարգէւ շնորհի մէջ, եւ բարին ու խաղաղութիւնը Հայր Աստծուց եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսից կլինի մեզ հետ այժմ եւ յաւիտեանս. ամէն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՌԻԴԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Նոր տարվա տոնական նախաշեմին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և օրհնում ենք ամենքիդ: Շնորհի ձեզ և խաղաղություն և խնդություն Հայր Աստծուց և մեր Տեր Հիսուս Քրիստոսից:

Գոհության աղոթք ենք բարձրացնում երկինք մեզ շնորհված տարվա համար, որը խաղաղություն բերեց մեր Հայրենիքին, շինարար ու ստեղծագործ կյանքի հաջողություններ ու առաջընթաց, ձեռքբերումներ ազգային-եկեղեցական մեր կյանքում: Գոհություն ենք մատուցում Բարձրալիև, որ բոլոր մարտահրավերների առջև պահպանեց մեզ աննկուն ու հույսով լեցուն: Մեր հավատի նորոգության և նախնայաց սուրբ ավանդին ու ժառանգությանը մեր հավատարմությունը վկայելու անգուցական առիթն ունեցանք: Հայ Գրեթի Գյուտի 1600-ամյա հոբելյանի տոնախմբությամբ և Մեծ եղեռնի 90-ամյակի ոգեկոչմամբ նորոգեցինք մեր ուխտը և հաստատեցինք մեր կամքը լինելու և մնալու Աստծո ժողովուրդ և Եկեղեցի Սուրբ, գործելու հանուն հայության արդար իրավունքների, հանուն բռնություններից զերծ, խաղաղ աշխարհի:

Ամուր, անշրջելի խաղաղություն նաև մեր ներքին կյանքում, այս է մեր ժողովրդի ձգտումը: Խաղաղություն, որը մեր հոգիներից բխելով, գործություն պիտի դառնա մեր սահմանների պաշտպանությանը և պայմանավորի մեր կյանքի առաջընթացը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում: Խաղաղությամբ շենացնենք մեր երկիրը, դարձնենք բարգավաճ, զարգացող, իրականություն դարձնենք այն ամենը, ինչ կուզենայինք տեսնել բարեփոխված ընկերային, տնտեսական ասպարեզներում, օրինականության ամրապնդման ուղղությամբ: Կառուցենք հավատով պայծառ, տեսիլքով հզոր, գիտությամբ, կրթությամբ ու մշակույթով ծաղկուն Հայրենիք՝ համայն հայության Հայրենիք: Կառուցենք մեր սիրով, միմյանց հանդեպ հոգածությամբ, վստահությամբ, արդարությամբ: Ազգային և եկեղեցական մեր բոլոր խնդիրներին ու հիմնահարցերին վճիռներ փնտրենք ու գտնենք միության և միաբանության սիրով:

Լավատես ենք հոգով, սիրելիներ: 2006 թվականը նոր ձեռքբերումներ է բերելու մեր ժողովրդին: Մեր լավատեսությունը ուժ է առնում գործելու կամքից մեր ժողովրդի, եկեղեցաշեն, հայրենաշեն ու ազգանվեր ջանքերից, հավատից ու հույսից: «Հույսը երբեք չի ամաչեցնում», ասում է առաքյալը, հույսը, որ նոր տարվա գալստյան հետ Քրիստոսի Սուրբ Ծննդյան խորհրդով նորոգվում է մեր հոգիներում: Առ Աստված և միմյանց հանդեպ սիրով դիմավորենք նոր տարին և հավատանք, որ Տերը դեպի բարին պիտի առաջնորդի մեր ծրագրերը, նախաձեռնություններն ու գործերը:

Աղոթենք, որ առ Աստված հույսը լուսավորի բոլոր մարդկանց սրտերը, և Բարձրալի շնորհն ու օրհնությունը անպակաս լինեն մեր կյանքից և աշխարհից: Ամեն:

Շնորհավոր Նոր տարի:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 դեկտեմբերի 2005 թ.

Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 6-ին աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հրաշափառ տոնը:

Նախորդ օրը, հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության և խուռներամ հավատացյալների, Ճրագալույցի Սուրբ Պատարագ մատուցեց Մայր Աթոռի ավագ միաբաններից Ս. Ներսես արքեպիսկոպոս Պողոպալյանը: Ս. Պատարագից հետո կատարվեց նախատոնակ, որի ավարտին Նորին Սրբությունը ավետեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը և Աստվածահայտնությունը:

Արարողության ավարտին Մայր Տաճարի բակը ողողվեց հարյուրավոր մոմերի լույսերով, որ հավատացյալները տանում էին իրենց հետ՝ լուսավորելու սեփական հարկերը Տիրոջ Սուրբ Ծննդյան կենարար լույսով: Իսկ Վեհարանում Նախատոնակին հաջորդեց Տնօրինների ավանդական արարողությունը, որ կատարեց միաբանությունը:

Հունվարի 6-ին Մայր Տաճարում Հայրապետական Սուրբ Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Խաչերով ու խաչվառներով զարդարուն հայրապետական թափորը փոքրիկ խորին շարականի երգեցողությամբ, ամպհովանու ներքո Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Մայր Տաճար՝ Սուրբ Պատարագ մատուցելու և տոնի առիթով իր պատգամը հղելու համայն հայությանը:

Նորին Սրբությունն իր պատգամում հորդորեց ապրել սիրով՝ Արարչին ապավինած. *«Արդ, ամենը, ինչ խորհում ու գործում է մարդը, սիրով թող լինի, Աստծո համար թող լինի, և կլինի աշխարհի խաղաղության ու շինության համար և կլինի մարդկանց ուրախության ու երջանկության համար՝ արժանի Տիրոջ գովասանքի խոսքին ու գնահատանքին» (տես էջ 3):*

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը կատարեց Ջրօրհների արարողություն՝ որպես Քրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Այս տարի Ջրօրհների Խաչի կնքահայրն էր Արագածոտնի թեմի Չքնաղ գյուղի նորակառույց Ս. Ստեփաննոս եկեղեցու բարերար տիար Գառնիկ Հովսեփյանը:

Ս. Պատարագին և Ջրօրհների արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, զինության ու մշակույթի գործիչներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ
ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱԳՐԵՐԸ**

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենաաբբություն
ԲԱՐՆՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒՂԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին
Սրբություն

ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,

Նորին Գերաշնորհություն

ԹԵՈՂՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,

Նորին Գերաշնորհություն

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և

Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՌՈՈՒԱՆ ՎԻԼՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն

ԹԵՈՏԻԼՈՍ Գ (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն

ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ԽՐԻՍՏՈՂՈՒԼՈՍ (Աթենք)

Վարչապալայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

ՄԱՎՎԱ (Վարչապալա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարքական
փոխանորդ,

Նորին Գերաշնորհություն

ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՄԱԴԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս-Պատրիարք
ՆԵՐՍԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

*

* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

**Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից
 ու համայնքներից:**

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են
 ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից,
 միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից,
 էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՐԵՆՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ԱՐԹՈՒՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՂԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՍԵՂԱ ԹԻՐԱՔՅԱՆԻՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ՝ ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱԶՆԻԻ ՏԻԿԻՆ ՍԵՂԱ ԹԻՐԱՔԵԱՆ,
ՈՐ Ի ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր դստերդ:

Սիրելի Տիկին Թիրաքեան,

Մեր ժողովրդի զաւակաց ազգային եւ եկեղեցական կեանքը միշտ շէն ու պայծառ տեսնելու ազնիւ մղումը առաջնորդել է Ձեզ ազգօգուտ բազում իրագործումների, որոնք արժանապէս բերել են Ձեզ սէրն ու յարգանքը հաւատացեալ հայորդեաց: Նախընթաց տասնամեակների ընթացքին Դուք պատաստական ոգով Ձեր օժանդակությունն էք բերել Փարիզի շրջանի եկեղեցիներին, երիտասարդ սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը կարեւորելով՝ սատարել Ռէնսի Դպրոցասէր եւ Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ ազգային կրթական հաստատություններին, աջակցել Ստեփանակերտի մանկական հիւանդանոցի կառուցմանը, այլեւայլ յանձնառություններով մասնակցություն բերել ֆրանսահայոց համայնքային միջոցառումներին՝ մատուցելով լաւագոյն օրինակ ազգային մեր կեանքում հայ կնոջ ծառայանութիւնը առաքելութեան:

Գոհունակություն է Հայրապետիս համար, որ Դուք սիրով յանձն առաք Ձեր ազնիւ մասնակցությունը բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կեանքի կոչուող ծրագրերի իրականացմանը՝ ստանձնելով Տարեցների Տան շէնքի ներքին յարդա-

րանքի եւ կահաւորանքի հովանաւորութիւնը: Ձեր առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ Մայր Աթոռի հովանու ներքոյ գործող խնամատար այս հաստատութիւնը առաւել արդիւնաւորութեամբ պիտի ծառայի մեր ժողովրդի կարիքաւոր զաւակներին՝ թեթեւացնելով նրանց հոգսերն ու դժուարութիւնները, զօրացնելով նրանց յոյսն ու լաւատեսութիւնը:

Բարձր գնահատելով ազգային մեր արժեքների հանդէպ Ձեր անխախտ հաւատարմութիւնը եւ Մայր Եկեղեցուն, Հայրենի մեր Երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած Ձեր ծառայութիւնները, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ շարունակելու բարի եւ աստուածահաճոյ գործերով բազմապատկել Ձեր գանձերը երկնքում:

Թող Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով առաքինի գործունէութեան մէջ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յունուարի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 335

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հունվար ամսին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է
Արփիար Զանոյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրհնության գիր է տրվել

Արեգ Հակոբյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Ռուբիկ Յաղուբյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Մադլեն Առաքելյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Միրան Կյուզել (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Սամվել Ավագյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Զվարթ Մարգարյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակություն, Ավստրիա)

Սարգիս Կարապետյան (Դամասկոսի հայոց թեմ)

Արմենակ Օհանյան (Դամասկոսի հայոց թեմ)

Վահրամ քահանա Հազարյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Հակոբ Մենենճյան (Արարատյան Հայրապետական թեմ)

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հոգևորականաց համագումարին

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀՀ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում մեր քաջարի բանակի զորավարներին և մարտիկներին:

Փառք և գոհություն Աստծո, որ կազմակերպված և զորեղ է մեր բանակը՝ արթուն պահապանը մեր Հայրենիքի ազատության և մեր ժողովրդի խաղաղ ստեղծարար կյանքի:

Այսօր Մենք աղոթում ենք, որ Հայոց Բանակը առ Հայրենին ջերմ սիրով ու արիության ոգով հավատարմորեն շարունակի հայ զենքի փառքը կերտած մեր պանծալի զորավարների ու անմահ հերոսների ավանդները: Այլև հայցում ենք, որ Ամենակալն Աստված զորակից լինի Հայոց Բանակի արիասիրտ զինվորներին, անվրդով պահի երկնառաք խաղաղությունը հայրենի մեր եզերքներում և Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 հունվարի 2006 թ.

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ
ՉԵԽԱՅԻ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ
ՍՈՒՐԲ ՍԻՆՈՂԻՆ՝ ՉԵԽԱՅԻ ԵՎ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՈՒՂՂԱ-
ՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԻՏՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻ
ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդին՝ Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Միտրոպոլիտ Նիկոլայի վախճանման առիթով:

«Հանուն աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու և ժողովրդի, Մեր սրտակցության և մխիթարության զգացումներն ենք փոխանցում մեր քույր Եկեղեցուն և նրա ողջ հոգևոր և աշխարհական դասին:

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի Իջման Ս. Սեդանի առջև Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված՝ հանգստություն հայցելով իր հոգուն: Թող Բարձրյալն Աստված մխիթարություն պարգևի իր հավատավոր ու բարեպաշտ հոտին», - ասվում է Վեհափառ Հայրապետի ցավակցական ուղերձում:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է
ՀՌԶԱԿՎԵԼ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հունվարի 31-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը՝ կանոնազանց ընթացքի՝ հնազանդության ուխտը խախտելու համար:

Կարգալույծ արված հոգևորականը դասվում է աշխարհականների շարքը և այսուհետ կկոչվի ավագանի անունով՝ Հարություն Հարությունյան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԱԽՃԱՆՎԵՑ ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱԹԵՈՍ Բ-Ն

Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մաթեոս Բ-ն ծնվել է 1915 թ. հունվարի 30-ին Կերալայի Կոլամ շրջանում: Սովորել է տեղի դպրոցում, որն ավարտելուց հետո ուսանել է Քոթայամի հին ճեմարանում և Փաթանամթիտայի Բազիլ Դայարա ուսումնական հաստատությունում: Այնուհետև ուսումը շարունակել է Կալկաթայի Եպիսկոպոսական քոլեջում: Աստվածաբանական բարձրագույն կրթությունը ստացել է Նյու Յորքի Ընդհանուր Աստվածաբանական ճեմարանում:

1938 թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1941 թ.՝ քահանա, արդեն այդ ժամանակ աչքի ընկնելով հոգևոր առաջնորդի իր ունակություններով, ուստի Նորին Սրբությանն անվանում էին «Հայր Հրեշտակ»:

Նորին Սրբություն Բասիլիոս Գիվարգեզ Բ Կաթողիկոսը 1953 թ. մայիսի 15-ին 38-ամյա Հայր Մատթեոսին ձեռնադրում է եպիսկոպոս:

Լինելով Կոլամի թեմի Մետրոպոլիտը՝ Նորին Սրբությունը կարճ ժամանակահատվածում ծխերի թիվը համարյա կրկնապատկում է, վերաբացվում են մի քանի վանքեր: Նորին Սրբությունը մեծ դեր է խաղացել նաև ուսման և սոցիալական ծառայության ոլորտում. իր անմիջական վերահսկողության և առաջնորդության ներքո բացվել են մի քանի վարժարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլ հասարակական հաստատություններ:

1991 թ. ապրիլի 29-ին Փարումալայի ճեմարանում տեղի ունեցավ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մաթեոս Բ-ի գահակալության արարողությունը: Նորին Սրբությունը Ս. Թովմայի Աթոռի 89-րդ գահակալն է և վեցերորդ կաթողիկոսը 1912

թ. Մալանկարայում Կաթողիկոսության հիմնադրումից հետո: Որպես Մալաբար Ուղղափառ Եկեղեցու Պետ՝ Կաթողիկոսը երկու տիտղոս ունի՝ «Արևելքի Կաթողիկոս» և «Մալանկարայի Մետրոպոլիտ»:

Կաթողիկոսը եպիսկոպոսներ է օծում Արևելքի Ուղղափառ Եկեղեցու համար, նախագահում է Եպիսկոպոսների խորհուրդը, հայտարարում է խորհրդի որոշումների մասին և հետևում, որպեսզի դրանք գործադրվեն: Որպես Սինոդի ներկայացուցիչ՝ Հնդիկ Մալաբար Եկեղեցում ևս կաթողիկոսին է վերապահված Մյուռոնի օրհնությունը:

Վերջին տարիներին երջանկահիշատակ Կաթողիկոսի նախաձեռնած որոշ ծրագրեր կարևոր նշանակություն ունեցան ներհամայնքային կյանքում. աղքատներին օթևան տրամադրելու նպատակով սկսվեց տնաշինության ծրագիրը, ոչ ունևոր աղջիկների ամուսնության համար հաստատվեց համապատասխան հիմնադրամ: Լինելով Կերալայի Էկումենիկ Գումիտեի, ինչպես նաև զանազան այլ միջեկեղեցական կոմիտեների նախագահ՝ Նորին Սրբությունն իրեն դրսևորել է որպես գերազանց առաջնորդ: Նորին Սրբությունը մշտապես կապի մեջ էր քույր Եկեղեցիների, ինչպես նաև տարբեր կրոնների առաջնորդների հետ և իր գործունեությամբ ցույց էր տալիս, թե քրիստոնյա Եկեղեցու պետն ինչ դեր պետք է ունենա Հնդկաստանի հասարակական կյանքում՝ նպաստելով ներհամայնքային ներդաշնակության և երկրում խաղաղության ամրապնդման գործին:

Նորին Սրբությունը լավ հռետոր էր, ճանաչված գիտնական և աստվածաբան, կարող առաջնորդ և Աստծո խոսքի քարոզիչ:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ
ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱԿԱԼ ԲԱՍԻԼԻՈՍ
ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ-Ի
ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Հունվարի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական զիր է հղել Հնդիկ Մալաբար Եկեղեցու նորընտիր գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա-ին՝ Հնդիկ Մալաբար Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի մահվան առիթով:

«Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և աշխարհասփյուռ մեր ժողովրդի, Մեր ցավակցությունն ու սրտակցությունն ենք հայտնում Հնդիկ Մալաբար մեր քույր Եկեղեցուն:

...Մենք ջերմությամբ ենք հիշում Մեր հանդիպումը Նորին Սրբության հետ 2001 թ. Սուրբ Էջմիածին կատարած Իր պատմական այցելության ժամանակ, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով: Մենք հիշում ենք մեր զրույցները մեր երկու ժողովուրդների եղբայրության և մեր ազգերը շաղկապող պատմական հանգամանքների մասին»,- մասնավորապես ասվում է Հայրապետական խոսքում:

**ՀՆԴԿԱՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ Տ. ՕՇԱԿԱՆ ՎՐԴ.
ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ-
ՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵ-
ՑՈՒ ԳԱՀԱԿԱԼ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ
ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ-Ի ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ**

Հունվարի 28-ին հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից Քերալայի Քոլլամ քաղաքի մատռան մեջ մասնակցեց Հնդիկ Ուղղափառ Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի հուղարկավորությանը:

Արարողության ընթացքում դամբանական խոսեց նորընտիր գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Դիդիմոս Ա-ն՝ անդրադառնալով հանգուցյալ Հայրապետի աստվածահաճո գործունեությանը՝ հորդորելով ամենքին աղոթելու Նրա հոգու հանգըստության և խաղաղության համար: Այնուհետև հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսի արարողությանը ցավակցական խոսք ասաց Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը:

«Որպես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ այստեղ ենք, Ձեր կողքին՝ բերելով Ամենայն Հայոց Հայրապետի և բոլոր հայ քրիստոնյաների վշտակցությունը: Ջերմությամբ ենք մտաբերում հայ ժողովրդի համար նշանակալից 2001 թվականը, երբ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով հանգուցյալ Հայրապետն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Իր գորակցությունն ու սերը բերելով Հայ Առաքելական Եկեղեցուն և մեր Եկեղեցու հավատացյալներին: ...Ժողովրդի նկատմամբ հանգուցյալ Հայրապետի ջերմ սիրտ ակնհայտ վկայությունն են տասնյակ հազարավոր քրիստոնյա և ոչ քրիստոնյա այս հավատացյալները, ովքեր այսօր եկել են իրենց հարգանքի տուրքը մատուցելու Նրան: Աղոթքս է մեր Երկնավոր Հորը, որ Ամենակարող Աստված Իր երանելի հարկերից ներս ընդունի հանգուցյալ Հայրապետի արդար հոգին, իսկ Նրա եկեղեցասիրությունն ու անմնացորդ քրիստոնեական սերը միշտ ուղեկից լինեն մեզ», - նշեց Օշական վարդապետն իր խոսքում:

Այնուհետև ներկա բոլոր հոգևորականներն իրենց վերջին հրաժեշտը տվեցին՝ պատարագչի ամբողջական զգեստավորումով Ս. Թովմասի Աթոռին բազմած հանգուցյալ Հայրապետին, որից հետո Հայրապետի դին իջեցվեց մատռան բակում փորված գերեզմանի մեջ և հողի փոխարեն Նրա վրա լցվեց 1500 կգ խունկ:

Հունվարի 29-ին, սգահանդեսի ժամանակ, Օշական վարդապետն ընթերցեց Գաբեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը (տե՛ս էջ 20):

Հուղարկավորությանը մասնակցում էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Հնդկաստանի Հանրապետության Ազգային Ժողովի անդամներ, տեղական իշխանության ներկայացուցիչներ և հազարավոր հավատացյալներ:

*ՄԱՅՐ ԱԹՐԱՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 հունվար 2006 թ.)

«Յանուն Հոր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ծնաւ նոր արքա ի Բեթղեհեմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»: Ծնալ նոր արքան Բեթղեհեմ քաղաքում, ով մարդիկ, օրհնեցէք, փառք տվէք, որովհետև Նա մեզ համար ծնվեց:

Բեթղեհեմ քաղաքի շրջակայքում իրենց հոտը արածեցնող հովիվները գիշերվա կեսին տեսան երկնքում փայլատակող աստղը, և աստղը այդ ճանապարհը ցույց տվեց, որպեսզի երեք մոզերը՝ Մելքոնը, Գասպարը և Բաղդասարը, հասնեին արևելքից դեպի Բեթղեհեմ: Նրանք Երուսաղեմում Հերովդես արքային հանդիպեցին և հարցրին, թե ո՞ր է ծնվող նոր արքան, այսինքն՝ Աստվածորդին, Էմմանուելը: Եվ արքան զարմացավ, իր խորհրդականներին հարցրեց և պատվիրեց մոզերին չարակամությամբ. գնացեք-գտեք ծնվող նոր արքան և ձեր վերադարձի ճանապարհին ինձ հանդիպեք և հայտնեցեք նրա ծննդյան տեղը:

Մինչ մոզերը գիշերվա կեսին աստղի լույսով առաջնորդվում էին դեպի Բեթղեհեմ, հովիվները, որոնք արածեցնում էին իրենց ոչխարները, գեղեցիկ մի տեսիլքի արժանացան: Այդ տեսիլքը փառավոր մի տեսիլք էր, որում բացվեց աստվածային ճշմարտությունը, բացահայտվեց երկինքը, լույսի հեղեղներով աշխարհ իջան հրեշտակները՝ գեղեցկորեն երգելով, շեփորների հնչումով, զանգակների դողանքով: Մարդկությանը այս պարզ հովիվների միջոցով հայտնվեց այն փառավոր հրաշքը, որ տեղի ունեցավ Բեթղեհեմի մեջ, մսուրի մեջ և ոչ թե արքայական պալատների մեջ: Եվ հրեշտակները ավետեցին հովիվներին՝ ասելով. «Փառք ի բարձունս Աստուծո և երկրի վրա խաղաղություն և մարդկանց միջև հաշտություն, համերաշխություն»:

Քիչ անց աներևույթ եղան հրեշտակները ամբողջ իրենց շքախմբով: Հովիվները մտածեցին, թե այս տեսիլքը ի՞նչ տեսիլք էր: Երկնքում փայլատակող գեղեցիկ ու լուսավոր այն աստղը արդյո՞ք նշանն էր Հիսուսի՝ մեր Տիրոջ ծննդյան: Եվ գնացին Բեթղեհեմ, տեսան այնտեղ մանուկը խանձարուրով պատված մոր գրկին և Հովսեփը՝ հայրը, և մսուրի մեջ գտնվող կենդանիները: Այս տեսարանի մանրակերտը կարող էր դուրսը տեսնել, երբ էլնեք եկեղեցուց, նայեցեք ձեր շուրջը և այնտեղ կտեսնեք մի մսուր, որը ներկայացնում է Քրիստոսի ծննդյան այրը:

Ո՞վ էր, սիրելի հավատացյալներ, ծնվող Փրկիչը: Փրկիչը Աստվածորդին էր, ինչպես Եղիա մարգարեն հինգ հարյուր տարիներ առաջ Քրիստոսի ծննդից մարգարեացավ և ասաց. «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն Նորա Եմմանուէլ» (Եսայի Է 14): Եվ այնուհետև ժամանակի լրումին Սուրբ Կույսը Սուրբ Հոգու միջոցով

հղանալով ծնեց աշխարհի Փրկչին: Մարդկությունը խավարի մեջ խարխափում էր, մարդկությունը ամբողջ իր պատմության ընթացքին փնտրում էր, թե ո՞վ է ինքը, ուր-կե՞ն կուգա և ո՞վ է Աստված, որ Արարիչն է տիեզերքի:

Մարդիկ սնոտի հավատալիքներին հետևեցին, անգամ կենդանիներին աստվածացրեցին՝ ենթադրելով, որ նրանք աստվածներ են, բայց Աստված կամաց-կամաց, դարերի ընթացքում պայծառացրեց մարդկության միտքը, որպեսզի ճանաչեն Աստծուն, և Աստված երբ ճանաչվեց մարդկության կողմից, Աստված որպես նշան մարդկության հետ հաշտության, Իր Որդուն ուղարկեց աշխարհ, որ ծնվեց Սուրբ Կույսից, եկավ մարդկությանը քարոզելու աստվածային ճշմարտությունները, Իր վարդապետությունը փրկության, և փորձեց Աստծուն հաշտեցնել մարդու հետ:

Փառք ի բարձունս Աստուծո և երկրի վրա խաղաղություն, բայց մարդկանց մեջ հաճությունը շատ դժվար է կյանքում իրականանում, նաև շատ դժվար է մարդկության մեջ խաղաղության հիմնարկումը, շատ դժվար:

Տեսեք, մոտ քսան դար է անցել, և մարդկությունը տվայտում է, փորձում է խաղաղություն գտնել, հաշտություն գտնել, թշնամությունը չի վերանում մարդկանց միջից, և ցավոք մենք նա, որպես ժողովուրդ, մեր հարցերը ունենք, մեր խնդիրները ունենք քաղաքական իմաստով, և մեր մաղթանքը պիտի լինի հատկապես 2006 թվականի սեմին, որ Աստված լսե մեր ձայնը և Իր խաղաղությունը պարգևե մեր ժողովրդին: Թող հաշտություն լինի աշխարհի վրա: Այսօր, երբ Սուրբ Ծննդյան ճրագալույցի երեկոյան այս Սուրբ Պատարագը մատուցում ենք, մենք հաղորդվում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հետ Հայաստանյայց Եկեղեցվո ծոցին մեջ և մաղթում, որ նորածին Փրկիչը մեզ պարգևի այն, ինչ որ մեր ժողովուրդը ցանկանում է, այն, ինչ որ մենք ցանկանում ենք առաջիկա տարվա ընթացքում իրականացնել:

Մեր սրտագին մաղթանքը այն է, որ մեր ժողովուրդը խաղաղության մեջ ապրի, իր հայրենասիրությունը չպակասի, թող չլքի իր երկիրը և հեռանա, մնա՛, տե՛ր դառնա իր հողին, հողը տիրոջ պետք ունի, և մենք պարտավոր ենք մեր հողի տերը ըլլալ, որովհետև շուրջ հինգ հազար տարիներ, Նոյյան շրջանից սկսած և շարունակված Հայկ Նահապետով, մենք այս հողի տերն ենք եղել: Այսօր մեր մաղթանքն է, որ նորածին Փրկիչը այցելի մեր ժողովրդին, նորածին Փրկիչը մեր միաբանության, մեր ժողովրդին, Հայոց Հայրապետին երկար կյանք պարգևե: Քաջառողջության և գեղեցիկ իդեալների իրագործման մի տարի դառնա այս տարին ոչ միայն Հայոց Հայրապետի համար, այլ նաև բոլորիս համար, որ հավատքով եկած ենք այստեղ իրար ողջունելու, իրար սիրով ողջունելու և ասելու. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիս»:

Միասին ասենք «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, մեզ եւ ձեզ մեծ աւետիս»: Թող նորածին Փրկիչը ամեն մեկիս այցելե, ամեն մեկիս դժվարությունները վերացնե և մեր կյանքի ճանապարհը լուսավոր դարձնե ի փառս Յուր անվան՝ Հոր և Որդվո և Հոգվոյն Սրբո, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՌՆԱԴՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ
ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(21 հունվարի 2006 թ.)

Միքելի քույրեր և եղբայրներ, մեկ շաբաթ առաջ այս Սուրբ Տաճարի մեջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սուրբ Աջով եպիսկոպոսական օծում ստացանք և այսօր, մեկ շաբաթ հետո, Իջման այս Սուրբ Մեղանի վրա մատուցում ենք մեր ուխտի անդրանիկ Պատարագը և փառք և գոհություն վերառաքում Աստուծո, որ Իր ողորմությամբ արժանացրեց մեզ այս աստիճանին և կոչմանը և Իր Աջով մշտապես առաջնորդեց մեզ խաղաղությամբ հասնելու այս օրվան և աղոթելու այս Սուրբ Տաճարի մեջ մեր ազգի խաղաղության և փրկության, մեր Եկեղեցվո պայծառության և մեր ազգի խաղաղ ու սիրո ընթացքի համար:

Ճիշտ այս պահին, Պատարագի ընթացքին, հիշեցի ավետարանական այն հատվածը, որում պատմվում է, թե ինչպես էր Քրիստոս Իր առաքյալներին ընտրում, ինչպես էր նրանց ուսուցանում, դաստիարակում և ինչպես նրանց հասցրեց այն աստիճանին, որ առանց երկյուղի ու առանց վախի իրենց կյանքը նվիրեցին Աստուծո և մինչև մահ ծառայեցին մեր Տեր Հիսուս Քրիստոսին, և ինչպես Աստուծո սուրբ շնորհները ստանալով ողջ աշխարհի մեջ տարածեցին փրկության ավետիսը:

Այսօր մենք, որպես շարունակողը առաքելական քարոզչության, որպես հետևորդը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, մի պահ մտածենք, արդյոք մենք մեր արժանիքներով է, որ հասանք այս աստիճանին, թե՞ դարձյալ ինչպես միշտ Աստուծո ողորմությունը և Աստուծո սերն է, որ մեզ ընտրեց և Իր բանավոր հոտի քարոզիչը դարձրեց:

Անշուշտ մարդկային մեր կյանքի մեջ միշտ մտածում ենք, թե մենք բավականին շատ բան գիտենք հավատքի և Աստուծո մասին և երբեմն մեր մարդկային կյանքը և խոսքերը մեր մտածողությանց սահմանների մեջ ենք դնում և կարծում ենք, թե ամեն ինչ գիտենք և համեմատում ենք այդ ամենը մեր կարողությունների, մեր սահմանափակ հավատքի և մեր սահմանափակ սիրո հետ:

Ճիշտ այդպես եղավ, երբ Պետրոս առաքյալին Քրիստոս հարցրեց, թե՞ Պետրոս, արդյոք սիրո՞ւմ ես Ինձ, և առաքյալը պատասխանեց, թե՞ այո՛, Տեր, սիրում եմ: Երկրորդ անգամ հարցրեց, և առաքյալը նորից պատասխանեց, որ՝ այո՛, Տեր, սիրում եմ, սակայն երբ երրորդ անգամ հարցրեց, Պետրոս առաքյալ անդադարձավ, որ իր սերը, որ ունի Աստուծո հանդեպ, ինքը չէ, որ չափում է, իր իմացությամբ չէ, որ որոշվում է այն սերը, որ ունի Աստուծո հանդեպ: Ուստի զգալով իր սխալը՝ պատասխանեց, թե՞ Տեր, Դու գիտես, թե ես արդյոք սիրում եմ Քեզ, թե ոչ:

Այսօր մենք մարդիկս ճիշտ նույն այդ հարցումի առջև ենք գտնվում մեր ամբողջ կյանքի ընթացքում: Մեզ նույնպես տարբեր առիթներով հարցնում են, թե արդյոք

մենք սիրո՞ւմ ենք իրեն կամ չենք սիրում, և մենք մեր եկեղեցի հաճախելով կամ մեր աղոթքներով կարծում ենք, թե մենք հասել ենք այն աստիճանին, որ կարող ենք համարձակապես պատասխանել մեր Տիրոջը, թե՛ այո՛, Տեր, սիրում ենք, բայց մի պահ մոռանում ենք, որ այդ սերն ու չափը որոշում է Աստված, և մենք երբ որ խոստովանում ենք այդ սերը, մեր խոսքով չէ, որ պիտի խոստովանենք, այլ Աստուծո առջև անկեղծությամբ:

Պիտի խոստովանենք, որ որքան էլ որ սիրենք, կամ որքան էլ որ սիրում ենք, դեռ չենք հասել սիրո այն աստիճանին, որ Աստված մեզանից պահանջում է, այն սերը, որ Ինքը ունի Իր ստեղծածի հանդեպ: Այսինքն երբ որ մտածում ենք, որ սիրում ենք, երբ կարծում ենք, որ սիրում ենք Աստուծո, այդժամ հիշենք, որ ոչ թե խոսքով, այլ մեր ապրած կյանքով պետք է վկայենք մեր սիրո մասին: Ուստիս Հիսուսի հարցումից հետո Պետրոս առաքյալը հասկացավ, որ գործով պիտի փաստի, որ ինքը իրապես սիրում է Աստուծո, և այդպես էլ եղավ, երբ առաքյալը իր կյանքը նվիրեց համարձակորեն քարոզելու Աստուծո ավետարանը, փրկության ավետիսը և արժանացավ Աստուծո սիրուն և ողորմությանը:

Ի՞նչ պետք է սովորենք մենք մեր կյանքի ընթացքին, որովհետև շատերը կարծում են, թե առաքյալները ավելի բարձր են, քան սովորական մարդիկ, կարծում են, թե սուրբերը, որ ապրել են այս աշխարհի վրա, ավելի վեր են, քան մարդիկ, որ այսօր ապրում են աշխարհի վրա, բայց եթե անդրադառնանք նրանց կյանքին, նրանց գործունեությանը, պիտի տեսնենք, որ նրանք ևս ծնվել են ինչպես սովորական պարզ մարդիկ, ինչպես մենք, ապրել են այս կյանքով: Սակայն երբ Աստված իրենց թելադրել է, կամ երբ Աստված պահանջել է, պարզապես նրանք համարձակություն են ունեցել Աստուծո առջև կանգնելու և ասելու, որ՝ Տեր, պատրաստ ենք Քեզ ծառայելու, պատրաստ ենք Քո կամքը կատարելու, պատրաստ ենք Քո պատվիրանները կատարելու, և Քրիստոսի պատգամի օրինակով պատրաստ ենք սիրելու մեր թշնամուն, պատրաստ ենք սիրելու մեր բարեկամին, պատրաստ ենք անելու այն, ինչ որ ցանկանում ենք, որ մարդիկ մեզ անեն: Մի խոսքով՝ անելու այն ամենը, ինչ որ Ավետարանը ու սուրբ խոսքն է պահանջում, և առանց մտածելու, թե ինչ պիտի սպասվի իրենց կյանքի օրերին, առանց մտածելու, թե ինչի պիտի արժանանան իրենք՝ մահվա՞ն, թե՞ փառավոր կյանքի, ընտրեցին Աստուծո ճանապարհը և հետո է, որ ճաշակեցին դառնությունը, միևնույն ժամանակ դրա դիմաց ստանալով Աստուծո սերը, Աստուծո օրհնությունը և Աստուծո ողորմությունը:

Այսօր մենք ևս այն նույն կարգավիճակի մեջ ենք, ինչ որ առաքյալները՝ նախքան Քրիստոսի իրենց կանչելը: Քրիստոս մշտապես կա և մեզ հետ է և ինչպես ինքն էր ասում՝ մինչև աշխարհի վախճանը ձեզ հետ եմ: Հետևաբար մշտապես մենք պիտի գիտակցենք, որ Աստված մեզ հետ է, մեր կողքին է, և մշտապես Իր խոսքերը, Իր օրհնաբեր խոսքերը, դեպի փրկություն առաջնորդող խոսքերը հնչում են մեր ունկերին: Այժմ պատասխանը մերն է, թե արդյոք մենք ի՞նչ պիտի ասենք:

Աստուծո առաքյալների կամ սուրբերի օրինակով պիտի՞ հնազանդվենք Իր խոսքին, պիտի՞ վստահենք Իրեն, թե պիտի ընտրենք մի ճանապարհ, որ չգիտենք, թե ուր

է տանում և ինչ ավարտ պիտի ունենա: Չգիտենք, թե մեր այս ապրած կյանքը ծառայություն է Աստուծո, թե մերժում է Աստուծո պատվիրանների և Աստուծո սիրո: Չգիտենք, թե ում ենք զորակցում՝ Աստուծո՞ւն, թե՞ Նրա հակառակորդին, և այս անորոշության մեջ դարձյալ մեզ պիտի օգնի Աստուծո խոսքը, որ Ավետարանի միջոցով մեզ է փոխանցվում, և նաև Աստուծո այն խոսքը, որ քիչ առաջ Ավետարանի մեջ կարդացվեց այս Սուրբ Մեղանից, թե որքան էլ դժվարությունների ու նեղությունների մեջ լինեք, մի վհատվեք, մի հուսահատվեք, այլ քաջալերվեցեք, որովհետև, ինչպես Տերն է ասում՝ «Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33):

Իրապես Աստված երբ աշխարհ եկավ, մեզ փրկելու և օգնության համար եկավ, չեկավ, որ պարզապես տաճարներ շինվեն և մարդիկ Իրեն փառաբանեն: Ո՛չ, եկավ, որպեսզի մենք փրկություն ստանանք, եկավ՝ այս սուրբ տաճարը հիմնեց, որպեսզի նրա մեջ աղոթենք մեր փրկության և աշխարհի խաղաղության համար: Եկավ, որպեսզի մենք իրար օգնենք, իրարու սիրենք, եկավ, որպեսզի Իր պատվիրանները կատարենք, որովհետև շատերս վստահաբար խնդրում ենք Աստուծո, որպեսզի մեզ օգնի, բայց մոռանում ենք, որ Աստված անմիջապես մեզ չէ, որ օգնում է, Աստված մեր նմանների միջոցով է օգնում, ինչպես որ քիչ առաջ մեր հիշած ավետարանական խոսքում է ասվում, թե՝ ծարավ էի, և ջուր տվեցիք, մերկ էի, և հագցրեցիք, անոթի էի, և հաց տվեցիք: Երբ աշակերտները ասում են, թե մենք այդ ամենը չարեցինք Քեզ, Տեր, Հիսուս պատասխանում է, որ այն, ինչ որ ձեր եղբորը կամ ձեր նման մեկին արեցիք, նույնը նաև Ինձ արեցիք:

Այս ամենի համար եկավ Քրիստոս, որ աշխարհի մեջ նեղություն չկրենք երբեք, որ նույնիսկ եթե նեղության մեջ լինենք, միշտ հիշենք, որ Աստված եթե անմիջապես ներկա չէ, և մենք չենք տեսնում և չենք լսում, չի նշանակում, որ Նա գոյություն չունի և մեզ չի օգնում: Երբ դառնում ենք աջ կամ ձախ և տեսնում ենք մեզ նմանին մեր կողքին կանգնած, ապա նրա մեջ պիտի տեսնենք Աստուծո ներկայությունը, և եթե ուզում ենք Աստուծո ծառայություն մատուցանել, նախ ծառայություն պիտի մատուցենք նրանց, և կտեսնենք, որ Աստված պիտի չուշացնի պատասխանը, հատուցում պիտի տա մեր արածների համար թե՛ երկրի վրա և թե՛ երկնքի մեջ:

Այսօր մենք ավելի կարիք ունենք Աստուծո և Աստուծո սիրո և Աստուծո ողորմության, որովհետև մարդկային մեր կյանքի մեջ զբաղումները ավելի են շատացել, ուստի և մարդկային մեր կյանքի ընթացքը ավելի մեր անձնական, եսակենտրոն հիմքի վրա է և մեր ցանկությունների և մեր մտածումների վրա է հիմնված և մի ձևով կարծես Աստուծո հավատալը դարձել է այս զբաղումների մեկ մասը, և մենք ինչպես որ մեր կյանքի, առօրյա կյանքի ընթացքում ժամանակ ենք հատկացնում տարբեր բաների, մի փոքրիկ մաս հատկացնում ենք նաև Աստուծո կամ եկեղեցիին, հավասար դասելով, երբեմն նույնիսկ նվազ կարգով դասելով մեր առօրյա ցանկություններին կամ զբաղումներին և կարծում ենք, որ Աստուծո հավատալը կարող է խանգարել մեր կյանքի ընթացքին և կարող է մեր ցանկությունները և աշխարհական զբաղումները սահմանափակել:

Աստված սակայն չի եկել, որպեսզի մեր կյանքը խանգարի կամ մեզ անհանգստություն պատճառի, Աստված եկել է, որպեսզի մենք խաղաղ կյանք և ընթացք ունենանք և մեր աշխարհական կյանքի ընթացքում երբ որ Նրա պատվիրանները պահենք, ավելի խաղաղ, ավելի հանգիստ ձևով պիտի անցնենք այդ ճանապարհը և չպիտի տարվենք այն բոլոր սխալ երևույթներով, որ մեզ շեղում են Նրա ճանապարհից, որովհետև արդյունքում ինչ պիտի լինի, եթե մենք մեր ցանկություններով ապրենք: Պիտի կորցնենք Աստուծո, բայց եթե Աստծուն ընտրենք, Աստված մեզ ամեն ինչ պիտի տա այնքանով, որքանով որ մենք Նրա կարիքն ունենք, և Աստված մեզ պիտի օգնի որևէ նեղության կամ դժվարության պահին, և պիտի տեսնենք, որ մենք մեր կյանքը ապրել ենք խաղաղ և հանգիստ, հակառակ դժվարությունների և արդյունքում շահել ենք թե՛ Աստծուն և թե՛ Նրա սերը, և թե այն վարձն ենք ստանալու, որ երկնքի մեջ խոստացված է Իրեն հետևողների համար:

Ուրեմն միասին աղոթենք, որպեսզի Աստված Իր սերը և Իր ողորմությունը միշտ մեզ վրա պահի և մեր սրտերի մեջ հաստատի, որովհետև Աստուծո ծառայելը երբեք չպիտի խանգարի մեր կյանքի ընթացքին, այլ Աստուծո ծառայելը մեզ օգնություն պիտի լինի մեր հոգիների փրկության և աշխարհի խաղաղության: Միքենք իրար և աղոթենք միմյանց համար և հատկապես աղոթենք, որպեսզի միշտ խաղաղություն լինի աշխարհի վրա, որովհետև խաղաղությունը Աստուծո թագավորության հաստատումն է երկրի վրա, որովհետև ուր որ Աստված կա, չի կարող պատերազմ կամ թշնամություն լինել, այլ պիտի լինի սեր և խաղաղություն, և այդ սերն ու խաղաղությունը երբ որ աշխարհի վրա հաստատվի, կնշանակի, որ Աստուծո թագավորությունը արդեն հաստատվել է երկրի վրա և այդ խաղաղությունը և սերը նախ պիտի հաստատվի մեր հոգիների մեջ, մեր սրտերի մեջ, մեր ընտանիքների մեջ, մեր շրջապատի մեջ, մեր ազգի մեջ և այդպես փոխադարձաբար ամբողջ աշխարհի վրա:

Միքենք իրար, և Աստված մեզ կսիրի և Աստված Իր խաղաղությունը և սերը պիտի տա նաև բոլորին, ովքեր դրա կարիքը ունեն: Մենք է, որ պիտի Աստծուն հրավիրենք դարձյալ երկիր, մենք է, որ պիտի խնդրենք, որ Աստված նորից գա և Իր սերը տարածի, և մենք ենք խաղաղության պահողները այս աշխարհի վրա և նաև մենք կարող ենք լինել, եթե սխալ գործենք, որպեսզի թշնամին հաղթանակի այս երկրի վրա:

Թող Աստուծո սերը, Աստուծո խաղաղությունը և Աստուծո ողորմությունը անպակաս լինի ձեզանից և մեր ազգի և ամբողջ աշխարհի վրայից այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

**Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(22 հունվարի 2006 թ.)**

Միքելի՝ հավատացյալներ, նախ հոգվույս պարտքը կզգամ իմ խորին և որդիական երախտագիտությունս և շնորհակալությունս հայտնել ազգիս Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին. Նորին Սրբության բարձր տնօրինությամբ և հովանավորությամբ հրավիրվեցի և մեկնեցի Դամասկոս, որտեղ և ստանձնեցի Դամասկոսի առաջնորդի ծանր, բայց նաև քաղցր պարտականությունը, ապա այսօրվանեն մեկ շաբաթ առաջ ստացա նաև իր օրհնաբեր Աջեն եպիսկոպոսական ձեռնադրությունը և օծումը: Իմ աղոթքս է առ Աստված, որ Ամենաբարձրալը միշտ հաստատուն պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և իր գահակալը՝ պարզնելով Հայոց Հոր երկար և եկեղեցական գործունեության արդյունաշատ տարիներ:

*«Զի այնպես սիրեաց Աստուած զաշխարհ,
մինչեւ զՈրդին Իւր Միածին ետ»:*

(Հովհ. Գ 16)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Երբորդ հազարամյակի այս արշալույսին աշխարհը մեր առջև կներկայանա նոր հուսալքությամբ, և կլսենք երկրագնդի բոլոր ցամաքամասերի վրա, որ դեռևս կան աղքատներ, անոթիներ, մերկեր և թշվառներ, որոնք կտառապեն կարիքից, այլևայլ պակասություններից, և միաժամանակ ականատեսն ենք լինում, թե ինչպես շատ մարդիկ հղիացած իրենց հարստության մեջ՝ կարողացել են ինչ-որ ձևով ապահովել իրենց համար նյութական կարելիությունները, կազմակերպել իրենց առօրյան զվարճալի և հաճելի ժամանցներով:

Նույն պատկերն էր, նույն մարդկությունն էր և նույն հուսալքված հասարակությունն էր 2000 տարիներ առաջ: Չքավոր մարդը, ռամիկը վերստին կարոտ էր հացի, և ահա այս հուսալքված խավարի մեջ ոչ մեկ հույս ունենալով, մարդիկ կսպասեին հույսի, բայց չէին տեսներ, կսպասեին լույսի, բայց իրենց չէր տրվեր, և ահա այս հուսալքված հասարակությանը և մարդկությանն է, որ եկավ մեկը՝ հայտարարելով, թե Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց անոր փրկության համար:

Եկավ մեր Փրկիչը՝ Միածին Որդին, փրկեց Իր փրկարար արյամբ և ազատագնեց մեզ բոլորս՝ տալով մեզի ազատություն և փրկություն: Անոնք, որոնք լույսի մեջ էին, անոնք, որոնք իսկապես կվստահեին լույսին, հավատացին և փրկվեցան, իսկ անոնք, որոնք խավարի մեջ էին և կսպասեին խավարային իրենց առօրյան ապավինելու այլ փրկության, մնացին խավարի մեջ և այդպես ալ չտեսան փրկությունը:

Հարստությունը, որ տրվեցավ մեզ, տրվեցավ 2000 տարիներ առաջ մարդկության և 2000 տարիների ընթացքին: Այդ հարստությունը այն չէր, որով մենք կարենանք մեր

նյութական և մարմնական պետքերը հոգալու: Եթե միայն տեսնենք նույնիսկ հարստացած մարդիկ, եթե մակերեսային ցույց կտան իրենց կյանքի կարելիությունները, այդ նյութականորեն առանձնաշնորհյալ ընտրանիին մեջ և այդ մակերեսին ետև կան ցավող և տառապող մարդիկ ևս և այնպես, ինչպես կարոտյալին տառապանքն է մարտիրոսական, նույնպես այս ցավի մեջ և իրենց հարստության մեջ թերևս տառապողին տառապանքն էլ մարտիրոսական է, և եթե մենք կսպասենք, որ մեր հարստությունը պիտի լինի միայն նյութական, մեր կյանքի ապահովությունը պիտի լինի միայն հաճոյական, ապա մենք էլ չենք հավատա լույսին և մենք էլ չենք ըմբռնի լույսի զորությունը և մանավանդ ավետարանիչին այն վկայությունը, որ հնչեց 2000 տարիներ առաջ, որ ըսավ, թե Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց անոր փրկության համար:

Այսօր, սիրելիներ, մենք՝ քրիստոնյա մկրտվածներս, մենք՝ լույսի որդիներս, կհավատանք լույսին և մենք եթե նույնիսկ ունինք որոշ կարիքներ և ամեն մեր ջանքը, ճակտի քրտինքը, որ կթափենք և երբեք կամ դժվարությամբ կարող ենք ապահովել ինչ-որ նյութական կարելիություններ և չենք կրնար վայելել կյանքը այնպես, ինչպես ունին մարդիկ և կրնան վայելել, ապա եկեք՝ հետևենք ավետարանիչին այս վկայության և մեզի համար կերտենք մեր հարստությունը: Մեզի համար ստեղծենք, ապահովենք մեր հարստությունը, հոգևոր այն հարստությունը, որով փրկվեցան լույսի զավակները, որով և մենք պիտի փրկվինք՝ դառնալով լույսի զավակներ:

Քրիստոսի խոսքը ընդունեցին անոնք, որոնք իսկապես կերտեցին իրենց համար հոգևոր հարստություն, կերտեցին իրենց համար այնպիսի բարեպաշտ և աղոթալի կյանք, որով արժանի եղան նաև այն փրկության և այն սիրո վկայության, որով Աստված փրկեց Իր Միածին Որդին:

Մարդ արարածս միշտ կկապվի հարստության: Եթե մենք ընտրենք միմիայն նյութական հարստությունը, ապա մենք էլ հոգեպես և սրտով պիտի կապվենք միմիայն նյութական հարստությանը, բայց եթե մենք մեր ստեղծած հոգևոր հարստության նվիրենք մեր սիրտը և հոգին և կյանք տանք անոր և նույնիսկ այս երրորդ հազարամյակի արշալույսին հուսալքված այս մեր կյանքին բանանք մեր սրտերը և ըլլանք սիրո արտահայտության այն վկաները, որ սեր ճառագե և իր շուրջինները ջերմացնեն իր սիրով, զոհողությամբ և դառնանք այսպիսի հարստության զավակներ, այսպիսի լույսի զավակներ և այս հարստության կապենք մեր սրտերը այնպես, ինչպես նույն ավետարանիչը կըսե՝ վկայելով Քրիստոսի խոսքը, թե ուր որ ձեր գանձերն են, այնտեղ էլ պիտի լինեն ձեր սրտերը:

Մենք լույսի զավակներ ենք, մենք փրկության զավակներ ենք, ուրեմն մենք ըլլանք տերը այդ հարստության, որովհետև մեր հոգևոր հարստությամբ է, որ կփառաբանվի երկնավոր Հայրը, մեր հոգևոր այս հարստության զոհողությամբ է, որ կօրհնաբանվի Տերը: Այս հարստությամբ է, որ կրնանք մխիթարել հուսալքված սրտեր, կրնանք մենք այնտեղեն քաղել մեր հույսերը, և այսպիսով մենք ալ սպասենք այն լույսին, այն սիրո, որով Աստված տվավ Իր Միածին Որդին մեր փրկության համար:

Թող Աստված հարստացնե մեր հոգին, թող Աստված մեզի տա այն կարելիությունը և կարողությունը, որպեսզի աղոթքով կերտենք հոգևոր մեր այս հարստությունը, և այս հարստության ընդմեջեն փառաբանվի երկնավոր Հայրը, Որուն միայն կվայելե փառքը, պատիվը և երկրպագությունը հավիտյանս, ամեն:

**Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶՐ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(29 հունվարի 2006 թ.)

Մի առիթով, երբ Քրիստոսի աշակերտները խոսում էին միմյանց հետ տարբեր հարցերի մասին, նաև մտածում էին, թե իրենցից ով է ավագը, ով է կրտսերը, ով ավելի իշխանություն պիտի ունենա մյուսի նկատմամբ, Քրիստոս նրանց պատվիրեց՝ ասելով. «Տեսեք, ինչպես Ես և Իմ Հայրը մեկ ենք, այնպես էլ դուք մեկ պետք է լինեք: Եվ որպեսզի դուք մեկ լինեք, միակ օրենքը, որ պետք է իշխի ձեր հարաբերություններին մեջ, դա սերը պետք է լինի»:

Քրիստոսի աշակերտները համբարձումից հետո, հետևելով մեր Տիրոջ պատվիրանին, ցրվեցին, տարածվեցին աշխարհի բոլոր երկրները՝ չորս ծագերը, և սկսեցին Քրիստոսի Ավետարանը քարոզել մարդկանց: Շուտով նրանց միացան ուրիշներ՝ քարոզիչներ, որոնք երբեք մեր Տիրոջը չէին տեսել, ինչպես, օրինակ՝ Պողոս առաքյալը, Բառնաբասը, Փիլիմոնը: Նրանք ևս սակայն նույն հաջողությամբ կատարեցին Աստծո կողմից իրենց վստահված պարտականությունը՝ տարածելով Ավետարանի լույսը և հիմնելով եկեղեցիներ տարբեր-տարբեր քաղաքներում, տարբեր ժողովուրդների համար և տարբեր երկրների մեջ:

Երբ նայում ենք առաջին դարերի եկեղեցական կյանքին, տեսնում ենք, որ այն ժամանակ աշխարհի համար ծանոթ գրեթե բոլոր երկրներում և բոլոր ազգությունների մեջ հաստատվեցին Քրիստոսի տեղական եկեղեցիները, սակայն այնուհանդերձ կար մեկ Եկեղեցի, դա Քրիստոսի Եկեղեցին էր: Դարերի ընթացքում, դժբախտաբար, Քրիստոսի Եկեղեցին բաժանվեց մի քանի մասերի: 6-րդ դարի սկզբին՝ 518 թվականից հետո վերջնականապես առաջին բաժանումը տեղի ունեցավ Քրիստոսի Եկեղեցու մեջ, երբ արևելյան ազգությունների եկեղեցիները և արևմտյան եկեղեցիները բաժանվեցին միմյանցից:

1054 թ. նոր բաժանում առաջացավ արևմտյան եկեղեցու մեջ, երբ Բյուզանդական Եկեղեցին բաժանվեց Հռոմի Եկեղեցուց: Միջին դարերում, ավելի ուշ Մարտին Լյութերի և նրա կողմնակիցների քարոզությամբ Հռոմեական Եկեղեցու մեջ բաժանում տեղի ունեցավ, և Հռոմից բաժանվեցին բազմաթիվ եկեղեցիներ, որոնք այսօր գոյություն ունեն, գործում են, որոնց մենք կոչում ենք Բողոքական Եկեղեցիներ: Սակայն սկսած առաջին բաժանման օրից իսկ եկեղեցու առաջնորդների մտքերի մեջ, հոգիներում և սրտերում միշտ Աստծո ձայնը խոսում է, և նրանք միշտ անհրաժեշտություն են զգում միավորվելու:

12-րդ դարում, երբ Հայ Եկեղեցին իր մասնակցությունն էր բերում եկեղեցիների միության գործին, ինչպես Բյուզանդական Եկեղեցու հետ, այնպես էլ Հռոմեական Եկեղեցու հետ, Վրաց Եկեղեցու հետ, նաև որոշ բանակցություններ էր վարում Ասորի

Եկեղեցու հետ, որովհետև որոշ տարաձայնություններ էին առաջացել վերջինիս հետ, այդ ժամանակ գումարված ժողովներից մեկում, որ կոչվում է Հռոմկլայի ժողով, մեր Եկեղեցու վարդապետներից Ներսես Լամբրոնացին, որը հիմնական բանախոսն էր այդ ժողովի, ասում է. «Քրիստոսի Եկեղեցին մեկ էր՝ իբրև մեկ տուն: Սատանային հաջողվեց այդ տունը փլուզել, քանդել, մասնատել և տարբեր-տարբեր եկեղեցիներ ստեղծել: Մեր պարտականությունն է, որպես Քրիստոսի Առաքյալների հաջորդների, նորից վերաշինել այդ Տունը, որ Քրիստոս մեկ եկեղեցի ունենա և ոչ թե իրարից բաժանված եկեղեցիներ»:

Փառք Աստուծո, որ 20-րդ դարը մեզ պարգևեց Էկումենիզմի, փոխհասկացողության և քրիստոնեական սիրո վարդապետությունը և եկեղեցիները միացան քրիստոնեական սիրո մեջ, վերացավ անհանդուրժողությունը, վերացավ թշնամանքը և տիրեց միմյանց սիրելու, հասկանալու և ընդունելու քաղաքականությունը: Անշուշտ մենք տակավին շատ հեռու ենք՝ հասնելու այն բաղձալի օրվան, երբ Քրիստոսի Եկեղեցին նորից պետք է միանա և ունենա մեկ հոտ և մեկ հովիվ: Մեկ հոտը մենք նկատի ունենք բոլոր քրիստոնյա ժողովուրդները միասին վերցրած և մեկ հովիվը՝ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Հեռու է այդ օրը, սակայն այդ օրվա մոտենալու համար անհրաժեշտ են որոշակի գործողություններ:

Միքելի հավատացյալներ, այսօր ուրախ եմ նշելու, և դուք հավանաբար արդեն զգացիք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հյուրընկալել է քրիստոնեական տարբեր եկեղեցիների պաշտոնական ներկայացուցիչների: Այստեղ օրեր առաջ իր աշխատանքներն սկսեց Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և Արևելյան Քույր Եկեղեցիների՝ Հայ, Ասորի, Ղպտի, Եթովպական, Հնդիկ Մալանկարա, պաշտոնական ներկայացուցիչների համատեղ հանձնաժողովը, որ երրորդ հանդիպումն է անցկացնում, և այս երրորդն արդեն Ս. Էջմիածնում է: Այս հանձնաժողովը փնտրում է այն ուղիները, որոնք մեզ պետք է բերեն միության ճանապարհին: Ես խնդրում եմ ձեր բոլորին, որ ադոքս բարձրացնեք առ Աստված, որպեսզի Աստված լուսավորի մեր բոլորի մտքերը, որպեսզի Աստված ջերմություն սերմանի մեր սրտերի մեջ, և պայծառություն տա մեր մտքերին, որպեսզի մենք կարողանանք չշեղվել, այլ ընթանալ այն ուղիով ճանապարհով, որ տանում է դեպի միություն: Չմոռանանք, որ սատանան դեռ գոյություն ունի, սատանան դեռ ապրում է և սատանան դեռ գործում է:

Այսօր մենք նաև տխրությամբ անդրադառնում ենք, և պիտի հաղորդեմ ձեզ, որ վերջին օրերին ի Տեր փոխադրվեց Հնդիկ Մալանկարա Եկեղեցու կաթողիկոսը՝ Մատթեոս Բասիլիոս Բ Մար Թոման, և որի հոգու հանգստության համար մենք պիտի կատարենք հոգեհանգստյան արարողություն, և խնդրում եմ, որ դուք բոլորդ ձեր աղոթքները առաքեք առ Աստված, որպեսզի Նա Իր ծառային իսկապես արժանացնի Երկնքի Արքայությանը և միշտ Իր մոտ պահի. ամեն:

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

«Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷԻՆ» ՃԱՌԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

Այս խորագրով հայ (և ոչ միայն հայ) եկեղեցական մատենագրության մեջ կենցաղավարում են մի շարք ճառեր, որոնցից շատերի հեղինակային պատկանելությունը բավականին հստակ է և չի կարող քննության առարկա դառնալ: Այսպես, հայրախոսական մատենագրության մեջ առավել լայն ճանաչում են վայելում Ս. Գրիգոր Նազիանզացի-Աստվածաբանի (328-389 թթ.), Ս. Եպիփան Կիպրացու (315-403 թթ.), Հակոբ Սրճեցու (451-521 թթ.) և այլոց համաբնույթ ճառերը: Հայ եկեղեցական մատենագրության մեջ այս նյութին նվիրված լավագույն երկերից են Ս. Հովհան Օձնեցի Հայրապետին (կթղ. 717-728 թթ.), Արիստակես Լաստիվերցուն (ԺԱ դ.), Գրիգոր Ավագ Վկայասեր Հայրապետին (կթղ. 1065-1105 թթ.), Ներսես Լամբրոնացուն (+1198) Վարդան վարդապետին վերագրված ճառերը, ճառական և կանոնական հատվածները¹: Հովհան Օձնեցու անունով հայտնի ճառերն ու ճառական հատվածները կրում են «Վասն մեծի աուուր միաշաբաթին», «Պատճառ աուուրցն արարչութեան» խորագրերը²: Հայ միջնադարում Օձնեցուն վերագրված այս երկերը, որքան ինձ հայտնի է, հնագույնն են իրենց տեսակի մեջ:

Միաշաբաթի կամ նոր կիրակիի աստվածաբանական բովանդակությունը բացատրող համաբնույթ, անանուն մի ճառ պահպանվել է ՄՄ թիվ 2040 (թ. 310ա-316ա), 2819 (թ. 270ա-274ա ձեռագրերում: Այն իբրև տոնացուցային միավոր արձանագրված է պրոֆ. Ռ. Վարդանյանի Հայոց տոնացույցին նվիրված կարևոր մենագրության մեջ³: Այս ճառի համեմատությունը Օձնեցու համաբնույթ «Վասն մեծի աուուր միաշաբաթին» ճառի հետ պարզում է բառացի, համապատասխանության իմաստային ընդհանրության բազում եզրեր, որոնք առկա են այդ ճառերում: Այսպես, խնդրո առարկա «Ի խորհուրդ նոր կիրակեին» ճառի մասն են կազմում «Վասն մեծի աուուր միաշաբաթին» տպ. ճառի երկու ամբողջական հատվածները: Համադրենք այդ հատվածները՝

¹ Տե՛ս **Գ. Մ. Մանուկյան**, Արիստակես Լաստիվերցի. Մատենագրության բանասիրական քննություն, Եր., 1977, էջ 263-277 Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատ. Պ. Խաչատրյանի, Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 391-397, 398-404:

² Տե՛ս տպ. «Հովհաննու Իմաստասիրի Աւանդեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 101-106, **Մ. Պապյան**, Հովհան Օձնեցու կյանքը, գործունեությունը, Եր., 1998 (բնագրեր), էջ 125-129:

³ Տե՛ս **Ռ. Հ. Վարդանյան**, Հայոց տոնացույց. (4-18-րդ դարեր), Եր., 1999, էջ 199, ուր սակայն ՄՄ թիվ 3795 ձեռագրում «Հովհաննու Իմաստասիրի հայոց կաթողիկոսի ի միաշաբաթ» խորագրով առկայող բնագիրը (թ. 204բ-205ա) նույնացված է վերոհիշյալ բնագրի հետ. մինչդեռ թիվ 3795 ձեռագրում առկա բնագիրը մեկ մասն է Օձնեցու համանուն երկի. տե՛ս «Աւանդեցոյ մատենագրութիւնք», էջ 101-103 («Յետ այսորիկ զփառաւորագունիս այսորիկ... ի հաճոյութին կամացն Աստուծոյ»):

ընդգծելով միայն տարբերությունները.

Ի խորհուրդ նոր կիրակեին	Վասն մեծի առուր միաշաբաթին
Զի զոր այլոցն բանիւ հրամայեաց, Ինքն արդեամբք կատարեաց, յորժամ ելեալ ի գլուխ յաղաթսն Աստուծոյ: Ասացին եւ զայն եւ ի կիրակեի զոյ առ ի մեր վարդապետութիւն զայն առնելով. թուի ինձ ի շաբաթու, վասն զի կատարեաց եւ յաղաթելոյն զբանիցն հաստատութիւն ետուն, զի չէր գրեալ, թէ ծունր դներ կամ՝ երկրպագութիւն, որպէս ի հինգշաբաթոջ առուրն որպէս ի մատնութեան զիշերն գրեալ է, թէ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն, եղ ծունր, կաց յաղաթս: Եւ անդ յետ աղաւթիցն հրամայեաց աշակերտացն, եթէ՝ «Ննջեցէք եւ հանգերուք այսուհետեւ»: Իսկ յաստուածային զիշերն ոչ գտանեմք այսպիսի ասացեալ, այլ եթէ՝ հաներ զգիշերն ի գլուխ յաղաթսն Աստուծոյ: Վկայ են Երուսաղէմացիք, որ մինչեւ ցայսար զմիաշաբաթին աւրն պայծառացուցանեն զիշերապաշտութեամբ: Յակովբայ եղբարն Տեառն հրամայեալ է նոցա, եւ ես իմոցս գնոյն հրամայեցի՝ Յովհանն Հայոց կաթողիկոսն՝ նորին հրամանին հետեւել եւ Առաքելական կանոնացն հնազանդել ի հաճոյս կամացն Աստուծոյ:	Զի զոր այլոցն բանիսն հրամայեաց, Ինքն արդեամբք յանձին կալաւ կատարել, յորժամ ելեալ ի լեառն հաներ զգիշերն ի գլուխ յաղաթս Աստուծոյ առ ի մեր վարդապետութիւն զայն առնելով: Եւ թուի ինձ ի սմին միաշաբաթոջ զայն կատարել, քանզի յաղաթելն ոչ ասաց, թէ եղ ծունր, կամ երկրպագութիւն, որպէս ի մատնութեան զիշերին գրեալ է, թէ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն ի Զիթենեաց լերինն, եղ ծունր, կայր յաղաթս, եւ անդ յետ աղաւթիցն եւ զհանգստեան ժամանակն հրամայե, յասելն եթէ «Ննջեցէք այսուհետեւ, եւ հանգերուք»: Իսկ այժմ յաստուածային զիշերին ոչ գտանեմք այսպիսի ինչ ասացեալ, այլ, եթէ՝ «հաներ զգիշերն ի գլուխ յաղաթսն Աստուծոյ»: Բայց ես ոչ փոքր ինչ վարկանիմ վկայութիւն առնուլ ասացելոցս ի մենջ, քանզի Երուսաղէմացիքն տակաւին մինչեւ ցայսար զար միաշաբաթին պայծառացուցանեն զիշերապաշտութեամբ իբրեւ Յակովբայ հրամայելով նոցա, յառաջին իւրեանց պատրիարգէն, եւ ես իմոցս գնոյն հրամայեցի՝ նորին հրամանացն հետեւել, եւ Առաքելական կանոնացն հնազանդել ի հաճոյս կամացն Աստուծոյ... տպ. էջ 102-103: Յետ այսորիկ փառաւորագունիս այսորիկ եւ զհրաշալոյս ասասցուք զխորհուրդս զառուր միաշաբաթուս, որ զհանդերձեալ խոստացելոց բա-

ձեռք բարեացն յիշեցուցանե՛լ ի միջի մերում: Վասն զի յայնմ աւուր Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, զմահ խափանեաց եւ ընդ Իւր յարոյց գյուսացեալսն Իւր, որ յԱդամայ մինչեւ ի գալուստն Իւր, եւ ի նմին աւուր խոստացաւ զԻւր միւսանգամ գալուստն, եւ գլուխակի հնչեալն հրեշտակական բարբառովն, զոր մարգարէն աւագափող անուանե՛լ, զի ի սմին գիշերի **առնել բնաւիցս յարութիւն:** Բայց թէ ոք կամեսցի գիշել, թէ ի գիշերին յայնմիկ յորում մասին կամ յորում **ժամու լինիցի** յարութիւն, զի այն ծածկեալ է ի մենջ, քանզի եւ ոչ **աւետարանիչքն զՔրիստոսի գալստեանն ժամանակն պատմեցին:** Եւ արդ, պատշաճ է ամենայն քրիստոնէից յերեկոյին շաբաթին մինչեւ ցառաւաւոս միաշաբաթին արթուն եւ զուարթուն լինել եւ ակն ունել **Քրիստոսի** գալստեան, որպէս ասաց Տէր. «Արթուն կացէք եւ անդադար աղաւթս արարէք, զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ յերեկոյնեայն, թէ՛ ի մեջ գիշերի, թէ՛ ի հաւախաւսի, եթէ՛ ընդ առաւաւոս»: Ասելով թէ՛ «Արթուն կացէք եւ աղաւթեցէք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն», եւ թէ՛ Արժանի լիցուք կալ առաջի Որդւոյ մարդոյ, զի որք հսկմամբք եւ աղաւթիւք զբոլոր գիշերն անցուցանեն, այնպիսիքն հրեշտակք եղիցին ի մարմնի՝ զանմարմնոցն բերելով զնմանութիւն: Զի զոր արինակ քառասնարեայ պահաւքն զտարւոյն մեղսն քաւեմք, սոյնպէս եւ յայսմ գիշերիս զբոլոր շաբաթոյն **քաւեմք** զսխալանքն եւ զանպատուելի զբնութիւնս մեղաւք, հրեշտակ առնեմք ի մարմնի՝ փոխադրելով ի յորդիս յու-

րութեանցն յիշէ նա ի միջի մերում եւ ծնանի զճշմարտութիւն: Վասն զի յայսմ աւուր Քրիստոս յարուցեալ ի մեռելոց՝ զմահ խափանեաց, եւ ընդ Իւր **յուսով** յարոյց զսկզբանէ զմեռեալսն, որ յԱդամայ մինչեւ ի գալուստն Երկրորդ, նոյնպէս եւ ի նմին աւուր խոստացաւ **առնել** զԻւր միւսանգամ զգալուստն, յորում աւուր եւ ուժընդի հնչեցեալ լինի հրեշտակական բարբառքն, զոր մարգարէն աւագափող անուանե՛լ: Վասն զի յայսմ գիշերիս, **որ հանդերձեալ է լինել միաշաբաթի, եղև Քրիստոսի յարուցանողին մերոյ յարութեան ժամանակ,** վասն որոյ խոստացեալ է ի սմին գիշերի **առնել համաշխարհական յարութիւն:**

Բայց եթէ կամեսցի ոք ի բազմաց գիտել, եթէ ի գիշերին յայնմիկ յորում մասին կամ յորում **պահու հանդերձեալ է լինել** յարութիւն, այն ծածկեալ **եղև** ի մենջ, քանզի **ըստ աւետարանչացն պատմութեան եւ ոչ Քրիստոսին եղև բացայայտեալ յարութեան ժամանակն:** Արդ, պատշաճ է ամենայն քրիստոնէից յերեկոյնեայ շաբաթուն մինչեւ ցառաւաւոս միաշաբաթուն արթուն եւ զուարթուն լինել, եւ ակն ունել **հանդերձեալ** գալստեանն: **Զայս** եւ Տէրն **յԱւետարանին հրամայէ** ասելովն, եթէ՛ «Արթուն լերուք, եւ անդադար աղաւթս արարէք, զի ոչ գիտէք, եթէ յորում ժամու Տէրն ձեր գայ. յերեկոյնեայ եթէ ի **հասարակ** գիշերի, թէ՛ առաւաւոսի **«եւ ի վերայ բերէ, թէ՛** «Արթուն կացէք եւ անդադար աղաւթս արարէք, զի մի՛ մտանիցիք ի փորձութիւն», եւ եթէ՛ «Արժանի լինիցիք կալ առաջի Որդւոյ մարդոյ»: Զի որք

սոյ, քանզի Տէրն հրեշտակաց զմեզ նմանեցուցանէ ասելով, թէ՝ «Դուք նմանողք մարդկան, որ ակն ունիցին Տեառն իւրեանց, թէ ե՞րբ դառնայցէ ի հարսանեաց, զի յորժամ գայցէ եւ բախիցէ, բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն իւրեանց գտանիցէ արարեալ այնպէս: Ամէն ասեմ ձեզ, թէ բազմեցուցէ զնոսա եւ անցեալ պաշտեցէ զնոսա»:	հսկմամբ եւ աղաւթիւք զբոլոր գիշերս գայս բաղձան անցուցանել յերեկոքեայ շաբաթուն մինչեւ ցառաւառ միաշաբաթին, այնպիսիքն հրեշտակք եղեալ ի մարմնի՝ զանմարմին զուարթոցն բերեն զնմանութիւն: Զի զոր արինակ քառասնարեայ պահաւքն զտարոյ զմեղսն քաւեաց, նոյնպէս յայսմ աստուածային գիշերի զբոլոր շաբաթուն սխալանսն մաքրէ, եւ զմեղաւք զանպատուեալ զբնութիւն հրեշտակս առնէ ի մարմնի՝ փոխադրելով յորդիս լուսոյ եւ յորդիս տուրնջեան: Քանզի զմեզ հրեշտակաց նմանեցուցանէ Տէր յԱւետարանին ասելովն, եթէ՝ «Դուք նմանողք մարդկան, որ ակն ունիցին Տեառն իւրեանց, թէ երբ գայցէ ի հարսանեացն. զի յորժամ գայցէ եւ բախեցէ՝ բացցեն նմա, եւ երանի է ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն իւրեանց գտանիցէ արթուն: Ամէն ասեմ ձեզ, զի ածեալ բազմեցուցէ, եւ գաւտի ածեալ պաշտեցէ զնոսա»: տպ. էջ 101-102:
--	---

Արդ, փաստերի այսօրինակ համադրումն ու հաշվառումը ենթադրել են տալիս, որ «Ի խորհուրդ նոր կիրակէին» բնագիրը Օձնեցու անունով հրատարակված «Վասն մեծի աւուր միաշաբաթին» միավորի խմբագրական, իմաստային տարբերակն է: Տպագրված տարբերակն աչքի է ընկնում ընթերցումների իմաստային ճշգրտությամբ: Այս հիմամբ կարելի է թեաքար ենթադրել, որ տվյալ բնագիրն իր ներկա տեսքով կյանքի է կոչվել «Վասն մեծի աւուր միաշաբաթին» ճառի հիման վրա թերևս Ժ դ. ի իբրն օրվա խորհուրդը բացատրող միավոր ներմուծվել «Տոնապատճառ» ժողովածուի մեջ հավանաբար Մամվել Կամրջաձորեցու իսկ ձեռքով: Սակայն այս ենթադրությունն ամեննին չի բացառում Օձնեցու հեղինակային իրավունքը: Այս մասին կարող է վկայել երկի խորագրում հեղինակի անվան բացակայության փաստն ինքնին (ինչպես հայտնի է, ինքնագիր վավերագրի խորագրում հեղինակը հասկանալի պատճառով չէր արձանագրում իր անունը. այդ անում էին հետագայի իրազեկ գրիչները): Այսու իր բնագրային հիմքի մեջ ճառն անտարակույս պետք է մասը համարել

Օձնեցու մատենագրական ժառանգության⁴:

Բացի Աստվածաշնչից և «Մաշտոց» ծիսամատյանից, հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է նաև Եկեղեցու հայրերի աստվածաբանական ժառանգությունը: Նա հանվանե էրկիցս հիշատակում է Ս. Գրիգոր Աստվածաբանի անունը, նրա «Խաւսք ի նոր Կիրակէն...» ճառը⁵, նաև մի հատված վկայաբերում այդ ճառից: Ինչպես երևում է, Օձնեցին իր աչքի առջև է ունեցել Ս. Եփրեմ Ասորու վաստակը նմանապես: Խոսելով Մկրտության պահին Ս. Երրորդության մասնակցության մասին՝ Հովհան Օձնեցի Հայրապետը հետևյալ կերպ է բնութագրում աստվածային անձերին ու նրանց գործունեությունը. **«Ջի որպէս Հայր ասէր Որդի գործէր, Սուրբ Հոգին գրայր և գրգայր, նոյնպէս եւ աստ. Հայր ի վերուստ ձայնէ, Որդի մկրտի, Սուրբ Հոգին իջանէ մարմնաւոր տեսեամբ»:** Վկայությանս ընդգծյալ մասը բառացիորեն քաղված է Ս. Եփրեմի Արարածոց մեկնությունից, ուր կարդում ենք. «Կամ յասել Իւրում վասն ջուրցն եւ խաւարին, որ ի վերայ նոցա, ետ խորհուրդ տկար մարդկան իբրեւ նկարէ նոցա զխորհուրդ աւագանին մկրտութեան, զի արբելոց էր Նա ի գթութիւն գրգելոյ Հոգւոյն Սրբոյ: Քանզի զարարչութենէն Աստուծոյ պատմէր, ոչ էթէ արարած յայտ արար ընդ Նմա ի վերայ ջուրցն, որ գրգայր, այլ վասն Հոգւոյն Սրբոյ յայտ արար. **իբր Հայր ասէր, Որդի գործէր, Հոգին գրգէր եւ գրայր**»⁶: Այսպիսով, միանգամայն ակնհայտ է դառնում, որ ճառիս հայ հեղինակը առաջնորդվել է ոչ միայն երևույթի եփրեմյան մեկնաբանությամբ, այլև բառացի վկայություն բերել նրա Արարածոց մեկնությունից:

Բնագիրը հրապարակվում է ըստ ՄՄ հետևյալ ձեռագրերի.

A = 2040, Տոնապատճառ: **Ժամանակ**՝ 1359 թ.: **Վայր**՝ Ղրիմ: **Գրիչ**՝ Մարկոս, Գրիգոր սրկ., Նատեր: **Ստացող**՝ Մարգարե արք.: **Թերթ**՝ 460: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 26,5x17,5: **Գրություն**՝ երկայուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 33: **Բնագիր**՝ 310ա-316ա:

B = 2819. Տոնապատճառ: **Ժամանակ**՝ ԺՁ դ.: **Գրիչ**՝ Մարկոս քին., անանունք: **Թերթ**՝ 422: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 24,7x17,5: **Գրություն**՝ երկայուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 31-41: **Բնագիր**՝ թ. 270ա-274ա⁷:

⁴ Ակնհայտ է, որ այս ճառի իմաստային ընդհանրությունները նաև Օձնեցու Ատենաբանության հետ. տե՛ս և հմմտ. համադրված հատվածները տպ. էջ 13, 17:

⁵ ՄՄ, ձեռ. 1500, թ. 741ա-742բ, 1525, թ. 404ա-407բ, 996, թ. 542ա-547բ:

⁶ Տե՛ս «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», Հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 3:

⁷ Տեղեկություններն ըստ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Հտ. Ա. կազմ. Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 1965, էջ 706, 882:

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՆՈՐ ԿԻՒՐԱԿԵՒՆ՝

Նաակատիք ասի, այս ինքն՝ նորոգումն, զոր եւ Աստուածաբան զնաակատեաց ճառն յայսմ աւուր խաւսեցաւ յասելն¹ այսպէս, թէ՝ «Նաակատիք պատուեցին² Հին աւրէ նքն»¹։ Եւ դարձեալ ի նոյն աւուրն խորանն կանգնեցաւ, որ էր աւրինակ եկեղեցւոյ։ Այլ զի³ մարդկան բնութիւնս հնացեալ ծերացաւ մեղաւք⁴։ Արդ, Քրիստոսի յարութեամբն նորոգեալ մանկացաք, քանզի նոր էր յարութիւն Քրիստոսի, նոր եւ ուր աւուր դրաւքն ամրագոյն փակաւքն⁵ մտանել առ աշակերտսն՝ փչելով ի նոսա Հոգի Սուրբ՝ տպաւորելով, որ նշանակէր զփչումն յամենայն հաւատացեալս Սուրբ Երրորդութեան ի ձեռն մկրտութեան եւ ապաշխարութեան, որպէս Պաւլոս վկայէ, թէ՝ «Հինն անց, եւ ահաւասիկ եղեւ ամենայն⁶ նոր»²։ քանզի աւրս այս ուրերորդ է զկնի Զատկի⁷ կիրակէին, որ է պատկեր ուրերորդ դարոյն մտելոյ։

Արդ, առաջին աւր արարչութեան կիրակէն է, որ ասի միաշաբաթ, այսինքն՝ մի աւր եւ մի Աստուած՝ արարիչ հնոյն եւ նորոյս, զոր Մովսէս յարարչութեան նշանակեաց։ Վասն այսորիկ ըստ միաւորական անուանն կոչի նոր, զի ոչ ունի իւր փոխան նոր, այլ որ հնացուցանէ զնա, այլ միշտ մի եւ հանապազ միջաւրեայ եւ անստուեր լոյսն։ քանզի յայսմ աւուր ծագեցեն արդարքն յարքայութեան երկնից։ Վասն որոյ պարտ է մեզ անարատապէս ի մարմնի քաղաքաւարիլ եւ ուղիղ վարութիւն հաճոյանալ Աստուծոյ, որպէս այսորիք կարաւ լինիցիմք ի լուսաւորութիւն արդարոյն մտանել եւ ընդ նոսին յանգրական բարիսն վայելել, որ ի վեր անցանէ քան զմիտս մարդկան, թէ վասն է՞ր միաշաբաթն կիրակէ կոչեցաւ ի հասարակաց սովորութեանց, որ է տէրունի եւ նուիրեալ եւ⁸ սուրբ։ Արդ, զաւրս զայս գործք Իւր մեծացուցին նախ զի յայսմ աւուր խորհեցաւ Աստուած զանէ եւ զանգործ արարածս ի գոյ ածել, ի կերպ եւ ի տեսակս, որպէս յառաջն ասացաւ, զի հանդերձեալ յաւիտենին նա է սկիզբն։ Բայց եւ այլուր^{8ա}, ի բազում տեղիս մեծամեծ եւ սքանչելի գործք Աստուծոյ ի սոյն աւուրս ասի լեալք, որպէս զծնունդն Նոյի յայսմ աւուր ասեն լիեալ, յորոյ վերայ հայրն նորա մարգարէացաւ, թէ՝ «Մա հանգուսցէ զմեզ ի ցաւոց եւ ի հեծեծանաց եւ յանիծից, զոր անէծ Տէր Աստուած»³։ Եւ առ Նոյ չգտանեմք կատարեալ զայս, զի անդ ոչ եղեւ հանգիստ⁹ չարեացն, այլ պնդութիւն սաստկութեան եւ արտատեղի տարակոյսք աղետից եւ նորագործեալք վասն ջրհեղեղին, այլ մարգարէութիւն սորա ի Տէր մեր կատարեցաւ, քանզի հանգոյց զմեզ ի տրտմութեանց եւ ի ցաւոց, եւ յերկիւղից աներկիւղս արար, որպէս եւ Եսայիաս վկայէ. «Բարձան, ասէ, ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք»⁴։ Եւ ինքն Տէրն ասէ. «Մի՛ երկնչիք, ես ընդ ձեզ եմ»⁵, այլ՝ «Քաջալերեցարութ, զի Ես յաղթեցի աշխարհի»⁶։ Եւ ե՞րբ եղեւ այս. ի¹⁰ ժամանակի իբրեւ եկն Տէրն կնիք առնուլ ի

Յովհաննէ, եւ մկրտեցաւ ի Յովհաննէ¹¹ ի Յորդանան: Աւրն¹² այն կիւրակէ ասի գոյ: Եւ նա եղև նորոյ արարչութեանս դարձեալ սկիզբն: Առաջին¹³ արարածն, որ յայսմ աւուր գոյացան, նոքա անիծիւք ընդ ապականութեամբ անկան: Իսկ յայսմ աւուր անէծքն բարձան, եւ երկինք, որ փակեալ էր եւ արգելեալ մուտ նորա¹⁴, որպէս սուրն հրեղէն գդրախտն, այսաւր բացաւ մեզ, եւ յառաջնումն լինելութեան ասաց. «Եղիցի երկին, եղիցի երկիր»⁷, եւ այլ եւս: Այսաւր ի վերայ Որդոյ ասաց. «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»⁸, որ չէ¹⁵ այժմ հաճեցաւ ընդ Որդոյ Հայր, զի ի բնէ հաճեալ էր, եւ¹⁶ զի յաւիտենից ընդ Նմա իսկ էր, այլ ի ձեռն արարչական ձայնին, զոր ի վերայ Որդոյ բարբառեցաւ, դորդեալ եւ սասանեալ արարածք դադարեցան եւ հաստատեցան: Եւ ասելովն, թէ՝ «որ հաճեցայ», զի տնարինական կրիւքն, որով Որդի զաշխարհս վերաստեղծեաց, հայր վկայեաց, թէ՝ Ես հաճեալ եմ, զի զմիականութիւն յայտ արասցէ: Ուստի եւ Հոգին Սուրբ աղանակերպ իջմամբ զխորհուրդ Երրորդութեան բացայայտեաց եւ վկայեաց, թէ նոյն խորհուրդն է, որ ի սկզբան լինելութեան էր. զի որպէս «Հայր ասէր, Որդի գործէր, Սուրբ Հոգին գթայր եւ գրգայր»,⁹ նոյնպէս եւ աստ. Հայր ի վերուստ ձայնէ, Որդի մկրտի, Սուրբ Հոգին իջանէ մարմնաւոր տեսլեամբ առ զուգակիցն եւ նմանն Իւր: Եւ այս ամենայն հրաշք եւ սքանչելիք ի փրկութիւն մեզ գործեցան: Զայս ամենայն տեսեալ մարգարէական հոգւովն հայրն Նոյի խաւսեցաւ ի վերայ նորա. ոչ Նոյի, այլ ի յաւուրն, յորում այս փրկագործ խորհուրդք ծագեցեն: Դարձեալ եւ որ յառաջ քան զմեզ ստուգախաւս իմաստունք էին, ասացին ի նոյն աւուր զմուտն Նոյի ի տապանն. «Եւ արկանք ջուրցն¹⁷ յերթերորդում ամսեանն ի քսան եւ եւթնն ամսոյն¹⁰: Նոյնպէս դադարեալ հեղեղն եւ երկրի ցամաքեալ ի նոյն ամսոյն քանիսն եւ յաւրն ասի գոյ, որպէս Մովսէս գրելովն ակնարկէ, զոր Տէր մեր զբանիս դիտաւորութիւն ի կատարած աշխարհիս թարգմանեաց, թէ՝ «Որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի եւ¹⁸ գալուստ Որդոյ մարդոյ»¹¹: Եւ Մովսէս յանապատին զխորանն ի սմին աւուր ասի¹⁹ կանգնել, որ ցուցանէր զգալուստ Որդոյն Աստուծոյ մարմնով յաշխարհս: Ի սմին աւուր ընկալաւ զաստուածահրաման զգիրս եւ զաւրէնս, յորում եւ փառաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն, որ բերէր յինքեան զխորհուրդ եւ զնորոգութիւն հանդերձելոյ աշխարհին²⁰:

«Եւ յութերորդում քահանայացաւ Ահարոն եւ զգեցաւ զպճղնաւորն քառանիւթ». կապուտական երկնից նմանեալ առաքինութեանց, իսկ ծիրանեան ծովածին ծիրանեալ թագաւորապէս զգեստաւորեալ զինքն Քրիստոսի թագաւորին ընծայեալ. «կարմիր մանեակ». հրանման հաւատով, Իւր մարմնովն եւ արեամբն հաւատարմացուցանէ զմեզ Քրիստոս²¹ եւ միաւորէ ընդ անքննելի աստուածութեան Իւր, «եւ բեհեզ նիւթովն, որ է վուշ՝ ի յերկրէ ելեալ» ի Սուրբ Կուսէն մարմին զգեցեալ Քրիստոս երկրածին²² անճառապէս: «Զարդարեցին զնա յոսկեհուն ծիրանագոյն պատմուճանաւք»²³, որ²⁴ ոսկեճաճանչ Աստուածութեամբն Քրիստոս միացաւ²⁵ ի չորս նիւթս մե-

րունակ բնութեանս, եւ միացոյց զմեզ ընդ Իւրում Աստուածութեան, ըստ Եզեկիէլի տեսութեան. «Արք վեց գային»^{12*}. զվեց հազար ամս նշանակ, յորում եկն Բանն Աստուած առ մեզ:

«Այր մի ի մեջ նոցա՝ զգեցեալ պճղնաւոր»^{13*} զմարմինն ի յանգուածոյ²⁶ Կուսին. զի որպէս բան ի բերանոյ բղխեալ, անմարմին է բնութեամբ, իսկ²⁷ յորժամ գրի՝ մարմին առնու, եւ խառնի ընդ նիւթն. այսպէս եւ Բանն Աստուած մինչ առ Հաւր էր, անմարմին էր բնութեամբ²⁸, իսկ յորժամ ի Կոյսն էջ, մարմին առ եւ միաւորեաց ընդ իւրում բնութեան:

Իսկ քարեղէն պնակիտքն նշանակ կարծեմ Կուսին վասն անարատութեան եւ պարկեշտութեան: Եւ երկուքն²⁹ զի հոգւով եւ մարմնով էր սուրբ եւ արժանաւոր երանուհի կոյսն: Այսոքիկ ի ձեռն Մովսէսի դրոշմեցան խորհուրդք:

«Եւ եթէ զի՞նչ են հանգամանք գալստեան նորա». տայ եւ մեզ նշանակ Դաւիթ. «Իջցէ որպէս զանձրեւ ի վերայ գեղման որպէս ցաւոյ ցաւոյեալ յերկիր»^{14*}: Եւ վասն է՞ր գայ. զի փրկեացէ զաղքատն եւ զտնանկն³⁰ ի ձեռաց հզարին³¹ յափշտակողացն զնա:

Իսկ «արքն վեց» տապար ի ձեռին ունելով՝ զԽաչին խորհուրդն Հին և Նոր կտակարանաւքս, որ կոտորեցին բարձին զգայթակողութիւն յաշխարհէ ի ձեռն խաչագեաց մարմնացելոյ Բանին Հաւր:

«Իսկ արծաթի զանգակքն ի ստորոտ հանդերձին նոնաձեւք»՝ զլուսապայծառ քարոգութիւն ընդ տիեզերս հնչեցեալ յառաքելոցն:

«Եւ վակաս երկոտասան ակամբք»՝ ընդելլուգեալ ի կուրծս քահանայապետին՝ արինակ երկոտասան առաքելոցն ազգի ազգի եւ գունակ գունակ, երփն երփն փայլատակութեամբք պատուականութեամբ, որ բերէր զնմանութիւն երկնից պայծառութեամբք լուսաւորացն:

«Վակաս քառանիւթեայ ի յուսն³² բարձեալ քահանայապետին³³, յորում ոսկին սուրբ խառնեալ». եւ աստուածութիւն խառնեալ ի չորս նիւթ³⁴ բնութեանս մեր միացեալ:

«Իսկ ոսկեգոյն թիթղունքն»^{15*}՝ զՀոգւոյն Սրբոյ շնորհաւք զխաչագգեցեալսն ընդ Քրիստոսի ի վեր տանելով ի հայրական խորան փառացն, որպէս ի³⁵ մոլորեալ ոչխարն ցուցանէ Քրիստոս ինքեամբ բարձեալ զբոլոր բնութիւնս մեր: Վասն որոյ եւ Դաւիթ ասէ. «Այսաւր է, զոր արար Տէր, եկայք, ցնծասցուք եւ ուրախասցուք³⁷ ի սմա, քանզի յասմ արւ եցոյց զփրկութիւն Իւր առաջի ազգաց»^{16*} յայտնեաց զարդարութիւն³⁷ Իւր, որ է յարութիւն Տեառն մերոյ ի մեռելոց, քանզի հրաւիրեաց յառաջահայեաց գիտութեամբ երանելի այրն, որ վասն յոյժ հաւատարմութեան սիրտ եւ կամք Աստուծոյ կոչեցաւ, զտիեզերս յուրախութիւն աւուրս կոչէ: «Ուրախ եղիցին³⁸ երկինք եւ ցնծացէ երկիր, զուարճացի ծով լրիւ իւրով, տիեզերք եւ ամենայն, որ է ի նոսա»^{17*}: Յիրաւի, այսպիսի ուրախարար աւետեաւք³⁹ զտիեզերս լցոյց, քանզի այսաւր

փրկություն եղեւ աշխարհի, որ էր⁴⁰ երեւելի եւ զգալի աշխարհս եւ աներեւոյթ արարածք եւ⁴¹ իմանալիքն:

Այսաւր դրունք դժոխոց բացան եւ մահ լուծաւ, հին Ադամն ի բաց եղաւ եւ նորս լցաւ, նոր արարածք ի Քրիստոս նորոգեցան⁴²:

Այսաւր ազատեալ ելանեն արգելեալքն ի խաւարէ գրոյն:

Այսաւր եղեւ գերի գերիչն ամենայնի, եւ գերելոց դարձ ի դժոխոց, եւ ի նմանէ շարժեալ տապալին հիմունք նորա ի բարբառս թագաւորին փառաց: Ի դրունս նորա կապելոցն ասել է, թէ՝ «Ելեք, եւ որք ի խաւարին, թէ՛ Յայտնեցարուք»¹⁸:

Այսաւր սրովբեազէն՝ սուրն տեղի տայ անցից ճանապարհի առ ծառն կենաց եւ մերոյ ազատութեանս գրի կտակ անջնջելի՝ դրոշմեալ արեամբն Քրիստոսի:

Այսաւր մարգարէիցն յառաջաձայն աւետիքն առ եկեղեցի լցեալ կատարեցան, քանզի անդրանիկն ի մեռելոց յարեաւ, եւ մեծ աւարաւ գայ առ խաւսեցեալն Իւր, ըստ մարգարէին. «Խաւսեցայց զքեզ ինձ յաւիտեանս»¹⁹, եւ հանեալ ի նմանէ զանյուսութեան խիլայն⁴³, եւ տայ նմա հանդերձս ոսկեհոռոս⁴⁴ զարդարեալ եւ պաճուեալ. առ որս՝ Ուրախ լեր գոհութեամբ՝ բարբառի եկեղեցի առ բարեկամս Փեսային ասելով. «Յնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան» փոխանակ խորգոյն, զոր ի գերչացն զգեցեալ էի, «պատմուճան ուրախութեան»²⁰՝ փոխանակ զի նախատ լինէի թշնամեացն, որ մեծ ամբարտաւանութեամբ ոտն հարեալ ասէին. թէ՛ «Չիք փրկություն սորա առ Աստուած իւր»²¹:

«Իբրեւ փեսայի եղ ինձ պսակ լուսազարդ, իբրեւ հարսն զարդարեալ լուսեղէն պայծառազարդ»⁴⁵ պատմուճանան: Յիրաւի կոչի արս այս⁴⁶ Տէրունի եւ Նոր կիրակէ, զորոյ խորհուրդն, եթէ կամեցի որ ուսանել, ի գիրս մեծին Գրիգորի Աստուածաբանին գտանէ²²: Եւ զգալուստ Հոգւոյն Սրբոյ յարս Պենդեկոստէին յաւուր կիրակէի ասել հեղեալ յառաքեալսն, յորժամ զաշակերտացն զգլուխն եւ զհարազատ եղբարսն պատուակից առեալ նորին⁴⁷ ի լեառն չոգաւ՝ առ ի ցուցումն աստուածային փառացն, յորում Մովսէս եւ Եղիա⁴⁸ երեւեցան փառաւք խաւսելով ընդ Նմա յաւուր կիրակէի, վասն զի զաւրինակն եւ զխորհուրդն հանդերձեալ զալստեանն ցուցանէր արն այն, որ եւ զարն իսկ աւուրն այնորիկ նշանակ դնէ: Նաեւ ի ժամանակս կենարար վարդապետութեան, զի զոր այլոցն բանիւ հրամայեաց, Ինքն արդեամբք կատարեաց, յորժամ ելեալ ի լեառն հանէր զգիշերն ի գլուխ յաղաթսն Աստուծոյ: Ասացին եւ զայն եւ ի կիրակէի գոլ առ ի մեր վարդապետութիւն վասն առնելով. թուի ինձ ի շաբաթու, վասն զի կատարեաց եւ յաղաթելոյն⁴⁹ զբանիցն հաստատութիւն ետուն, զի չէր գրեալ, թէ ծունր դնէր կամ երկրպագութիւն, որպէս ի հինգշաբաթոջ աւուրն որպէս ի մատնութեան գիշերն գրեալ է, թէ՛ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակերտացն, եղծունր, կաց յաղաթս: Եւ անդ յետ աղաթիցն հրամայեաց աշակերտացն, եթէ՛ «Ննջեցէք եւ հանգերուք այսուհետեւ»²³: Իսկ յաստուածային գիշերն ոչ գտանեմք այսպիսի

ասացեալ, այլ եթէ՝ հաներ զգիշերն ի զլուս յաղաւթսն Աստուծոյ: Վկայ են երուսաղէմացիք, որ մինչեւ ցայսար զմիաշաբաթին արն պայծառացուցանեն զիշերապատուութեամբ: Յակովբայ եղբարն Տեառն հրամայեալ է նոցա, եւ ես իմոցս զնոյն հրամայեցի՝ Յովհանն հայոց կաթողիկոսն՝ նորին հրամանին հետեւել եւ Առաքելական կանոնացն հնազանդել ի հաճոյս կամացն Աստուծոյ: Իսկ մեք յամենայն ար կիրակէի զնոյն ար յիշատակեմք եւ ի մեզ վերաբերելով եւ զոր ի նմա հանգիստ է Քրիստոսի երախտեալն ի մեզ հաւատարմացուցանեմք: Վասն որոյ դատարկեցաք ի գործոյ յայսմանէ: Հոգացուք զանձանց փրկութիւն՝ միշտ պատրաստ գտանել մեզ յաւուր յայնմիկ մեծի եւ ահաւորի: Ըստ այնմ, թէ՝ «Պարապեցէք⁵⁰ եւ տեսէք, զի ես եմ Աստուած»: Վասն այնորիկ պատուիրէ առաքեալ առ Կողոսացիսն ըստ իւրաքանչիւր միաշաբաթուոց գանձէ անձինն, որ ինչ բարին է²⁴: Տեսանէ՞ս, զի վասն զբարիս գործելոյ պարապիմք ի մարմնաւոր աշխատութեանց, որպէսզի տէրունիսն հոգացուք. երթիցուք ի հոգեւոր մայրն մեր ի յազատն, որ է եկեղեցի՝ զեղեալք սիրով ի զիրկս նորա: Եւ նա գորովալիւր սիրով բացեալ զգիրկս իւր ընկալցի զմեզ, եւ տաց մեզ կերակուր եւ ըմպելիս ի հայրապատրաստ²⁵՝ խրախիցն⁵¹ եւ ի մշտնջենաբուղիս տակառացն, զոր երկնաւոր հայրն ի հարսանիս Որդւոյն պատրաստեաց առատաբար: Եւ լուիցուք կենսապատուեալ²⁶⁵² հրամանին, թէ՝ «Զսեղան իմ պատրաստեցի զուարակ իմ եւ պարարակք զենեալ են, եւ խառնարանք լցեալ են գինով, եւ ամենայն ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիսն»²⁷: Ո՞վ ոք ոչ ցանկացի այսպիսի հարսանեաց, յորում սեղանոյն յարդարիչ է Հայրն երկնաւոր, եւ հարսանիք Որդւոյ նորա, զոր երկիցս վկայեաց ի վերայ նորա, թէ՝ «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»²⁸: Յորում փեսաւեր զՅովհաննէս իմանամք՝ զորդին Եղիսաբեթի, որ ի ցանկութիւն փեսային զհարսն յարուցանէ, որ է եկեղեցի, որում ասաց իսկ. «Հայր սիրէ զորդի եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա»²⁹: Արդ, այս խորհրդական եւ հոգեւոր հարսանեացս արժանաւոր զանձինս յարինեսցուք. մի՞ ոք ի կոչեցելոցն պատճառեցէ զհարկս եզանցն կամ զանդաստանն նորագին եւ⁵³ կամ զկինն նորահարսն, եւ հրաժարեալ արտաքս մնացէ, զի մի՛ զհրաժարեալսն ընկալցի ի բարի եւ ի հեզ տանուտեռնէն: «Ամէն, ասեմ ձեզ, ոչ ոք ի յայնց կոչեցելոցն ճաշակեցէ յընթրեաց Իմոց»³⁰: Նա եւ ի կոչեցեալսն⁵⁴ եւ ի բազմեալսն քննութիւն եղեւ յանաչառ Հաւրէն. «Մտեալ, ասէ, թագաւորն հայեալ զբազմականաւքն, ետես անդ այր մի, որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց, յանդիմանեաց զնա, եւ նա պապանձեցաւ, իսկ նա զայրանայր»³¹՝ որ⁵⁵ ի կարգին է լոբմ: Այսոքիկ առակաւ ասացան ի Տեառնէ առ ի խրատ մեզ, զի մի՛ մեք ի հրաւիրելոցն եւ ի կոչեցելոցն հրաժարիցիմք: Արդ, պարտիմք եւ ի հրաւիրելոցն պատրաստ գտանիլ⁵⁶, եւ մի՛ ի մարմնականս ինչ բաղբաղիլ⁵⁷: Վասն այնորիկ⁵⁸ Յովհաննէս ասէ, թէ՝ Զամենայն ինչ Հայր ետ ինձ⁵⁹ ի ձեռս Որդւոյ, զի հաւատացեալ անդանդադ, կոչողին զհետ երթիցես, եւ լուիցես նմին իսկ ի Տեառնէ, թէ՝ «Հայեցարուք ի թոշունս, զի ոչ վարեն եւ ոչ հնձեն,

եւ Աստուած կերակրէ զնոսա՝ որչա՞փ եւս առաւել ձեզ, որ լաւ էք, քան զնոսա»³²։ Եւ զայս ուսեալ ի Տեառնէ, մի՛ նախամեծար համարիր զհարկս եզանց, եւ որ ի կարգին է։ Նա եւ զանձնդ եւս ուրանալ հրամայեաց, եւ կոչողին զհետ երթալ, թող թէ յինչս կամ յայլ իրս։ Եւ յետ այնորիկ եւ ի մտանելն մեր երկիցոյք՝ զուցէ ոչ ունիցիմք աստուածային հարսանեացն արժանաւոր հանդերձս, եւ վասն պատառատուն եւ աղքատ զգեստուն, կապեալ ոտիւք եւ ձեռաւք ելանիցեմք ի յուրախարար յամենալից սեղանոյն, որ քաւ եւ մի՛ լիցի մեզ այնպիսում դառն վճիռն հանդիպել, վասն այնորիկ յամենայն միաշաբաթոջ պարապել ի գործոյ կոչէ զմեզ առ ինքն հոգեւոր մայրն մեր, եւ յուշ առնէ մեզ զայսպիսի ահաւոր ընթերեացն, որում երկնաւորացն եւ երկրաւորացս առ հասարակ են զիններբոյք։ Արդ, փոխեցաւ յեթանցն ի վերոյ եւ եղեւ ութ, ըստ բանին Տեառն. «Ես եմ առաջին եւ ես եմ վերջին»³³, զոր եւ աստուածայինն Սողոմոն զեկուցանէ, թէ՛ տայ ի բաժինս եւթանց կենցաղոյս այսորիկ. արինադրէ այլ եւ՝ ութիցն³⁴, որ է հանդերձեալսն հատուցումն, աստուստ բարեգործութեան ամբարի, յանդէն՝ կեանսն։ Իսկ ութերորդն խթիչն մարդկան, զհրեշտակական սպասաւորութիւն իմանալ, զի ի վերջնումն զիշերին, որք ազդարար փողոյն խթեն առ յաւիտենից ննջեցեալսն, թէ՛ Արիք ի քնոյ, ահա եկեալ, հասեալ է դատաւորն առ դուրս, որպէս յայնժամ ի բանտին զկողսն Պետրոսի խթեալ գաւազանաւ զարթոյց ի քնոյ, եւ եհան արձակեաց զնա յարգելական բանտէն³⁵՝ ⁶⁰։ Արդ, այն է նոցա գործ՝ միշտ սպասաւորել տէրունական ակնարկութեանց⁶¹, որ եւ յայնժամ ի վերջնումն զիշերոյն այսր անդր ընթացեալ ի չորս կողմանս աշխարհի փողով մեծաւ յափշտակէն զարդարսն ամպաւք ընդ առաջ Տեառն յաւոյ։ Բայց ի կէս արինակի փոխանակ ասելոյն խթիչս մարդկան, նոքա վարիչս⁶² ասեն, որ եւ այս կարի ի դէպ է։ Եւ յայնժամ վճարի, զի որպէս զարդարսն, որ դասաւորելով ընդ առաջ Տեառն յաւոյ ամբառնան, այնպէս եւ զկնի ասելոյն։ Տեառն առ մեղսաւորսն⁶³, թէ՛ «Երթայք յինէն անիծեալք»³⁶։ Իսկոյն ի մէջ անցեալ հրեշտակք՝ սպասաւորք բարկութեան լինելով՝ մեծաւ տագնապաւ մերժեն յերեսաց Տեառն եւ յուղարկեն «ի խաւարն արտաքին եւ ի հուրն անշէջ, որ պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա»³⁷։ Վասն այսր ամենայնի պարապեալ ուսուցին մեզ, որ յառաջ քան զմեզ վարդապետք եւ արինադիրք եկեղեցւոյ էին, յաւուրս կիրակէի ի մարմնականացս պարապել եւ հոգեւորացն լինիցիմք քննիչ, որ զհանդերձեալ բարեացն յիշեցուցանէ ի միջի մերում։ Վասն զի յայնմ աւուր Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, զմահ խափանեաց եւ ընդ Իւր յարոյց զյուսացեալսն Իւր, որ յԱդամայ մինչեւ ի գալուստն Իւր, եւ ի նմին աւուր խոստացաւ զԻւր միւսանգամ գալուստն, եւ զյուժգնակի հնչեալն հրեշտակական բարբառովն, զոր մարգարէն աւագափող անուանէ³⁸, զի ի սմին զիշերի առնէ բնաւիցս յարութիւն։ Բայց թէ որ կամեցի գիտել, թէ ի զիշերին յայնմիկ յորում մ մասին կամ յորում մ ժամու լինիցի⁶⁴ յարութիւն, զի այն ծածկեալ է ի մէնջ, քանզի եւ ոչ աւետարանիչքն զՔրիստոսի գալստեանն ժա-

մանակն պատմեցին: Եւ արդ, պատշաճ է ամենայն քրիստոնէից յերեկոյին շաբաթին մինչեւ յառաւառս միաշաբաթին արթուն եւ զուարթուն լինել եւ ական ունել Քրիստոսի գալստեանն, որպէս ասաց Տէր. «Արթուն կացէք եւ անդադար աղաթս արարէք, զի ոչ գիտէք՝ յորում ժամու Տէրն ձեր գայ՝ յերեկոյեացն, թէ՞ ի մէջ գիշերի, թէ՞ ի հաւախաւսի, եթէ՞ ընդ առաւառս»³⁹: Ասելով թէ՛ «Արթուն կացէք եւ աղաթեցէք, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն»⁴⁰, եւ թէ՛ Արժան լիցուք⁶⁵ կալ առաջի Ռդոյ մարդոյ, զի որք հսկմամբք եւ աղաթիւք զբոլոր գիշերն անցուցանեն^{65ա}, այնպիսիքն հրեշտակք եղիցին ի մարմնի՝ զանմարնոցն բերելով զնմանութիւն: Ջի գոր աւրինակ քառասնաւորեայ պահաւքն զտարւոյն մեղսն քաւեմք, սոյնպէս եւ յայսմ գիշերիս զբոլոր շաբաթոյն քաւեմք զսխալանքն եւ զանպատուելի զբնութիւնս մեղաւք, հրեշտակք առնեմք ի մարմնի՝ փոխադրելով ի յորդիս լուսոյ, քանզի Տէրն հրեշտակաց զմեզ նմանեցուցանէ ասելով, թէ՛ «Դուք նմանողք մարդկան, որ ական ունիցին Տեառն իւրեանց, թէ ե՞րբ դառնայցէ ի հարսանեաց, զի յորժամ գայցէ եւ բախիցէ, բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ, զորս եկեալ Տէրն իւրեանց⁶⁶ գտանիցէ արարեալ այնպէս: Ամէն ասեմ ձեզ, թէ բազմեցուցէ զնոսա եւ անցեալ պաշտեսցէ զնոսա»⁴¹:

Եւ ի սկսանել աւուրն ուրերորդի, որ անծեր եւ անվախճան յաւիտեանն է, յորում ոչ գոյ գիշեր, որ հատանէ զաւրն եւ կարճէ զժամանակն, այլ մի եւ մշտնջենաւոր եւ հանապազորդ կեանք ընդ նմին յերկարաձգեալ, յորում ոչ գոյ եղանակաց փոփոխումն, վասն զի չիք անդ իշխանութիւն ընթացից⁶⁷ արեգականն, որ բարձրանայ եւ խոնարհի: Եւ վասն այնորիկ հանապազ գարուն եւ ջերմ եւ անքոյթ զժամանակն զայն է իմանալ: Չիք անդ խռովութիւն ծովու եւ ոչ առ միմեանս լեռնաձէւ կուտակք ալեացն ի սաստիկ ծփանացն⁶⁸, չիք անդ խուճապմունք լաղակաց⁶⁹ փութմամբն հզարագունացն՝ զմասունս սատակել, չիք անդ շարժմունք երկրի, չհատանին անդ վիհք անդնդայինք, չկործանին քաղաքք, չաւերին գեաւոք⁷⁰, չանկանին շինուածք, չսատակի մարդ եւ անասուն, չգոյ անդ կարաւտութիւն ամենեւին: Ոչ երկնչի անդ ծառայ ի տեառնէ եւ ոչ աղախին՝ ի տիկնոջէ, կամ հարկապարտք՝ ի հարկահանէ, եւ գրապարտք՝ ի գրաւականէ եւ ամենայն զրկեալ ի զրկողաց: Ամենայնի գեղեցկութիւն է, ամենեւիմբ վայելչութիւն է, ամենայնի փափկութիւն է: Միագեղք⁴², արք եւ կանայք, միապատիւ, միապսակք⁴³, համագահք, համամեծարք⁴⁴, սուրբք եւ պարկեշտք, հրեշտակակերպ⁷¹, հրեշտակակրաւնք, իբրեւ որդիք Աստուծոյ առանց ամաւթոյ եւ առանց պատկառանաց յանդիմանակայք:

Այս է ուրերորդ աւուրն խորհուրդ՝ աշալուրջք եւ զուարթերեսք, լուսագեղ պայծառութեամբ առաջի Հաւրն բոլորեցունց, որում սպասեալ ական ունիմբ: Վասն որոյ եւ երանելին Պաւղոս հեծէր եւ երկներ, եւ եթէ ոք ըստ նմա զպտուղ Հոգւոյն վստահանայր ունել յինքեան որդեգրութեան ական ունելով փրկութեան հոգւոց մերոց, որում եւ մեք հանդիպեսցուք արժանապէս հաղորդս գտանել շնորհաւք եւ մարդասիրու-

թեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում փառք յաւիտեանս. Ամէն:

ՏԱՐԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Խորագիր՝ Ա Վասն նոր կիրակէին:

Բնագիր 1 Ա յասել: **2** B պատուեսցին: **3** B վասն զի **փիս**. զի: **4** A **չիք** մեղարք: **5** B փակելովքն: **6** B ամեն եղև: **7** A Ձատկին: **8** A եւս: **8ա** A այլար: **9** B ոչ եթէ հանգիստ եղև **փիս**. ոչ... հանգիստ: **10** B այլ ի: **11** B **չիք** ի Յովհաննէ: **12** B Եւ արն: **13** B Ջի առաջին: **14** A **չիք** մուտ նորա: **15** B չէ թէ **փիս**. որ... թէ: **16** A **չիք** եւ: **17** C արկածք ջուրքն: **18** A **չիք** եւ: **19** A **չիք** ասի: **20** B աշխարհին եւ զնորոգութիւն: **21** A **չիք** Քրիստոս: **22** B մարմին երկրածին **փիս**. Քրիստոս երկրածին: **23** B պատմութեանաւ ծիրանագունիւք: **24** A **չիք** որ: **25** C միացաւ Քրիստոս: **26** C յանկուածոյ: **27-28** A **չիք** իսկ... բնութեամբ: **29** B երկու: **30** B գտնանգն: **31** C հզարի: **32** B յոյսն **փիս**. յուսն: **33** B քահանայապետին բարձեալ (**բ. ա. ուղղման նշանով**): **34** A ի չորս նիւթ (**կրկնված**): **35** B **չիք** ի: **36** B ուրախ եղիցուք **փիս**. ուրախասցուք: **37** A զյարդարութիւն: **38** B լիցին: **39** B անետէր մարգարէս եւ **փիս**. անետեալք: **40** A **չիք** էր: **41** A **չիք** եւ: **42** B զարդարեցան **փիս**. նորոգեցան: **43** A իսլայն: **44** A ոսկեհուն: **45** A պայծառ: **46** B այս ար **փիս**. արս այս: **47** B նորին առեալ: **48** B Հեղիաս: **49** A յաղթելոյն: **50** B Պատսպարեցէք: **51** B ըստ իցին: **52** B կենսապատուէր: **53** A **չիք** եւ: **54** B կոչեալսն: **55** B եւ որ: **56** A գտանել: **57** B զբաղիլ **փիս**. բաղբաղիլ: **58** B այսորիկ: **59** B **չիք** ինձ: **60** B բանդէն: **61** C ակնարկութեանցն: **62** C վարիչ: **63** B մեղաւորսն: **64** B լինի: **65** B լիջիք: **65ա** A անուցանեն: **66** A իւր: **67** A **չիք** ընթացից: **68** A **չիք** ի սաստիկ ծփանացն: **69** B դուղակաց: **70** B գետք **փիս**. գեաւք: **71** A հրեշտակապետք **փիս**. հրեշտակակերպք:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ II-Ի ԺԱՄԱՆԱԿ

Տիգրանակերտ մայրաքաղաքը

Հելլենիստական դարաշրջանի սկզբին, մ.թ.ա. III դարում սկսված ուրբանիզացիան, քաղաքաշինությունը (Երվանդաշատ, Երվանդակերտ, Շամուշատ-Սամոկերտ, Արշամաշատ, Եփրատի վրայի Արսամեա, Նյումփայոսի վրայի Արսամեա) Արտաշեսյան հարստության ժամանակ նոր թափով շարունակվեց:

Արտաշես I-ը (մ.թ.ա. 189-160 թթ.), լինելով պետական խոշոր գործիչ, ճիշտ ըմբռնելով ժամանակի պահանջները, իր արտաքին ու ներքին ակտիվ քաղաքականության շնորհիվ կարողացավ վերամիավորել հայկական հողերը, անցկացնել մի շարք վարչատնտեսական և ռազմական կարևոր ռեֆորմներ ու բարեփոխումներ: Արտաշեսն իր և հոր անունով հիմնադրել է ութ քաղաք, այդ թվում՝ Արտաշատ մայրաքաղաքը, որի մասին վկայում են Ստրաբոնը¹, Պլուտարքոսը² և Մովսես Խորենացին³:

Մ.թ.ա. III-II դդ. քաղաքական, տնտեսական ու մշակութային վերելքը Հայաստանի հզորացման հիմք հանդիսացան: Ուստի պատահական չէ, որ Տիգրան II-ի (մ.թ.ա. 95-55 թթ.) օրոք Հայաստանը դուրս եկավ միջազգային լայն ասպարեզ և մ.թ.ա. I դ. առաջին քառորդին դարձավ Առաջավոր Ասիայի քաղաքական հզոր ուժերից մեկը: Հայաստանը դարձավ մի մեծ հելլենիստական պետության միջուկը և տիրացավ հսկայական հարստությունների: Տիգրանը հելլենիստական ավանդույթների համաձայն Աղձնիքում կառուցեց նորաստեղծ կայսրության մայրաքաղաք Տիգրանակերտը, ինչպես նաև Տիգրանակերտ անունով քաղաքներ Արցախում և Ուտիքում, Տիգրանավանը՝ Գողթնում⁴:

Հայաստանի թագավորները, լավ հասկանալով քաղաքների դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, առևտրի, արհեստագործության ու մշակույթի զարգացման գործում, հետևելով հելլենիստական երկրների օրինակին՝ առևտրական ճանապարհների երկայնքով, մեկը մյուսի հետևից, հիմնադրում էին քաղաքներ, որոնք ստանում էին դինաստիական անուններ:

Օտար և հայկական աղբյուրները քաղաքի կառուցման համար նշում են մի շարք կարևոր գործոններ: Ամենակարևոր խնդիրը քաղաքի տեղի ճիշտ ընտրությունն էր: Տվյալ տարածքը պետք է առևտրական ճանապարհներին մոտ լիներ, ունենար ստրատեգիական հարմար դիրք, որովհետև քաղաքները ոչ միայն թագավորների հենարանն էին, առևտրատնտեսական ու մշակութային կենտրոնները, այլև երկրի

¹ **Страбон**, География в 17 книгах, XI, 14,6 (пер. и комментарии Г. А. Стратановского), Л., 1964.

² **Плутарх**, Лукул. XXXI,5, Сравнительные жизнеописания в трех томах, т. II (пер. С. С. Аверинцева), М., 1963.

³ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հաբուշյանի, Երևան, 1991, II, 49:

⁴ **С. Т. Еремьян**, Развитие городов и городской жизни в древней Армении. Вестник древней Истории, М., 1953, N 3, с. 14-16; Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 574:

պաշտպանության կարևոր օղակներն էին: Պետք է լինեին գյուղատնտեսությամբ զբաղվելու արգավանդ հողեր: Ընտրված տեղը պետք է նաև ջրառատ լիներ՝ քաղաքի պաշտպանության համար ջրային պատնեշ ստեղծելու, քաղաքը ջրով ապահովելու, կոմունալ տնտեսության և հողերը ոռոգելու համար, ձկնառատ գետեր և այլն:

Տիգրանի կառուցած Տիգրանակերտներից ոչ մեկը առ այսօր տեղորոշված չէ: Մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը (հիմնադրվել է մ.թ.ա. 80-ական թվականների վերջերին), գրեթե բոլոր աղբյուրները ցույց են տալիս Տիգրիսի վերին հոսանքի շրջանում, բայց մի մասը նշում է Տիգրիսից հյուսիս, մյուս մասը՝ հարավ: Թեև ընդունված է Լեհման Հաուպտի⁵ և Վալդեման Բեյքի տեսակետը, որոնք Տիգրանակերտը տեղադրում են Տիգրիսից հյուսիս, ձախակողմյան վտակ Նիկեփորիոնի (Ֆարկին սու) ափին, Նփրկերտ (ներկայիս Ֆարկին հին քաղաքի) տեղում, սակայն մինչև օրս վեճերը շարունակվում են:⁶ Պատճառն այն է, որ վիճահարույց հարցի վերաբերյալ իրենց տեսակետները հայտնող գիտնականները հիմնականում հենվում են աղբյուրների իրար հակասող տեղեկությունների վրա: Մինչդեռ տվյալ հարցի ճիշտ լուծումը Հրանտ Արմենը վերապահում է հնագետի բրիչին⁷: Այսինքն, անհրաժեշտ է, որ հնագետները հավանական վայրերի պեղումների արդյունքները քննարկեն աղբյուրագիտական նյութերի հետ համատեղ:

Տիգրանակերտ մայրաքաղաքի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում հունա-հռոմեական աղբյուրները՝ կապված Լուկուլոսի կողմից Տիգրանակերտի շրջապատման և գրավման հետ: Սակայն, անկախ քաղաքի տեղադրությունից, փորձենք աղբյուրների տեղեկությունների հիման վրա վերականգնել Տիգրանակերտի ճարտարապետական տեսքը: Պլինիոս Ավագի համաձայն, Տիգրանակերտը կառուցված է եղել բլրի վրա⁸ (հավանաբար միջնաբերդը):

Քաղաքաշինության կարևորագույն օղակներից մեկը պաշտպանական կառույցներն են, որոնք արտահայտում են տվյալ շրջանի ճարտարապետության ռազմարվեստի նվաճումները և պետության տնտեսական ու քաղաքական վիճակը: Հզոր պաշտպանական համակարգեր ունեցող քաղաքները, լավ կազմակերպված զորքի հետ միասին, երկրի անկախության գրավականն էին: Ուստի պաշտպանական համակարգը պետք է համապատասխաներ զարգացող պոլիորկետիկայի (քաղաքներ պաշարելու արվեստի) պահանջներին և մշտապես լինեի պատրաստի վիճակում: Ապպիանոսը⁹ վկայում է, որ Տիգրանակերտն ուներ 50 կանգուն (25-26 մ) բարձրությամբ պարիսպներ (հավանաբար աշտարակները), որոնք այնքան լայն են եղել, որ նրանց մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ և պահեստներ:

⁵ **Բ. Հ. Յարության**, Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցի շուրջ, Հայկագեան հայագիտական հանդես, Պեյրուք, 1994, էջ 11-40; **M. L. Chaumont**, “Tigranocerte: données du problème état des recherches”, *Revue des Arménienne* 16 (1982), s. 89-110; **M. L. Chaumont**, “Quelques notes, concernant Tigranocerte”, *Revue des Arménienne* 21 (1988-1989), 233-249; **R. H. Hewsen**, Introduction to Armenian Historical Geography: IV. The Boundaries of Artaxiad Armenia”, *Revue des Etudes Arménienne* 19(1985), s. 55-84; R. (sir), Syme, “Tigranocerta: A Problem Misconceived”, in: *Roman Papers* 4 (1988), New York, p. 245-251; **T. Sinclair**, “The Site of Tigranocerta I”. *Revue des Etudes Arménienne* 25(1994-1995), 183-254.

⁶ **C. F. Lehmann-Haupt**, *Armenien einst und jetzt*, I, Berlin, 1910, s. 381-425, 501-523.

⁷ **Հրանդ Արմեն**, Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 235-240:

⁸ **Գայոս Պլինիոս (Ավագ) Մեկունդոս**, Բնական պատմություն, գիրք VI, X, Հայ ժողովուրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Երևան, 1981, էջ 365 (Այսուհետև ՀԺՊՔ):

⁹ **Ապպիանոս**, XII, 84 (ՀԺՊՔ), էջ 258:

Կոռնելիոս Տակիտոսն¹⁰ ասում է, որ Տիգրանակերտը հզոր պարիսպներ ուներ, որը շրջապատված էր բավականին լայն Նիկեփորիոն գետով, իսկ այնտեղ, որտեղ Նիկեփորիոնը հուսալի պաշտպանություն չէր ապահովում, հսկայական խանդակ էր փորված: Այսինքն, այնպես, ինչպես թերակգու վրա կառուցված Արտաշատ մայրաքաղաքը, որի պարիսպները շուրջանակի պատում էր գետը, բացի պարանոցից, որը Արտաշեսը շրջափակել էր փոսով և պատնեշով¹¹: Տիգրանակերտի պարիսպների վրա եղել են արտելքներ կատարելու դռնակներ¹²: Այսինքն, Տիգրանակերտի ստրատեգիական դիրքը շատ հարմար է եղել, ունեցել է պաշտպանական հզոր համակարգ, ամուր միջնաբերդ, որի շնորհիվ քաղաքը կարողացավ դիմանալ Լուկուլլոսի երկարատև պաշարմանը և միայն հինգ ամիս հետո հույների դավաճանության պատճառով հռոմեացիներին հաջողվեց գրավել այն: Տիգրանակերտը մ.թ. 60-61 թթ. Մեծ Հայքի թագավոր հռոմեական դրածո Տիգրան VI-ի մայրաքաղաքն էր, պարթևները պաշարեցին Տիգրանակերտը, բայց գրավել չկարողացան¹³:

Տիգրանը քաղաքի արվարձանում կառուցել էր պալատ, ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում հիմնել էր նաև մի հզոր բերդ¹⁴: Այս վկայությունը թյուրիմացության մեջ է գցել որոշ գիտնականների: Ենթադրվել է, թե Տիգրանակերտը կազմված է եղել բուն քաղաքից և պարսպից դուրս մերձակայքում գտնվող միջնաբերդից (իր պալատական կառույցներով), որն անսովոր երևույթ է համարվել Հայաստանի համար¹⁵: Քանի որ Հայաստանի բոլոր մայրաքաղաքներում միջնաբերդը եղել է քաղաքի մեջ, ուստի տարբեր բացատրություններ են տրվել, թե այդպես է արվել բնական պայմանների, կամ էթնիկական տեսակետից քաղաքը անհուսալի լինելու պատճառով,¹⁶ կամ Տիգրանը վերադարձել է արևելյան ավելի շուտ աքեմենյան հին ավանդներին, և դա համարվել է շեղում հելլենիստական քաղաքաշինության սկզբունքներից¹⁷:

Տիգրանակերտը համեմատվել է Հին ու Նոր Նիսայի հետ, որտեղ բուն քաղաքի կողքին գտնվում էր թագավորական ամրոց Միհրդատակերտը՝ իր պալատներով, այգիներով, ջրավազաններով, սննդամթերքի պահեստներով, թագավորական տնտեսության ղեկավարության շենքով¹⁸: Արշակունիների ամառային նստավայր Էկրատանայի հետ, որից 10 կմ հեռավորության վրա գտնվում էր թագավորական դղյակ Ադրաբանան, որը հրի մատնվեց Տիգրան II-ի կողմից¹⁹, Երվանդաշատի մոտ կառուցված Երվանդակերտի, Ալեքսանդրիայի մոտ կառուցված պալատ-ամրոցի և

¹⁰ Tacit. Annales, XV, 4:

¹¹ Strabo, XI, 14,5:

¹² Tacit. Annales, XV, 4:

¹³ Նույն տեղում:

¹⁴ App., Mithr, XII, 84.

¹⁵ Г. А. Тирацян, Города Армении эллинистического времени в свете архелогических исследований, Вестник древней истории (ВДИ), 1979, N 2, с. 172.

¹⁶ В. М. Арутюнян, К вопросу о градостроительной культуре древней Армении, ЗСУՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաւ. գիտ.), 1956, N 10, с. 77.

¹⁷ Г. А. Тирацян, Նշվ. աշխ., էջ 172.

¹⁸ Г. Комеленко, А. Акопян, Градостроительство Армении и градостроительство парфии, Второй международный симпозиум по армянскому искусству, Сб. Докладов, т. I, Ереван, 1978, с. 255.

¹⁹ Է. Լ. Դանիելյան, Բոլոր Քարակաղն «Պարթևական կայանները», էջ 173, 179, ծան. 48:

Անտիոքի ու Դաֆնայի հետ²⁰:

Նախ Տիգրանակերտը Հայաստանի մայրաքաղաքների նման, քաղաքի ներսում, բլրի վրա ունեցել է անառիկ ամրոց, որտեղ 69 թ., երբ Լուկուլլոսը պաշարեց քաղաքը, այնտեղ էին գտնվում կանանոցն ու գանձերը: Հասնելով պաշարված Տիգրանակերտ, Տիգրանի առաջին գործը եղավ այն, որ վեց հազարանոց հայկական հեծելազունը ուղարկեց, որոնք նետաձգությամբ փակեցին հռոմեացիների ճամբարից դուրս գալու ճանապարհը և զիջերով դուրս բերեցին կանանոցը և ամենաթեքավոր իրերը²¹:

Տիգրանակերտի մերձակայքի պալատն իր պարտեզներով, այգիներով, որսատեղերով, լճերով ժամանցի վայր էր և կարող էր համեմատվել միայն Դաֆնայի հետ: Պալատից ոչ հեռու կառուցված ամրոցը ոչ մի կապ չուներ դրա հետ, ուստի միջոցառվել էր կարող:

Տիգրանակերտի մերձքաղաքային պալատն, այգիներով ու որսատեղերով, իր նշանակությամբ հիշեցնում է Երվանդի տնկած «Ծննդոց անտառը» և Արտաշատի մոտ Խոսրով Կոտակի հիմնած անտառն ու պալատը, որը մերձքաղաքային ժամանցի վայր էր՝ զբոսանքի և որսի սիրահար թագավորի համար²²:

Հելլենիստական երկրներում նորաստեղծ քաղաքները բնակեցվում էին համաբնակեցման («Մինոկլիսմոսի») միջոցով: Նույնը կատարվել է նաև Հայաստանում, դեռևս Երվանդունիների օրոք: Արտաշատ մայրաքաղաքի կապակցությամբ Մովսես Խորենացին նշում է. «Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ»²³: Տիգրանը նույն կերպ է վարվում, բայց ավելի մեծ չափերով: Ապալիանոսը վկայում է, որ հայ ավագանին գույքի բռնագրավման սպառնալիքի տակ տեղափոխվել էր Տիգրանակերտ²⁴: Տիգրանը, զիտակցելով քաղաքային բնակչության կարևորությունը երկրի առաջընթացի համար, նվաճված երկրներից՝ Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից, հելլենիստական 12 քաղաքներից²⁵ շուրջ կես միլիոն մարդ վերաբնակեցրեց Հայաստանի նորակառույց Տիգրանակերտներում, հին քաղաքներում (Արտաշատ, Արմավիր, Երվանդաշատ, Զարիշատ և այլն):

Նորաբնակները, որոնք հելլենիստական մշակույթի կրողներ էին, նպաստեցին Հայաստանում քաղաքային կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը, հելլենիստական մշակույթի տարածմանը: Դրա ավանդույթները թափանցեցին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակույթի բոլոր բնագավառների մեջ, նույնիսկ այնպիսի պահպանողական ոլորտի, ինչպիսին թաղման ծիսակատարությունն է:

Տիգրանակերտը անտիկ աղբյուրներում ներկայացվում է որպես խոշոր, շքեղ կառուցված և հարուստ քաղաք: Պլուտարքոսն ասում է, որ «Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին՝ միմյանց հետ

²⁰ Գ. Ա. Կարապետյան, Նշվ. աշխ., էջ 172:

²¹ Memn., XVI, LVI; App., Mithr., XII, 85.

²² Ժ. Խաչատրյան, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազմույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին, ԼԳՀ, 1987, N 2, էջ 53-54:

²³ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Մ. Յարությանների, Երևան, 1991, II, 49:

²⁴ App., Mithr., 84.

²⁵ Strabo., XI, 14, 15.

մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար»²⁶: Տիգրանն ամեն կողմից մեծ թվով հույն դերասաններ²⁷ էր հավաքել իր հիմնադրած թատրոնի բացման հանդիսավոր արարողության համար: Այս տեղեկություններից հետևում է, որ Տիգրանակերտը կառուցվել է նախապես մտածված միասնական ընդհանուր հատակագծով, ինչպես Արտաշատ մայրաքաղաքը, Ջարիշատը և այլն:

Հնարավոր է հիպոտետիկ սխեմանով, որը բնորոշ էր հելլենիստական քաղաքներին, քաղաքը կառուցապատվել է պալատական և վարչական շենքերով, ավագանու գեղեցիկ բնակարաններով, տաճարներով, որոնց նվիրաբերվել են թանկարժեք ընծաներ: Մայրաքաղաքում էին գտնվում, սովորաբար, գլխավոր աստվածների տաճարները, այսինքն, Անահիտին ու նախնիներին և Արեգ-Միհր-Ապոլոնին, ինչպես Արմավիրում, Արտաշատում, Վաղարշապատում: Տիգրանակերտում եղել է անտիկ թատրոն (ամֆիթատրոն), որը Մեծ Հայքի մյուս քաղաքներում, նույնիսկ Արտաշատ մայրաքաղաքում չի եղել: Դա այնպիսի կարևոր փաստ է, որը Տիգրանակերտի տեղորոշման հարցում կարող է ծառայել կարևոր կովան:

Այսպիսով, Տիգրանակերտում իրենց արտահայտությունն են գտել հելլենիստական, առաջին հերթին սիրիական քաղաքաշինության լավագույն ավանդները: Տիգրանակերտը պետք է լիներ ավելի գեղեցիկ ու շքեղ, քան Անտիոքը, քանի որ, ինչպես հելլենիստական քաղաքաշինության գիտակ Վ. Չերիկովերն է ասում, Տիգրանը միանգամից ուզում էր ունենալ այն ամենը, ինչ մյուս քաղաքներում ստեղծվել էր վերջիններիս երկարատև գոյության ընթացքում²⁸:

Տիգրանակերտը IV դարում դեռևս բազմամարդ խոշոր քաղաք²⁹ էր:

²⁶ Plut., Lucul., XXVI.

²⁷ Plut., Lucul., XXIX

²⁸ V. Tscherikover, Die hellenistischen Städtegründungen von Alexander dem Grossen bis auf die Römerzeit ("Philologus Supplement band XIX"), Heft I, Leipzig, 1927, s. 199.

²⁹ Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, IV, 24:

Արցախի Տիգրանակերտը

Արցախի Տիգրանակերտի վերաբերյալ աղբյուրների հաղորդած տեղեկություններն, ի տարբերություն մայրաքաղաք Տիգրանակերտի, ավելի սուղ են ու կցկտուր և պատկանում են ուշ շրջանին: Մինչդեռ Արցախի Տիգրանակերտի ֆենոմենի բացահայտումը խիստ այժմեական է, ոչ միայն քաղաքական տեսակետից, քանի որ այն լավագույն կերպով կարող է վկայել Արցախի էթնո-մշակութային նշանակությունը ողջ Հայաստանի հետ, առնվազն մ.թ.ա. I հազարամյակի վերջին դարերից մինչև XI-XII դարերը³⁰, այլև գիտական:

Նախ՝ ըստ որոշ հետազոտողների, Արցախի Տիգրանակերտը կարող էր հիմնադրվել Տիգրան Երվանդյանի³¹ կողմից, այսինքն մ.թ.ա. VI-V դարերում:

Երկրորդ, ըստ համընդհանուր ճանաչում ստացած կարծիքի՝ Արցախի Տիգրանակերտը հիմնադրվել է Տիգրան Մեծի կողմից, այսինքն մ.թ.ա. I դարում:

Երրորդ, ըստ վկայությունների, Տիգրանակերտն առնվազն մ.թ. VII դարի գործող բնակավայր էր:

Չորրորդ՝ Տիգրան Մեծի հիմնադրած բոլոր Տիգրանակերտներն էլ մայրաքաղաքներ³² են:

Հայաստանում ուրարտական շրջանում տեղի ունեցած ուրբանիզացիայի պրոցեսի հետևանքով Հայկական լեռնաշխարհը ծածկվեց քաղաքների լայն ցանցով: Դրանք հանդիսանում էին խոշոր ռազմական ու տնտեսական կենտրոններ, ունեին զարգացած արհեստագործություն, իրենց ջրովի վարելահողերը, վերամշակված երկրագործական ու անասնապահական մթերքները պահելու համար հսկայական մատաններ ու ամբարներ: Ուրարտուի կործանման հետ քաղաքներն ավերվեցին ու անկում ապրեցին: Ուրարտական շրջանի մշակութային ավանդույթները թեև երկար ժամանակ շարունակվեցին Հայաստանում, ուրբանիզացիայի պրոցեսները, սակայն, մ.թ.ա. VI-IV դարերում չշարունակվեցին: Գոյատևեցին պաշտամունքային կենտրոնները, որոնք հիմնականում տեղավորված էին Եփրատի և Արածանիի հովիտներում³³: Գրավոր աղբյուրները VI-IV դդ. քաղաք հիմնադրելու և քաղաքների մասին որևէ տեղեկություն չեն հաղորդում, այլ նշում են եղած ավանների, գյուղերի, ամրոցների և տաճարական կենտրոնների մասին: Հնագիտական պեղումները ցույց են տալիս սակայն, որ ուրարտական որոշ քաղաքներում կյանքը մասնակիորեն վերականգնվում է (Տուշպա-Վան, Էրեբունի-Երևան, Արգիշտիխինիլի-Արմավիր, Ալթին-Թեփե, Ռուսախինիլի և այլն): Այնպես որ Տիգրան Երվանդյանի կողմից որևէ քաղաք կամ ավան կառուցելու մասին խոսք լինել չի կարող: Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու վկայությանը, հայտնի է, որ նա Տիգրան Մեծի կատարած շատ գործեր, այդ թվում նաև Արցախի Տիգրանակերտի կառուցումը, վերագրել է մ.թ.ա. VI դ. Տիգրանին:

Մովսես Խորենացին ասում է. Տիգրանը 77777...իր քույր Տիգրանուհուն թագավո-

³⁰ Հ. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Մաֆայան, Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները ԾՀայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365: Հանրահայտ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մեջ կարևոր դերակատարում ունեն և պատմամշակութային բնույթի փաստարկները:

³¹ Բ. Հ. Հարությունյան, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Երևան, 1998, էջ 8-12:

³² Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 15: Մ. Սարգսյան, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 138:

³³ А. Г. Перихаян, Храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959, с. 8-9, 79-81, 99-100.

րավայել ու մեծ բազմությամբ ուղարկում է Հայաստան՝ այն ավանը, որը Տիգրանը շինեց իր անունով և այն գավառները հրամայում է նրա ծառայության մեջ դնել: Եվ այդ կողմերի ոստան կոչված ազնվական դաստակերտն, ասում է, սրա սերունդից է առաջացել, իբրև թագավորական սերունդ³⁴: Այս վկայությունը շատ նման է Զարիշատ քաղաքին և բնակիչներին տրված կարգավիճակին³⁵: Այսինքն, ստացվում է, որ Արցախի Տիգրանակերտին նույնպես տրվել է 77777 արքունական քաղաք-ի իրավունք և հատկացվել է քաղաքային տարածք:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը (մ.թ.ա. 334 թ.) շրջադարձային եղավ Արևելքի ժողովուրդների համար: Հունաստանից տարբեր խավերի մեծ հոսք սկսվեց դեպի Արևելք: Ստեղծվեց մի նոր կայսրություն՝ Ադրիատիկ ծովից մինչև Նուբիա: Ալեքսանդր Մակեդոնացու անժամանակ մահից (մ.թ.ա. 323 թ.) հետո, նորաստեղծ կայսրությունը բաժանվեց նրա զորավարների միջև: Շուտով այս տերությունների քայքայման հետևանքով առաջացան մի շարք անկախ նոր պետություններ: Հելլենիստական շրջանում ճանապարհների անվտանգությունը նպաստեց առևտրա-տնտեսական և մշակութային կապերի աշխուժացմանը: Սկսվեց և աննախադեպ չափերի հասավ քաղաքաշինությունը: Հելլենիստական դարաշրջանում ստեղծվեցին հարյուրավոր քաղաքներ³⁶:

Երվանդի կողմից մ.թ.ա. 331 թ. Հայաստանի անկախ պետականության վերականգնումը և հելլենիստական քաղաքակրթության տարածումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին երկրի հետագա զարգացման համար: Մոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացը նպաստեց ուրբանիզացիային: Նոր քաղաքները հիմնադրվեցին առաջին հերթին Ծովքի և Կոմագենեի տարածքներում: Մեծ Հայքում, Երվանդ Վերջինը, մթ.ա. III դարի չորրորդ քառորդին արքունիքը և կրոնական կենտրոնը Արմավիրից տեղափոխեց նորակառույց Երվանդաշատ մայրաքաղաք: Արտաշես I-ը կառուցեց ութ քաղաք: Այսինքն քաղաքաշինության գործընթացը կրկին սկսվեց հելլենիստական և շարունակվեց ուշ անտիկ շրջանում (I-IV դդ.):

Արցախի Տիգրանակերտի տեղադրության հարցում ճիշտ կոդորոշվելու համար, անհրաժեշտ է ծանոթ լինել հելլենիստական քաղաքաշինության սկզբունքներին:

Տիգրան Մեծի կառուցած չորս Տիգրանակերտներից, Տիգրիսի վերին հոսանքի շրջանում, Տիգրիսից հյուսիս, ձախակողմյան վտակ Նիկեփորիոնի (Ֆարկին սու) ափին Նփրկերտ հին քաղաքի տեղում կառուցված Տիգրանակերտը նրա մայրաքաղաքն էր: Այն, ըստ հունահռոմեական աղբյուրների, հելլենիստական աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն էր, իր կանոնավոր, նախապես մշակված հատակագծով, ամֆիթատրոնով, տաճարներով ու պալատական շինություններով:

Հիմնականում, ուշ շրջանի գրավոր աղբյուրների հիման վրա Արցախի Տիգրանակերտի տեղադրությունը որոշելու վերաբերյալ արտահայտված զանազան կարծիքները հաստատելու կամ հերքելու համար, ստեղծվեց տարբեր էպոխաների մասնագետներից բաղկացած մի խումբ, որը ծանոթ էր քաղաքների հիմնադրման վերոհիշյալ պահանջներին, պեղել էր մայրաքաղաքներ Արմավիրը և Արտաշատը և լավատեղյակ էր քաղաքաշինության չափանիշներին:

Արցախի Տիգրանակերտի մասին առկա աղբյուրագիտական քննությունը հիմք էր

³⁴ **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. ակադ. Մտ. Մալխայանցի, Երևան, 1968, I, 30:

³⁵ Նույն տեղում, III, 23; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 33:

³⁶ **V. Tscherikover**, Նշվ. աշխ.:

տալիս հավանական համարել, որ քաղաքի ավերակները պետք է փնտրել Խաչենագետի ներքնահովտում, այնտեղ, ուր Արցախյան լեռնաշղթան շեշտակի անկումներով ձուլվում է հարթավայրերի հետ, և որտեղով հնում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող մոտավոր գծով, իրարից բաժանվում էին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Հենց այս գծի վրա էին, ըստ VII դարի պատմիչ Սեբեոսի³⁷, գտնվում մյուս Տիգրանակերտը, որը պատկանում էր Ուտիքին, և Արցախի Տիգրանակերտը: Հստակորեն տեղայնացնելու համար Արցախի Տիգրանակերտը, հետագոտական խումբը, որպես պայմանական կենտրոն ընդունեց Խաչենագետը հարթավայր դուրս գալու հատվածը, և ուսումնասիրեց այդ տարածքի հուշարձանները: Հետազոտության առաջին փուլը ներառում էր տարածքի ճարտարապետական ու հնագիտական դրսևորումների լուսանկարչական վավերացումը, քարտեզագրումը, վերգետնյա հնագիտական նյութերի հավաքումը, թվագրումը և բնութագրումը:

Երկրորդ փուլը ենթադրում էր ստացված արդյունքների համադրում առկա աղբյուրագիտական-տեղագրական քննության հետ, և այս հիման վրա Տիգրանակերտի տեղադրության հստակեցում:

Տիգրանակերտի տեղադրության համար շատ ավելի կարևոր են մ.թ.ա. VI դ. - մ.թ. VII դ. հուշարձանների և հնագիտական մնացորդների վավերացումը: Այն պատճառով, որ անտիկ դարաշրջանի քաղաքները Հայաստանի Հանրապետության տարածքում և Արևմտյան Հայաստանում, կառուցված են ուրարտական քաղաքների վրա: Ուրարտական քաղաքի տեղում են հիմնադրված Արմավիր և Արտաշատ մայրաքաղաքները, որոնք ուրարտական պաշտպանական համակարգը հաճախ օգտագործել կամ հարմարեցրել են հելլենիստական շրջանի ռազմարվեստի պահանջներին:

Հնարավոր է, որ Արցախի Տիգրանակերտը նույնպես կառուցված լինի ավելի վաղ շրջանի ամրոցի վրա: Հետազոտվող տարածքում ամենաուշագրավն, անշուշտ, երկու մեծ բնակատեղիներն են՝ տեղադրված Խաչենագետի աջ ու ձախ ափերից գրեթե հավասար հեռավորության վրա՝ մեկը Սոֆուլու գյուղի³⁸, իսկ մյուսը՝ Շահբուլաղ կոչվող աղբյուրների մերձակայքում: Ընդ որում հնագիտական և հայագիտական գրականության մեջ հենց այս երկու տեղերն էին համարվում Տիգրանակերտի հնարավոր տեղադրության վայրեր:

Սոֆուլու գյուղի մոտի ընդարձակ բնակատեղիում (Գյավուրկալայում) ինչպես ժամանակին կատարված պեղումների ընթացքում, այնպես էլ մեր տեղագնության ժամանակ, ավելի վաղ շրջանի, այդ թվում և Տիգրան Մեծի ժամանակաշրջանին վերաբերող նյութեր չհայտնաբերվեցին: Ինչպես Գյավուրկալայի ստրատեգիական դիրքը, այնպես էլ վաղ շրջանի նյութերի բացակայությունը բավարար հիմք են հավաստելու, որ Տիգրանակերտը Գյավուրկալայի տեղում տեղադրելը խիստ անհավանական է:

Արշավախումբն, այնուհետև, մանրամասնորեն հետազոտեց Շահբուլաղ կոչվող աղբյուրների շրջակայքը, որը XIX դ. տեղագիրների մոտ հայտնի է նաև Թնգրնակերտ, Թառնագյուտ անուններով, որը հնչողությամբ շատ մոտ է Մովսես Կադանկատվացու օգտագործած Տկռակերտին³⁹ և ի վերջո Տիգրանակերտին: Այս հետազո-

³⁷ Պատմություն Սեբեոսի, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 125:

³⁸ **Ս. Գ. Բաթխուդարյան**, Տապանագիր Համամ իշխանի անունով, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, Երևան, 1964, N 1, էջ 61, 63, 64; **Հակոբ Միմոնյան, Հովհաննես Սանամյան**, Վանքասարի հուշարձանները, «Հուշարձան», Գ, Երևան, 2005, էջ 165:

³⁹ **Մովսես Կադանկատացի**, Պատմություն Աղուանից Աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 300:

տության արդյունքները կարելի է համարել ուղղակի սենսացիոն, քանի որ հնարավոր դարձավ վավերացնել ընդարձակ մի բնակավայրի պաշտպանական համակարգի հետքերը: Միջնաբերդը, քաղաքային թաղամասը՝ եկեղեցական շինության հաստահեղույս քարուկիր պատերով, ուշ հելլենիստական շրջանի և ուշ անտիկ շրջանի կարասային թաղումներով, և V-VII դդ. քարարկղային թաղումներով դամբարանադաշտերը, և ինչը որ ամենակարևորն է, մ.թ. առաջին դարի խեցեղենի բազմաթիվ նմուշները:

Նախ հետախուզվեց աղբյուրներից դեպի վեր ձգվող լեռան ժայռերիցը: Վավերացվեց, որ այն շուրջ 200 մ երկարությամբ պատված է երկայնաձև ժապավենատեսք լայն շերտերով, աստիճանաձև բարձրացող, հորիզոնական մշակված հարթակներով: Ակնհայտ է, որ մենք գործ ունենք պարսպապատերի ժայռեղեն հիմքերի հետ: Այս ամրապատի երկայնակի ձգվող հիմքերը երկու տեղերում էլ լրացվում են կիսաշրջան փորածո հատվածներով, որոնք էլ վկայում են, որ պարիսպներն ուժեղացված են կիսակլոր աշտարակներով: Ժայռերի նման մշակումը բնորոշ է ուրարտական շինարարական արվեստին, որը շարունակվել է նաև հելլենիստական և ուշ անտիկ շրջանում: Այդ ձևով են մշակված նաև Արմավիր⁴⁰ մայրաքաղաքի հյուսիսային պարիսպների ժայռերը, Արտաշատ⁴¹ մայրաքաղաքի VI-VIII բլուրների պարիսպների հիմքերը, բնակարանների պատերն ու հատակները, Ջարիշատը⁴² և այլն: Կարծում ենք, որ մայրաքաղաք Տիգրանակերտի նման լավ պաշտպանական համակարգ է ունեցել նաև Արցախի Տիգրանակերտը: Մովսես Խորենացին քաղաքների և դրանց կառուցման վերաբերյալ խոսելիս մշտապես շեշտում է տեղանքի ընձեռած հնարավորությունների, պարիսպների կառուցման կամ գոյության, քաղաքի և միջնաբերդի ամրությունների, մուտքերի կազմակերպման, խորամանկորեն կառուցված թակարդների մասին:

Ամրապատի հատվածում մակերեսից հավաքած խեցեղենի մեջ առկա են տարբեր անոթների գունազարդ բեկորներ: Դրանք հարդարված են բաց գույնի, մակերեսին կարմիրով արված ժապավեններով, եռանկյունիներով, ճառագայթաձև և այլ տիպի զարդերով: Բոլորն էլ լավ փայլեցված են: Դրանք բնորոշ են մ.թ.ա. I դարի առաջին կեսի խեցեղենին և աղերսվում են Հայաստանի հելլենիստական մյուս հնավայրերի խեցեղենի հետ: Քիչ չեն նաև այդ ժամանակին բնորոշ նրբախեցի, լավ մշակված մակերեսով, դուրգի վրա և ձեռքով պատրաստված միագույն անոթների, տարբեր մեծության ու գույների կարասների բեկորները:

Ըստ երևույթի, պարսպապատ մասը կազմել է քաղաքի միջնաբերդը, իսկ ստորոտի հարթ մասը՝ քաղաքային թաղամասերը, որին կից էլ վավերացվել են մ.թ.ա. I – մ.թ. I դարերի կարասային և վաղմիջնադարյան քարարկղային թաղումներով դամբարանադաշտերը: Ինչ վերաբերում է այն կարծիքին, թե Տիգրանակերտի միջնաբերդը Շահբուլաղի աղբյուրներից փոքր ինչ հարավ-արևելք ճանապարհի հարևանությամբ

⁴⁰ Г. А. Тирация, Древнеармянская культура: Итоги изучения, Культурное наследие Востока, Ленинград, 1985, с. 128.

⁴¹ Ժ. Խաչատրյան, Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները, ՀՍՍՀ ԳԱ ԼՀԳ, 1978, N 8, էջ 55-56, նկ. 2:

⁴² C. Nylander, Remarks on the Urartian Akropolis of Zernaki-tepe. Orientalia Suecana (1965-1966) Uppsala, T. XIV, XV, 1966, p. 145-148, fig. 3,9; C. Nylander, Jonians in Pasargadae, Uppsala, 1970, N 64; Г. А. Тирация, Новые археологические материалы послеурартского времени на территории западной Армении (Турции) и их место в истории древнеармянской культуры, Древний Восток, N 2, Ереван, 1976, с. 149-157.

յամբ գտնվող բլրակի վրա սրբատաշ քարերով կառուցված փոքր ամրոցն⁴³ է, անհավանական է: Նախ, երբ այդ ամրոցը կառուցվել է, Տիգրանակերտ քաղաքը կամ հետագայի ավանը գոյություն չի ունեցել: Այնուհետև, քաղաքի միջնաբերդը սովորաբար կառուցվում էր ամենաանմատչելի հատվածներում:

Ի վերջո, տեղի ընտրության հարցում կարևոր գործոն է հանդիսացել նաև աղբյուրների առկայությունը, որոնց շնորհիվ լուծվել է քաղաքի ջրամատակարարման և գյուղատնտեսական տարածքների ոռոգման խնդիրները:

Արցախի Տիգրանակերտը, ըստ գրավոր աղբյուրների, նույնպես պետք է բնակեցված լինի Կիլիկիայի, Կապադովկիայի, Միջագետքի հելլենիստական քաղաքներից գաղթեցված բնակչությամբ:

Քաղաքային թաղամասում վաղմիջնադարյան եկեղեցու ավերակները, վերգետնյա համաժամանակյա խեցեղենի մնացորդները հաստատում են Սեբեոսի վկայությունը, որ Տիգրանակերտը վաղ միջնադարում շարունակել է իր գոյությունը որպես ավան⁴⁴: Մակար Բարխուդարյանցն ասում է. Տիգրանակերտ ավանը, որ այժմ ավերակ է, ժամանակին եղել է առաջնորդանիստ և գավառական կենտրոն: Տակավին մնում է ընդարձակ եկեղեցու ավերակը, շուկայի, տների, բաղնիքների կիսավեր քարուկիր շինությունները⁴⁵ և այլն:

Այսպիսով, արշավախմբի կողմից վավերացրած հնագիտական տվյալները լիովին բավարար են, որպեսզի, մատենագրական ու տեղագրական տվյալների հաշվառմամբ, Արցախի Տիգրանակերտը տեղորոշվի Շահբուլաղի աղբյուրներից դեպի Վանքասար ձգվող լեռան ներքնամասում և հարավից դրան հարակից հարթավայրում:

Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ Խաչենագետի ներքնահովիտը հանդիսանում է մշակութային և բնական մի յուրօրինակ տարածք, որը ցուցադրում է հայ էթնոմշակութային մշտական ներկայությունը ընդհուպ մինչև XI-XII դարերը: Ուստի, ինչպես Տիգրանակերտի հնագիտական ուսումնասիրությունը, այնպես էլ Խաչենի ողջ ներքնահովիտի (Գյավուրկալա, III-II հազարամյակների կուրգաններ և այլն) համալիր հետազոտությունը հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է:

Քաղաքի պեղումները և հետագա ուսումնասիրությունները հնարավորություն կտան ավելի ճշգրտելու միջնաբերդի և քաղաքի սահմանները, հատակագիծը, ճարտարապետական կերպարը և շատ ուրիշ հարցեր:

⁴³ Հակոբ Միմոնյան, Հովհաննես Մանամյան, Վանքասարի հուշարձանները Ծաղկաբան, Գ, Երևան, 2005, էջ 163:

⁴⁴ Պատմություն Սեբեոսի, էջ 125:

⁴⁵ Մակար Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 28:

ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈՒՅՄԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅ-ՍԱՍԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ (V-IX դդ.) ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

227 թվականին Իրանում կատարվեց դինաստիական հեղաշրջում՝ պայմանավորված երկրում ստեղծված լիակատար անկումային վիճակով: Ժամանակակիցների պատկերավոր արտահայտությամբ, «փոշու էր վերածվել երբեմնի փայլն ու վեհությունը: Ջորեղ ընտանիքների ժառանգները ցիրուցան էին եղել: Ծաղկուն քաղաքները ամայացել էին: Կյանքը քաղաքներից հեռացել էր գյուղերը: Չկար վեհապետ, որին ենթարկվեին, չկային հզորներ, որոնք կարող էին հաղթական մարտեր վարել»¹:

Իշխանության գլուխ անցավ Սասանյան իշխանական տունը՝ հանձին Արդաշիր Ա-ի: Սասանյաններին կարճ ժամանակում հաջողվեց ստեղծել հսկայածավալ մի տերություն՝ սահման ունենալով մի կողմում Հնդկաստանը, մյուսում՝ Միջագետքն ու Եգիպտոսը: Սասանյանները արտաքին նվաճումներին համընթաց կազմավորեց և Պետական բարձր համակարգ՝ համապատասխան ինստիտուտներով, որը կարելի է համարել մշակութային ձեռքբերումներից մեծագույնը: Իսկ իրանական կառավարման համակարգն այնքան կատարյալ էր, որ առանց որևէ փոփոխության այն օգտագործեցին արաբները²: Մոգպետաց-մոգպետ Քարտիրին հաջողվեց իրականացնել և սասանյան զրադաշտական հոգևոր համակարգի ձևավորումն ու հաստատումը իր բոլոր կարևոր ատրիբուտներով:

Քարտիրը ոչ միայն շահնշահի հոգևոր դաստիարակն էր, այլև երկրի գերագույն քուրմը և գերագույն դատավորը³:

Արաբ պատմիչ Մասուդիի վկայությամբ, Արդաշիր Ա-ն իր որդի Շապուհ Ա-ին, իբրև խրատ-պատգամ, ասել է. «Պետությունը և կրոնը անբաժան եղբայրներ են, առանց մեկի չկա մյուսը: Գահը հավատքի Տաճարի հենարանն է, իսկ Տաճարը՝ Գահի: Եվ Պետությունը պարտավոր է պաշտպանել հավատքը»⁴:

Սասանյանները կարողացան մի շարք ռեֆորմների իրականացման ճանապարհով երկիրը տանել զարգացման առավել արդյունավետ ուղիով՝ ապահովելով ոչ միայն քաղաքական-տնտեսական, այլև մշակութային վերելք: Ձևավորվեց նոր և զորեղ մի մշակույթ: Սակայն Սասանյան հարուստ մշակույթը չստեղծվեց հենց այնպես, առանց մշակութային խորքերից եկող բազում շերտերի: Սասանյան մշակույթ ֆենոմենը ձևավորվեց մի այնպիսի հենքի վրա, որն իր մշակութային շերտերում համա-

¹ Գ. Վ. Кинжалов, В. Г. Луконин. Памятники культуры Сасанидского Ирана, М., 1960, с. 6.

² Там же, с. 11.

³ Գ. Վ. Кинжалов, В. Г. Луконин, ук. соч., с. 8; В. Г. Луконин. Культура Сасанидского Ирана (Иран в III-V вв.), М., 1969, с. 70.

⁴ В. Г. Луконин, ук. соч., с. 70.

ձուլում, խաչասերում էր Աքեմենյան, Պարթևական-Հելլենական, Քուշանական, ապա և նվաճված ժողովուրդների մշակութային ժառանգությունը, այդ թվում և հայկական ինքնատիպ մշակույթն՝ իր ձեռքբերումներով ու հարուստ ավանդույթներով:

Իսկ հայկական մշակույթն իր ընդերքում պարփակում էր Հայկական լեռնաշխարհում ձևավորված տարբեր ցեղային միությունների կողմից ստեղծված մշակութային ժառանգությունը, գումարած ուրարտական հին-արևելյան բարձր զարգացած մշակույթը, վաղ հայկական և հելլենիստական մշակութային ավանդույթներն՝ իրենց հարուստ արտահայտչամիջոցներով:

Որ Ուրարտուն և Ասորեստանը մեծ ազդեցություն են ունեցել նոր ձևավորվող Աքեմենյան, հետևաբար և սասանյան հարստության քաղաքական, մշակութային կյանքի վրա, չեն բացառում և իրանագետներից շատերը: Իրանի պատմության և մշակույթի հայտնի մասնագետներից Վ. Գ. Լուկոնինի խոսքերով, Մառիկի և Զիվայի նյութական մշակույթը կրել է ուրարտական ինքնատիպ մշակույթի ներգործուն ազդեցությունը, «օգտագործել ուրարտական և ասորական պատկերազրական լեզուն»⁵:

Հետևաբար, Սասանյան մշակույթ ասելիս չպետք է հասկանալ մշակութային այն ժառանգությունը, որ արարվել է մեկ դինաստիայի (Սասանյան) կամ մեկ ժողովրդի (Իրան-Պարսք) կողմից: Հ. Օրբելու դիպուկ բնորոշմամբ՝ «Սասանյան արվեստը չի ճանաչել աշխարհագրական և ժամանակագրական խիստ ու կոնկրետ սահմաններ»⁶:

Սասանյան Իրան պետության կազմում էին այնպիսի բարձր և հարուստ քաղաքակրթություն ունեցող ժողովուրդներ և երկրներ, ինչպիսիք էին քուշանները, սակերը, վրացիները, աղվանները, սկյութները, կովկասյան մյուս ժողովուրդները, հետագայում՝ Միջագետքն ու Եգիպտոսը:

Սրանք բոլորը ստեղծեցին այն մշակույթը, որը դարեր շարունակ ծառայեց մարդկային երևակայությանը՝ դառնալով մշակութային նոր նվաճումների և ձեռքբերումների անսպառ աղբյուր:

Սասանյան մշակույթը, Հ. Օրբելու դիտարկմամբ, միաժամանակ պայքար էր հելլենիստական մշակույթի դեմ: Այն կասեցրեց Արևմուտքից եկող Հռոմեական և Բյուզանդական հզոր մշակույթների ալիքը, ապահովեց Իրանի ու նրա հետ կապված երկրների, այդ թվում և Հայաստանի ժողովրդական ուժերի զարգացումը⁷: Փաստորեն, երկու երկրների (Իրան, Հայաստան) մշակույթները դարձան ազգային ինքնությունը պահպանող ակտիվ պայքարաձևերից:

Հայկական վաղ միջնադարյան մշակույթը կազմավորվում էր երկու գաղափարախոսությունների՝ հաղթող քրիստոնեության և իր պարտության հետ չհաշտվող հեթանոսության մրցապայքարում, երբ առաջինը թելադրում էր մտքի և գաղափարախոսության իր մոտեցումներն ու նորմերը:

387 թվականին Տիգրանի դաշնագրով Հայաստանը բաժանվեց Բյուզանդական

⁵ В. Г. Луконин. Древний и раннесредневековый Иран (Очерки истории культуры). М., 1987, с. 72-73.

⁶ К. В. Тревер, В. Г. Луконин. Сасанидское серебро (Художественная культура Ирана III-VIII вв.), М., 1987, с. 43.

⁷ И. А. Орбели. Сасанидское искусство. Изб. труды. Ереван. 1963, с. 271.

կայսրության և Սասանյան Իրանի միջև՝ սահման ունենալով Սրմանց կամ Բյուրակնյա լեռնաշղթան հյուսիսից-հարավ՝ Կարին-Մծբին ուղղությամբ:

Սասանյան Իրանին անցավ Արշակունյաց Հայաստանի տարածքի մոտ 73%-ը. Մեծ Հայքի Տուրուբերան, Մոկք, Վասպուրական, Սյունիք, Տայք և Այրարատ նահանգները:

Այսուհետ Արևելյան Հայաստանն ընդգրկվեց Սասանյան հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի ասպարեզ, սկզբում թագավորության (մինչև 428 թ.), ապա մարզպանության կարգավիճակով, հաղորդակցվեց դրանցում կատարվող բոլոր փոփոխություններին:

Գտնվելով երկու հակոսնյա տերությունների (Բյուզանդիա և Սասանյան Իրան) իրար կապող Արևելքից Արևմուտք ձգվող ռազմավարական, տարանցիկ առևտրաքարավանային, բնականաբար և մշակութա-փոխանակային կարևոր մայրուղիների հանգուցակետում, Հայաստանը և հայ մշակույթը հայտնվեցին շատ բարդ իրավիճակում, երբ օրվա խնդիր դարձավ մշակույթների այդ հոծ խառնարանում ոչ միայն դիմակայել, պահպանել ազգային դեմքն ու ինքնատիպությունը, այլև հաստատուն տեղ ապահովել հետագա մրցապայքարում: Հայ մշակույթը ոչ միայն հարստացավ նոր ձեռքբերումներով, այլև հարստացրեց սասանյան մշակույթը արևմտյան արժեքներով: Այսպիսով, Արևելյան Հայաստանը դառնում էր ոչ միայն քարավանային բեռներ ներմուծող և արտահանող, այլև մշակութային բոլոր կարգի նորամուծությունների և փոխազդեցությունների կրողն ու փոխանցողը: «Դվինը,- գրում է Ն. Ադոնցը,- Ասիայի միջազգային կյանքի կարևոր զարկերակն էր, այն պարսկական և հռոմեական ապրանքների փոխբեռնման համար իբրև շուկա էր ծառայում»⁸:

Հայկական արքունական, ապա և մարզպանական միջավայրում իշխում էր Սասանյան պալատական կյանքի վարվելակարգը (էթիկետը), կենցաղային նորմերն ու սովորույթները: Հայ իշխանական ընտրանին սերտ կապերի մեջ էր Սասանյան արքունիքի հետ, մասնակից նրա բոլոր տոնախմբություններին և հանդիսություններին: Բնականաբար, նաև սպետք է առաջնորդվեր Սասանյան արքունիքում կենցաղավարող նորմերով՝ պահպանելով բոլոր կանոնները: Սասանյան էթիկետը մշակել էր արքունական սանդուղքի տարբեր աստիճաններում գտնվողների համար նիստ ու կացի տարբեր նորմեր, հագուստի և զարդարանքի առարկաների անհատական ուրույն հորինվածք. «Նա (Վասակը) ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկաներ զպատուական հանդերձն, զոր ուներ ի թագաւորէն. կապէր և զպատուաւորսն (պատիվ վարսին) և զխոյրն ոսկեղէն, դներ ի վերայ, և կռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբ պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, և զամենայն օրէնս պատուոյն»⁹:

Վ. Լուկոնինը գրում է, թե Սասանյան արքունիքի սովորույթները նկարագրող առաք և պարսիկ պատմիչներն ու բանաստեղծները հայտնում են, որ ցանկացած քաղաքացիական, քրմական կամ ռազմական պաշտոնում որևէ մեկին հաստատելիս, Արքայից-արքան այդ պաշտոնային շնորհում էր ապագա իշխանության նշանակնե-

⁸ Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, Ереван. 1971, с. 222.

⁹ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Նայոց պարերագմին, Եր-ան, 1957, էջ 136:

րը. գլխարկ (կուլախ), գոտի (կամար) և կնիք-մատանի (մուհր)¹⁰:

Սասանյան մեծահարուստ մշակույթի տարբեր արտահայտություններ տարբեր չափով են պահպանվել և փոխանցվել մեզ, մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ, բայց այդ ամենը բավարար է գաղափար կազմելու նրա բացառիկության վերաբերյալ:

Սասանյան ճարտարապետությունից պահպանվել են քիչ թվով հուշարձաններ թե՛ բուն Իրանում և թե՛ ծայրամասերում: Սակայն այն անհետ չի անցել: Մասնագետների մոտ ձևավորվել է կարծիք, թե Սիրիական բազիլիկաների հատակագծային մշակումների հիմքում ընկած է իրանական (սասանյան) կրակի տաճարների կառուցվածքային հորինվածքը, որը գալիս է Ուրարտուից, մասամբ և անցել է հայկական իրականություն¹¹: VI դ. Սասանյան կրակի տաճարի ավերակներ են պահպանվել (ատրուշանը և խարիսխներից երկուսը) Դվինում: Սակայն այն չի կարելի դիտարկել իբրև մշակութային ազդեցության կամ սերտ կապերի արդյունք: Այն Սասանյան պետության վարած կրոնական անհանդուրժողականության, հակաքրիստոնեական քաղաքականության հետևանք է¹²:

Հայկական վաղ միջնադարյան հարդարվեստում և քանդակում առկա է սասանյան քանդակագործության ազդեցությունը: Վաղ միջնադարյան շատ հուշարձաններ և կոթողներ կրում են Սասանյան արվեստի դրոշմը (Պտղնի, Ագարակ, Ավան, Զվարթնոց, Ծպնի, Անի և այլն):

Ս. Տեր-Ներսեսյանը այն կարծիքն է հայտնել, թե «Դանիելը առյուծների գբում»



քանդակի մոտիվները Հայաստան են ներթափանցել Սասանյան արվեստի շնորհիվ¹³:

Գառնահովտում գտնված կանաչի քանդակն իր հարդարանքով Ս. Տեր-Ներսեսյանին հիշեցնում է Թագի-Բոստանում Անահիտ աստվածուհու քանդակը¹⁴:

Սասանյան քանդակագործության ազդեցությունը (առավելապես կլոր քանդակի) մեծ է և հետսասանյան շրջանի հայկական հուշարձաններում: Աղթամարի Ս. Խաչ ե-

¹⁰ **А. Я. Борисов, В. Г. Луконин.** Сасанидские геммы. М., 1963, с. 22.

¹¹ **А. Л. Якобсон.** Закономерности в развитии раннесредневековой архитектуры. Л., 1983, с. 82.

¹² **Ս. Քալանթարյան,** Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները, Լրաբեր 1982, № 12, էջ 89, աղ. 1:

¹³ **Լ. Ազարյան,** Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975, էջ 83:

¹⁴ Անդ., էջ 65:

կեղեցու (X դ.) քանդակներում ժամանակի ոգուն համահունչ իրենց նորովի լուծումն են ստացել Սասանյան քանդակին բնորոշ շատ տարրեր ու հնարներ:

Գագիկ թագավորի թագի հորինվածքում Յ. Սմիռնովը տեսնում է նմանություն Ուրմիզդ թագավորի խույրի հետ: Նույնը կարելի է ասել և պսակի (նիմբ) մասին՝ հարդարված բոլորշի, կետաշար լայն ժապավենով: Նման լուսապսակ, ըստ Հ. Օրբելու, կրում էին Սասանյան շահնշահերը, նշան սրբազան ծագման, բայց ոչ քրիստոնեական, այլ Իրանի և ոչ Իրանի աստվածներից սերող, աստվածային ծագում ունեցող արքայից-արքաները¹⁵:

Առավել սերտ էին կապերը նյութական մշակույթի դաշտում: Հայաստանի տարբեր հատվածներում պեղումներով կամ էլ պատահաբար հայտնաբերվել են Սասանյան նյութական մշակույթին պատկանող կամ էլ նրանից անմիջականորեն ազդված շատ նմուշներ:

1907 թվականին Նոր Բայազետում (Գավառ) պատահաբար բացվել է արծաթե թանկարժեք սպասքի գանձ: Գանձը պարունակել է երկու սկուտեղ, մեկ թաս, գդալներ և այլ ուշագրավ առարկաներ: Սակայն դրանցից միայն մեկի պահպանության վայրն է այսօր հայտնի՝ Վրաստանի Պետական թանգարան¹⁶, իսկ մյուսներից լուսանկարներ: Կ. Վ. Տրևերի վկայությամբ, սկուտեղները 1930 թ. ցուցադրված են եղել Բեռլինի Ֆրիդրիխ թանգարանում, ուր և դրանք տեսել է Հ. Ա. Օրբելին: Ապա հայտնի է դարձել, որ մշակութային բացառիկ արժեք ներկայացնող առարկաները թանգարանից անհետացել են¹⁷:

Սկուտեղներից առաջինը հարդարված է Սասանյան կիրառական արվեստում և քանդակում դասականություն ստացած «Արքայական որսի» տեսարանով: Կենտրոնում հեծյալ շահնշահն է, ժամանակի նորաձևությանը համահունչ արքայավայել շքեղ հագուստով, գլխին աստամիկներով կուլախ (թագ), թագի կենտրոնում արքայական նշանը՝ մահիկ գնդով, պարանոցին՝ արքայական քառամանյակը, ամեն շարում երեքական տանձաձև մարգարտե կախիկներով, մեջքին ոսկեկուռ կամարը, նրանից կախ նրբակերտ դաշույնը:

Հարդարանքում տեղի է ունեցել բովանդակային տարրալուծում: Խախտված են դասականություն ստացած մոտեցումները: Նժույզը հետին ոտքերով կտրված է գետնից, վախեցած դիմահար վարազի հարձակումից, իսկ արքան վախից կծկել է ոտքը, որպեսզի այն չհոշոտի կատաղած գազանը: Բայց և ոտքերի տակ սպանված առյուծի պատկերն է, նույն կանոնիկ դասավորությամբ, ինչ «Առյուծների որսը» սկուտեղի



¹⁵ И. А. Орбели. Из истории культуры и искусства Армении X-XIII вв. т. 1. М., 1968, с. 83.

¹⁶ С. Есаян, О чаше из Нор-Баязетского клада, ՀՍՍ ԳԱ Տեղեկագիր, 1964, № 9, էջ 83: А. А. Kalantarian. Dvin Histoire et archéologie de la ville medievale. Paris. 1996, fig. 18, 19.

¹⁷ С. Есаян, с. 83.

հարդարանքում: Հեծյալի առջև ծառը գրկած արջն է, իսկ գլխավերևում՝ օդում ճախրող մերկ պատանին, հաղթության պսակը՝ դիադեման ձեռքում, դարձյալ մարգարտե երեք կախիկներով:

Զարդագեղ է և նժույգի հարդարանքը. գեղանկար ծածկոց, փափուկ թամբ, կաշվե նուրբ փոկերից, տեղ-տեղ ճարմանդակալ սանձ, գլխին՝ արքայական նշանակը՝ մահիկ գնդով:

Անոթն ամբողջության մեջ թվում է Սասանյան, պատրաստված կենտրոնում, արքունական արհեստանոցներից մեկում: Այս կարծիքին են մասնագետներից մի քանիսը: Վ. Գ. Լուկոնինը այն համարում է սասանյան՝ հիմք ընդունելով արքայական առաջնակարգ նշանակները՝ ատամիկներով թագը և երեք կախիկներով մանյակը: Երեք կախիկներով մանյակ առաջին անգամ կրել են Արտաշիր Գ-ն (628-629 թթ.), Եզդիհերդ Գ-ն (632-651 թթ.)¹⁸:

Բ. Ի. Մարշալը այն համարում է Թոխարիստանյան և թվագրում VII-VIII դդ. (Պետական էրմիտաժ, № 16):

Կ. Տրեյերը գտնում է, որ անոթը սասանյան չէ, պատրաստված է Հայաստանում, հայ վարպետների կողմից, քանի որ գույտ իրանական կիրառական արվեստում, էպոսում և բանահյուսության մեջ երբեք չի հանդիպում ո՛չ արջ պատկերը և ո՛չ էլ նրա անվանումը: Իբրև զարդաձև, այն ավելի բնորոշ է հայկական, վրացական և կովկասյան զարդարվեստին¹⁹:

Սակայն այս կարծիքը մերժում են Վ. Լուկոնինը, Վ. Դարկևիչը, Բ. Մարշալը և ուրիշներ: Իբրև կովան, Լուկոնինը նշում է, թե արջ զարդապատկերը հաճախ է հանդիպում Սասանյան կնիքների հարդարանքում: Հայտնի են բազում նմուշներ²⁰. «Ճիշտ է, շարունակում է Լուկոնինը, արջ դիցաբանական կերպարը չի հանդիպում զրադաշտական դիցաբանում և չի համարվում նրա աստվածություններից, բայց կարող էր հետագայում թափանցել, սակայն առանց որևէ դերակատարման, «հենց այնպես»²¹»:

Այլ է մեր տեսակետը:

1. Անոթը պատրաստվել է ո՛չ թե կենտրոնում, արքունական արհեստանոցներից որևէ մեկում, որոնք կոչված էին հոգալու պալատական շքեղ կենցաղի պահանջները, ուր բացառված էր դարերի ընթացքում մշակված, հղկված «Արքայական որսի» կանոնիկ տեսարանի որևէ տարրի խախտում, մնաց թե պատկերների դասավորության կամ էլ վախի արտահայտության ցուցադրումը շահնշահի կողմից, այլ ծայրամասերից մեկում, կոնկրետ Հայաստանում, գուցե և նվիրատվության ցանկությամբ:

2. Սասանյան համարվող կնիքների գույտ իրանական ծագումը դեռևս ապացուցված չէ: Պատկերակիր կնիքներ, հաճախ թանկարժեք մատանիների տեսքով, ուղարկվում էին տերության ծայրամասեր՝ բարձրաստիճան պաշտոնյաներին, իբրև նրանց շնորհված իշխանությունը հավաստող նշանակ: Սասանյան վարչակարգը ժամանակի ընթացքում մշակել էր կնքաքարերի, ամեն տեսակ պետական ծառա-

¹⁸ К. Тревер, В. Г. Луконин, укр. соч., с. 79.

¹⁹ К. В. Тревер. К вопросу о так называемых сасанидских памятниках. СА XVI, 1952, с. 284.

²⁰ А. Я. Борисов, В. Г. Луконин, укр. соч., с. 26-81, 83: 805, 806, 807, 808: К. И. Рамишвили. Сасанидские геммы в Грузии (на груз.). Тбилиси, 1979, табл. 18, 19, 72.

²¹ К. В. Тревер, В. Г. Луконин, укр. соч., с. 56, 59.

յությունները վավերացնող «նշանակ»-ների որոշակի համակարգ, ընդունելի հսկա-յաձավալ տերության բոլոր մարզերում:

3. Եթե արջը պատահական ծագում ունի զրադաշտական դիցաբանում, ապա հայկական ժողովրդական ավանդություններում նա ունի պատվավոր տեղ և դերա-կատարում: Հայաստանում հայտնաբերված կենդանակերպ կավե «ջրամաններից» մի քանիսն ունեն արջակերպ հորինվածք (Արտաշատ, Արմավիր, Եղեգնաձոր) և վե-րագրվում են Ք.ա. II-I դդ.: Կենդանակերպ այս անոթներն ունեին պաշտամունքային նշանակություն: Արջը հայ իրականության (արտաքին աշխարհում ընդհանրապես՝ Կրաստան, Հյուսիսային Կովկաս և այլն) ամենապաշտված կենդանիներից էր և մարդկանց պատկերացումներում նույնացվում էր մարդու հետ, իբր երկուսն էլ նույն ծագումն ունեն կամ իրարից են առաջացել: Արջը շինարար է, հողագործ, ջրաղաց-պան, այգեպան և այլն: Հնում տարածված կենդանիներին նվիրված ծիսական պարե-րից մեկն էլ արջապարն էր²²: Նրա գերեզմանը դարեր շարունակ Հայաստանի որոշ շրջաններում եղել է ուխտատեղի²³:

4. Թևավոր հրեշտակակերպ մերկ պատանու կերպարը սկուտեղի հարդարանքում ավելի շուտ կարելի է համարել հռոմեա-բյուզանդական մշակույթի ազդեցություն, քան թուրքիստանյան կամ միջինասիական:

5. Սովորաբար զուտ սասանյան քանդակում, հերալդիկայում, կիրառական ար-վեստի կերտվածքներում և դրամագիտական պատկերագրության մեջ շահնշահի դիմանկարն ունի որոշակի պատկանելություն, նա կոնկրետ անձ է իր բնորոշիչնե-րով: Իսկ Նոր Բայազետի պարագայում անորոշ, հավաքական կերպար է:

6. Սկուտեղն անշուշտ իր կերտվածքով և հար-դարանքի մանրամասներով վերաբերում է հետ-խոսրովյան (Անուշիրվան) ժամանակներին, VII դ. ոչ ուշ, մինչ արաբական արշավանքները:

Երկրորդ սկուտեղը հարդարված է անիրա-կան, հեքիաթային թռչնազագանի՝ անգղառյուծի (գրիֆոն) պատկերով, շրջանակված ցորենա-հյուսկի շրջալայով: Կենդանու մարմինը և թևերը կերտված են ժամանակին սասանյան արվես-տում լայն կիրառություն ստացած թեփուկազար-դի և փետրազարդի հարդարատարրերով, բայց տարբեր կատարման կերպով (մանե-րա), (Ս.Պետերբուրգ, Էրմիտաժ - սափոր արծաթե, սենմուրվի պատկերով, սկուտեղ՝ Անահիտ աստվածուհու պատկերով, թևաբաց հրեշի մեջքին, սրինգ նվագելիս, VI-VII դդ.)²³:

Կարծում ենք, որ նորբայազետյան առարկան ունի տեղական ծագում, քանզի, նմանություններով հանդերձ, կրում է էական տարբերակիչ մանրամասներ: Առաջի-նում այն հեքիաթային հրաշք թռչուն է՝ զագանի մարմնով, թռչնին բնորոշ կարճ ոտ-



²² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 55, 56. Ա. Ղանալանյան, Ավանդապա-տում, Երևան, 1969, էջ 120, 264:

²³ К. В. Тревер, В. Г. Луконин, ук. соч., с. 83, рис. 66, 106 (9-26).

քերով, փռված սուր մագիլներով, հպարտ կեցվածքով, բայց ոչ գիշատիչ, ամեն ինչ ոչնչացնող, ահասարսուռ զագան, հնազանդ միայն ամենակարող աստվածներին, ինչպես էրմիտաժյան օրինակում: Այլ հարդարում ունեն և այն ներառող շրջանակն ու ազին: Սրտիկների փոխարեն այստեղ ցորենի հյուսկե հասկ է, իսկ ազին զարդարող տերևազարդի փոխարեն՝ բացված շուշան ծաղիկ, դեպի վեր պարզած նրբագեղ ծաղկաթերթերով:

Վերջապես գրիֆոն հեքիաթային (ֆանտաստիկ) կենդանին, հարդարված թեփուկազարդով և փետրազարդով, ուրարտական հարդարվեստի, որմնանկարչության և քանդակագործության ամենասիրելի հարդարատարրերից և մոտիվներից էին²⁴:

Մեծ թիվ են կազմում Հայաստանի տարածքում հայտնաբերված սասանյան ժամանակներին (V-VII դդ.) վերաբերող կնիքներն ու կնքադրոշմները, իբրև քաղաքական, հոգևոր-դատական, հասարակական և առևտրական գործունեությունը վավերացնող նշանակներ: Կնիքները կերտված են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից (կարկեհան, մեղեսիկ, նոնաքար, սարդիոն) և այլն:



1959 թ. Երևանի տարածքում գտնվել է ոսկե կնիք մատանի, կարմիր կարկեհան քարով, վրան փորագիր խաչ-պատկեր. սասանյան հերալդիկային բնորոշ փասիանազարդով և հայերեն գրությամբ (մասնավոր հավաքածու)²⁵: Իսկ Դվինում պեղումների միջոցին գտնվել է գեղեցիկ ոսկե խաչ, բնում՝ արծվապատկեր կնիք (մուգ կարմիր մեղեսիկ): Մեղեսիկը, որպես «արքայական քար», գերազանցապես կնիք-մատանիների տեսքով, լայն տարածում ուներ հունա-հռոմեական²⁶, ապա և Սասանյան զարդարվեստում և հերալդիկայում: Ենթադրում ենք, որ խաչը կրել է Մամիկոնյան ընտանիքի անդամներից մեկը, իսկ կնքաքարը մշակվել և փորագրվել է կենտրոնում՝ Իրանում²⁷:

Կնքադրոշմները կավակերտ են՝ համապատասխան դրոշմներով: Դվինում գտնված կավե կնքադրոշմ գնդերից շատերն իրենց վրա կրում էին 10-45 դրոշմ²⁸: Կնիքները և կնքադրոշմները սովորաբար հարդարված են կրողի դիմապատկերով, աստվածների պատկերներով, որսի տեսարաններով, թռչունների փորագիր նկարներով, բուսական և երկրաչափական զարդանախշերով, արձանագրություններով:

²⁴ Б. Б. Пиотровский. Искусство Урарту VIII-VI вв. до н.э., Л., 1962, табл. VI, VII, X, XI, XXXV.

²⁵ Э. Хуршудян, Н. Акопян. Сасанидский золотой перстень с геммой на древнеармянском (на русск.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVIII, Երևան, 1999, էջ 182-183, 186:

²⁶ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952, էջ 172, Ն. Հակոբյան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը (IX-XIII դդ.), ՀՀՀ. պր. 10, Երևան, 1981, էջ 32:

²⁷ А. А. Калантарян. Ранне средневековые буллы Двина (на русс, арм. и англ. яз.), Р.Р.Р. 13, Ереван, 1982, с. 17, табл. XV, XVI, XVII, XVIII.

²⁸ Անդ, աղ. III-21, 22, IV-39, 47, 50, XI - 107.

Հանդիպում են և խաչապատկեր կնքադրոշմներ²⁹:

Սասանյան ժամանակներում մեծ վերելք ապրող հոգևոր և աշխարհիկ բարձրակարգ ճարտարապետական շինությունները կարիք ունեին շինարարական հատուկ խեցեղենի, հատկապես ծածկի, որի արտադրության տեղում կազմակերպելը դարձել էր օրվա հրամայական: Եվ այն Հայաստանում, շնորհիվ հայ բրուտների խելամուտոթ-



յան և ճարտար ձեռքերի, իրականացվեց: Հոգևոր բոլոր կառույցները ծածկապատվեցին կղմինդրով: Կղմինդրներն ունեին գունային հարուստ երանգավորում՝ վառ կարմրից մինչև մուգ դեղնա-կարմրավուն: Իսկ աշխարհիկ շինությունները ներսից պատվում, գեղեցկացվում էին հատուկ կավակերտ սալիկներով՝ շքասալերով, հար-



դարված կենդանական, բուսական, երկրաչափական զարդապատկերներով (Աղցք, Կողբ, Փաշա-գեղ և այլն)³⁰:

Աղցքում գտնված կղմինդրներից մեկը ևս հարդարված է խոշոր արջապատկերներով:

Շինարարական խեցեղենում ակնառու է Սասանյան V-VII դդ. զարդարվեստի ազդեցությունը՝ մշակված զարդահնարների և դրանց կատարման յուրահատուկ կերպի կիրարկումը տեղացի վարպետների կողմից:

Սասանյան խեցեգործության խոշոր ձեռքերումներից կարելի է համարել և դրոշմազարդման (սեղմում հատուկ կաղապարներում) հնարանքը, որը Մերձավոր Արևելքում առաջին անգամ կիրարկվել է Քրիստոսի ծննդից առաջ, վերջին դարերում³¹: Իբրև խե-

ցեգործական արվեստի գեղագիտական նոր որակ, այն շարունակեց գոյատևել և հետսասանյան շրջանում՝ կատարելագործվելով ու հարստանալով նոր հնարներով: Խեցեգործական նոր հնարանքը ժամանակի ընթացքում ընդգրկեց պատմա-մշակու-

²⁹ Б. Ф. Куликов. Словарь камней – самоцветов. Л., 1982, с.26, О. Я. Неверов. Геммы античного мира, М., 1973, с. 9.


³⁰ А. А. Калантарян. Глиняные плитки с изображениями из Ахца (на русск.), ՊԲՇ, 1985, № 4, աղ. 1-2, էջ 228, 231:

³¹ А. У. Pope. The ceramic Art in Islamic Times. vol. V, London and New-York, 1938, pl. 1471-1472. А. А. Калантарян. Dvin, pl. 78-1-2.

թային ընդարձակ տարածք, ներառյալ և Հայաստանը: Դվինի պեղումներից հայտնի են նման խեցանոթների մի քանի ինքնատիպ օրինակներ՝ հարդարված բուսական պերճ զարդերով:

Զգալի են նմանությունները և վաղ ջնարակապատ խեցեղենի հայկական ու սասանյան իրանական օրինակներում: Չնայած Հայաստանն ուներ հարուստ ավանդույթներ և զգալի փորձ, վաղ ջնարակած խեցեղենի ստացման բնագավառում (հելլենիստական և անտիկ ժամանակաշրջանում), այնուհանդերձ Դվինում հայտնաբերված նմուշներն իրենց գունային լուծումներով, խեցու որակով, զարդանկարների հորինվածքով, անոթների ձևերով բազում աղերսներ են հանդես բերում իրանական ջնարակած խեցեղենի հետ:

Դվինի պեղումներով գտնված ապակու ամենահին և լավագույն օրինակներից շատերը պատկանում են Իրանի ապակեգործական արհեստանոցների արտադրանքին: Դրանք հիմնականում առտնին գործածության առարկաներ են՝ հարդարված սասանյան ժամանակների իրանական ապակուն բնորոշ հարդարանքով. ապակե հղկված բլրակավոր (ֆասետկաներ) գավաթներ, թասեր, գլանաձև խորը բաժակներ, խոշոր տանձաձև իրանով սափորներ, շշեր և այլն: Այս խմբում առավել ուշագրավը գավաթի մի բեկոր է, որի դաշտը զարդարում է նկարեն թևաբաց, երկարապոչ թռչնապատկերը՝ շեշտված կտուցով ու մագիլներով: Նրա վրա թիկունքից հարձակվել է խոշոր մի օձ՝ բացված երախով: Թռչունը գլխին կրում է «բանդ»՝ սասանյան «պատվո նշանակի» հորինվածքով: Բեկորը բացահայտ սասանյան մշակում ունի՝ պատրաստված իրանական արքունական (կենտրոնական) ապակեգործական կենտրոններից որևէ մեկում³²:



Կիսաթափանցիկ ապակուց հղկած բլրակավոր անոթներ գերազանցապես հայտնի են Քիշ քաղաքից, Բահրամ-Գուրի ավերակված պալատի վերին շերտերից³³: Դրանք ունեն բացառիկ արժեք ապակեգործական կենտրոնների, ուղղությունների և «դպրոցների» հարցերը դիտարկելիս:

Հայաստանի տարածքում մեծաքանակ են և սասանյան փողերանոցներում կտրած դրամների գյուտերը: Շնորհիվ դրամների պատկերագրության (դիմանկարային), գումարած և հայ պատմիչների վկայությունները, մենք կարողանում ենք վերականգնել հայ պալատական արարողակարգին ու վարվելակարգին վերաբերող շատ մանրամասներ, ունենալ պաշտոնական տարազի նկարագիրը, քանզի Արշակունի թագավորներն ու հայ մարզպանները կրում էին նույն հանդերձանքն ու նշանակները, ինչ Սասանյան արքունիքի անդամները:

³² Անդ, pl. 102.3.

³³ **Հ. Մ. Զանփուլայան, Ա. Ա. Քալանթարյան**, Միջնադարյան Հայաստանի առևտրական կապերը, VI-XIII դդ. (ըստ ապակեգործության տվյալների), Երևան, 1988, էջ 10:

Եվ այսպես, հայկական նյութական մշակույթը, հարդարվեստը, ընդհանուր առերեսներ ունենալով Սասանյան նյութական մշակույթի և կիրառական արվեստի հետ, միաժամանակ տարբերակվում է արտահայտչամիջոցների ինքնատիպությամբ, պարզությամբ ու զուսպ ճաշակով, հարդարվեստի դինամիզմով, ձևերի բազմազանությամբ: Եթե սասանյան հարդարվեստը (դեկորատիվ, զարդանկարային, դիմանկար, թեև արքաների դիմանրկարներն ունեն տարբերակիչ տարրեր) հորինվածքում կանոնիկ է, ապա միջնադարյան հայ զարդարվեստը խիստ դինամիկ է: Հետևաբար հայկական նյութական մշակույթը, գտածոների ընձեռած հնարավորությունների շրջանակներում, պետք է դիտարկել իբրև Սասանյան նյութական մշակույթ հասկացության առանձին որակ՝ իր բոլոր ընդհանրություններով ու տարբերություններով:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԱՔԵՆԻՍԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Մաքենիսը Հայաստանի հնագույն մշակութային կենտրոններից է: Մինչև 10-րդ դարը Մաքենիս բնակավայրը համանուն վանքով մտնում էր Գեղարքունիքի գավառի մեջ, իսկ Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննեսի օրոք այն Սյունյաց Սոթք գավառի 80 հարկատու գյուղերից մեկն էր¹:

Մաքենիսը հայտնի էր իր «հոչակաւոր, համբաւատենչ եւ մեծաքանչ» վանքով: Հնում գյուղը և վանքը նույնանուն են եղել և կոչվել են Մաքենոց, Մաքենյաց կամ Մաքենոցաց, ինչպես նաև Մաքեստից անուններով:

Մաքենիսում միաբանություն հիմնվել է դեռևս 8-րդ դարից առաջ և, աղբյուրների վկայությամբ, իր հնությամբ և նշանակությամբ նույնացվել է միաբանություններից հնագույններից մեկի՝ Ակոռիի միաբանության հետ²: Այդ մասին են վկայում նաև վանքի պարսպի ներսում և նրանից դուրս հայտնաբերված՝ վաղ քրիստոնեության շրջանի շինությունների հետքերը³:

Մաքենոցաց վանքը կառուցված է ձորի պոնկին, կարմրագույն քարով, դրա համար էլ այն երբեմն կոչվել է նաև Կարմիր վանք⁴: Վանքի և նրա միաբանության մշակութային ծաղկուն գործունեությունը սկսվում է 8-րդ դարի սկզբից և կապվում է Հարանց հոր՝ «գիրոչակելի այրն» Սողոմոնի անվան հետ, որն, ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, «ժամանակին Հայաստանեայցն պարծանք» էր⁵:

Վանքի գործունեության մասին գրավոր վկայությունները բացակայում են մինչև 15-րդ դարը:

14-րդ դարի վերջին և 15-րդ դարասկզբին Լենկ Թեմուրի և նրա հետնորդների աշխարհավեր արշավանքներն ու պատերազմները քանդեցին ողջ Հայոց աշխարհը, քաղաքների և գյուղական բնակավայրերի հետ ավերվեցին վանքերն ու մենաստանները: Սյունյաց նահանգում ուղտերին բարձած թշնամին գերեվարեց նաև վանքերում պահվող ձեռագրական վիթխարի հարստությունը⁶: Ուստի գրչական վաղ շրջանի ընդօրինակությունների կորուստը մեծ է:

Մաքենոցաց կենտրոնից մեզ հասած առաջին ձեռագիրն Ավետարան է, որի

¹ Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 304-305, 315:

² Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 65-66:

³ Ստ. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 60:

⁴ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 66:

⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 314: Սողոմոն Մաքենացու մասին տե՛ս Ա. Ղազարոսյան, Մաքենացոց ուխտը և Սողոմոն Մաքենացին, «Էջմիածին», 2002, Դ, էջ 36-42:

⁶ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 12:

«առաջին զլուխն՝ ըսկիզբն» Հովհաննես արքեպիսկոպոսի Մաքենիսում՝ «ի խնդրոյ Մպահանին», ի հիշատակ նրա կին Գուլիի և ի վայելումն «հոգեւոր որդոյ Ովանէսին»⁷: Ձեռագիրն ընդօրինակելիս գրիչը մաքուր թերթեր է թողել ավետարանիչների նկարների, էջամասեր՝ ավետարանառաջների, լուսանցազարդերի, զարդագրերի, լուսանցապատկերների համար: Ընդօրինակությունը շարունակելու և նկարչի հետ համատեղ աշխատելու համար հենց այս Հովհաննես Դրախտիկցու ցանկությամբ էլ Հովհաննեսը Մաքենիսից տեղափոխվել է Սաղմոսավանք, ուր այդ ժամանակ իր հերթական ձեռագիրն էր նկարազարդում հայտնի մանրանկարիչ Հովհաննես Առնջեցին: Ավետարանն ավարտվում է Սաղմոսավանքում «ի թվականիս Հայոց ՋԽԵ (1496)»⁸: Հենց այստեղ նույն տարում էլ Ստեփանոս Առնջեցին «ի խնդրոյ տէր Յովհաննէս Դրախտիկցոյ» նկարազարդում է սույն մատյանը⁹:

Նույն թվականին Մաքենիսում ընդօրինակվել է մի այլ ձեռագիր, որի գրիչը Ալեքսանոս արքեպիսկոպոսն է: Գրիչը այն գրել է իր համար: Ձեռագիրը նուրբ կաշվից պատրաստված մագաղաթի վրա բոլորգրով գրված Ավետարան է:

Գրելիս Ալեքսանոսին օգնել է տեղի Եզեկիելը, որն արտագրել է միայն մի էջ¹⁰: Վարպետ գրիչ էր տեղի Եզեկիելը, քանի որ մատյանի այդ մի էջը ավելի նուրբ մագաղաթից է և դրա վրա գրելը բավական դժվար էր և ընդօրինակողից մեծ հմտություն էր պահանջում: Ալեքսանոսը, հավանաբար, խուսափելով թանաքի՝ թերթի մյուս կողմը թափանցելու վտանգից, խնդրել էր էջը գրել այդ իրենից ավելի հմուտ Եզեկիել գրչին:

«Հեք, ֆանաք, վտիտ Ալեգսանոսն» ավարտում է ձեռագիրը Սուրբ Աստվածածնի և Հայր Սողոմոնի գերեզմանի հովանու ներքո իր և իր ծնողների, հորը՝ Էտկիարի, մորը՝ Մարթի և հարազատների հիշատակի համար¹¹:

Տարիներ անց, գրչի խնդրանքով, այս ձեռագրի նկարազարդումը կատարվում է Սևանավանքում: Ավարտելով նկարազարդումը, Սահակ արքեպիսկոպոսն է իր հիշատակարանը. «Ծաղկեցաւ ի տանս Գեղամա, ի Սուրբ ուխտս Սեւան, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս, առաջնորդութեամբ Դանիէլ վարդապետին եւ Գրիգորիս եպիսկոպոսի, ձեռամբ փծուն եւ անարժանս սուտանուն արքեպ [որ] Սահակ կոչի, ի խնդրոյ տէր Ալեքսանոս ճրգնաւոր արքեպիսկոպոսի թվականիս ՋԾԳ (1504)»¹²: Դանիել րաբունապետի վարդապետարանի մանրանկարչական դպրոցի սան է Սահակը: Վար-

⁷ Մատենադարան, ձեռ. թիվ 4266, էջ 271բ-272ա:

⁸ Նույն տեղում, էջ 271բ:

⁹ Մատենադարան, ձեռ. թիվ 4268, էջ 137բ: Հիշատակարանը բացակայում է ԺԵ դարի հիշատակարանների Գ մասից: Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Գ, Երևան, 1960:

¹⁰ Նույն տեղում, ձեռ. թիվ 6648, էջ 201ա:

¹¹ Նույն տեղում, էջ 264ա:

¹² Նույն տեղում, էջ 124: 16-րդ դարում ձեռագիրը, երբ թաթարական հերթական արշավանքով «բազում տեղիսն աւերեաց», իր տիրոջ հետ միասին հաստատվում է «ի երկիրս Զակամ, ի գիւղս Պլալկ» (265բ): 1776 թ. Ավետարանի վերջին ստացող նորքեցի Ավետիսը և նրա որդի Սահակը նորոգում, կազմում են Ավետարանն ու տալիս ի հիշատակ Նորքի Սուրբ Սիոն եկեղեցուն: 20-րդ դարի սկզբին, 1923 թ., Երևանի եկեղեցիների ձեռագրական ցուցակով այս Ավետարանն ի թիվս այլ ձեռագրերի հանձնվում է Սուրբ Էջմիածնի Մատենադարանին (նույն տեղում):

պետությամբ նկարագարված Ավետարանում այժմ մնացել են միայն Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների նկարները, ինչպես նաև գեղեցիկ լուսանցագրադերով և զարդագրերով ծաղկված ձեռագրի էջերը:

Մաքենիսում օրինակված Ալեքսանոս գրչի մյուս ձեռագիրը 1499 թվականից է: Այն փոքրագիր, բոլորգիր Ավետարան է: Այս անգամ Ալեքսանոսը նաև ձեռագրի ծաղկողն է: Ալեքսանոսը թեև հմուտ գրիչ է, սակայն անվարժ է նկարագրում արվեստում, ուստի և ծաղկելու համար նա օգտագործել է հատուկ կաղապարներ: Կաղապարով են արված ոչ միայն ձեռագրի ավետարանառաջները, գլխագրադերն ու լուսանցագրադերը, այլև ավետարանիչների պատկերները: Սկզբում յուրաքանչյուր էջի վրա կաղապարի օգնությամբ գծել է զարդերն ու գլխագրադերը, ապա գրել նրան համապատասխանող տեքստը (որոշ էջերում բնագրի տառերը գրվել են գլխագրադի ծայրերին): Ավետարանի յուրաքանչյուր ընթերցված գրված է լուսանցագրադերի շրջանակների մեջ: Ալեքսանոսը նկարները չի գունագրադել, նկարագրադում ուրվագծային է: Գրչարվեստի ուսումնասիրության համար առանձնապես հետաքրքիր է մանրանկարներում ավետարանիչների պատկերներին ուղեկցող՝ գրչության արվեստի հետ կապվող նյութերի առկայությունը՝ մկրատ, ունելի, գրչահատ, գրիչներ, թանաքամաններ, սափորներ և այլ պարագաներ, որոնք ամեն տեղ ուղեկցել են գրիչներին նրանց ծանր, անգնահատելի աշխատանքում:

«Ֆանաք» Ալեքսանոսը Ավետարանն ավարտում է 1499 թ. «ի սուրբ ուխտս Մաքենացոց, ի դուրս սուրբ տաճարին Աստուածածնիս, հայր Սողոմոնի նշխարացս ի առաջնորդութիւն ուխտիս Թաթեոս եպիսկոպոսին»¹³:

Ձեռագրագետ Լ. Խաչիկյանը նույն «Ֆանաք» Ալեքսանոսի ձեռքով գրված է համարում նաև Մատենադարանի թիվ 3629 ձեռագիրը¹⁴: Այդ նույնացումը հաստատվում է Ալեքսանոսի օրինակած՝ վերը նշված ձեռագրերի հետ այս ձեռագրի համեմատությամբ: Ավետարանը գրված է բոլորգրով, ունի ավետարանիչներ և ավետարանառաջներ, չունի համաբարբառ և ցրվացանկ: Վատ է պահպանվել ձեռագրի գլխավոր հիշտակարանը. գրչի անվան տեղում այն եղծված է: Լ. Խաչիկյանը այն վերականգնել է այսպես. «Սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԷ (1498 թ.), ձեռամբ անարժան, հեք ֆան[աք]// Ալեգսիանոյսու միայն աբեղա ի Սուրբ ուխտս Մաքենացոց, ի դուրս սուրբ տաճարիս եւ հայր Սողոմոնի գերեզմանիս և այլ սրբոց, որ աստ կան, յառաջնորդութեան Սուրբ ուխտիս Սարգիս վարդապետին»¹⁵: Ալեքսանոսը թեև ձեռագիրը սկսել է Մաքենիսում, բայց Թաթեոս եպիսկոպոսի գալուց հետո, երբ միաբանության անդամների մեջ անհամաձայնություն է առաջանում, գրիչը դժգոհ այս ամե-

¹³ Մատենադարան, ձեռ. թիվ 220, էջ 274ա: Ձեռագիրը նորոգվել է 16-17-րդ դարերում: Նորոգման ժամանակ Մատթեոսի Ավետարանի սկիզբը թափված է եղել և լրացվել (թերթ 1-58): Նորոգող գրիչն աշխատել է պահպանել Ալեքսանոսի գրելաձևը, տողաքանակը (19-20, հարմարեցրել էջը էջին և այլն: 17-րդ դարի սկզբին այն եղել է Գրիգոր վարդապետի սեփականությունը և պահվել Գրիգոր Լուսավորիչ վանքում (նույն տեղում, էջ 1ա):

¹⁴ ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 261, ծն. 1:

¹⁵ Նույն տեղում, էջ 261:

նից՝ տեղափոխվում է Վասակաշեն: «Ի Մաքենիս սկսա եւ [ի Վ]ասակաշէն վճարեցի», - գրում է գրիչը¹⁶: Ալեքսանտոսի այս Ավետարանի ընդօրինակման ավարտը համընկնում է Իպա սուլթանի խռովության հետ, որն «էաժ աւեր աշխարհի»: Այս տարիներին ժողովրդից երեք տարվա հարկը մեկ ամսում էին վերցնում, և իր հավատավոր ժողովրդի նման գրիչը վերջին հույսը դնում է Աստծո վրա՝ «Աստուած զԻւր ումր կարճ անէ սրբոց բարեխաւսութեամբ. ամէն»¹⁷:

Այս գրչության կենտրոնից մեզ հասած վերջին ձեռագիրը 1524 թվականից է: Ձեռագրի գրիչը դարձյալ Ալեքսանտոսն է. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս թվականիս Հայոց ՋՀԳ (1524 թ.) ձեռամբ ոգնամեղ, հէք, ֆանաք Ալէգսանոս անուամ[բ] միայն աբեղա ի Սուրբ ուխտս Մաքենացոց»¹⁸: Ստացողը Շահնագար հավատավորն է, նրա մայրը՝ Տետա Խաթունը, հայրը՝ Հովհաննեսը: Ձեռագիրը գրված է բոլորգրով, թղթի վրա, նկարազարդ է, ունի ավետարանիչներ և ավետարանառաջներ¹⁹:

Սակայն, մինչ այդ, մենք այդ գրչից ունենք երկու այլ ընդօրինակություն ևս: Դրանցից մեկը Գեղարքունիքի մեկ այլ գյուղում է գրված՝ Խորոտկավանքում, մյուսը՝ Ցողաց քարում: Գեղամա երկրում հայտնի, հմուտ գրիչ էր Ալեքսանտոսը և, ինչպես երևում է, գրչությունը նրա հիմնական մասնագիտությունն էր: Մատյանների ընդօրինակման բարդ ու դժվարին աշխատանքով է գրիչն ապահովում իր հանապազօրյա հացը: Ալեքսանտոս գրչի Խոնդքար տիկնոջ համար օրինակած Ավետարանը փոքրադիր է: Ձեռագիրը չունի համաբարբառ, ցրվացանկ, նախադրություն: Ավետարանի ծաղկողը հայտնի չէ, հնարավոր է, որ այս անգամ ևս նկարազարդումը գրչինն է՝ Ալեքսանտոսին: Ավետարանի պատվիրատուն ստանում է այն «[յ]իշատակ իւր, եւ առն իւրոյ՝ Ղարիպշա աղին, եւ ծնողաց իւրոց հաւր իւր՝ Էտիլշին եւ մաւրն՝ Մամատետին»²⁰: Նա ընդօրինակումն ավարտում է 1490 թ. «ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի դանութեան Յաղուպ բէկի... ի յերկնահանգէտ եւ գերահռչակ սուրբ ուխտիս Խորոտկայ...»²¹:

Այս նույն ժամանակներից է նաև այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանում պահվող ձեռագիրը: Ցողաց քարում (որը, հավանաբար, Վայոց ձորի Ցախաց քարն է) ընդօրինակված 1476 թ.: Ժամագրքի գրիչը Էտքիարի և Մարթի որդի Ալեքսանտոսն է:

Ալեքսանտոս գրչից մեզ հասած ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք հմուտ, վարժ, բեղուն գրչի հետ: Հովհաննեսի, Եզեկիելի և մաս-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում: Ձեռագիրը նորոգվել է 17-19-րդ դարերի ընթացքում:

¹⁸ Մատենադարան, ձեռ. թիվ 8196, էջ 300բ:

¹⁹ 1644 թ. ձեռագիրը տեղափոխվում է Արցախ, դառնում Զիլախանի սեփականությունը, որն այն նվիրում է Գանձակի Շատախ գյուղին՝ «ի դուռն Աստուածածին եկեղեցւոյ» (2ա), այնուհետև՝ 1805 թ. Պարանց գյուղի Դավիթ քահանային, ապա 1886 թ. տեղափոխվում Թարգմանչաց վանք (302ա-303բ, 305բ): Ուրեմն, ձեռագիրը երկար ժամանակ պահվել է Արցախում:

²⁰ Մատենադարան, ձեռ. թիվ 8135, էջ 319ա:

²¹ Նույն տեղում:

նավորապես Ալեքսանոս գրչի ընդօրինակությունները խոստուն վկայություններ են Մաքենոցաց մենաստանի գրչական ավանդների շարունակության, ինչպես նաև այստեղ 15-16-րդ դարերում մշակութային կյանքի գոյության:

16-րդ դարից սկսած Մաքենիսը դառնում է Գեղարքունիքի նոր իշխանական տան սեփականությունը: Նրանցից Մելիք Բեկի որդին՝ Աստվածապովը, որն էր «իշխող տանս Գեղամա», վերստին նորոգում է համալիրի գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը: Մելիք Բեկը իշխել է մինչև 16-րդ դարի 2-րդ կեսը, 1578 թ.: Այս եկեղեցին նորոգվում է նաև 1666 թ., ուխտի առաջնորդ Խաչատուր Ջուղայեցու միջոցներով²²: 19-րդ դարի 60-ական թվականներին Նոր Բայազետի իշխանները առաջնորդ են խնդրում այս վանքի համար: 1878 թ. տեղի նորընտիր առաջնորդը չի կարողանում թուրքերի ճնշման տակ բարեփոխումներ անել, և վանքը վերածվում է պատմական հուշարձանի²³:

²² Դիվան հայ վիմագրության, պր. 4, Երևան, էջ 291-292:

²³ **Մեսրոպ արքեպս. Սմբատյանց**, Տեղագիր Գեղարքունի գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, 1896, Վաղարշապատ, էջ 577, ծն. 1:

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԵԾԱՐԵՆՑՅԱՆ ԽՈՍՔԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՏԱՂՁԸ

*Նվիրվում է
բանաստեղծի ծննդյան
120-ամյակին*

Արդարը, եթե ժամանակից շուտ էլ վախճանվի, հանգիստ կգտնի:

Պատվաբեր ծերությունը ո՛չ երկարակեցությամբ է չափվում և ո՛չ էլ ապրած տարիների թվով, այլ մարդու համար իմաստությունն է նրա ալեհերությունը, եւ անարատ կյանքն է նրա ծերության հասակը:

(Իմաստ. Դ 7–9)

XIX դարեվերջը և XX դարասկիզբը հայ ժողովրդի համար եղան բարդ ու հակասական ժամանակներ: Ժամանակներ, երբ երկիրն ու ժողովուրդը կրեցին ծանր կորուստներ, իսկ արվեստն ու գրականությունը հասան մեծագույն նվաճումների: Հայաստանի թե՛ արևելյան, թե՛ արևմտյան հատվածներում մեծ վերելք ապրեց հատկապես քնարերգությունը, ինչը պատահական համարել չի կարելի, քանի որ դժնդակ պայմաններում հենց բանաստեղծությունը՝ առավելաբար երազի, տեսիլի գրականությունն է փորձում սպեղանի դառնալ մարդկային ցավին: Այս ժամանակի ծնունդ է նաև արևմտահայ քնարերգու Միսաք Մեծարենցը:

Մեծարենցի մասին շատ է խոսվել ու գրվել, և այստեղ ուզում ենք փոքրիկ անդրադարձ կատարել նրա հոգևոր ընկալումներին, առհասարակ հոգևորի դերին բանաստեղծի կյանքում և արվեստում: Մեծարենցի շփումը հոգևոր-կրոնականի հետ սկսվել է վաղ մանկությունից, քանի որ ծնվել է հավատավոր հայ ընտանիքում: Ինչպես վկայում են ժամանակակիցները, «Իրենց պալատանման տան ու ընտանիքի փարթամ կյանքը և վայելքը, որ լիովի ունեին: Բայց ոչ լոկ իրենց անձնասերի և եսապաշտի անձնապաշտությանը հատուկ, այլ այդ կյանքը և վայելքը հատկացուցած էին նաև անոնց, որ պետք ունեին, իրենց գոհունակությունը այլոց ծառայելու և բարիքներ ընելու Ավետարանական պարտականության մեջ կգտնեին, որ լիովին կկատարեին: Դպրոց ու եկեղեցի առատորեն կստանային նվերներ, և տան անդամներ առանձին-առանձին կուտային նվեր ու ողորմություն, մեծ բաժին կհանեին նաև պաշտոնեից: Սեղանին միշտ հյուրերով լի էր ...»¹:

Փորձենք ասվածի ապացույցները որոնել Միսաք Մեծարենցի բանաստեղծական աշխարհում: Բանաստեղծի չափածոյում ամենաահաճախակի օգտագործվում է *հոգի*

¹ Գեորգ Արսլանյանի հուշերից, Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1968, էջ 33:

բառը՝ ընդհանուր 180 կիրառություն: Հաճախակի կիրառված բառեր են նաև *լույսը*՝ 96 կիրառություն, *արև*՝ 62 կիրառություն, *սեր*՝ 42 կիրառություն: Նույնն է պատկերը նաև արձակ էջերում, որոնցից այստեղ հիշենք «Ցայգանվագը», որն առաջին անգամ տպագրվել է 1905 թ. հունվարին՝ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Այս արձակ բանաստեղծությամբ հեղինակը հիշում է Բեթղեհեմի սուրբ գիշերը և նրա բերած սքանչելի խորհուրդը ողջ մարդկությանը, այդ թվում իրեն՝ երկար ու ձիգ դարեր անց ապրող մարդուն, որը վերստին է հիշում ու տոնում այս մեծ իրադարձությունը, վերստին է նորոգում իր ուխտն Արարչի հետ. «Ձանգակները կհրնչեն, երգերը կոգևորեն, ու բոլոր ձայները ցնծազին համերգության մը մեջ կմիանան, հոգիներու ծնունդն է: Լուսավորները կվառնին, խունկերը կբուրեն, լույսերն ոսկի բոցերով կփայլին. հոգիներու ծնունդն է: Շրթունքները մեղմագին կաղոթեն, նայվածքները կբոցափայլեն, ու ձեռքերը կվերանան, կվերանան. հոգիներու ծնունդն է ...»²:

Աստվածահայտնության խորհրդավոր գիշերին հեղինակը չի մոռանում նաև աղոթել հոգու մաքրության և հոգևոր ճշմարիտ վերածնության համար. «Դու, որ Կյանքը տվիր ինձի, ո՛վ Տեր, ապրի՛լ սորվեցուր, ցողե՛իմ հոգիս ցողովն անհուն գթության, ու թող ձյունն սրտիս մեջ հավերժական սպիտակությունը Քու սրբություններու... Մանուկը, որ կնիրհե իմ հոգվույս խորը, արթնացուր և հնչեցուր դարձյալ վաղեմի ձայնը, որ լռած էր սրտիս մեջ» (197):

Մեծարենցն անհուն սեր էր տաժում դեպի Աստծո արարչագործությունն առհասարակ. «Մեծարենց առհասարակ ամեն ինչ, շնչավոր թե անշունչ, կսիրեր և հոգեկան կապ մը հաստատված էր իր և անոնց միջև: Կյանք ու շունչ ունեին այդ բոլորը իրեն համար: Հոգի կուտար գույնզգույն ծաղիկներուն ու կանանչություններուն: Միքական առարկայի մը պես կփայփայեր վայրի ծաղիկ մը, նորափթիթ դալար մը ու կխոսակցեր անոնց հետ»³:

Անշուշտ նախ և առաջ հենց այստեղ պետք է որոնել Մեծարենցի բնութենապաշտության գաղտնիքը: Նրա բանաստեղծությունների մի զգալի մասը նվիրված է բնության նկարագրությանը: Այս բանաստեղծություններում հաճախ գործում է դիմաոճության հնարանքը, երբ «անշունչ առարկաները շնչավորում, նրանց վերագրում ենք կենդանուն կամ մարդուն հատուկ հատկանիշներ, անշունչ առարկաներին ու կենդանիներին՝ բանականություն ու խոսելու շնորհ»⁴:

Հիշենք «Արևագալ» բանաստեղծությունը.

*Հորիզոնեն վար լույսի պար մը կիջնե,
Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս,
Շուտ կանհետի մութն ու խավար կու տա խույս,
Աշխարհ արփվույն հուր գալուստը կողջունե... (18):*

Խավարը փոխվում է լույսի, բացվում է առավոտը՝ բարին ավետելով մարդկանց: Շնչավորված բնությունը փառաբանում է արարչական լույսը, որ գալիս է ծագելու աշխարհի վրա և մարդու հոգում: Մեր գրականության և իրականության մեջ արևա-

² Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1981, էջ 196: Այսուհետև մեջբերումների էջերը տե՛ս տեքստում՝ փակագծերի մեջ:

³ Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, էջ 91:

⁴ Պ. Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1991, էջ 185:

գալը միշտ էլ գովերգվել է հատուկ սիրով ու ջերմությամբ, վկան՝ մեր Եկեղեցու Արևագալի ժամերգությունը, Արևագալի չքնաղ շարականները, Շնորհալու «Առավոտ լուսո»-ն և այլն, ինչպես՝ «Լո՛յս, արարիչ լուսոյ, առաջին լո՛յս, բնակեալդ ի լոյս յանմատոյց Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի»⁵:

Քրոջ ամուսնուն՝ Վարդան քահանա Արսլանյանին ուղղված նամակում Մեծաբենցը գրում էր. ««Ծիածանի» առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կկարդամ զգածվելով. «Ինչո՞ւ տիեզերքի հոգիին հետ չես խոսակցիր» կգրեք. բայց դիտելի է, որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կնկրտին, որքան որ ալ իմինս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Ձմրան Պարզ Գիշերվան մեջ հեծծած աղոթքս և Արևին ուղղած պաղատանքս իրեններուն, հետևաբար և իրեն համար էր. ի՞նչ երջանկություն, տերնի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական զորության գաղտնիքը և այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպ ի անհունը...» (288):

Այս համատեքստում արարչագործ բնության կատարելության հետ համեմատության չի դիմանում մարդկային ստեղծագործությունը: «Ծաղկե քառյակ» բանաստեղծության մեջ զուգահեռ է տարվում բնության և քերթության միջև: Այս զուգահեռն անշուշտ նոր չէր, տարվել էր դեռևս միջնադարում, մասնավորապես Հովհաննես Սարկավազ Իմաստասերի «Բան իմաստութեան...» պոեմում: Եթե Սարկավազի պոեմում բնությունն է խորհրդանշում թռչունը՝ սարեկը, ապա Մեծաբենցի բանաստեղծությունում այն խորհրդանշում է ծաղիկը: Սարեկի մասին, որի երգը դրսևում է իրեն, Իմաստասերը գրում է.

*Իսկ արուեստիս դու երաժիշտ ամենահնար, անվարդապետ,
Ինքնաբաւ, ինքնուսումն, վարդաբնակ և անքաղաք,
Անմերձ և մօտաւոր, ուրախարար լըսասիրաց...⁶:*

Թռչունը չի մեղանչել Աստծու դեմ, մնացել է իր բնական վիճակում և պարզաստրվել հայտնությամբ, մինչդեռ մարդուց բարձր արվեստի հասնելու համար պահանջվում է ճիգ, ջանք, տքնություն: Եվ սակայն տքնության անքուն գիշերներից հետո էլ՝

Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բնութիւն...⁷:

Ահա պոեմի բուն գաղափարը: Նույն գաղափարն է հաստատում և Մեծաբենցի բանաստեղծությունը.

*Հո՛ն, բաժակին մեջ ծաղիկին
Ոսկեփոշի թնով գեջ,
Սիրով պատած սրտի մ'անգին*

⁵ Խորան Լուսոյ, Երգ Արևագալի, Երևան, 1993, էջ 15:

⁶ Հայ դասական քնարերգություն, հատոր 1, Երևան, 1986, էջ 212:

⁷ Ն.տ., էջ 215:

Կառնե պատկերն ելնէջ:

*Այդ պատկերը շատ ավելի
Հուզիչ է՝ քան քերթողին
Հույզով մ'անհուն, անպատմելի
Գրած տողերն քառյակին (138):*

Մեծարենցի քնարերգության մեջ հետաքրքիր «լուծում» է ստացել բարու և չարի հավերժական հակամարտությունը: Դժվար թե հանդիպի որևէ բանաստեղծ, որ իր ամբողջ ստեղծագործության մեջ երբևէ չկիրառի չար ածականը: Մեծարենցի չափածոյում այն իսպառ բացակայում է: Կա միայն չար արմատով կազմված երեք բառ՝ չարածճի, չարանճար և չարաչար: Առաջին երկուսը հեղինակը տարբեր բանաստեղծություններում վերագրել է հովիկին: Երկու դեպքում էլ բառն օգտագործվել է դրական գնահատողական իմաստով, ինչպես՝

*Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Չարածճի ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դրրան ետին մոռցրված՝
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին (120):*

Չարաչար բառին հանդիպում ենք «Մենպոլիզմ»-ը երգիծական բանաստեղծության մեջ: Այստեղ Մեռճան Բալսամյանը՝ ժամանակի բանաստեղծ, արձակագիր Մերուժան Պարսամյանը, խոսում է այլ բանաստեղծների մասին:

*Մինչ անոնք կերգեն գորտ, շերամ, պաճար,
Ամեն ինչ՝ որ է գրեհիկ, անհանճար,
Անոնց գրչակը կ'եղծե չարաչար (177):*

Չարին հակառակ բարի ածականը հեղինակն օգտագործել է ութ անգամ. հինգ անգամ «Արևին» բանաստեղծության մեջ՝ որպես արևի մակդիր, երկու անգամ «Բրիկունս» բանաստեղծության մեջ՝ որպես իրիկունի մակդիր, և մեկ անգամ «Թղթիկը» բանաստեղծության մեջ՝ որպես լուսնի՝ «լուսինկայի» մակդիր: Դժվար չէ նկատել, որ բացարձակ դրական իմաստ արտահայտող այս ածականը Մեծարենցն օգտագործել է բնութագրելու համար բնությունից վերցված առարկաներ կամ երևույթներ, ինչը մեկ անգամ ևս հիշեցնում է նրա բնութենապաշտության մասին: Բացի սրանցից հեղինակի քնարերգության մեջ հանդիպում ենք նաև բարի արմատով կազմված բառերի՝ բարեբախտ, բարեբարի՝ օգտագործված մեկ անգամ, բարեկամ, բարիք՝ օգտագործված երկու անգամ:

Հետաքրքիր է նաև Մեծարենցի բանաստեղծության ներկայանակը: Իշխող գույնը կապույտն է՝ իր տարբեր երանգներով, և ճերմակը՝ իր հոմանիշ սպիտակի հետ: Սա պատահական չէ, քանի որ կապույտն իր տարբեր երանգներով, ինչպես նաև սպիտակը, հաճախ է խորհրդանշել մաքրություն, նրբություն և քնքշություն: Խոսելով Ե-

դիշե Թադևոսյանի «Աստվածածին» կտավի մասին՝ Գաբեգին Կաթողիկոս Հովսեփյանը գրում էր. «Աստվածածինը յուր կապույտ և մեղմ աչքերի արտահայտությամբ, մայրական գորով է, սեր, անձնվիրություն՝ առանց նկարչի կողմից արտաքին միջոցներով մարմնավորած լինելու այդ. իսկ որդին յուր մանկական թաթիկների մեջ բռնած սպիտակ և մաքուր աղավնու նման անմեղություն. երկու զուգորդված գեղեկություններ, որ իբրև լուսավոր ճառագայթներ թափանցում են հոգուդ մեջ և ներքին, քաղցր բավարարության զգացումով համակում քեզ»⁸:

Հայ քնարերգության մյուս գագաթը՝ Մեծարենցի ժամանակակից Վահան Տերյանը, նույնպես հաճախ էր նախապատվությունը տալիս կապույտին, ինչպես՝

*Կանչում ես անվերջ
Կապույտ հեովից,
Շշուկով անուշ
Կանչում ես ինձ*⁹:

Մեծարենցի վրա խոր ազդեցություն է թողել իր մայրը, որի անխախտ ու աներեր հավատը միշտ հիացրել է շրջապատին և ունեցել մեծ դաստիարակիչ նշանակություն: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ հենց մոր հավատն է փրկել մանուկ Միսաքի կյանքը, երբ վերջինս ծանր հիվանդ էր, և բժիշկները միայն կարողանում էին ասել «դժբախտաբար»: Միրող մոր համար այսպիսի դժոխային իրավիճակում տիկին Իսկուհին ասում էր շրջապատող հարազատներին. «Տղա՛ք, ինչո՞ւ կտխրիք և ինչո՞ւ կարտասվեք: Աստված տվավ, Աստված կառնե, ան երկնքի հարսնիքին կերթա, դուք ալ աշխարհի հարսնիքին: Բայց ես հույսս չեմ կտրած և հավատքս այնքան զորավոր է մանուկները սիրող Հիսուսին, որ պիտի ապրեցնե Միսաքս: Ու աչքերը Միսաքի մարմրուն աչքերուն ուղղած.

– Չէ՛, խուզի՛ս, չէ՛, Միսաքս, պիտի ապրիս ու պիտի ապրեցնես, որ օր մը հավատքի երգը երգես ամենուս:

Ամենուս մեջ հավատք մը արթնցուց և զորությունը իրեն պես Հիսուսեն սպասելու բժշկությունը:

– Գացեք անմիջապես հսկում մը ընելու. գորքին մեռնիմ»¹⁰:

Գյուղացիները՝ մեծով ու փոքրով, բան ու գործ թողած, շտապում են եկեղեցի՝ հսկումի: Առավոտյան կանուխ լսում են ավետիսը, թե մանուկը «հանգիստ գիշեր մը անցուց, դեղերն առավ, տաքությունը քիչ մը իջավ»¹¹:

Այսպես, ինչպես եզրակացնում է հուշագիրը, «Մեծարենց կապրի ու պիտի ապրի, ինչպես ապրեցավ հսկումով ու միշտ անմեռ հիշատակներով»¹²:

Տարիներ անց Մեծարենցն անդրադառնում է մոր կերպարին «Խունկ և արցունք» ոտանավորում: Կրոնական բովանդակությամբ և կրոնական բառերով լեցուն այս ո-

⁸ Գաբեգին Հովսեփյան, Նկարիչ Եղիշե Թադևոսյան, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության» գրքում, հ. Ա, Երևան, 1983, էջ 196:

⁹ Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Լիակատար ժողովածու, Երևան, 1985, էջ 92:

¹⁰ Գեորգ Արսլանյանի հուշերից, «Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում» գրքում, էջ 35:

¹¹ Ն.պ., էջ 36:

¹² Ն.տ.:

տանավորը բանաստեղծական պատկերն է բարեպաշտական այն սովորության, երբ Կիրակնամուտին տանը մոմ են վառում, խնկարկում՝ ի հիշատակ ննջեցյալների.

*Շիր մ'արցունքով՝ կաթիլ մը խունկ
Սրբանորին մեջ կցանե
Մայրս՝ որ կանցնի անտես դռնե,
Եվ երջանիկ՝ կղընե ունկ
Անդրաշխարհեն եկող ձայնին... (184):*

Խնկարկությունը ստեղծում է անտեսանելի մի կապ անցյալի ու ներկայի, անդրաշխարհի և մեր իրականության միջև: Այս բանաստեղծությանը Մեծարենցը կցել է ծանոթություն, որտեղ մասնավորապես հիշում է ժողովրդական այն հավատալիքը, համաձայն որի ննջեցյալները կիրակնամուտին այցելում են սիրելիների կայքերը՝ ստանալու իրենց բաժին խունկն ու արցունքը: «Ո՛վ, եզրակացնում է հեղինակը, պիտի չըսեր թե հիշատակը կվերապրեցնե հոգիները: Եվ ի՞նչ ավելի հիշատակելի հիշատակարան՝ քան աստղաշիթ աստվածատուր արցունքն ու հոգեպարար վերամբարձ խունկը» (184), ինչպես՝

*Ու ցայգամուտն է հայելի՝
Ուր կցոլա բոցն աշխուժին՝*

*Լուսահոգի զվարթուններուն՝
Ձորս արբեցուց այս իրիկուն
Շաբաթօրյա խունկն ու արցունք:*

Մայրս ալնոր չոքեր է ծունկ... (184):

Հետաքրքիր է այստեղ *Զվարթուն* բառի գործածությունը: Այն նշանակում է հրեշտակ, այստեղից էլ ունենք Սուրբ Զվարթնոց տաճարը: Մակայն բանաստեղծը բառին տալիս է նոր իմաստ. այստեղ զվարթուններն այն հոգիներն են, որոնք այլևս մեզ հետ չեն, այլևս անմարմին են, լուսահոգի, փաստորեն ավելի նմանվել են հրեշտակների: Տեղին է հիշել Ավետարանի այն դրվագը, որտեղ Հիսուս խոսում է մեռելների հաբության մասին. «Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել եւ յարութեանն որ ի մեռելոց՝ ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին: Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են, եւ որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են» (Ղուկ. Ի 36-37):

Պետք է նշել, որ Մեծարենցը նաև այլ առիթներով է անդրադարձել կիրակնամուտին՝ դարձյալ ինքնակենսագրական հենքի վրա: Ինչպես վկայում են ժամանակակիցները, «Հայրը՝ Կարապետ Մեծատուրյան, որ լավ շարականագետ էր, շաբաթ կիրակի օրերը կմասնակցեր Ս. Նիկողոսյան եկեղեցվո երգեցողության: Շաբաթ իրիկունները եկեղեցին էր Միսաք, կունկնդրեր «Լոյս զուարթը», գոր քաղցր ձայնով մը կերգեր իր հայրը»¹³:

¹³ Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում, էջ 90:

Այս ամենն իր բանաստեղծական մեկնաբանությունն է գտնում «Կիրակնուտք» բանաստեղծությունում, որի բնաբանն իսկ՝ «Եկեալքս ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս», վերցված է «Երգ Կիրակնուտից» ժամերգից: Շաբաթ երեկոյան ժամերգություն է. եկեղեցիներում մոմեր են վառում, խնկարկում, աղոթում, և հոգևոր խաղաղությունն ու հրրճվածքը թափանցում է հավատացյալների հոգիները, լուսավորում նրանց: Ահա այս ամենի մեծարենցյան պատկերումը.

*Ջահերն հիմակ կերազէ՛ն համակ գյումրոյթ ու թարշիշ...
Կամարներեն, խորանեն կծագին լոյս ու ծիծաղ.
Հոգիս քիչ քիչ կթաղվի անուրջին մեջ այս չքնաղ:*

Հուշիկ փախչող իրիկվան ծիրանի լոյսն է զվարթ... (48):

Հետաքրքիր է, որ Մեծարենցի չափածոյում ծիրանին հաճախ է կապվել լոյսի հետ՝ կարծես ի հայտ բերելով նրա մի ծածկված հատկանիշը՝ գույնը: Հատկանշական է նաև, որ այս երևույթը գտնում ենք նաև Սուրբ Ներսես Շնորհալու ստեղծագործություններում: Ինչպես Շնորհալին է գրում. «Առաջին խորանը չորս գույներով՝ կապուտակ, ծիրանի, կարմիր և սպիտակ, նմանվում է նախկին խորանին չորս տարրերի ձևով: Եվ ծիրանի սյուները ցույց են տալիս առաջին լոյսի հաստատությունը՝ Աստվածային աթոռը տարրերից դուրս»¹⁴:

«Աստվածամա՛յր» բանաստեղծությունը օրհներգություն ու փառաբանություն է Սուրբ Կույսին: Քնարական հերոսը հայցում է մի կաթիլ Աստվածամոր ծովացած, անսահման սրբությունից, ինչը ի գործու կլինի նրան մանկացնելու, մաքրելու, նոր արարած դարձնելու: Այս բանաստեղծության բնաբանն էլ վերցված է Նարեկացու Մատյանի Տիրամորը նվիրված Բան 2-ից. «Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան, յանձն իմ անձրեւեալ, կենաց ինձ գորէ, Մա՛յրդ բարձրելոյ Տեառն Յիսուսի...»:

Հերոսն ինքնամաքման ճանապարհ ունի անցնելու, և այս ոչ դյուրին ճանապարհին օգնության է հասնում ձայնը՝ աստվածային ձայնը, որն աստվածաստեղծ հոգուն պիտի առաջնորդի դեպի փրկություն, դեպի խաղաղության նավահանգիստ: Նկատելի է նաև, որ այս բանաստեղծությունում հեղինակն օգտագործում է «Աստված» բառով բաղադրված մի քանի կազմություն.

*Գիշերին մեջ կիջնե դեռ ուղիսը լուսեղեն,
Կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութենեն.
Ու տե՛ս, ահա՛, կմանկանամ, Աստվածամար,
Ու տե՛ս, ահա՛ կմանկանա՛մ գիշերին մեջ՝
Ուր լըսեցի ես աստվածյան ձայնին վայրէջ՝
Որ կշաչեր աստվածարյալ հոգվոյս համար (97):*

Չենք կարող չհիշել «Տո՛ւր ինձի, Տեր...» բանաստեղծությունը: «Տեր» բառը Մեծարենցի ամբողջ չափածոյում հանդիպում է տասնութ անգամ, որից տասնվեցը՝ այս

¹⁴ Քաղվածքն ըստ «Մեկնություն խորանաց» գրքի, աշխատասիրությամբ Վիգեն Ղազարյանի, Երևան, 1995, էջ 141:

բանաստեղծության մեջ: Ուտանավորը մեկն է այն քերթվածներից, որոնք լավագույնս արտահայտում են Մեծարենց բանաստեղծի և անհատի խորին մարդասիրությունը: Մա ևս պատահական չէ, քանի որ Քրիստոնեության հիմնաքարն, ի վերջո, սերն է. «Մեր ոչ երբեք անկանի, եթե մարգարէութիւնք են, խափանեցին, եթե լեզուք՝ լոռեցեն, եթե գիտութիւն՝ խափանեցի» (Ա. Կորնթ. ԺԳ 8):

Իր նմանի հանդեպ անհուն սիրով ու նվիրումով տոգորված՝ Մեծարենցի քնարական հերոսը երկնային Տիրոջից հայցում է *անանձնական* ուրախություն՝ տալու, նվիրելու, բաշխելու համար, հայցում այլոց երջանկությանը՝ երջանկանալու համար, հայցում է ամենքին բաժին հանելու համար.

*Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական.
Ջանգակներո՛ւ՝ պես զայն կախեմ ամեն դրրան՝
Ու զերթ նարոտ ամեն դրրան զայն պըսակեմ...(172):*

«Խենթեր» բանաստեղծությունը պատկերում է խենթերի հոգեկան տառապանքն ու տվայտանքը, որի հիմնական պատճառը միջավայրի դաժանությունն է: Դժվար չէ նկատել, որ հեղինակը խորը, անթաքույց համակրանք է տածում այս խենթերի նկատմամբ և դատապարտում անսիրտ ու փարիսեցի հասարակությանը: Եռամաս այս բանաստեղծությունը հազեցած է կրոնական բովանդակություն ունեցող բառերով, որոնք ասելիքին յուրօրինակ հնչեղություն են հաղորդում: Բանաստեղծը Քրիստոնեական սիրո և գթասրբության կոչ է անում հանդեպ այս դժբախտ արարածները, որոնց ցավի միակ դարմանը պետք է լինի շրջապատի հոգատարությունն ու ուշադրությունը.

*Փնտռեցե՛ք այս տըղան, ո՞ւր էք, ո՞վ սուրբեր.
Թողե՛ք անկյունն՝ ամուլ ձեր գուրն ու մատյան.
Աստվածն ա՛ն է, ա՛ն՝ որ արցունք է սրբեր,
Ա՛հ, քաղցրություն, գոնե շի՛թ մը քաղցրության (189):*

Սիրո և անմնացորդ նվիրումի նույն գաղափարը ընկած է նաև «Ըլլայի՛, ըլլայի՛» շարքի հիմքում: Եվ այս այն դեպքում, երբ պատանի Միսաքն արդեն տառապում էր անբուժելի հիվանդությամբ և զգում մահվան մոտիկությունը: Ահա այստեղ նրա անբաժան ուղեկիցներն ենք տեսնում Աստվածաշունչն ու Նարեկը, որոնք մարմնի տկարության պահին զորացնում են հոգին, սպեղանի դառնում ցավին, հաղորդում նոր ուժ ու եռանդ: Մեծարենցի կենսագիր Թորոս Ազատյանը նշում է, որ հիվանդ ժամանակ Մեծարենցը «կը կարդար տակաւին: Աւելի կը նախընտրէր բժշկական ու կրօնական գրուածքներ: Նարեկ ու Աստուածաշունչ իր սնարին պահապաններն էին: Կը հծծէր մանաւանդ Նարեկը, ուրկէ սիրած պատկերներուն եւ ուրուագիծներուն մէջէն յայտնուած էր Նարեկացին՝ «սրբութեան իդօին կրակովը վառուած» աղօթասաց մեծ բանաստեղծը, իր հաւատքին ու հոգիին անշեջ մորենին»¹⁵:

Արդյունքում տեսնում ենք հեղինակի «Նարեկացիին հետ» հոդվածը, որը լույս է տեսնում նրա մահից մի քանի ամիս առաջ և որը լավագույնս է արտահայտում Մեծարենցի խորին հիացմունքը, սերն ու կապվածությունը մեր ազգային ամենամեծ

¹⁵ Ազատեան Թորոս, Միսաք Մեծարենց (իր կեանքը), Կ.Պոլիս, 1922, էջ 59:

սրբություններից մեկի՝ Նարեկի հանդեպ: Հեղինակը մի քանի էջում, Մատյանի լույսի ներքո, անդրադարձ է կատարում մեղավոր հոգու տառապանքներին, ապաշխարության և ինքնամաքման ճանապարհին, մարդու կյանքում Աստծո ներկայությամբ, Աստվածամոր բարեխոսությանը և ի վերջո հանգում է լուսաշող վայրկյանի, հույսի ու լավատեսության:

«Բայց բոլոր այս խավարներուն ու մշուշներուն, ծփծփումներուն ու հորձանքներուն ետին, հավիտենական, երջանիկ, անշիջանելի գաղափարը կա պահված. և կուգա կամքի ու գիտակցության արևոտ այն վայրկյանն ալ՝ ուր երջանիկ ձայնարձակությունը կլսվի.

«Տոնեա զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ:

Եւ այս վայրկեա՛նը...» (270):

Որ Սուրբ Գրիգոր Նարեկացու ազդեցությունը անասելիորեն մեծ է եղել հետագա ստեղծագործողների վրա, փաստ է: Փաստ է նաև, որ բազմաթիվ գիտնական բանասերներ անդրադարձել են Նարեկացու կյանքին ու գործին: Մասնավորապես գրաքննադատ Արշակ Չոպանյանը գրում է. «Նարեկացին հասած է այն հազվադեպ վիճակին, ուր ա՛լ կտրված է աշխարհեն, տեսակ մը հողեն վեր, մարմնեն դուրս կյանքի մեջ մտած, ուր երկրավոր իրերը այլակերպված կերևան և ուր ա՛լ կսկսի գերերկրավորին տեսությունը: Նարեկացին Աստված տեսած է... Այո՛, Աստված երևցած է անոր: Այրի մը մեջ, մենավորիկ աղոթած աստենը, լույս կբխի քարերեն, և Հիսուսը կերևա մոր՝ Աստվածածնին հետ...»¹⁶:

Իսկ գրականագետ Հրանտ Թամրազյանը հավելում էր Չոպանյանին՝ գրելով. «Արդեն ավելի հաստատապես կարող ենք ասել, որ Մեծարենցը Նարեկացուն տեսել է, զգացել շատ անգամ, որ նրա տեսիլների մեջ հաճախ է երևացել մեծ բանաստեղծի հրով տոգորված թախծոտ նայվածքը, բոցով շրջանակված դիմագիծը: Երազել և տեսել է նրան իդձի ու թախծության ամպոտ վայրկյաններին: Նարեկացին մոտեցել է նրան ամբողջ հազարամյակ հետո, դարձել անսահմանորեն մոտ ու մտերիմ: Եվ իր կյանքի վերջին պահերին, հատկապես վերջին... «Նարեկի» այս քննությունը Մեծարենցից մեզ հասած գրեթե վերջին խոսքն էր: Եվ ի՛նչ խոսք... Ինչ-որ չափով սա և՛ գիտություն է, և՛ սրտի խոսք, և՛ պատգամ, հոգեկան աղերս դեպի անցյալ ու դեպի գալիք»¹⁷:

Միսաք Մեծարենցն իր ժողովրդի հարազատ գավակն էր: Նա ապրեց քսաներկու տարի: Կարճատև մի կյանք՝ տանջալից ու տառապալից, բայց նաև լուսավոր ու իմաստալից, և դրանով իսկ երջանիկ: Նրա ստեղծագործությունը ճիշտ, լիարժեք գնահատելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլ հարցերի, անդրադառնալ նաև բանաստեղծի հոգևոր-բարոյական կերպարին, նրա քնարերգության մեջ հոգևոր-կրոնական թեմաներին և այն արտահայտող կրոնական բովանդակության բառերի ոճական կիրառություններին: Նաև նշվածների շնորհիվ է, որ Մեծարենցի քնարերգությունը դառնում է ճշմարիտ ու բարձրարվեստ քնարերգություն, որն, որպես ժողովրդի հոգևոր անգնահատելի ժառանգություններից մեկը, ուղեկցում է նրան մինչև հավիտենություն:

Նաև նշվածների շնորհիվ է, որ. «Յորովայն է ընտրեալներու շարքին՝ Մեծարենցի

¹⁶ Արշակ Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 300:

¹⁷ Հրանտ Թամրազյան, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1986, էջ 285–286:

մեծագործություններուն առիթով եւս, մարդ

Ճանչցածը անգամ մը եւս կ'ուզէ ճանչնալ:

Հսածը անգամ մը եւս կ'ուզէ լսել:

Ըմբռնչուածը անգամ մը եւս կ'ուզէ ըմբռնչուել:

Ճիշտդ Տէրունական աղօթքին ու սրբազանասուրբ միւս տաղերուն պէս, որոնք անստուեր պայծառութեամբ մը սրտիդ բաբախելէ ետք, դարձեալ կ'ուզես հաղորդուիլ անոնց խորին խորհուրդին»¹⁸:

Մեծարենցի քնարերգությունն այս լույսի ներքո քննելիս միանգամայն պարզ, հասկանալի և խիստ այժմեական է դառնում երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ ասված սրանից քսան տարի առաջ բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առիթով. «Աշխարհը իսկապէս սկսած է «իրիկնանալ»՝ բնութեան հանդէպ մարդու մարդկայնական վերաբերումին այս հետզհետէ արեւամարող ընթացքին հետեւանքով: Մեծարենցեան բանաստեղծութիւնը, ինծի այնպէս կը թուի, որ կրնայ առաւօտ բանալ մեզի համար, մեզ աւելի հարազատօրէն տանելով մեր գոյութեան ակունքներուն եւ մեր մէջ վերագտնել տալով մեզի մեր լինելութեան բնութեանական ու մարդկային հարազատութիւնը»¹⁹:

¹⁸ Պօղոս Մնայեան, Տարեդարձներ, Պէյրութ, 2001, էջ 108–109:

¹⁹ Գարեգին Բ Կաթողիկոս, Մեծարենցեան մթնոլորտ, Բագին, թիւ 11–12, Պէյրութ, 1986, էջ 3:

ԿԱՐԻՆԷ ԱԻԵՏԵԱՆ

ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՐՇԱԿ ԱԼՊՕՑԱՃԵԱՆԻՆ

Կեսարիայի հայոց հոգևոր առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալեանը (1850-1923 թթ.) ունեցել է աշխոյժ նամակագրություն, որ նրա միւս աշխատանքների, ունեցած ձեռագրերի, հնատիպ գրքերի եւ մշակութային միւս արժեքների հետ 1922 թ. Իզմիրի յայտնի դեպքերի ժամանակ ենթարկուել է թալանի եւ ոչնչացման¹. այնպես որ 1922 թ. սեպտեմբերից մինչեւ իր մահը՝ 1923ի յուլիս ապրում էր տարուբերուելով կեանքի ու մահուան միջեւ, ինչպես նկարագրում են ականատեսները. «...Հոս, Աթենքի մեջ ալ, մանաւանդ մինչեւ առանձին սենեակ մը փոխադրուիլը, բոլորովին ընկրճուած էր, ու ոչինչ մնացած էր իր վրայ նախկին գործունեայ ու կորովի եկեղեցականէն... մանաւանդ կ'ողբար ու կը ցաւէր անտիպ մոխրացած ու կորսուած իր գրական աշխատութիւններուն ու հին ձեռագրերու հաւաքածոյին ու մատենադարանին վրայ»²:

Մտաւորական-եկեղեցականը մանաւանդ իր առաջնորդութեան (1887-1910 թթ.) տարիներին կանոնաւոր նամակագրություն է ունեցել Պատրիարքարանի³, իր աշ-

¹ Այս մասին տե՛ս Ն. Ակինեանի հրատարակած նամակը.- Հանդէս ամսօրեայ, 1923, էջ 550-52, նաեւ մեր կազմած՝ Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, «Քննասեր» հրատարակչութիւն, Երեւան, 2002, էջ 231-32:

² Տե՛ս **Յ. Տարազիր**, Հանգիստ Տ. Տրդատ եպիսկ. Պալեանի. «Արեւ» օրաթերթ, Կահիրէ, 1923, Հիմ 176, էջ 1: Նոյնպիսի զգացում ունեցել է Մխիթարեան միաբան Հ. Արսէն Ղազիկեանը, որ Թեոդիկի «Յուշարձան նահատակ մտաւորականութեան» ժողովածուի մէջ գրել է. «Մխիթարեան զոհերու մասին երբ կը խօսուի, գուցէ աւելորդ չըլլայ յիշել հոս նաեւ անշունչ զոհ մը, որ շնչաւորներուն չափ եւ գուցէ աւելի զգալի է գրականութեան համար, քանի որ այլեւս անդարձ է անոր կորուստը: Այդ զոհն է՝ «Հայկական Նոր Մատենագիտութիւն եւ Հանրագիտարան Հայ կեանքի» անուն գործը, որուն առաջին հատորը Ա-Մ, լոյս տեսած եւ ծանօթ է հասարակութեան: Մնացեալ մասը որ պիտի ուրիշ նոյնչափ երկու հատոր եւս կազմէր Լրագրագիտութեամբ եւ յաւելուածով, ... ամբողջ հանուած են իրենց թաքստոցէն, ուր պահուած էին խնամքով: ...Մատենագիտութեան կորուստը անդարմանելի է. որովհետեւ հնար չէ դարձեալ միւսանգամ կտրել անցնիլ լողալով ովկիանոս մ'անծայր ու անդնդախոր: Գուցէ յանդգնութիւն ըլլայ ըսելը, բայց ըսե՛լս կուգայ, որ պիտի նախընտրէի եւ ինքս զոհուած ըլլալ՝ քան այդ աշխատութիւնը, ... մտածելն իսկ սոսկում կը բերէ վրաս»:

Թեոդիկ, Յուշարձան նահատակ..., Եր., 1990, էջ 145:

³ Պաշտօնի բերումով նոյնպէս, բնականաբար Պատրիարքարանի հետ մշտական թղթակցութիւն ունէր: Բազմաթիւ նամակներից առայժմ յայտնի է մէկը՝ հասցեագրուած պատրիարքական փոխանորդ Ներսէս Ժ. վարդապետ Ասլանեանին (1890 մարտի 6. Թորոս Ագատեանի թողօն, բաժին ԺԲ. Հիմ 9587), պահուում է Գրականութեան եւ արուեստի թանգարանի Թորոս Ագատեանի թողօնում: Ալպոյաճեանի, Ագատեանի թողններում Պալեանի վերոյիշեալ նամակների գոյութիւնը յոյս է ներշնչում, որ թերեւս Կ. Պոլսի Պատրիարքարանի, Վիեննայի Մխիթարեան, Երուսաղէմի մատենադարաններում, առանձին անհատների արխիւներում կարող են պահպանուած լինել Պալեանի գրած հարիւրաւոր նամակներից՝ ուղղուած իր թղթա-

խատակցած թերթերի եւ ամսագրերի («Բիւզանդիոն»⁴, «Բիւրակն», «Ծաղիկ», «Արեւելեան մամուլ», «Հանդէս ամսօրեայ») խմբագիրների⁵, Կ. Բասմաջեանի, Վ. Թորգոմեանի, Ա. Ալպոյաճեանի, Վահրամ եպս. Մանկունու, Ն. Ակինեանի, Վահան Բապէշերեանի հետ: Այս նամակագրությունից քիչ նամակներ են պահպանուել՝ հիմնականում նրանք, որոնք հրատարակուել են:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի եւ իր կրտսեր ժամանակակից ու հայրենակից Արշակ Ալպոյաճեանի միջեւ նամակագրությունն սկսուել է 1905 թուականից եւ շարունակուել մինչեւ 1913 թուականը⁶: Պալեանի՝ Ալպոյաճեանին գրած նամակները (պահպանուում են Մաշտոցեան Մատենադարանում՝ Ա. Ալպոյաճեանի թողօնի մէջ) թուով վեցն են. վերաբերում են 1905-1908 թթ., բովանդակում են գործնական, երբեմն էլ առօրեայ-կենցաղային հարցեր, վերջին երկուսը (1908 թ.) Պալեանի պատասխանն են՝ աշխատակցելու Ա. Ալպոյաճեանի առաջարկին, որ 1908-10 թուականներին կազմող-խմբագիրն է եղել «Ընդարձակ օրացոյց»ի⁷: Եւ չնայած որ «Բիւզանդիոն»ում արդէն գրեթէ աւարտուելու մօտ էր նրա «Հայ վանօրայք» յօդուածաշարը, աւելացրած նաեւ առաջնորդի բազմազբաղ վիճակը, համաձայնել է աշխատակցելու «Օրացոյց»ին, մանաւանդ որ «մերժում մը իմ կողմէս գուցէ տարբեր նշանակութեան պատճառ տայ»⁸. Եւ աշխատանքը ապրիլ-մայիսի ընթացքում ուղարկել է երկու նուագով, սակայն ինչ ինչ պատճառներով այն չի հրատարակուել:

Նամակները, որ այստեղ հրապարակուում են առաջին անգամ, 26x20 չափսի թերթերի վրայ գրուած են մաքուր, գեղեցիկ, կանոնաւոր ձեռագրով. երկուսը (2, 3) Կեսարիայի հայոց առաջնորդարանի պաշտօնաթղթի վրայ են, իսկ միւսների (5, 6) վրայ Պալեանը ինքն է իր ձեռքով լրացրել պաշտօնական տուեալները: Համարներն առաջնորդարանի գրադրութեան ելից մատենան են:

Բնագրերի մէջ ընդգծումները հեղինակինն են. չնչին փոփոխութեամբ պահպանել ենք նաեւ նրա կէտադրութիւնը:

կիցներին, ժամանակի հոգեւորական կամ աշխարհիկ գործիչներին, մտաւորականներին:

⁴ «Բիւզանդիոն» օրաթերթ, Կ. Պոլիս 1897-1918, խմբ. եւ արտօնատէր Բիւզանդ Քէչեան:

⁵ Երեւում է պարբերականների վերջին էջերում գետեղուած «Նամակատուի», «Թղթակցութիւն» անունով փոքր բաժիններում տպագրուած պատասխաններից:

⁶ Պահպանուել են նաեւ Ալպոյաճեանի նամակները Պալեանին, որոնք գուցէ սեւագիր են. գրուած են բարակ թղթի վրայ, տառերը խունացած եւ դժուարընթեռնելի են. նրանք այստեղ հրատարակուող նամակների պատասխանները չեն, ուստի նրանց հրապարակումը մեր ներկայ խնդրից դուրս է:

⁷ Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ Ազգ. հիւանդանոցի: Հրատարակուել է 1880-1910, 1924-1948 թթ.: Կոչուել է նաեւ Տարեցոյց ազգ. հիւանդանոցի, Ընդարձակ տարեցոյց, Ընդարձակ տարեգիրք Ս. Փ. ազգ. հիւանդանոցի եւ այլն: 1908-10 թթ., կազմող խմբագիր՝ Ա. Ալպոյաճեան:

⁸ ՄՄ, Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2992:

1

[Անթուական⁹]

Միրելիս
ընդունեցէք նաեւ իմ սիրալիր ողջոյններս.

Մեծ. Յակոբ էֆ. Չամուրեանին¹⁰ եւ ըսած եմ գաղղ[իերէն] դասատուի մասին. ուրախ կ'ըլլամ եթէ շատ ազնիւ, բարի, յարմարող ու համեստ բնատրութեամբ գաւառացի մէկը գտնէք. որպէս զի կարողանայ կենակցել մեր վարժարանի այժմեայ գաւառացի դասատուներու հետ:

Մեծ. Յակոբ էֆ. Չամուրեան ինձ ըսաւ թէ, Դո՛ւք մեր Ս. Կարապետի վանուց առաջնորդներու մէկ ցուցակը պատրաստած էք. եթէ կարելի է այդ ցուցակին անուններն միայն ինձ դրկէիք, որ բաղդատէի իմ քով եղածին հետ, եւ եթէ Ձերինին մէջ չի գտնուին այն անուններն, որ իմ քով կան, դրկեմ Ձեզ իրենց մանրամասնութեամբը.

Ընդունեցէք իմ ողջոյն եւ օրհնութիւններս

Տրդատ Եպս. Պալեան

ՄՄ., Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2996, 1 թերթ

2

Առաջնորդարան
Կեսարիա
Համար 1737

Հայոց Կեսարիա
5 Հոկտեմբեր 1905

Մեծայարգ Արշակ էֆէնտի Ա. Ալպոյաճեան
'ի Կ. Պօլիս

Ձեր Ազնուութեան 15/28 Սեպտ. 1905 թուական պատուական գրութիւնն ընդունած եմ շնորհակալութեամբ.

Մեծ. Յակոբ էֆէնտի Չամուրեանի միջոցաւ, ասկէց առաջ Ձեր Ազնուութեան տո-

⁹ Այս նամակը թէեւ թուական չունի, բայց 5 Հոկտ. 1905 թուագրուած յաջորդ նամակի բովանդակութիւնից երեւում է, որ սա պէտք է գրուած լինի նրանից առաջ:

¹⁰ Յակոբ Չամուրեան, կեսարացի, Ա. Ալպոյաճեանի հորաքրոջ որդին, 1880ական թուականներից ապրել է Պոլսում, մինչեւ 1903 թ. զբաղուել է առետրով, միեւնոյն ժամանակ ունենալով նաեւ մտաւորական զբաղումներ: Դեռեւս Կեսարիայում եղած ժամանակ թղթակցել է «Մասիս»ին, եւ «Մանգումե»ին, Կեսարիա վերադառնալուց յետոյ 1906ին ընտրուել է երեսփոխան, 1910ին վերընտրուել, 1907ին ընտրուել է Կիւմշեան վարժարանի տնօրէն, 1910ին Ուսումնական խորհրդի կողմից նշանակուել է Կեսարիայի բոլոր դպրոցների կրթական տեսուչ: Թղթակցել է «Արեւելք», «Բիւզանդիոն» թերթերին, եղել է այդ թերթերի գործակալը Կեսարիայում: Եղել է նաեւ գլխաւոր աշխատակիցը «Հայեկ» թերթի, գրել է «Վտարանդի», «Արմէն» կեղծանուններով: Խմբագրել է Կեսարիայի «Շեփոր» շաբաթաթերթը (1910 թ.): 1915ին նահատակուել է տարագրութեան ճանապարհներին:

լած ամփոփ տեղեկություններն ալ, յիշեալ էֆէնտին հաղորդած էր ինձ ժամանակին:

Ս. Կարապետի վանուցս վարժարանի՝ գաղղիերէն լեզուի ուսուցչութեան համար, մեր ուզած դասատուի մը մասին, մեր կողմէն Ձեր Ազնուութեան տրուած աշխատութեան համար, Ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ, Մեծ. Միհրան էֆ. Յովհաննէսեանը¹¹ եւ ալ անձամբ կը ճանաչեմ, բայց եթէ թաղային եւ մասնաւոր վարժարան մը ըլլար, իր բողոքականութեան վրայ ամենեւին մտածում մը չէի ունենար, բայց որովհետեւ վանքի մէջ է վարժարանս, ասիկա բաւական մտածումի առարկայ կ'ընէ զիս, եւ լաւ ազդեցութիւն չընէր միաբանութեանս, հետեւաբար չեմ կրնար եւ չի պիտի կրնամ առաջարկել այդ պաշտօնը ուղղակի իրեն:

Արդէն գաղղիերէն լեզուի ուսուցիչն ալ բերել տուի այս օրերս, եւ գործի սկսաւ, առ այժմ գոհ եմ իրմէ եւ իր հմտութենէ, թէ՛ գրականութեան՝ եւ թէ՛ խօսելու վարժութեան մէջ շատ հմուտ եւ վարժ մէկն է, կը յուսամ թէ այսպէս կը շարունակէ, եւ շարունակաբար գոհ կը ձգէ զիս: Մաղթելով Ձեզ երկար կեանք, մնամ ողջունիւ սիրոյ

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

Տրդատ եպս. Պալեան

Յ. Գ.

Կարելի չէ՞ արդեօք յարմար առթէն, Ձեր քով գտնուած, մեր Ս. Կարապետի վանուց առաջնորդներու ցանկը դրկել հաճիր.

Նոյն

ՄՍ., Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2995

3

Առաջնորդարան Հայոց

Կեսարիա

համար 1999

Կեսարիա

13 Նոյեմբեր 1906.

Մեծայարգ

Արշակ էֆ. Ա. Ալպոյաճեան. 'ի Կ. Պօլիս

Ազնիւ սիրելի՛ս.

Ընդունած եմ Ձեր Ազնուութեան 24 Հոկտ. 1906 թուակիր պատուականն, առանց ուշացնելու ահաւասիկ, կը պատասխանեմ Ձեր հարցմանց, ինչ որ իմ կարողութեանս եւ ծանօթութեանս շրջանակին մէջ են.

1. Կեսարիոյ Հայ ազգաբնակչութիւնը, այո՛, ԺԲ. դարու կամ անկէ քիչ առաջուան գաղթականութիւն է, եւ ըստ իս Առաջնորդութիւնն ալ ուշ սկսած է, եւ առաջին առաջնորդն ալ ինչպէս նշանակած եմ, Յովհաննէս Եպիսկոպոսն էր 1170ին: Սա՛ եւ իր

¹¹ Միհրան Յովհաննէսեան, հեղինակ «Բանասէր» հանդէսի «Քննական պատմութիւն ԺԹ. դարու հայ դպրութեան», «Հնագոյն հայ գրչագիրն» յօդուածներին:

յաջորդներեն մէկ քանին, Ազարիա եւն, նստած են Ս. Մեռկերիոսի վանքին մէջ, այսուամենայնիւ Ս. Կարապետի վանքը նոր չէ, շատ հին է, Հայ առաջնորդներն հոն սկսած են նստիլ, Ս. Մեռկերիոսի վանքին **ամայութենէն** ետքը, այս մասն երկար բացատրութիւններու կարօտ է, բացորոշ հասկցուելու համար, ժամանակին գուցէ այդ - բացատրութիւնն կուտամ Ձեզ, այժմ Ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ:

2. 1287ին եւ 1307ին Կոստանդին Առաջնորդ Կեսարիոյ, այո՛ կը յիշուի, եւ իմ սեւագրութեան օրինակիս մէջ ալ կար այդ անունն, բայց սխալմամբ կամ այլ պատճառաւ ցանկէս դուրս ձգած եմ, այժմ անցուցի վերստին:

3. Յովսէփ եպս. Աման օղլու, այո՛, 1693 թուական ձեռագրին մէջ ալ Առաջնորդ եւ եպս. Կեսարիոյ գրուած է, ձեռագիրն Աւետարան է, եւ կը պահուի Մանճրսըն գիւղի Ս. Եկեղեցւոյ մէջ, երբ Մունճուսունի ձեռագիրներու հրատարակութիւնը լրացնեմ («Լոյս»¹² մէջ), պիտի սկսիմ հրատարակել Մանճրսընի ձեռագիրներուն ցուցակն ալ, որ շատոնց պատրաստ է, բայց ինչպէս կը տեսնաք Լոյս կրօնաթերթը ամիսը մի անգամ հազիւ կը դնէ մէկ երկու ձեռագիրներու ցանկն:

4. Սարգիս եպս. Սարրաֆեանի կենսագրութիւնն այո՛, կարդացի Հ[անդէս] Ամսօրեայի մէջ, ես ալ կրնամ ըսել թէ՛ այդ գրուածն վաւերական է:

Գալով Ձեր միւս կարելոր հարցման թէ՛

«Կ. Պօլսոյ կամ Տիլիպէի, կամ Ռումէլիի, կամ Անատօլուի մի ո՛րեւէ մասին մէջ վանքի մը անունան պատահած եմ».

Նախ, Ձեր այս հարցումին թէեւ պատասխանս գոհացուցիչ չի պիտի ըլլայ, բայց պիտի գրեմ հետեւեալներն: Իմ վանքերու հաւաքածոյին մէջ կան 30-ի չափ վանքերու¹³ ալ անուններ, որոնց տեղը, ինձ բոլորովին անծանօթ մնացած են, մինչեւ ցայժմ, որչափ որ ալ ջանացած եմ ճշտել, անկարելի եղած է:

Այս վանքերու անուններն են. 1. Քոթենաւորի վանք, 2. Քոնոյ վանք, 3. Քաթիլոյ վանք, 4. Յախաքարի վանք, 5. Ստեփաննոսի վանք, 6. Սարկաւազայ վանք, 7. Ջորեհանգիստի վանք, 8. Պերճ վանք, 9. Շողազայ վանք, 10. Շաղագոմբ վանք, 11. Ճալէթու Ս. Յակոբայ վանք, 12. Մեծիրանից վանք, 13. Ճիլիմոն վանք, 14. Կուգոյ վանք, 15. Կարպոյ Ս. Կարապետի վանք, 16. Կոթիփորայ վանք, 17. Ծիրանաւորի վանք, 18. Ծառիկու Ս. Աննայի վանք, 19. Խնած[տ]ի վանք, 20. Խաչափակի վանք, 21. Խոյալու վանք, 22. Թուրքթի վանք, 23. Երզնկանք, 24. Դասնոյ վանք, 25. Դափուց վանք, 26. Գետամէջի վանք, 27. Բեղանիա վանք, 28. Բաղակու վանք, 29. Բարձրաքաղ վանք, 30. Աբգարու վանք:

Երկրորդ, վերոյգրեալ վանքերէն զատ ծանօթ է ինձ. **Արճէշի վանք** անունով վանք մըն ալ, որ կը գտնուէր Ռումանիոյ կողմը, որուն միաբանութիւնը Վանայ կողմը, Արճէշ անուն քաղաքի քով գտնուած վանքէն եկած եւ հաստատուած են:

Երրորդ. Նիկոմիդիոյ Պարտիզակ գիւղի վրան ալ հին ժամանակները վանք մը կ-

¹² «Լոյս», 1905, 1906, Կ. Պոլիս, խմբ. Բ. Կիւլեւերեան. Տե՛ս նաեւ Մատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, Եր., 2002, Հ^տ 36 (էջ 196):

¹³ Առանց մանրամասնելու նշենք, որ այդ վանքերից 14-ը Արեւելեան Հայաստանի տարածքում են, միւսները՝ Արեւմտեան Հայաստանի:

ար, թէեւ բուն անունը ծանօթ չէ ինձ, ասոր միաբանութիւնն ալ նոյնպէս Վանայ Լիմ անապատի վանքերէն եկած էին. Նիկոմիդիոյ այս վանքն ալ անցելոյն մէջ շատ հռչակաւոր էր, ունէր կազմաւորեալ միաբանութիւն, Աստուածաբան վարդապետներ, - այժմ սոյն վանքը ուխտատեղի եղած է Ս. Թագաւոր անունով, եթէ կուզէք եւ ժամանակ ունէք, այդ կողմի վանասէրներէն կրնաք տեղեկութիւններ քաղել այդ վանքի մասին, եւ ինձ ալ տեղեկացնել:

Գիտեմ թէ՛ բաւականին իսկ, չի կրցայ գոհացնել Ձեր ազնուութեանն, այս վերջին մասին նկատմամբ, բայց ինչ ընեմ որ, եւ կը խոստովանիմ ալ թէ՛ ծանօթութեանս սահմանն ասկէ անդին չանցնիր.

Երբեմն երբեմն եթէ Ձեր նամակներն ընդունիմ, շատ ուրախ կ'ըլլամ, մաղթելով - Ձեզ երկար կեանք եւ բարօրութիւն.

Մնամ միշտ աղօթարար

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

Տրդատ Եպս. Պալեան

ՄՄ., Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2993

4 թերթ (3ը գրած)

4/17 Դեկտ. 1906 պատասխանած

4

Թիւ 2028

11/24 Դեկտ. 1906 Կեսարիա

Մեծայարգ

Արշակ Էֆէնտի Ա. Ալպոյաճեան

ի Կ. Պոլիս

Ընդունած եմ Ձեր Ազնուութեան 4/17 դեկտ. 1906 թուակիրն. Կ. Պոլսոյ, կամ Ֆիլիպէի, կամ Ռումէլիի, եւ կամ առաջակողմեան Փոքր Ասիոյ մէջ, վանքի մը գոյութեան տեղեկութիւն մը չունենալս, զՁեզ դժբախտաբար յուսախաբ ձգած է, բնական էր այս, եւ արդէն ալ գուշակած էի, որովհետեւ, կարողութեանս սահմանը այնչափ ընդարձակածաւալ չէ, ինչպէս դիտած պիտի ըլլաք:

Իրաւ է որ, նախասիրած աշխատութիւններէս մէկն ալ վանքերու վրայ տեղեկութիւններ հաւաքել է, եւ որոնք որ այժմ շէն են, ժողովել անոնց լուսանկարները, նիւթական կարողութեանս սահմանին մէջ, բայց Կ. Պոլսոյ եւ շրջակայից մէջ վանքի մը կամ վանքերու համար. կան ու չկան. գրեթէ հետաքրքիր եղած չէի, ծանօթագրած միայն Կ. Պոլսոյ **Սուլու մանասթըրը**, որ ետքէն Պատրիարքարան եղած է կ'ըսուի, եւ Սկիւտարի մէջ ալ Երուսաղէմի վանքը, զորս իբր վանք, վանքերու կարգն ալ անցունելու դժկամակութիւն մը ունեցայ, զուցէ յետ այսորիկ հետաքրքրուիմ Պոլսոյ համար ալ:

Ժամանակին տեսած եմ Ձեռագիր Մաշտոց մը, որ գրչագրուած էր 1727ին, որուն

մէջ եկեղեցական կարգ ու կանոններէն զատ, կան նաեւ աղօթքներ, մաղթանքներ եւն, զատ զատ գլուխներու բաժնուած, գլուխ մըն ալ «Ս. Նշան» անուն վանքերու անունները, իրենց գտնուած տեղերու անուններով, թուով 40, այս վանքերու կարգին մէջ կը յիշուին Կոստանդիանոսի Ս. Նշան, **Կոստանդնուպօլսոյ Ս. Նշան**, Պիզեոյի Ս. Նշան եւն եւն: Կ. Պօլսոյ «Ս. Նշանը» եթէ վանք է, կարծէ որ անոր վրայ ալ հետաքրքրուիք, միայն ես սաչափ ըսեմ թէ, Հայտար փաշայէն անդին Գարթալ գիւղի Ս. Եկեղեցոյն անունը արդէ՞օք Ս. Նշան է, 'ի հարկէ Դուք գիտէք եւ կրնաք աւելի լաւ եւ փութով հասկնալ:

Կեսարիոյ Առաջնորդ Յովսէփի եպս. Աման օղլուի 1700 թուականներուն Թէքիրտաղի Առաջնորդ գտնուելուն վրայ իմ կարծիքս յառաջիկային կը յայտնեմ, եթէ միջոց ունենամ թուղթերու մէջէն գտնել, իր՝ կամ իր վարդապետին գրած մէկ յիշատակարանը, զոր օրինակած էի ժամանակին ձեռագիր մատենանէ մը:

Բիւզանդիոնի մէջ «**Հնագոյն դաշնագիր**» վերնագրով Ձեր շարունակելի յօդուածները հետաքրքրութեամբ կը կարդամ. Գ. յօդուածին մէջ (Բիւզանդիոն թիւ 3109), գրած էիք Իպրիզի կամ Իվրիզի գիւղին մօտերը, փոքրիկ գետի եզերքը գտնուած, ապառաժի մը վրայ, քով քովի քանդակուած երկու պատկերներու մասին ալ, որ ժամանակին տեղեկացուցուած էր հնագիտական աշխարհին: Ապառաժի վրայ քանդակուած այդ պատկերներն ես ալ անձամբ տեսած եմ 1899ին, երբ Գօնիայի վրայօք Կեսարիա կուգայի: Երէիլ քաղաքէն 1-1/4 ժամ հեռու, (Երէիլ, գուցէ հին Լիկայոնիոյի քաղաքներէն մին) այժմ Իվրիզ կոչուած գիւղին քովերը կը գտնուեն յիշեալ քանդակները: Նախ Երէիլի բարեկամի մը քով տեսայ նոյն պատկերներուն սեւ գրիչ գծագրութիւնը, որուն թէւ լուսանկարը առնել տուի, բայց ինձ թուեցաւ թէ գծագրութիւնը ճիշդ քանդակներուն նմանութիւնը չի պիտի ըլլայ, եւ չի կրնար ըլլալ, հետաքրքրուեցայ անձամբ երթալ հոն. եւ ուղղակի ապառաժ քարի վրայէն առնել տալ նոյնին լուսանկարը, ասոնցմէ մէյմէկ հատ, ներփակեալ կը դրկեմ Ձեզ. թէեւ, տեսած ալ ըլլաք եւրոպական հրատարակութիւններու մէջ:

Նշանագիրներէն, ինչպէս գրած էիք, երեք տողերը, կողքին¹⁴ (կուս-քին՝) երեսին, եւ վեր վերցուցած ձախ թելին միջեւն են, եւ երեք չորս տողեր ալ երկրպագուին ետեւը, բայց այս վերջին տողերը մեր լուսանկարին մէջ ամբողջովին առնուած չեն, ինչպէս պիտի տեսնէք եթէ ուշադրութեամբ դիտէք, միայն կերեւին առաջին գիրերը գրեթէ. այս գիրերը հիթերու կամ հիթիթներու կամ Քետացուց նշանագրերու նման կ'երեւին, բայց միւս կողմէն պնդողներ ալ կան, թէ հին յունարէն են, եւ կ'աւելցնեն թէ պատկերին մին, **հասկի** եւ **երկրագործութեան** չաստուած **Դեմետրէն** է, եւ միւսն ալ **Քեսանէ**, կամ մին **գինիի** չաստուած՝ **Բագոսն** է, միւսը՝ անոր դասատուն **Միլինոս**, չի գիտեմ ո՞րչափ կարեւորութիւն տալու է այս վերջին կարծիքին, Քետացիք կը ճանչնային արդե՞օք Դեմետրէն, Քեսանէն եւն:

Ես գծագրած եւ լուսանկարել տուած եմ նաեւ Գօնիայի մէջ ուրիշ մի քանի հնութիւններ ալ, որուն մէկը այս տարի **Սէրվէթի Ֆինունին**¹⁵ մէջ հրատարակուեցաւ:

¹⁴ Բնագրում բառը տողադարձուած է՝ կուս-քին, հաւանաբար պէտք է լինէր կողքին:

¹⁵ «Սէրվէթի Ֆինուն»՝ (Գիտութեան հարստութիւն) թուրքերէն հանդէս, 1891ից յաւելուած թուրքերէն

Ընդօրինակած էի, եւ քովս կը գտնուին նաեւ, Քետացոց արձանագրութիւններէն՝ **Էքրէկինը**, եւ **Կեսարիոյ** մէջ գտնուածինը, որոնք այժմ փոխադրուեցան 'ի Կ. Պօլիս կայս. Միւզահանէն, հատ մըն ալ կայ Կեսարիա Արգէնսի մօտերը քարայրի մը դրան ապառաժին վրայ քանդակուած նշանագիրեր. թէեւ այս ալ ընդօրինակած եմ բայց - դժբախտաբար նշանագիրերէն շատերն աւրուած են:

Պօղագ քեօյի □ (պօղագ Քեօփղի-ի պօտճէ անուն գիւղի) արձանագրութեան ընդօրինակութիւնն ալ 'ի մօտոյ կը յուսամ թէ կ'ունենամ, բարեկամի մը միջոցաւ, երա՛նի թէ կարելի ըլլար մեծ դիրքով լուսանկարը առնել տայի, բայց չի պիտի կրնամ ծախքին շատ ըլլալուն պատճառաւ: Առ այժմ այսչափ.

Մնամ ողջունիւ սիրոյ եւ օրհնութեամբք

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

Տրդատ եպս. Պալէան

պատասխանած

ՄՄ., Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2994, 4 թերթ

5

Առաջնորդարան Հայոց Կեսարիոյ, 18 Ապրիլ 1908.
թիւ 2479

Կեսարիա

Մեծայարգ Արշակ Էֆէնտի Ա. Ալպօյաճեան. 'ի Կ. Պօլիս

Ձեր Ազնուութեան 30 Մարտ 1908 թուական գրութիւնն, նոյնպէս Ամեն. Ս. Պատրիարք Հօր 8 Ապրիլ պաշտօնագիրն ստացած եմ, ի մասին Հայ Վանօրէից ցանկին, որ կը փափաքուի, Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի ընդարձակ օրացոյցին¹⁶ մէջ դնել - շարունակաբար:

Ինչպէս նորին Ամեն. Սրբազնութեան ալ տեղեկացուցած եմ, այդ ընդի. Վանօրէից ցանկը, թէեւ ես շատ աշխատած եւ բաւական ծախքեր ընելով պատրաստած եմ, շատ երկար տարիներէ ի վեր, եւ սակայն նոյն իսկ ես անձնապէս, այնչա՛փ կարելոր գործի մը կարգը չեմ դասակարգեր, որպէսզի արժանի համարուի հրատարակութեան, մասնաւորապէս Ազգ. հիւանդանոցի ընդարձակ օրացոյցին մէջ, որ նշանակելի եւ կարելոր նիւթեր կը պարունակէ միշտ.

Բայց մտածելով թէ, մերժում մը իմ կողմէս, գուցէ տարբեր նշանակութեան պատ-

«Մերվէթ» (Հարստութիւն) երեկոյեան թերթի՝ հիմնադրուած պոլսաբնակ յոյն Դ. Նիկոլաիդիսի կողմից՝ 1888 թուականին: Գիտահանրամատչելի հանդէս, հրատարակել է ակնարկներ նշանաւոր մարդկանց մասին, յօդուածներ ու ակնարկներ գիտութեան զարգացման մասին Արեւմուտքում, Եվրոպայի ու Ասիայի պետական գործիչների կենսագրութիւններ, ֆրանսիական արկածային գրականութեան թարգմանութիւններ: Բնկ գլխաւորը, որով գրաւել է հասարակութեան ուշադրութիւնը՝ լուսանկարներն էին:

¹⁶ Տե՛ս ծնթ. 7:

ճառ տայ. այս անգամ իբրեւ նմոյշ 18 երեսներէ բաղկացեալ տետրակ մը¹⁷, ուղղակի նորին Ամեն. Բ. Սրբազնութեան ղրկեցի, եւ խնդրեցի իրմէն որ, անգամ մը աչքէ անցընէ, եւ եթէ յարմար ու արժանի տեսնէ թո՛ղ իմացնէ, որ 1909 տարուան օրացոյցին համար ղրկեմ նաեւ Սեբաստիոյ, Թօգատի, Ամասիա-Մարգուանի, եւ Շապին Գարա-հիսարի վանքերու ցանկն ալ իրենց պատկերներով. այս տարուան համար ասկէ աւելիին աշխատութիւն տալու ժամանակ չեմ կրնար ունենալ:

Ղրկած տետրակս, շատ համառօտակի ընդօրինակուած են իմ հաւաքածոյիս մէջէն, ասկէ աւելի համառօտել չէի կրնար, կը փափաքէի որ քիչ մը աւելի եւս ընդարձակ ըլլար, բայց քանի որ համառօտ ուզած էիք, ստիպուեցայ այդպէս ընել:

Պատկերներուն գալով, եթէ հրատարակութիւնը չի ծանրաբեռնելու համար պատկերները չտրուին, կամ նոյն իսկ մէկ քանի հատն ալ յետաձգուին, չեմ կրնար համակերպիլ, եւ կ'ուզեմ որ պատկերներն ամբողջութեամբ տրուին, եւ ասոնց փորագրուած կաղապարներն ինձ տրուին իբրեւ նուէր եւ իբրեւ վարձատրութիւն, ուրիշ ոչինչ կ'ուզեմ, որպէսզի յառաջիկային, երբ այդ «Վանօրէից ցանկը» ընդարձակօրէն, եւ առանձին գիրք հրատարակեմ, եւ միտք ալ ունիմ, այդ կաղապարներն անոր մէջ ալ գործածիմ, ասիկայ ինձ նուէր մը, կամ ըսեմ դիւրութիւն մը պիտի ըլլայ:

Ընդարձակ թեմագրութեամբ ամէն տարի երկերկու **գաւազանագիրք** ալ դնելու մտադրած էք, ընդարձակ օրացոյցին մէջ, այս տարուան սկսեալ, շա՛տ ուրախ եմ այդ բանին, իրօք նշանակելի գործ մը պիտի ըլլայ: Կեսարիոյ **գաւազանագիրքը** (Ս. Կարապետի, Թօմարգայի եւ Ս. Դանիէլի վանքերուն) 'ի հարկէ տեսած էք Բիւզանդիոնի մէջ, շատ ընդարձակած ենք, գրեթէ 300 մեծադիր երես ձեռագիր մը եղած է, պատմական նկարագրութեամբ, ժամանակ ունենամ գուցէ կ'աշխատակցիմ, բայց վերջնական խօսք ալ չեմ կրնար տալ այս մասին:

Առ այժմ այսչափով բաւականանալով եւ Ձեր ներողամտութիւնն խնդրելով.

Մնամ ողջունիլ սիրոյ՝ Առաջնորդ Հայոց Կեսարիոյ
Տրդատ Եպս. Պալեան

Ա. Ալպ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2992, 4 թերթ

6

Առաջնորդարան Հայոց Կեսարիոյ
թիւ 2508

20 Մայիս 1908. Կեսարիա

¹⁷ Մատենադարանում Ա. Ալպոյաճեանի թողօնի մէջ պահպանուում է 19 թերթանոց մի տետրակ (թղթ. 54, վաւ. 15), որ պարունակում է ըստ էութեան Տրդատ եպիսկոպոսի խոստացած եւ երկու նուագով ուղարկած՝ վանքերի պատմութիւնը եւ 10 լուսանկար: Առաջին մասը՝ Գաղատիայի Ս. Աստուածածին եւ Կեսարիայի Ս. Մարգիս, Ս. Աստուածածին, Ս. Դանիէլ, Ս. Կարապետ վանքերի պատմութիւնն է, ուղարկել է ապրիլի նամակի հետ: Երկրորդ մասը՝ Սեբաստիայի, Եղդոկիայի, Ամասիա-Մարգուանի, Շապին-Գարա-հիսարի վանքերի պատմութիւնն է, ուղարկել է մայիսին:

Մեծայարգ Արշակ Էֆենտի Ա. Ալպոյաճեան. 'ի Կ. Պօլիս

Ստացած եմ Ձեր ազնուութեան 8 Մայիս 1908 թուական գրութիւնն.

Ս. Փրկչայ հիւանդանոցի ընդարձակ օրացոյցին համար, յօժարակամ աշխատակցիլ ուզած էի թէւ, բայց Ձեր գրածները զիս յուսահատութեան ձգեցին.

Նախ՝ որ կասկած կը յայտնէք պատկերներու ամբողջական գետեղման համար, **մէարիֆի** պաշտօնատունէն¹⁸ հրաման կամ արտօնութիւն տրուելուն վրայ, իբրեւ տոհմային յիշատակարաններ հաճոյ չերեւնալուն համար.

Եւ երկրորդ՝ յառաջաբանին հրատարակութիւնը իր այդ ձեւին տակ տարակուսական կը համարէք արտօնուելուն, եւ ի պահանջել հարկին այն ալ փոփոխութեան պիտի ենթարկէք եղեր.

Ասոնք են ահաւասիկ, որ յուսահատութիւն տուին ինձ, թէւ երկրորդ մասն ալ գրելով, եւ նորէն մէյ մէկ պատկերներ ալ դնելով, այսօրուան թղթատարով դրկեցի յանուն Ամեն. Ս. Պատրիարքին. ուրկէ 'ի հարկէ պիտի ստանաք¹⁹:

Բայց ես կը հաւատամ թէ՛ եթէ Ամեն. Ս. Պատրիարքը ուզէ, փափաքի՝ կրնայ առանց առարկութեան, առանց ո՛ր եւէ դիտողութեան, ամբողջութեան եւ անփոփոխ հրատարակութեան համար արտօնութիւնն ստանալ **մէարիֆի** պաշտօնատունէն, իմ այս հաւատ անփոփոխելի է, հետեւաբար միւս կողմէն կը մտածիմ թէ՛ գուցէ պատկերներուն ամբողջութիւնը դնել չուզելնիդ ծախքի չենթարկուելու համար է, բայց, ես ալ կ'ուզեմ գաղափար մը տալ Ձեզ, ո՛չ թէ Վանօրէից ցուցակին համար, որ հրատարակուի թէ ո՛չ, այս ինձ համար այնչափ մեծ նշանակութիւն եւ կարեւորութիւն չունի. այլ հիւանդանոցի ընդարձակ օրացոյցի համար, թէ՛ պէտք է քիչ մը աւելի ծախքի ենթարկուի, տոհմային աւելի նշանաւոր, աւելի փառաւոր, աւելի հետաքրքրական հրատարակութիւն մը ըլլալու համար, այս ծախքը խնայելու չեն, ո՛չ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, եւ ո՛չ ալ հիւանդանոցի պատուարժան հոգաբարձութիւնը. ըսեմ նաեւ թէ, ընդարձակ օրացոյցէն վերցնելու էք նաեւ քանի մը անկարելոր մասեր, եւ որոնց տեղ դնելու էք տոհմային հատուածներ, եթէ նոյն իսկ ծախքով ալ ըլլայ, եւ վարձք մըն ալ տրուի պատրաստողին:

Ես այս անգամ դրկած մասէս գատ ուրիշ մաս մը չի պիտի կրնամ դրկել գոնէ այս տարւան համար, որովհետեւ այլեւս պիտի փոխադրուիմ Ս. Կարապետի վանքը, հոն զբաղմունք շատ ունիմ, թէ՛ վանական եւ թէ՛ վարժարանական գործերով եւ քննութիւններով. Յունիս 9-ին քննութեան պիտի սկսիմ, որ կը տեւէ տասն եւ հինգ օրեր, երկու երեք օրեր մրցանակաբաշխութիւն, եւ շրջանաւարտից վկայականներու յանձն-

¹⁸ Կրթութեան նախարարութիւն:

¹⁹ Պալեանի ձեռագրի երկու մասերը ստանալուց հետո, հրատարակութեան պատրաստելու համար արտագրուել է՝ նախապէս խմբագրուելով պատրիարքի կամ Ա. Ալպոյաճեանի կողմից, որով ստացուել է վերոյիշեալ 19 թերթը (37 էջ): Ընթողիւնակութիւնն օժտուած է Ա. Ալպոյաճեանի առաջաբանով, գրուած է գործարանային ստուերագծումով թղթի վրայ, չափերը՝ 27,5x20,5, իւրաքանչիւր հատուածում գետեղուած է համապատասխան լուսանկար: Սակայն, չնայած այս ջանքերին, գործը չի հրատարակուել ո՛չ 1909ի, ոչ էլ 1910ի «Օրացոյց»ում:

ում, եւ ապա վանքի տօնախմբութեան օր, եւ յառաջիկայ տարուան համար վարժարանի բացման զբաղում եւն. հետեւաբար Ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ, կը շարունակեմ ղրկել միւս մասերը գալ տարի:

Երբ պատկերները հրատարակուին **ԿԼԷՆՆԵՐՆ** իմ տրամադրութեան տակ չի դնելուն մէջ պատճառ մը չենք տեսներ, քանի որ օրացոյցին մէջ գործածուելէն վերջ, իրօք Ձեզ համար իրենց կարեւորութիւնը կը կորսնցունին, այս մասին իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ, որովհետեւ, ես այդ ընդհանուր Վանօրէից ցուցակն թէ՛ Տաճկաստանի մէջ, եւ թէ՛ Ռուսիոյ մէջ եղածները, շատ ընդարձակօրէն, օր մը, յարմար ժամանակ մը՝ ի հարկէ, առանձին գիրք պատկերազարդ պիտի հրատարակիմ:

(**ԿԼԷՆՆԵՐՆ** ինձ պիտի տրուին ասելով, Ս. Փրկչայ հիւանդանոցի հոգաբարձութիւնը թո՛ղ ծախսէ չի քաշուի, կրկնեցի թէեւ, բայց ներողամիտ եղէք):

Հեռաւոր վանքերու պատկերներուն ապակիները չունիմ, մէյ մէկ հատ հազիւ կարողացած եմ բերել տալ, եւ այն ալ բաւական ծախքեր ընելով, միայն կրնամ Կեսարիոյ 4 վանքերուն պատկերներէն²⁰, երկուք եւ երեքական հատ եւս ղրկել Ձեզ, եթէ ուզէք ասոնց ապակիները լուսանկարչին քովն են, կրնայ պատրաստել երբ որ ուզուի:

Ձեզ պիտի տամ նեղութիւն մը, օր մը եթէ կարելի ըլլայ, հանդիպեցէք Զարէի Ն. Պէրպլերեան²¹ էֆէնտիի տպարանը, եւ իմ կողմէս ողջունելով ըսէք իրեն թէ, ասկէց ամիս ու կէս մը առաջ իրեն նամակ մը գրած էի, որուն պատասխանն մինչեւ ցայսօր չի կրցայ ստանալ, չուզեց արդէօք պատասխանել եւ թէ նամակս չստացաւ, խնդիրը իր հօրը իմ քով գտնուած մէկ պայմանագրութեան համար էր, եթէ նամակս չստացաւ, թող իմացնէ կրկին գրեմ:

ողջունիւ սիրոյ՝ Առաջնորդ Հայոց Կեսարիոյ
Տրդատ Եպս. Պալեան

ՄՄ., Ա. Ալպօյաճ. թողօն, թղթ. 49, վաւ. 66/2991, 4 թերթ
20/5 - 1908

²⁰ Ուղարկել է Կեսարիայի Ս. Սարգսի (Տէրեվանք), Ս. Աստուածածնի, Ս. Դանիէլի վանքերի մէկական եւ Ս. Կարապետի վանքի երկու լուսանկար:

²¹ Զարէի Ն. Պէրպլերեան, պոլսեցի տպարանատէր-հրատարակիչ Նշան Պէրպլերեանի (1842-1907) որդին:

*ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու*

ՀԲԸՄ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԴԻՐ-ՆԱԽԱԳԱՀԸ

Հայ ժողովրդի պատմության մեջ բազմիցս հանդիպում ենք այնպիսի անհատների, որոնց աջակցությամբ կառուցվել են եկեղեցիներ, բացվել դպրոցներ, պահվել մշակութային ու բարեգործական բազմաթիվ հաստատություններ: Բարեգործություն կատարելը թերևս հայի բնավորության գծերից մեկն է եղել դարեր շարունակ: Պետականությունը կորցրած հայ ժողովրդի կրթական ու մշակութային առաջընթացը շատ դեպքերում կապված է եղել հայ բարերարների գործունեության հետ: Սակայն անհատների բարերարությունը երբեք չէր կարող ունենալ այն խոշոր ծավալներն ու նշանակությունը, ինչ կարող էին անել բարեգործական լուրջ կազմակերպությունները:

Մեր այս հոդվածում ցանկանում ենք ներկայացնել հայ իրականության մեջ ամենախոշոր բարեգործական հաստատության՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) հիմնադրումը, ստեղծմանը խթանող պատճառները և նորաստեղծ կազմակերպության ծավալումը հիմնադիր և առաջին նախագահ Պողոս Նուբար փաշայի¹ ղեկավարման օրոք:

Հայ ազգային մեծագույն բարերարների շարքն է դասվում Պողոս Նուբար փաշան (1851-1930 թթ.): Այդ մեծանուն հային է պատկանում նաև ՀԲԸՄ ստեղծման գաղափարն ու գործադրումը: Նա երիտասարդ տարիքից մինչև մահվան մահիճը չզլացավ օժանդակել սեփական ժողովրդին: Պ. Նուբարը, սկսած Ալեքսանդրիայում բնակության շրջանից (1880-1905), ամեն տարի տեղի Հայ Աղքատախնամ ընկերությանն էր տրամադրում 100 եգիպտական ոսկի: Եգիպտոսում գործող հայկական որբանոցների բյուջեների մի խոշոր մասը ևս գոյանում էին նրա նվիրատվություններից: Նյութապես աջակցում էր նաև հայկական մամուլի զարգացմանը: Համայնքի կարիքները հոգալու համար երբեք չվարանեց նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերել: Եգիպտոսում կազմակերպվող բոլոր հանգանակությունների ցուցակները գրեթե միշտ գլխավորում էր Պ. Նուբարի անունը, եթե նույնիսկ հանգանակությանը մասնակցում էր անձամբ խղիվը՝ Եգիպտոսի տիրակալը:

Պ. Նուբարը հատկապես մեծ օժանդակություն ցուցաբերեց 1895-1896 թթ. համիդյան կոտորածներից մազապուրծ հազարավոր փախստականներին, որոնք հաստատվել էին Եգիպտոսում: Նա ոչ միայն նյութապես աջակցեց թուրքական յաթաղանից փրկված հայրենակիցներին, այլև աշխատանքով ապահովեց և մշտական ապրուստի միջոցներ ստեղծեց նրանց համար: Բոլոր հայերին, որոնք աշխատելու ցանկություն ունեին, Պ. Նուբարը աշխատանքի տեղավորեց Բեհերայի, Տրամվայների կամ Երկաթուղիների ընկերություններում, որոնք գտնվում էին իր ենթակա-

¹ Պողոս Նուբարի կյանքն ու գործունեությունը առավել հանգամանորեն ներկայացված է Ս. Պողոսյանի «Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը» (Երևան, 2004) մենագրության մեջ:

յության ներքո²:

Նա միշտ փորձում էր առավել արդյունավետ մեթոդներ գտնել մարդկանց օգնելու հարցում: Օրինակ, 1904 թ. նա Միացյալ Որբախնամ ընկերությանը հատկացրեց 100 ոսկի, իսկ Աղքատախնամ ընկերությանը՝ 440 ոսկի (Աղքատախնամի այդ տարվա ընդհանուր մուտքերը 1100 ոսկի էր), սակայն, որպեսզի կարիքավորներին տրվող օգնությունը նրանց ծովության չմղի, իսկ դրամը հենց այնպես չվատնվի, նա պայման դրեց, որ այդ գումարները որպես դրամագլուխ տրվեն այն աղքատներին, որոնք սեփական գործ սկսելու ցանկություն կհայտնեն³: Այսպիսով, Պ. Նուբարը չքավորության ճիրաններից փրկեց բազմաթիվ հայերի և խթանեց արհեստների ու մանր բիզնեսի զարգացմանը: «»

1904 թ. նոր կոտորածներ պատուհասեցին հայոց արծվաբույն Սասունին: Կահիրեում կազմակերպվեց հանգանակություն՝ «Տարոնյ աղետալներուն» օգնելու նպատակով: Բարերարը նվիրաբերեց 300 ոսկի, որը պատկառելի գումար էր այդ օրերին: 1905 թ. սկսվեցին հայ-թաթարական ընդհարումները Անդրկովկասում, որոնք նոր պատուհաս դարձան հայ ժողովրդի համար: Ի նպաստ կովկասահայ աղետյալների՝ Պ. Նուբարի նախաձեռնությամբ նոր հանգանակություն կատարվեց, և 1906 թ. հունվարի 1/14-ին հանգանակված 306 ոսկին (որից 200-ը իր նվիրատվությունն էր)⁴ ուղարկեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, որն այդ առթիվ մարտի 1-ին շնորհակալական կոնդակ ուղարկեց եգիպտահայ բարերարին⁵: 1906 թ. Մեծ հայր Կ. Պոլսի Ս. Փրկիչ հիվանդանոցին նվիրեց 100 ոսկի, իսկ պատրիարքարանին՝ 500 ոսկի⁶:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարը իր աջակցությունն էր ցուցաբերում ոչ միայն եգիպտահայ համայնքին, այլ նաև Թուրքիայի ու Կովկասի հայությանը պատուհասող անհամար և իրար հաջորդող աղետների դարմանման ազգանվեր գործին: Սակայն նա համոզվեց, որ մասնակի հանգանակություններ կատարելով կամ անհատական օգնությամբ անհնար է վերացնել այն անհուն թշվառությունը, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը XX դարի սկզբին:

Այդ հանգամանքները հաշվի առնելով՝ ազգային բարերարը մտահոգացավ հրեական Ալիանս Իզրայելիթ Յունիվերսալ (Համաշխարհային Հրեական Միություն) կազմակերպության օրինակով ստեղծել համահայկական բարեգործական մի ընկերություն, որը ժամանակին օգնության կհասներ աղետների դեպքում, կնպաստեր հայության նյութական ու տնտեսական վիճակի բարելավմանը, կրթական ու մշակութային առաջընթացին: Այդ նպատակով 1905 թ. վերջերին նա Կահիրեում ստեղծեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, որի նպատակն էր. ա/ օժանդակել հայ ժողովրդի և իր հայրենիքի մտավոր և բարոյական զարգացմանը, բ/ օգնել նրանց նյութական և տնտեսական վիճակի բարելավմանը, գ/ քաջալերել այդ

² Օտեան Ե., Պողոս փաշա Նուպար, Կ. Պոլիս, 1913, էջ 12:

³ Քիրքճեան Վ., Կահիրեի աղքատախնամները, «Լուսաբեր», Կահիրե, 1905, Ապրիլ 20:

⁴ «Լուսաբեր», 1905, Դեկտեմբեր 23:

⁵ «Լուսաբեր», 1906, Ապրիլ 7:

⁶ Գարտաշյան Ա., Նիթեր Եգիպտոսի Հայոց պատմության համար, Կ. Բ. Վենետիկ-Ս. Ղազար, 1986, էջ

արդյունքները առաջ բերելուն ծառայող ամեն ձեռնարկ ու հրատարակություն⁷:

ՀԲԸՄ ստեղծումը Պ. Նուբարի լավագույն նվերն էր հայ ժողովրդին, նրա մեծագույն բարերարությունը, որը կոչված էր «...անօթին կերակրելու, մերկն հագուեցնելու, երկրագործին սերմացու, կենդանի ու հող տալու, հիւանդին դարման, որբին ապաստան տալու»⁸, ինչպես նաև նպաստելու հայ երիտասարդության կրթական ու մտավոր մակարդակը բարձրացնելու վեհ գործին:

ՀԲԸՄ հիմնումը կատարվեց ճիշտ ժամանակին: Նման ընկերության ստեղծման գաղափարը արտասահմանի հայության շրջանում արդեն բավական երկար ժամանակ քննարկման առարկա էր: Հայ բուրժուազիան քաղաքական ու հեղափոխական պայքարի միջոցով հայության վիճակը բարելավելու գաղափարը վնասակար էր համարում, քանի որ այն կարող էր նոր ջարդերի տեղիք տալ: Միյուրեքում գործող ազգի ճակատագրով մտահոգված հայ բուրժուազիայի և մտավորականության մի մասը եկել էր այն եզրակացության, որ Մայր Հայրենիքում բնակվող հայության վիճակը կարելի է բարելավել միայն Հայկական Միություն ստեղծելու միջոցով, որը չէր ունենա քաղաքական ուղղվածություն, կմիավորեր հայ ժողովրդի բոլոր խավերին ու կուսակցություններին և կաջակցեր հայության մտավոր ու տնտեսական վերելքին:

Այդ առթիվ Լ. Չորմիսյանը գրում է, որ հայ բուրժուազիան դատապարտելի էր գտնում ոչ միայն հեղափոխական մեթոդը, այլ նաև ընդհանրապես քաղաքական գործունեությունը, և նրանց մեջ տարածված էր այն մտայնությունը, թե կարելի էր հասնել ժողովրդի կյանքի բարելավմանը առանց հրապարակային, հստակ քաղաքական ծրագիր կազմելու և հետապնդելու, ապաքաղաքական գործունեությամբ, «որ խորքին մեջ քաղաքականութեան կերպ մըն էր, բայց յստակ բանաձեւումով մը հռչակուած չէր»⁹: Նրանք ոգեշնչված էին հատկապես 1860 թ. Փարիզում ստեղծված Համաշխարհային Հրեական Միության օրինակով, որի գործունեությունը բավական արդյունավետ եղավ ցարական Ռուսաստանում կազմակերպված հրեական ջարդերից հետո:

Հայկական Միություն ստեղծելու գաղափարը սկսեց արծարծվել հայկական մամուլում: 1904 թ. վերջերից նման միություն ստեղծելու հարցը սկսեց արծարծել Ա. Չոպանյանը՝ իր հրատարակած «Անահիտ» ամսագրում¹⁰: Նա գտնում էր, որ միության կենտրոնը պետք է լինի Փարիզը, ուր կար ազատ գործունեություն ծավալելու հնարավորություն, և հավաքված էին բազմաթիվ ականավոր հայ գործիչներ:

Նրան արձագանքեցին բազմաթիվ հայ պարբերականներ, այդ թվում՝ եգիպտահայ մամուլը՝ «Լուսաբեր», «Շիրակ», «Ազատ բեմ»: Նրանք բոլորն էլ պաշտպանեցին Ա. Չոպանյանի տեսակետները և գտնում էին, որ կենտրոնը պետք է լինի Փարիզը: Միայն Վենետիկի Մխիթարյանների օրգան «Բազմավեպ»-ը զարգացրեց այն միտքը, որ Հայկական Միության ստեղծման ամենահարմար վայրը կարող է լինել Ե-

⁷ Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1931, Բարիզ, 1935, էջ 25:

⁸ Գարսաշյան Ա., նշվ. աշխ., էջ 183:

⁹ Չորմիսյան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Կ. Գ. Պէրոյթ, 1975, էջ 115:

¹⁰ Չոպանեան Ա., Մարդ մը, «Անահիտ» հանդէս, Փարիզ, 1904, Նոյեմբեր: Նույնի, Բառ մը պ. Չերազին, «Անահիտ», 1905, Փետրուար:

գիպտոսը, ուր կար բազմամարդ ու մշտական հայ համայնք, մոտ էր գտնվում հայրենիքին, ինչպես նաև կար գործունեություն ծավալելու ազատություն, իսկ հայերը այնտեղ պետական, քաղաքական ու տնտեսական ասպարեզներում բավական բարձր դիրք ունեին¹¹:

1905 թ. սկզբին Հայկական Միություն ստեղծելու գաղափարը տեսականից գործնական հողի վրա փորձեց դնել կովկասահայ մեծահարուստ Ա. Ծատուրյանը, որը Լոնդոնում հիմնեց Հայկական Միություն (Armenian Alliance): Սակայն այն չկայացավ և լուծարվեց երեք նիստերից հետո: Հայկական միություն ստեղծելու նպատակով հավաքներ կազմակերպեցին նաև Եգիպտոսի հայ մտավորականները, նույնիսկ ստեղծեցին հանձնախումբ՝ մշակելու ծրագիրն ու կանոնադրությունը, սակայն այդպես էլ չկարողացան կազմակերպությունը գլուխ բերել:

Պ. Նուբարը ևս գիտակցում էր նման կազմակերպության անհրաժեշտությունը, քանի որ տեսնում էր, թե ինչպես են աղետները իրար հետևից պատուհասում հայ ժողովրդին, իսկ օգնությունը միշտ ուշ էր տեղ հասնում, քանի որ հանգանակությունները դանդաղ էին ընթանում: Հանգանակված գումարների մի մասն էլ փոշիանում էր մինչև տեղ հասնելը, և դա ավելի էր վատացնում աղետյալների վիճակը: Դրամահավաք էին կազմակերպում նաև հեղափոխական կուսակցությունները, որոնց հավաքած գումարների մեծ մասը կորչում էր անհայտ ուղղություններով: Վերակազմյալ հնչակյանները նույնպես քանիցս նրան դիմեցին դրամ ստանալու պահանջով, բայց Պ. Նուբարը, չնայած եղած սպառնալիքներին, միշտ մերժողական պատասխան տվեց, քանի որ վնասակար էր համարում հեղափոխական ամեն տեսակի գործունեությունը:

«Այս քառասային վիճակին մեջը կ'ապրեինք,- գրում է ՀԲԸՄ հիմնադիրներից Ե. Աղաթոնը,- երբ օր մը, ողբացեալ Պօղոս փաշան, յուսահատ եւ դառնացած, ըսաւ.- Մենք այս չարիքին առաջքը չպիտի կրնանք առնել, գէթ ջանանք անոր ցաւալի հետեւանքները դարմանել: Եւ այդ վայրկեանէն միտքը դրաւ «Ալիանս Իզրաէլիթ»ի նման ընկերութիւն մը կազմել՝ որու մասին տարիներ առաջ խօսուած էր արդէն»¹²:

ՀԲԸՄ հիմնադրումից երեք տարի անց անդրադառնալով Միության ստեղծման պատճառներին, Վարչության տեղեկագիրը նշում է, որ հիմնադիրները «ուզեցին մանաւանդ լրացնել պակաս մը՝ ազգային բազմաշատ եւ ստիպողական պետքերը ուսումնասիրելու, ինչպես նաև անոնց հարկադրած դարմանները հոգալու: Մեր շատ մը ազգային ընկերակցութիւնները, որոնք տեղական խնդիրներու կամ մասնաւոր նպատակի մը համար կազմած են, իրենց անձուկ միջոցներով եւ սահմանափակ գործունեութեամբ չէին կրնար բնականաբար ընդգրկել ազգային յեղաշրջումի ընդարձակ գործը: Այս պատճառաւ վաղուց ըմբռնուած էր ազգային ընդհանուր Միութեան մը կարելոյրութիւնը: Այս մտածումը ունենալով երեք տարի առաջ յղացանք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գաղափարը՝ անջատ դաւանական կամ դասակարգային խնդիրներէ, եւ իր գոյութեանը մէջ անկախ ազգային իշխանութիւններէն կամ ռեւէ կուսակցական ազդեցութիւններէն»¹³:

¹¹ Գաղափար մը եւ բարեփոխումները, «Բազմավեպ», Վենետիկ-Ս. Ղազար, 1905, թիւ 3, էջ 105-110:

¹² Աղաթոն Ե., Ինչ կը խորհին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հիմնադիրները, Փարիզ, 1933, էջ 26:

¹³ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն: Եռամեայ տեղեկագիր, Գահիրէ, 1909, էջ 7-8:

Կահիրեում Պ. Նուբարի կողմից ՀԲԸՄ ստեղծելու լուրը եկեղեցու բեմից առաջինը ժողովրդին ավետեց Եգիպտոսի թեմի առաջնորդ Մկրտիչ Աղավնունին՝ 1905 թ. դեկտեմբերի 10-ին: Նա հայտնեց, որ հիմնադիր-նախագահն արդեն միության դրամարկը է մուծել 1000 ոսկի, որից 200 ոսկին անմիջապես պետք է հանձնվեր «Կովկասի արկածելոց նպաստ հանգանակող հանձնախմբին»¹⁴, ինչպես նաև հանձն է առել ամսեկան 20 ոսկի մուծել կազմակերպությանը:

ՀԲԸՄ հիմնադրության լուրը մեծ խանդավառությամբ ընդունվեց հայ հասարակության կողմից: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը ընծայված սրտաբուխ ընդունելությունը «Լուսաբեր»-ի հոդվածագիրը բացատրում է ազգային լուրջ կազմակերպության ստեղծման գաղափարի բավական հասունացած և իրականացման ժամանակը հասած լինելով¹⁵:

Չնայած որ սկզբում դեռևս չէր հրապարակվել ծրագիրը, կանոնագիրը և մյուս հիմնադիրների անունները, «...բայց Պօղոս փաշա Նուպարին նախագահությունը, այդ օրերին գրում էր նշանավոր գրող, հասարակական-քաղաքական գործիչ Ա. Արփիարյանը, երաշխավորություն մըն է թէ լուրջ ձեռնարկի մը հանդէպ կը գտնուինք»¹⁶:

Պ. Նուբարը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն բարեգործությունների ու բարձր դիրքի, այլև իր գործնականության շնորհիվ: 1906 թ. հուլիսին Ա. Արփիարյանը գրում է, որ Պ. Նուբարը իր մեծ իմացականությամբ, ընկերական բարձր դիրքով, բյուրեղային պատվասիրությամբ, ազգին մատուցած ծառայություններով անգուցական անձնավորություն էր, որի կողմը սուրաց ամեն հայի մտածմունքն ու հույսերը¹⁷:

Եվ Պ. Նուբարի հեղինակության շնորհիվ ՀԲԸՄ-ը մեծ ոգևորությամբ ընդունվեց ոչ միայն եգիպտահայության, այլ նաև ամբողջ հայության կողմից: Հրապարակագիր Լ. Մկրտիչյանը ևս վկայում է, որ այդ հաստատության սկզբնական հաջողության առաջին պատճառը հիմնադրի հանդեպ եղած բացարձակ վստահությունն էր¹⁸:

Նոր կազմակերպության ստեղծմանը ուրախությամբ արձագանքեց նաև Ա. Չոպանյանը, չնայած դեռևս հրապարակված չէր ՀԲԸՄ կանոնադրությունն ու նպատակները: Նա ավելի ճիշտ էր համարում, որ նման ընկերության կենտրոնը Փարիզը լինելը, «բայց Պօղոս փաշայի պէս անձնավորութեան մը գործին գլուխն անցնիլը հասկանալի կը դարձնէ որ առ այժմ ընկերութեան հիմունքը հաստատուի Գահիրէի մէջ»¹⁹:

Մինչ համահայկական կազմակերպության ստեղծելը Պ. Նուբարը մանրամասն ծանոթացավ Ալիանս Իզրայելիթ Յունիվերսալի կանոնադրությանը և գործունեությամբ

¹⁴ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն, «Լուսաբեր», 1905, Դեկտեմբեր 12:

¹⁵ Կիլիկեցի, Հայկական Բ. Ը. Միությունը, «Լուսաբեր», 1905, Դեկտեմբեր 21:

¹⁶ **Արփիարեան Ա.**, Կարկառուած ձեռք, «Լուսաբեր», 1905, Դեկտեմբեր 14:

¹⁷ **Հայկակ**, Գործ մը՝ կոթող մը, «Լուսաբեր», 1906, Յուլիս 7:

¹⁸ **Մկրտիչեան Լ.**, Բարեգործականին յաջողութեան գաղտնիքները, «Միություն», 1926, Յունուար-Յունիս, էջ 41:

¹⁹ «Անահիտ» հանդես, Ը տարի, 1906, Յունուար-Փետրուար, էջ 27:

յանը: Ե. Աղաթոնը բարերարին ներկայացրեց տարիներ առաջ իր կազմած Հայկական Միության ծրագիրը, որը խմբագրել էր Լ. Մկրտիչյանը: Սակայն Պողոս Նուբարը բոլորովին այլ ծրագիր պատրաստեց և ստեղծեց խմբագրական խորհուրդ, որի մեջ ընդգրկեց Յաղուբ Արթին փաշային, Կարապետ բեյ Շերիտճյանին, Մկրտիչ Անդրանիկյանին, Երվանդ Աղաթոնին և Նազարեթ Տաղավարյանին²⁰:

Ինչպես տեսանք, ՀԲԸՄ-ը հիմնվեց դեռևս 1905 թ. դեկտեմբերին, սակայն նրա պաշտոնական ստեղծումը, հիմնադիր ժողովը տեղի ունեցավ 1906 թ. ապրիլի 15-ին և հաստատեց Միության կանոնագիրը: Առաջին ատենագրությունը վկայում է. «Այսօր, 15 Ապրիլ, 1906, Ս. Զատիկի առաջին օրը, ստորագրեալքս, ի Գահիրե, Նորին Վսեմ. Պողոս Բաշայի ապարանքը, կազմեցինք ընկերություն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ...: Ընկերութեան Վարչական առաջին ժողովը բաղկացած է Կանոնագրիս 10-րդ Յօդուածին մէջ նշանակուած 10 անդամներէն և այսօրուրնէ Ընկերութիւնս կազմակերպեալ հոչակուած է»²¹:

Այդ ժողովին մասնակցեցին և հիմնադիր փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին հետևյալ անձինք. Պողոս Նուբար փաշա (ատենապետ), Յաղուբ Արթին փաշա (1842-1919, փոխատենապետ), Երվանդ բեյ Աղաթոն (1860-1935, փոխատենապետ), Առաքել բեյ Նուբար (1881-1954, գանձապահ), դոկտոր Նազարեթ Տաղավարյան (1862-1915), Մկրտիչ Անդրանիկյան (1851-1939), Գրիգոր Եղիայան (1833-1911), Կարապետ բեյ Շերիտճյան (1851-1926), Մկրտիչ բեյ Մարկոսոֆ (1849-1919), Հովհաննես բեյ Հակոբյան (1855-1917):

Կանոնագիրն ուներ մի քանի անփոփոխելի պայմաններ. 1. Ընկերությունը մարդասիրական հաստատություն է, որևէ քաղաքական կամ առևտրական հանգամանք չունի, 2. Ընկերության հիմնական դրամագլուխը անձեռնմխելի է: Այդ դրույթների շնորհիվ Պ. Նուբարը կարողացավ իր ստեղծած կազմակերպությունը պահել բարեգործական ուղու վրա՝ հեռու քաղաքական խարդավանքներից, և ապահովեց նրա հարատևությունն ու հետագա բարգավաճումը՝ անձեռնմխելի դրամագլխի շնորհիվ:

ՀԲԸՄ կանոնագիրը հաստատելու համար դեռևս ապրիլի 12-ին Պ. Նուբարը և Յաղուբ Արթին փաշան պաշտոնապես դիմել էին Եգիպտոսի իշխանություններին: Ներքին գործերի նախարար Մուստաֆա Ֆեհմի փաշան մայիսի 7-ին պաշտոնական պատասխան ուղարկեց, որտեղ նշված էր. «Կը շնորհաւորեմ զՁեզ որ Հայոց նիւթական եւ բարոյական վիճակի բարելաւման հոգածու կը գտնուիք, եւ Կառավարութիւնն ընդունելով այդ գործին օգտակարութիւնը՝ յաջողութիւն կը մաղթէ անոր»²²:

Այսպիսով, 1906 թ. ապրիլի 15-ին պաշտոնապես հիմնվեց ՀԲԸՄ, որի հիմնադիրները հանդիսացան եգիպտահայ մի խումբ մեծահարուստներ: «Շատ մը գաղափար չունէինք այդ կարգի ուժերէ կազմուած մարմնոյ մը յարատեւութեան եւ օգտակարութեան վրայ,- գրում է Մ. Նաթանյանը,- բայց շատ չանցած մեր այդ կարծիքը

²⁰ Մեղրոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, 2005, էջ 34-35:

²¹ Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 1906-1913, Գահիրե, 1914, էջ 29:

²² Կանոնագիր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Աղեքսանդրիա, 1906, էջ 3:

փոխուեցաւ...: Գործին գլուխը կը գտնուէին արդարեւ, այնպիսի հոյակապ դէմքեր եւ անձնատրութիւններ, եւ անոնք այնքան սրտովին նուիրուած եւ փարած էին Հ.Բ.Ը. Միութեան, որ անիկա Հայ կեանքի մէջ նոր դարաշրջանի մը սկիզբը եղաւ»²³:

Պ. Նուբարը իրեն հատուկ եռանդով ձեռնամուխ եղավ Բարեգործականի ծավալման ու զարգացման գործին, և առաջին արդյունքները երևան եկան շատ կարճ ժամանակում:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, 1908 թ. ՀԲԸՄ-ը 100.000 ֆրանկի օգնություն ուղարկեց Օսմանյան կայսրության ամենավատ վիճակում գտնվող հայկական համայնքներին: 1909 թ. Կիլիկիայի կոտորածներից հետո Պ. Նուբարը հանգանակություն կազմակերպեց և 8.500 ոսկու օգնություն ուղարկեց ադետյալներին: Բարեգործականը ոչ միայն առաջինը կիլիկիահայերին օգնություն հասցրեց, այլև, արհավիրքի օրերին անհրաժեշտ կարիքները հոգալուց հետո, որբերի ու այրիների համար ստեղծեց ապրուստի մնայուն աղբյուրներ՝ արհեստանոց, որբանոց և այլն: Պ. Նուբարի սկզբունքն էր. մարդկանց ապահովել աշխատանքով, այսինքն՝ հնարավորություն տալ արժանավայել ձևով հոգալու իրենց ապրուստը:

Սահմանադրությունից հետո Բարեգործականը զբաղվեց ոչ միայն արևմտահայերին նպաստներ ուղարկելով, այլ նաև «աւելի ազատօրէն նուիրուեցաւ անոնց մտաւորական մակարդակը բարձրացնելու, անոնց տնտեսական կացութիւնը բարւոքելու եւ կրթական ձեռնարկները զարգացնելու գործին»²⁴, - մեծ հույսերով 1914 թ. գրում էր Պ. Նուբարը:

1912 թ. ապրիլի 29-ին Կահիրեում տեղի ունեցավ ՀԲԸՄ 4-րդ Ընդհանուր ժողովը: Միության տեղեկագրում հպարտությամբ արձանագրված էր. «Միութեան բարգաւաճումը կը կատարուի այնպիսի արագութեամբ մը որ մեր գուշակութիւնները կը գլէ. անիկա անկեղծ եւ անձնուէր բարեկամներ ունի աշխարհիս այն ամէն կողմերը ուր մեր հայրենակիցները ցրուած են»²⁵: Այդ ժողովում, ի նշան երախտագիտության, Պ. Նուբարը հռչակվեց ցմահ նախագահ:

Արդեն 1913 թ. ՀԲԸՄ-ն ուներ 8.500 անդամներ և 142 մասնաճյուղեր, որոնք տարածված էին Արևմտյան Հայաստանում և գաղթավայրերում: 1906-1912 թթ. Միությունն ունեցավ 65.293 ոսկու մուտքեր և 24.630 ոսկու օգնություն ուղարկեց:

ՀԲԸՄ-ը հատկապես մեծ աջակցություն ցույց տվեց կրթական գործին: Այն Կ. Պոլսի Միացյալ ընկերության միջոցով Արևմտյան Հայաստանում հիմնադրեց Վանի վարժապետանոցը, Դյորթ-Յուլի որբանոց-դպրոցը Կիլիկիայում, Կենտրոնական բարձրագույն նախակրթարանը Մյուֆարդինում, ինչպես նաև 38 նախակրթարաններ քրդախոս ու թրքախոս հայկական գյուղերում, որի շնորհիվ հայոց լեզուն տարածեցին այդ բնակավայրերում: Այդ վարժարաններում սովորում էր 2000 աշակերտ:

1914 թ.՝ հայկական բարենորոգումների ծրագրի ընդունվելուց հետո, որում մեծ էր Պ. Նուբարի ներդրումը, բարերարը նախատեսում էր ավելի ընդլայնել Բարեգործականի գործունեությունը Հայաստանում: «Տարակոյս չիկայ,- նշում էր Պ. Նուբարը:

²³ Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Ադեքսանդրիա, 1924, էջ 163:

²⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 53:

²⁵ Ոսկեմատյան...1906-1931, էջ 31:

րը,- որ ապահովության վերահաստատումովը, հողագործությունը նոր թռիչ մը պիտի առնէ, եթէ գիւղացիները, մանաւանդ սկիզբները, անհրաժեշտ խրախուսանքներ գտնեն: Միութեան օժանդակությունը անոնց համար շատ օգտակար պիտի կրնայ ըլլալ, ըլլայ անոնց հող, եզ, սերմնացու եւ երկրագործական գործիքեր հայթայթելով, ըլլայ դիրացնելով կազմությունը սէնտիքաներու (syndicats), համագործակցականներու (cooperatives) եւ հողագործական վարկի դրամատոններու (caisses de credit agricoles): Նոյնպէս, Միությունը կոչուած է աւելի եւս ընդարձակելու իր մասնակցությունը դպրոցական ձեռնարկներու մէջ որ, Բարենորոգմանց Ծրագրին մէկ մասնաւոր յօդուածին համաձայն, պիտի կրնան զարգանալ՝ առանց ենթարկուելու անցեալին խոչընդոտներուն»²⁶: Նա ծրագրում էր կրկնապատկել ՀԲԸՄ կողմից Հայաստանում պահվող դպրոցների թիվը, նախատեսում էր ՀԲԸՄ մասնաճյուղեր բացել Անդրկովկասում: Այդ նպատակով այնտեղ ուղարկեց դոկտոր Ն. Տադավարյանին²⁷:

Յավոք, մեծ հայրենասերի բոլոր հույսերն ու ծրագրերը խորտակվեցին Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելով և երիտթուրքերի գործադրած հայոց ցեղասպանության հետևանքով:

1915 թ. մարտի 15-ին Պ. Նուբարը «Հայերի շահերու պաշտպանութեան» հանգանակությունը սկսեց, որի նպատակն էր օգնության ձեռք մեկնել թուրքական յաթաղանից փրկված հարյուր հազարավոր հայ գաղթականներին: Պ. Նուբարը և Բարեգործականը անուրանալի ծառայություններ մատուցեցին սովահար ու անապաստան գաղթականներին: Հատկապէս մեծ ուշադրություն դարձվեց որբերին փրկելու աշխատանքներին:

Այդ օրերին տիրող ընդհանուր թշվառության մեջ մեծ բարերարը մխիթարության նշույլ էր փորձում գտնել ՀԲԸՄ-ի կատարած ազգանպաստ գործունեության մեջ, որը կարողացավ ինչ-որ չափով մեղմել կարոտյալների տառապանքները: «Մեր վրայ խուժող բոլոր այս դժբախտությունները ցոյց տուին,- նշում էր նա,- թէ Հ.Բ.Ը. Միութեան ստեղծումը որ աստիճան կը համապատասխանէր պէտքի մը: Արդարեւ, երբ քանի մը բարեկամներու հետ 1906ին հիմնեցինք անիկա, հեռու էինք երեւակայել բնոյթն ու անհունությունը թշուառութեանց որոնց սատարելու կոչուած էր մեր Ընկերությունը այն թուականէն ի վեր: Այն ատեն մեր գլխաւոր նպատակն էր նպաստել մտաւոր եւ բարոյական զարգացմանը մեր Ասիաբնակ հայրենակիցներուն եւ օգնել անոնց իրենց նիւթական ու տնտեսական վիճակը բարւոքելու համար: Բայց պատերազմը այնքան աներեւակայելի թշուառություններու եւ զարհուրանքներու ծնունդ տուաւ, որ մեր Ընկերակցությունը հարկադրուեցաւ ընդ առաջ երթալ ամէնէն ստիպողական կարիքներուն եւ իր բոլոր ջանքերը կեդրոնացնել օգնելու համար բազմաճառար գոհերու: Հեռու վիատելէ, Միությունը, իր գործին մեծութենէն խթանուած եւ հետզհետէ շատցող իր անդամներուն հայրենասիրութեամբ սրտապնդուած, աւելի եւս մեծցաւ, թշուառութեան դէմ մղած իր պայքարէն իսկ քաղելով նոր ոյժ մը եւ նոր կորով մը»²⁸:

²⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 58, թ. 54:

²⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 91, թ. 9:

²⁸ Ոսկեմատյան...1906-1931, էջ 37-38:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ՀԲԸՄ-ն ավելի քան 100.000 դուլարի նպաստներ հատկացրեց Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած հայ գաղթականներին, Կիլիկիայում և Սիրիայում բացեց 18 որբանոցներ, դպրոցներ և հիվանդանոցներ: Իզուր չէ, որ Կիլիկիայի Սահակ Բ Կաթողիկոսը նշում է. «Եթե այսքան ցուերու մէջ սփոփանքի դոյզն պատառիկ մը կարելի է որոնել, այն ալ Բարեգործականն է, որ ի ժամու եւ տարածամու կը հասնի, ուր ցաւ եւ արտասուք կայ: Բարեգործականը Հայ տառապակիր ազգին համար Աստուածային իրական նախախնամութիւնն է, չեմ չափազանցներ եթէ ըսեմ Աստուծոյ գթութեան եւ ողորմութեան իսկական մի պատկերն էր»²⁹:

Այսպիսով, Ազգային պատվիրակության ղեկավարի դժվարին գործի հետ միասին Պ. Նուբարը չէր մոռանում աջակցել տառապյալ հայ գաղթականությանը: 1920 թ. մարտին, ազգային հերոս Անդրանիկին գրած նամակում, ազգային բարերարը տեղեկացնում էր, որ ինքը կրկին 100.000 ֆրանկ է նվիրել՝ գաղթականներին օգնելու նպատակով, բայց ցավ էր հայտնում, որ դա չափազանց քիչ էր՝ օրեցօր ավելացող հսկայական կարիքների առկայության պատճառով³⁰:

Հատկապես ծանր էր որբերի վիճակը: ՀԲԸՄ բյուջեի մեծ մասը հատկացվեց որբանոցները պահելուն: Որբերի վիճակը բարդանում էր նաև նրանով, որ չափահաս դարձող երեխաներին չէր կարելի միանգամից դուրս հանել որբանոցներից, քանի որ «Այս տեսակ լքում մը զանոնք ենթակայ պիտի ընէր բարոյական եւ նիւթական բազմապիսի վտանգներու»³¹, - ՀԲԸՄ 12-րդ Հնդհանուր ժողովում ասաց Պ. Նուբարը, բայց նաև նշեց, որ երկար պահելը կարող է վարժեցնել նրանց ծույլ և անպատասխանատու կյանքի: Նա հարցի լուծումը համարեց որբերին արհեստներ սովորեցնելու, և դրանով իսկ նրանց սեփական աշխատանքով հաց վաստակելու հնարավորություն տալու մեջ: Նրա նախաձեռնությամբ որբանոցների սաներին սկսեցին ուսուցանել արհեստներ, իսկ որբանոցից դուրս գալու ժամանակ նրանց որոշակի գումար էր տրվում, որպեսզի կարողանային սեփական գործ սկսել:

1924 թ. Պ. Նուբարը 1.000 ոսկի նվիրեց Կ. Պոլսի Գալֆայան որբանոցին՝ որբերի վիճակը բարելավելու համար³²: Իսկ 1924 թ. հոկտեմբերին բարերարը հանդես եկավ դեկտեմբերի 7-ը որպես «Որբերի կիրակի» նշելու և այդ օրը հոգուտ որբանոցների հանգանակություն կազմակերպելու կոչով: Դրանից հետո ամեն հոկտեմբերին նա շրջաբերական էր հրապարակում, որով բոլոր հայերին կոչ էր անում դեկտեմբերի առաջին կիրակի օրը որբերի համար նվիրատվություններ կատարել: Այդ հանգանակությունների շնորհիվ հնարավոր դարձավ մեծացնել որբանոցների բյուջեները և բարելավել հայ մանուկների վիճակը:

Հայ ժողովրդին պատուհասած մեծ աղետից ու Հայկական հարցի ձախողումից ընկրճված և ուժասպառ, Պ. Նուբարը 1921 թ. հեռացավ ոչ միայն Ազգային պատվիրակության նախագահի պաշտոնից, այլև թողեց բոլոր անձնական գործերը: Նա ամբողջովին նվիրվեց Բարեգործականին՝ «ամոքելու համար ճակատագիրը հազա-

²⁹ Հ. Բ. Ը. Միությունը եւ իր գործը, Պոսթոն, 1921, էջ 13:

³⁰ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 7:

³¹ «Միություն», 1924, Յունուար-Փետրուար, էջ 6:

³² Գարաշյան Ա., նշվ. աշխ., էջ 180:

րաւոր զոհերուն՝ պատերազմին եւ անոր ահաւոր հետեւանքներուն,- դառնությամբ նշում էր նա 1922 թ. նոյեմբերին՝ ՀԲԸՄ 11-րդ Ընդհանուր ժողովում,- որ մեր աչքերուն առջեւ օրէ օր տակաւին կ'աճին իրենց ամբողջ ահաւորութեան մէջ: Կը յուսամ որ իմ մնացած ուժերս պիտի թոյլատրեն ինծի այդ բանը մինչեւ վերջին շունչս, եւ ահա թէ ինչով կը բացատրուի որ, ամէն բանէ քաշուելէս յետոյ, այսօր տակաւին ձեր մէջ՝ պաշտօնիս գլուխը կը գտնուիմ»³³:

Պ. Նուբարը 1921 թվականից իր ամբողջ եռանդը նվիրեց ՀԲԸՄ հզորացմանն ու ծավալմանը, և արդեն 1925 թ. Բարեգործականի դրամագլուխը 300.000 անգլիական ոսկի էր, իսկ 1931 թ.՝ 854.773 ոսկի: Առողջության վատթարացման պատճառով, 1928 թ. մայիսի 17-ին Պ. Նուբարը հրաժարական տվեց Միության նախագահի պաշտոնից, իսկ Կենտրոնական վարչական ժողովը հունիսի 1-ին նրան հռչակեց ցմահ պատվավոր նախագահ և մեծ բարերար³⁴:

Մահվանից մի քանի օր առաջ՝ վերջին պատգամում, Պ. Նուբարը հպարտությամբ նշում էր. «Երբ հիմնեցի ան (ՀԲԸՄ - Ս.Պ.), 1906ին..., չէի համարձակեր պատրանքն իսկ ունենալու թէ օր մը ան պիտի կրնար ըլլալ ինչ որ եղած է այժմ, մեր ազգային մեծագոյն մեքենան բարեգործութեան եւ օգնութեան մարզին մէջ. կը խոստովանիմ որ արդիւնքները ամէն ակնկալութիւն գերազանցեցին»³⁵:

Իսկապէս, ՀԲԸՄ-ը գերազանցեց բոլոր սպասումները, քանի որ այն դարձավ Մփյուռքի ամենահզոր հասարակական կազմակերպությունը, որի մասնաճյուղերը տարածվեցին հայկական բոլոր համայնքներում և մեծ դեր խաղացին սփյուռքահայության կրթական ու մշակութային առաջընթացի գործում, ինչպէս նաև, այն մեծ աջակցություն ցուցաբերեց Խորհրդային Հայաստանին՝ վերաշինության և ներգաղթի կազմակերպման գործում: Այն իր փառահեղ գործունեությամբ անմահացրեց հիմնադրի՝ Պողոս Նուբարի անունը:

³³ Ոսկեմատյան...1906-1931, էջ 36:

³⁴ **Գարտաշյան Ա.**, նշվ. աշխ., էջ 181:

³⁵ Ոսկեմատյան...1906-1931, էջ 11:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ (1915-1922 ԹԹ.)

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի և Ավստրիայի խմբավորմանը միացավ նաև Թուրքիան, որի գլխավոր նպատակն էր գրավել Անդրկովկասը: Պատերազմի սկզբնական շրջանում, հատկապես 1914 թ. վերջերին, թուրքերի հարձակողական գործողությունները որոշակի հաջողություն ունեցան: Էնվեր փաշայի ղեկավարությամբ թուրքերը կարողացան մտնել Սարիղամիշ-Կադզվանի շրջանները և լուրջ մտադրություն ունեին հարձակվելու Արարատյան դաշտի, իսկ հետո՝ Վրաստանի վրա: Հայաստանում և Վրաստանում տագնապալի վիճակ ստեղծվեց: Անդրկովկասում Ռուսաստանի փոխարքա, իշխան Վորոնցով-Դաշկովը, Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսյանը և մեծ թվով ազդեցիկ գործիչներ ու հարուստներ հեռացան Թիֆլիսից: Ոմանք մեկնեցին Բաքու, շատերն էլ ապաստան գտան Հյուսիսային Կովկասում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Հինգերորդ Տփլիսեցին (Կթդ. 1912-1930 թթ.) պաշտոնական առաջարկություն ստացավ մեկնելու Էջմիածնից: Բայց Կաթողիկոսը մերժեց այդ առաջարկությունը և որոշեց մնալ Էջմիածնում: Ռազմաճակատում շուտով իրավիճակը փոխվեց: Ռուսական զորքերը հայ կամավորների եռանդուն աջակցությամբ հզոր հակահարձակման անցան և Սարիղամիշի տակ ջախջախիչ պարտության մատնեցին թուրքերին, որոնք խուճապահար նահանջեցին դեպի Էրզրում: Հարձակման անցած 110000 թուրք զինվորներից Էրզրում հասան միայն 12000-ը:

Չնայած դրան, Կաթողիկոսը որոշում կայացրեց ապահովության համար վանքի ձեռագիր մատյանները տեղափոխել Մոսկվա, որոնք այդ ժամանակ պահվում էին բարերար Ավան Յուզբաշյանի կառուցած մատենադարանի շենքում: Երբ ձեռագրերը գնացքով հասցվեցին Մոսկվա, տեղի հայոց եկեղեցական խորհուրդը և «Հայկական կոմիտեն» որոշեցին դրանք պահել Սուրբ Խաչ եկեղեցում, որը գտնվում էր Հայկական նրբանցքի («Արմյանսկի պերեուդկ») վրա: Դժբախտաբար տարիներ անց Ռուսաստանում սկսված հակաեկեղեցական շարժման ժամանակ հիմնահատակ ավերվեց նաև այդ եկեղեցին: Մոսկվաբնակ մեծահարուստներ՝ Հովհաննես և Նիկողայոս Ժամհարյանները առաջարկեցին ձեռագրերը պահել իրենց ամրակուռ պատերով կառուցված բանկի նկուղի երկաթե պահարաններում: Բայց Գևորգ Կաթողիկոսը մերժեց այդ առաջարկությունը, և ձեռագրերը գետեղեցին Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր վարչության և դպրաց դասի շապիկների սենյակներում: Դա խելացի որոշում էր, և դրանով ձեռագրերը ազատվեցին հնարավոր թալանից, որին հեղափոխության

Ժամանակ ենթարկվեց Մոսկվայի բանկերի մեծագույն մասը:

Մոսկվայում ձեռագրերի պահպանմանը եռանդուն մասնակցություն է ունեցել նաև տեղի հայ եկեղեցականներից Արսեն ավագ քահանա Սիմոնյանցը, որը հետագայում, տեղափոխվելով ԱՄՆ (Բոստոն), թղթակցություն է ուղարկել Բոստոնում հրատարակվող «Հայրենիք Ամսագիր» պարբերականին: 1966 թ. հունիս ամսվա համարում այդ ամսագրում լույս է ընծայվում Արսեն քահանայի թղթակցությունը, որի մեջ մանրամասն նկարագրված է հետագայում Էջմիածնում հավաքված մյուս ձեռագրերի հետ պետականացված և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հիմնական մասը հանդիսացող Էջմիածնի վանքի մատյանների մոսկովյան ուղիսականը:

Ըստ այս թղթակցության, Էջմիածնից Մոսկվա փոխադրվող ձեռագրերին ուղեկցել են Էջմիածնի սինոդի անդամներ Մատթեոս արքեպիսկոպոս Մատթեոսյանը, Բաբկեն ծայրագույն վարդապետ Աղավելյանը, Արսեն ավագ քահանա Սիմոնյանցը և մի քանի աշխարհականներ: Ձեռագրերը զետեղված են եղել հատուկ այդ նպատակով կառուցված թիթեղապատ ամրակուռ 137 սնդուկների մեջ: Դրանցով էլ նրանք 1922 թ. վերադարձվեցին Էջմիածին: 1939 թ. երբ ձեռագրերը տեղափոխվեցին Երևան՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի ձեռագրատանը հատկացված հարկաբաժինը, օգտագործվեցին նաև այդ սնդուկները: Հայրենական պատերազմի ժամանակ նույն սնդուկներով ձեռագրերը իջեցվեցին գրադարանի ներքնահարկը, իսկ երբ կառուցվեց Մատենադարանի ներկա շենքը, սնդուկները դարձյալ օգտագործվեցին ձեռագրերի փոխադրման համար: Հետո դրանք պահվում էին Մատենադարանի ներքնահարկերից մեկում և խոնավության պատճառով լիովին փչացան ու քայքայվեցին: Այդ սնդուկներից այժմ մնացել են հինգ հատ, որոնցից մեկը գտնվում է Մատենադարանի ձեռագրատանը, մյուսները՝ Հայաստանի Ազգային գրադարանի պահոցներից մեկում:

Ստորև հրապարակում ենք Արսեն ավագ քահանա Սիմոնյանցի սույն հուշագրությունը:

ԱՐՄԷՆ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԻՄԷՕՆԵԱՆՑ

**ԷԶՄԻԱՇՆԻ ԹԱՆԿԱՐԺԷՔ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ**

1914ի վերջերը Ռուս-տաճկական պատերազմի սկզբին, թուրք զինուորները, Էն-վեր փաշայի զլխաւորութեամբ, սպիտակ սաւաններու մէջ փաթաթուած, ձիւնի վրայով աննկատելիօրէն յարձակում գործեցին Ռուսիոյ վրայ, պատռեցին ճակատն, անցան ռուսական սահմանագլուխն ու մտան Սարիղամիշ-Կադզուան եւ այլ հայաբնակ շրջանները:

Մեծ խուճապ ստեղծուեցաւ ոչ միայն սահմանագլուխին մօտիկ վայրերում, այլ մինչեւ անգամ Անդրկովկասի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ: Փոխարքայ Վորոնցով-Դաշկովը, Թիֆլիզի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը եւ ուրիշներ հեռացան Թիֆլիզից ու Բագու ապաւինեցին:

Գեորգ Ե. Վշտակիր Կաթողիկոսին եւս առաջարկուել էր թողնել Ս. Էջմիածինն ու առժամանակ փրկութիւն գտնել աւելի հեռուները: Ծերունագարդ Հայրապետը, սակայն, պատասխանել էր. «Ես Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ոչ մի տեղ չեմ երթայ: Թուրքերը թող գան ու ինձ յօշոտեն Ս. Էջմիածնի վանքի պարիսպների տակ»:

Ինչպէս գիտենք, Էնվեր փաշային չյաջողուեց աւելի առաջ անցնել: Ռուսական բանակը եւ հայ կամաւորները իրենց կատաղի հակադարձակումով խորտակեցին թշնամու ոյժն ու ահաւոր զոհեր խլելով թշնամուց՝ դուրս վտարեցին նրան Հայաստանի սահմաններից:

Այնուամենայնիւ, Գեորգ Ե. Կաթողիկոսը, նկատի ունենալով որ պատերազմը յղի էր ամէն տեսակ անակնկալներով, ապահովութեան համար Մոսկուա դրկեց մեր բոլոր ձեռագիրները, որոնք պարփակուած էին բարերար Աւան Իւզբաշեանի կառուցած նոր մատենադարանին մէջ:

Այս առթիւ Կաթողիկոսի Դիւանը հաղորդակցութեան մէջ մտաւ Մոսկուայի հայ եկեղեցիի հովիւների՝ Սեդրակ քինյ. Աղբալեանի ու տողերս գրողի հետ: Մոսկուայի Հայոց եկեղեցական խորհուրդի ու նոր կազմուած «Հայկական կոմիտէի» հետ այս հարցը լուրջ քննարկութեան ենթարկուեցաւ: Եկանք այն եզրակացութեան, որ մեր ձեռագիրներու ամենաապահով վայրը կամ Մոսկուայի կենտրոնում Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցին է, կամ Մոսկուայի կենտրոնից բաւականաչափ հեռու գտնուող Ս. Աստուածածին եկեղեցին, ուր տարին միայն մի քանի օր Պատարագ էր մատուցում:

Սակայն, Հայկական կոմիտէի անդամ Ժամհարեան եղբայրները՝ Յովհաննէսը և Նիկողայոսը, առաջարկեցին իրենց բանքայի սէյֆերի նկուղը, որը գերծ էր ամէն տեսակ անակնկալներից եւ այն աստիճան ապահով էր, որ ոչ հրդեհը, ոչ ռմբակոծութիւնը եւ ոչ էլ թնդանօթաձգութիւնը կարող էին վնասել:

Մեծամասնութիւնը յարեց այս վերջին առաջարկութեան, մանաւանդ որ լաւագոյն ապահովութեան հետ միասին ծախքեր էլ պէտք չէ լինէին:

Այս առաջարկների մասին հաղորդուեց Վեհափառ Հայրապետին: Միանգամայն անսպասելիօրէն Վեհափառը մերժեց եղբայր Ժամհարեանների առաջարկը եւ հրահանգեց **ձեռագիրները անպայման տեղաւորել երկու եկեղեցիներից մէկի մէջ:**

Որոշուեց Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ գտնուող հոգեւոր վարչութեան եւ դպրաց դասի

շապիկների՝ երկու խոշոր եւ բարձր սենեակները յատկացնել այդ նպատակին:

Հետագայ դեպքերը ցոյց տուին, թէ որչափ աւելի իմաստուն էր Գեորգ Ե. Կաթողիկոսի որոշումը, որով նա դէմ եղաւ բացարձակապէս մեր ձեռագիրները ի պահ դնելու Ժամհարեանների բանքայի մէջ: Բոլշեւիկեան յեղափոխութիւնից յետոյ, շատ շուտով Ռուսիոյ բոլոր բանքաների դռները մէկ օր փակուեցին իրենց տերերի ու ժողովուրդի առջեւ: Եթէ ձեռագիրները այնտեղ լինէին, ով գիտէ որի՞ ձեռքը պիտի ընկնէին նրանք:

1915ի, որչափ կը յիշեմ, փետրուարի վերջերը կամ մարտի սկիզբը ձեռագիրները հասան Մոսկուա Ս. Էջմիածնի Սինոդոսի երկու անդամներու՝ Մատթէոս Արք. Մատթէոսեանի ու Բաբգէն Ծայր. Վրդ. Աղաւելեանի եւ մի քանի աշխարհականների ուղեկցութեամբ:

Անմիջապէս վարձուեցան ապրանքատար ձիաքարշ գոց կառքեր: Բոլոր ազգային մարմինների եւ կազմակերպութեանց վարչութիւնները որոշեցին գաղութի վստահելի անձերից երկ-երկու հոգի կառքերու մէջ նստեցնել իբրեւ հսկիչներ՝ ձեռագիրները կայարանից մինչեւ եկեղեցի բերելու համար: Առանց որեւէ միջադէպի կառքերը անփորձ հասան եկեղեցւոյ բակը ու տեղաւորուեցան Ս. Խաչ եկեղեցւոյ յիշեալ երկու սենեակների մէջ:

ձեռագիրները զետեղուած էին 137 սնդուկների մէջ, արտաքուստ թիթեղով պատած: Ամենքն էլ կնքուած էին Մայր Աթոռի եւ Սինոդոսի կնիքներով: Մեզ յայտնեցին, որ սնդուկների մէջ միայն ձեռագիրներ են:

Սենեակների դուռները կնքուեցին Հայոց Հոգեւոր կառավարութեան կնիքով եւ Մոսկուայի Հայց. Առաք. Ս. Խաչ եկեղեցւոյ խորհրդարանի կնիքով: Բանալիները յանձնուեցին Հայոց կոմիտէի ու Գասպարեան ծերանոցի վարչութեանց:

Այս ալ յիշեմ, որ ձեռագիրները նախքան այնտեղ զետեղելը, սենեակների յատակները ծածկուեցին **ազրեւստ** կոչուած հակահրդեհային հաստ թուղթերով: Բոլոր պատուհանները պաշտպանուած էին հաստ վանդակապատ երկաթներով: Մինչեւ վերոյիշեալ երկու սենեակների դուռներին հասնիլը՝ եկեղեցւոյ չորս դուռներն էլ պէտք է խորտակուէին, որոնցից մէկը հաստ երկաթէ դուռ էր:

Այնուամենայնիւ Էջմիածնից եկած պատգամաւորութիւնը բարւոք համարեց, որ սենեակների փայտէ հաստատուն դուռներից զատ՝ շինուին հրասայլեր պատրաստող Բօսն կոչուած մետաղէ երկու նոր դուռներ եւ երկու նոյն մետաղէ պատրաստուած փեղկեր երկու պատուհանների համար, ինչ որ հայ համայնքը հաճոյքով կատարեց:

Աւելին. մինչեւ ասոնց պատրաստելը՝ առ ի զգուշութիւն, պահպանութիւնը տեղի ունեցաւ Մոսկուայի հայ գաղութի վստահելի անձերի կողմից: Ցերեկը առաւօտեան ժամը 8-ից մինչեւ երեկոյեան ժամը վեցը հսկում էինք երկու քահանաներս հերթով, իսկ գիշերները՝ աշխարհականները: Այդ հսկողների մէջ էին՝ նշանաւոր նկարիչ Մարտիրոս Սարեանը, Մոսկուայի հայկական կոմիտէի նախագահ, իրաւաբան Ստեփան Մամիկոնեանը, Մոսկուայի համալսարանի ուսուցչապետներ՝ Ալեքսէյ Ջեզիլեզեանը, Ալեքսանդր եւ Միքայէլ Ներսէսեան եղբայրները, Վահան Տոտումեանը, Լեւոն Մսերեանը, ինչպէս եւ Լազարեան ձեմարանի ուսուցիչներ՝ Բարսէղ Գասպարեանը, Կարապետ Կուսիկեանը, Ստեփանոս Տէր Սարգսեանը եւ Արսէն Թումա-

նեանը:

Ձեռագիրների հսկողության հետեւում էին նաեւ եղբարք Ժամհարեանները: Նրանց բանքան երկու բաժանմունք ուներ Մոսկուայի մէջ, նաեւ մէկական բաժանմունք Պետերբուրգի եւ Խարկովի մէջ: Հիմնադիրները Յովհաննէս Ժամհարեանը ու իր եղբայրը՝ Նիկողայոսն էին: Թորոսեանը (Տարասով) եղբայրները Ռուսիոյ մէջ ունէին մեծագոյն կերպասեղէնի Առեւտրական Տուն, որի վարչութեան նախագահը ծերունագարդ Ալեքսանդր Թորոսեանն էր, Ֆրանսայի Գիտութեանց Ակադեմիայի անդամ նշանաւոր Անրի Թրուայայի մեծ հայրը. Բաղդասար Արզումանեան Առեւտր. Տան ներկայացուցիչն էր Նիկողայոս Արզումանեանը եւ Մելիքսէթ Տէր-Յակոբեանը, Եղբ. Տէր-Մկրտիչեան Առեւտր. Տան ներկայացուցիչ Աւետիս Տէր-Մկրտչեանը, Գէնջողու-ւել եւ Շապոշնիկով նշանաւոր Առեւտր. Տան ներկայացուցիչ Ստեփան Գէնջողու-ւեանը. Եղբարք Խարմաջեան Առեւտր. Տան ներկայացուցիչ Յովհաննէս Խոմաճեանը, յայտնի հասարակական գործիչ իրաւաբան Մկրտիչ Տէրեանը եւ ուրիշներ:

Երկու շաբաթից անխորտակելի մետաղեայ դուռներն ու փեղկերը պատրաստ էին, դրուեցան սենեակներուն մէջ եւ սենեակները դարձան անառիկ միանգամայն:

Մետաղեայ դուռները վերոյիշեալ հաստատութեանց կնիքներով կնքուեցան ու բանալիներն ալ յանձնուեցան վերը յիշուած երկու կազմակերպութեանց:

Մինչեւ 1917 թուի վերջերը ոչ մի միջադէպ տեղի չունեցաւ: Երբեմն սենեակների դուռները կը բացուէին բոլոր չորս պատասխանատու վարչութեանց ներկայութեան, որպէսզի ձեռագիրներուն սենեակների օդը թարմանար:

1917 թ. բոլշեւիկեան Հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան պատճառով մեր ձեռագիրները վտանգուեցան:

Ինչպէս ամեն յեղափոխութեան, նոյնպէս ե՛ւ այդ օրերուն քաղաքական բանտարկեալներուն հետ բազմաթիւ քրեական յանցագործներ բանտերէն ելած էին: Գողութիւններն ու կողոպուտները նոյնիսկ օրը ցերեկով սովորական դարձան: Հին իշխանութեան ոստիկանութիւնն ելած էր գործէն, նորը դեռ չէր կազմակերպուած: Կրեմլին մէջ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Պատրիարքարանի Թանգարանը կողոպտուեցաւ, եւ թանկագին ադամանդեայ, ոսկեայ անօթներ, հնութիւններ, ձեռագիրներ յափշտակուեցան ու հետքն անգամ չերեցաւ...

Մեր Ս. Խաչ եկեղեցւոյ վիճակը թէեւ մեծ փոփոխութեան դեռ ենթարկուած չէր, սակայն ձեռագիրների ապահովութեան պատասխանատու մարմինները այնուամենայնիւ որոշեցին պահպանութեան հսկողութիւնը առաւել եւս զօրացնել:

Այդ օրերի Մոսկուայի գլխաւոր քոմենդանտը գնդապետ Մուրալովն էր: Մեր ծխականների մէջ նրա մի բարեկամը գտանք եւ նրա միջնորդութեամբ ստացանք եկեղեցւոյ հսկողութեան համար ունենալ երեք պահապաններ, որոնց զինուորական հագուստները խոստացաւ հոգալ քոմենդանտը: Բայց նկատի առնելով, որ պետութիւնն ինքը զէնքի կարիք ուներ՝ նա ասաց. «Զէնքի խնդիրն էլ դուք հայերդ հոգացէք: Ես արգելք չունիմ դրա դէմ»:

Չափազանց դժուարին խնդիր, բայց անակնկալ կերպով նրա լուծումն էլ կատարուեց շատ դիւրաւ: Այդ օրերին իմ բնակարանի մէջ ապաստարան էր գտած Ժամանակաւորապէս Մոսկուայի հարուստներից՝ բարերարուհի Տիկ. Վարվառէ Քանանեանը իր դստեր՝ Մարիամի հետ: (Այդ տիկնոջ գործունէութեան մասին մանրա-

մասն մի գրություն ունեմ «Հայրենիք» ամսագրի 1965 թ. դեկտ. թիւին մէջ):

Երբ Տիկ. Քանանեանը լսեց, որ մենք գէնքի կարիք ունինք, ասաց, որ իր բանքայի սէջի մէջ երկու գերմանական մաուզեր ատրճանակ ունի պահած: Ասաց նաեւ, որ եթէ ես համաձայնեմ իրեն հետ երթալ բանքան ու իր սէջից հանել զէնքեր եւ յանձն առնեմ հետս վերցնել ու անփորձ բերել տուն, մէկ մաուզերը կը նուիրէ Ս. Խաչ եկեղեցիի պահպանութեան նպատակին, իսկ միւսը կ'ուղարկի Թիֆլիզ իրենց հայրական կալուածների տնօրէն Թադէոսեանին:

Յաջորդ օրը քայլելով դիմեցինք դէպի բանքան: Մասնաւոր կառքեր համարեալ կային: Տիկնոջ սէջը մի խոշոր պայուսակի մեծութիւն ունէր: Սկսեց մի առ մի հանել իրենց գոհարեղէն, որպէսզի հասնէր թագգրած ատրճանակներին, որոնք սէջի տակ կը գտնուէին: Ես ապշած էի այդ անբաւ հարստութիւնը տեսնելով: Բոլոր գոհարեղէնների տակից, վերջապէս, հանեցինք մաուզեր ատրճանակները:

1917 թ. դեկտեմբերի մէջ տեղի կ'ունենար այս ամէնը: Հիմա, որ 47 տեսակ արհաւիրքներով, հալածանքներով, բանտով ու աքսորով, անօթութեամբ ու անպատմելի զրկանքներով լեցուն տարիներ անցուցած եմ, երբ կը պատմեմ այս մասին, դարձեալ կը դողամ, կը յուզուիմ: Չեմ կարող երեւակայել, թէ ինչպէս ես վերարկուիս տակ թագգրած երկու հրազեններն անցկացրի բանքայի մէջ գտնուող բազմութեան մէջէն...

Դուրսն օդը մառախլապատ էր մեր բախտից եւ փաթիլ-փաթիլ թաց ձիւն էր տեղում: Ամէն ոք գլուխը կախած՝ տուն կ'աճապարէր եւ տրամադիր չէր սրան-նրան դիտելու: Ես այն ժամանակ 37 տարիքիս մէջն էի, կ'ուզէի թռչել, որ շուտ եւ անփորձ տուն հասնեմ: Սակայն, ինձ ուղեկցող խեղճ տիկինը արդէն եօթանասունն անցած էր ու կրիայի քայլերով կը քայլէր: Վերջապէս, մի կերպ հասանք Ս. Խաչ եկեղեցւոյ բակը, եւ մենք մեր բնակարանը մտանք քրտինքի մէջ կորած...

Այդ օրերին հետեւեալ անեկդոտը կը շրջէր.

«Մի նապաստակ, գլուխն առած, արագօրէն փախուստ էր տալիս: Հարց են տալիս, թէ ինչո՞ւ այդպէս կ'աճապարէ:

Չէ՞ք լսած,- պատասխանում է,- հրաման ելած է ուղտերի ոտքերին պայտ զարնել: 'Է', քեզ ի՞նչ: 'Հապա՞', եթէ բռնէն ինձ, ես ինչպէ՞ս ապացուցեմ, որ նապաստակ եմ եւ ոչ թէ ուղտ»:

Չափազանց խառն օրեր էին: Տեղից ելնող թշուառականը ինքն իրեն անիշխանական էր յայտարարում եւ ամէն տուն մտնում իբր թէ խուզարկութեան համար, ու կը կողոպտէր: Ամէն յանդուգն անձ իրաւունք կը համարէր փողոցի մէջ կայնեցնել ու խուզարկել դիմացինը: Նոյնիսկ Ս. Մակինցեանը կը պարծենար, որ փողոցի մէջ հարուստ Աբրիկոսովից պահանջած էր թանկարժէք մուշտակը եւ ինքն էր հագել՝ նրան տալով իր թեթեւ վերարկուն:

Տաճկահայ երեք գերիներ Սիբիրիայից ազատուած՝ եկան Մոսկուա: Նրանց կարգեցինք պահապան մեր ձեռագիրների համար: Օր ու գիշեր զինուած՝ նրանցից ամէն մէկը ութը ժամ հերթով եկեղեցւոյ շուրջը կը քալէր:

Այդ օրերին Լենինի կառավարութեան մէջ մի նոր բաժանմունք ստեղծուեց «Փոքր ազգերի կոմիսարիատ» անունով եւ Ստալինի գլխաւորութեամբ: Նա էլ «Հայկական փոքրամասնութեան» գլուխ նշանակեց նշանաւոր համայնավար գործիչ Վառլամ Ավանեսովը, որը միաժամանակ Սովետական Ռուսիոյ Կենտկոմի առաջին քարտուղարն էր: Սա եւս, չափազանց զբաղած լինելով իրեն փոխանորդ կարգած էր մեր

նշանաւոր բանաստեղծ Վահան Տէրեանը:

1918ի սկզբներն էր: Դեռ մեզ՝ հոգեւորականներին Սովետական իշխանութիւնը արգիլած չէր կրօնի դասաւանդութիւնը Լազարեան ճեմարանի եւ ուրիշ միջնակարգ դպրոցների մէջ: Օրիորդաց գիմնազիոններից մէկի մէջ եւ 12-15 աշակերտուհի ունէի, որոնց կրօնի հետ միասին նաեւ Հայոց լեզուի դասեր կը տայի: Դպրոցը գտնուում էր մի եօթյարկանի շէնքի մէջ, որտեղ եւ Հայկական Կոմիսարիատն էր: Երբեմն կը հանդիպէի վերելակի մէջ Վահանին, եւ կարճ խօսակցութիւն կ'ունենայի: Միշտ շատ համակրելի ժպիտ ունէր երեսին, բայց ոչ այնքան մտերմիկ ու ջերմ էր, ինչպէս էր նախկին տարիներին:

Վահան Տէրեանի բուն ազգանունը Տէր-Գրիգորեան էր: Ախալքալաքի գիւղերէն մէկի Գանձա գիւղի քահանայի զաւակն էր: Նրա երեք մեծ եղբայրներին ճանաչում էի: Ամենամեծը քահանայ էր եւ գիւղական կեանքից բաւական յաջող պատմութեամբ ունէր հեղինակած: Միւս եղբայրը՝ Արամը Թիֆլիսի գիմնազիայի մէջ կը սովորէր: Ներսէսն իմ ընկերն էր Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի մէջ, ուր երկուքս էլ գիշերօթիկ էինք: Ներսէսը մէկ դասարան ցածր էր ինձանից:

1901 թ., երբ եւս օգոստոսին Էջմիածնի ճեմարանը աւարտելուց յետոյ, պիտի երթայի Մոսկուա, Վահանը Լազարեան ճեմարանի դեռ երկրորդից երրորդ դասարանն էր փոխադրուած: Ներսէսը ինձ յանձնեց փոքրիկ Վահանին, որ հետո նրան անփորձ տանեմ Մոսկուա, ամառային արձակուրդներից յետոյ:

Ահա այդ օրերից սկսած՝ Վահանն իմ հսկողութեան ներքեւ կը գտնուէր: Իբրեւ Մոսկուայի Ս. Խաչ եկեղեցւոյ աւագ սարկաւագ՝ եւս կը բնակէի Լազարեան ճեմարանի դիմացը գտնուող եկեղեցւոյ բակում **Հայոց** կոչուած փողոցին վրայ: Ամէն տօնի առթիւ Վահանը մեր տուն կը գար յաճախ Մակինցեանի հետ: Նոյնը նաեւ իր ուսանողութեան շրջանին եւ ամուսնանալուց յետոյ: Այդպէս շարունակուեց մինչեւ բոլշեւիկեան յեղափոխութիւնը, երբ մեր յարաբերութիւնները աւելի պաշտօնական դարձան, թէեւ ոչ այնքան պաղ...

Մոսկուայի հայութիւնը ժողով գումարեց Լազարեան ճեմարանի խոշոր սրահներից մէկում եւ միաձայնութեամբ որոշում կայացուց, որ Մոսկուայի եւ շրջակայքի բոլոր հայերն **ազգային ինքնորոշում յայտարարեն եւ Հայ Ազգային Կոմիտէ կազմեն**: Ստացանք պաշտօնական թոյլտուութիւն էլ: Եւ բոլոր հայերիս Հայ Ազգային Կոմիտէի կնիքով պաշտօնական թուղթի վրայ վկայական տրուեցաւ՝ իրենց բնակարանների դուռների վրայ փակցնելու համար, թէ դրանք կը գտնուին Հայ Ազգային Կոմիտէի պաշտպանութեան ներքոյ: Այս կոմիտէի վարչութեան անդամներ էինք նաեւ երկու քահանաներս:

Այս մարմինը բոլորովին անկախ էր Վ. Տէրեանի գլխաւորած Ազգային Փոքրամասնութեանց Հայկական կոմիսարիատից եւ կը գտնուէր Լազարեան ճեմարանի շէնքին մէջ:

1919ի գարնան լուր տարածուեց, որ Վ. Տէրեանը մտադիր է երթալ Հիւսիս. Կովկաս իր տիկնոջ գտնելու համար: Քաղաքացիական կռիւները բաժանում էին նրանց: Տիկինը կը գտնուէր Ստաւրոփոլի շրջանի մէջ, որ ճերմակ ռուսերի ձեռքն էր: Տեսայ Վահանին, որը հաստատեց լուրը: Նա ասաց, որ իր փոխարէն Հայկական կոմիսարիատի վարիչը պիտի լինի Պողոս Մակինցեանը:

Այս լուրը այնքան էլ բարի լուր չէր: Վահանն աւելի ծանր, նաեւ լուրջ անհատականութիւն էր: Մոսկուայի Լազարեան ճեմարանի ռուսական կրթութիւնն չէր կրցած խաթարել Վահանի հայկական ոգին, թէւ նա ռուս լեզուին կը տիրապետէր այնչափ, որչափ իր մայրենի լեզուին: Երբ ռուս յայտնի գրող Մաքսիմ Գորկին առաջարկած էր նրան ռուսերէն ուսանաւորներ գրել իր հրատարակելիք ժողովածուի համար, Վահանը մերժած էր՝ ասելով. **«Ես միայն հայերէն պիտի գրեմ»...**

1918 թ. Բրեստ-Լիտովսկ քաղաքի մէջ ռուս-գերմանական դաշնագիր կնքելու ժամանակ, Վահանը Տրոցկիի նախագահութեան ներքեւ կազմուած յանձնախումբի քարտուղարներէն մէկն էր: Տրոցկիին Լենինը հրահանգած էր՝ **ի՞նչ գնով էլ լինի** հաշտութիւն կնքել Գերմանիոյ հետ: Եւ Վահան Տէրեանը ստիպուած էր ականատես լինիլ, թէ ինչպէս բոլշեւիկեան իշխանութիւնը անխղճօրէն ի վաճառ հանեց հայ ժողովուրդի ազգային գերագոյն շահերը՝ **հրամայելով հայերուն, որ առանց որեւէ կոիւի յանձնեն թուրքին Կարսը, Արդահանը, Սարիղամիշն ու շրջակայքը մինչեւ Ալեքսանդրապոլ:**

Վ. Տէրեանի հայ ոգին այս բանը չէր կարող ներել իր հարազատ հօրն ու մօրը, ո՞ր մնաց, թէ ներէր բոլշեւիկեան վարդապետութեան գլխավոր ներկայացուցիչներին:

Վ. Տէրեանը դեռ իր պաշտօնէն չէր հեռացած, երբ Մակինցեանը սկսաւ լուր տարածել գաղութի մէջ, թէ մտադիր է Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ գտնուող ձեռագիրները տեղափոխել Մոսկուայի մէջ կառուցուած Ալեքսանդր Գ. Յարի անուան թանգարանը, որը ոչ մի ապահովութիւն չէր ընծայում այդ օրերին իր մէջ գտնուող թանկարժէք գոյքը կողոպուտից գերծ պահելու համար: Միւս կողմից՝ գերմանական զօրքերը մօտենում էին Մոսկուային: Եթէ Մոսկուան գերմանացուց ձեռքն անցնէր, համոզուած էինք, որ մեր ձեռագիրներն անմիջապէս պիտի գրաւուէին եւ Գերմանիա տեղափոխուէին:

Այս լուրը շուտով հաստատուեց, եւ Մոսկուայի Հայ Գաղութի մէջ մեծ վրդովմունք առաջ եկաւ: Ստիպուած եղանք գումարել մեր ծխականների ժողով՝ խորհելու համար, թէ ի՞նչ անենք:

Ժողովը տեղի ունեցաւ իմ բնակարանի մէջ երկսեռ հոծ բազմութեան մասնակցութեամբ: Որոշուեց **ոչ մի կերպ թոյլատրել, որ Մակինցեանը ձեռագիրները մեր եկեղեցիէն դուրս տանի:** Ի՞նչպէս: **«Մենք՝ ժողովականներս եկեղեցւոյ աստիճանների վրայ մեր մանուկների հետ կը նստինք ու կ'ասենք. 'Պօղոս Մակինցեան, նախ՝ մեր բոլորի դիակները կը թափես այստեղ, ու յետոյ միայն կարող ես այդ ձեռագիրները դուրս տանել եկեղեցիից»:**

Մակայն, այս որոշումը գործադրելուց առաջ, որոշեցինք մի վերջին փորձ անել եւ դիմել Պ. Մակինցեանին, որ հրաժարուի իր մտադրութիւնից:

Մակինցեանի մօտ գնալու համար ընտրուեցանք երկու քահանաներս, եկեղեցական խորհուրդի երկու անդամներ՝ Աւետիս Տէր-Մկրտչեան ու Նիկողայոս Արզումանեան եւ Լազարեան ճեմարանի նախկին ուսուցիչ երեսփոխան Ստեփանոս Տէր-Սարգսեանը:

Պ. Մակինցեան բնակւում էր Լազարեան ճեմարանի վերատեսուչ Կարապետ Կոստանեանի բնակարանի մէջ, իբրեւ ճեմարանի պատուաւոր հոգաբարձու: Պրոֆ. Նիկողայոս Ադոնցի տեղ Հայկական Փոքրամասնութեանց կոմիսարիատն նրան էր կարգած:

Երբ զանգը տուինք եւ դուռը բացուեց, ով հրաշք, մեր դիմացն ելաւ անակնկալօրէն Վահան Տերեանը: Ես յուսադրուած իսկոյն դիմեցի նրան եւ ասացի.

«Վահան, Պօղոսի մօտ ենք եկել շատ կարեւոր գործով: Կը խնդրեմ դու եւս մեզ միանաս»:

«Տէր հայր,- պատասխանեց Վահանը,- հէնց հիմա ես վերջացրի եւ կոմիսարիատի գործերը յանձնեցի Պօղոսին: Ես այլեւս ոչ մի կապ չունիմ»:

«Վահան ջան,- ասացի,- մեր գործը շատ կարեւոր գործ է, քեզ էլ՝ իբրեւ հայ կը վերաբերի: Շատ կ'աղաչեմ, որ մեզ օգնես»:

Մի քիչ գլուխը շարժեց ու միացաւ մեզ անխօս: Երբ մենք բացատրեցինք Մակինցեանին, թէ ինչո՞ւ ենք եկել, նա պատասխանեց.

«Այո, ես մտադիր եմ այդ ձեռագիրները փոխադրել Մոսկուայի Ալեքսանդր Գ. Կայսեր անուան թանգարանը իբրեւ ապահով վայր եւ Պրոֆ. Ն. Ադոնցին կարգել նրանց տնօրէն»:

Մենք առարկեցինք, որ Ալեքսանդր Գ-ի թանգարանը այսօր ոչ մի ապահովութիւն չի ներկայացներ: Երբ Կրեմլի մէջ նոյնիսկ Ռուսաց Պատրիարքարանի թանգարանը կողոպտուեց, Ալեքսանդր Գ-ի թանգարանը բացարձակ անպաշտպան շինութիւն էր աւագակների համար: Բացի այդ, պետութեան ե՛ւ քաղաքական ե՛ւ ռազմական վիճակն անկայուն էր բոլորովին: Գերմանացիք կ'արշավէին Մոսկուայի վրայ եւ եթէ Աստուած մի արասցէ, տիրապետէին մայրաքաղաքին, մեր ձեռագիրներն անմիջապէս իբր պատմական անգին զանձեր կը տարուէին Գերմանիա:

Վ. Տերեանն էլ միացաւ մեզ ու ասաց.

«Յիրաւի, Պօղոս, մեր եկեղեցին շատ **տալտայ** (հէնց այս բառը գործածեց, որ կը նշանակէ աննկատելի) տեղ կը գտնուի: Ոչ ոք չի կարող ենթադրել, թէ այնտեղ այդքան թանկարժէք ձեռագիրներ պահուած են: Ես եւս կարծում եմ, որ եթէ այնտեղ մնան, աւելի ապահով կը լինին»:

Վահանի խօսքերից յետոյ, Մակինցեանը տեղի տուաւ՝ ասելով.

«Ես համաձայն եմ: Թո՛ղ ձեռագիրները մնան իրենց տեղում: Սակայն, ես այդ սենեակների դռների վրա ՑԻԿ-ի՝ (Կենտկոմի) քարտուղարութեան կնիքով ու ստորագրութեամբ թուղթեր պիտի փակցնեմ, որպէսզի այդ սենեակներին ոչ ոք չկարողանայ մօտենալ՝ առանց մեր գիտութեան, եւ որպէսզի, երբ Երեւանի մէջ էլ բանուորա-գիւղացիական սովետներ լինին, այդ ձեռագիրները տեղափոխենք Երեւան»:

Մենք մեր գոհունակութիւնն ու համաձայնութիւնն յայտնեցինք եւ հեռացանք:

Մի քանի օրից յետոյ, Պ. Մակինցեանը բերաւ ռուս լեզուով մի հրաման՝ ստորագրուած Ռուսիոյ Կենտկոմի քարտուղար Վ. Ավանետովի կողմից եւ ՑԻԿ-ի կնիքով կնքուած:

Պէտք է խոստովանիլ սակայն, որ Մակինցեանի այդ կարգադրութիւնը օգտակար եղաւ, որովհետեւ Կենտկոմի այդ թուղթը ազատեց մեր ձեռագիրները վտանգաւոր խուզարկութիւններից, որոնք շատ յաճախ տեղի էին ունենում, երբ զօր. Դենիկինի բանակը մօտենում էր Մոսկուային:

1922-ի սկզբին մի օր անակնկալ կերպով հրաւեր ստացայ Մոսկուայի Չէկայից, որ ներկայանամ իբրեւ վկայ:

Քննիչի դէմքից եւ խօսելու շեշտից հասկցայ, որ նա ռուս չէր, այլ հրեայ էր ազգութեամբ: Մտածեցի, որ հայերի նման նա եւս հալածեալ մի փոքրամասնութեան կը

պատկանէ եւ, ուրեմն, ինձ աւելի շուտ կը հասկնար, որով կրնայի նրա հետ մի փոքր համարձակ լինել:

«Ձեր եկեղեցիի տակը պահուած է ձեր ազգային հարստութիւնը, եւ դուք այդ մասին չէք յայտնած», նա դարձաւ ինձ՝ ասելով:

«Նախ՝ մեր եկեղեցւոյ տակը ոչ մի ազգային հարստութիւն չկայ. եթէ լինէր, ես ձեզ կը յանձնէի», պատասխանեցի:

«Ուրեմն, այնտեղ ո՞չ մի հարստութիւն չկայ: Իսկ եկեղեցւոյ մէջն էլ ձեր ազգային հարստութիւնը պահուած չէ»:

«Այո՛, եկեղեցւոյ մէջն էլ ոչ մի հարստութիւն չկայ: Բայց այնտեղ երկու առանձին սենեակների մէջ կը գտնուին մեր ձեռագիրները, մեր մշակոյթի ստեղծագործութիւնները, որոնք ձեզ համար ոչ մի դրամական արժէք չեն ներկայացնում, բայց մեզ՝ հայերիս համար անգնահատելի գանձեր են»:

«Որտեղի՞ց են բերուած այդ ձեռագիրներն եւ ի՞նչ պատճառներով», հարցրեց քննիչը:

«Դուք կը յիշեք,- ասացի,- որ 1914ի վերջերը տաճիկները մեծ յաջողութիւն ունեցան, պատռեցին ռուսական ռազմաճակատը եւ խուժեցին Կովկասի սահմաններից ներս՝ տիրապետելով սահմանամերձ Սարիղամիշի եւ Կադգուանի շրջաններին եւ սպառնալով խորքերը արշաւել: Այդ պատճառով մեծ խուճապ ստեղծուեց Անդրկովկասի մէջ, եւ փոխարքան եւ քաղաքագլուխն անգամ հեռացան Թիֆլիսից: Երկիւղ կրելով, որ տաճիկները կարող են աւելի մեծ յաջողութիւն ունենալ եւ հասնիլ մինչեւ Էջմիածին եւ այրել մեր վանքն ու ձեռագիրներով լեցուն մատենադարանը, մեր Կաթողիկոսը որոշել էր ուղարկել այդ ձեռագիրները աւելի ապահով վայր՝ Մոսկուա եւ պահ դնել դրանք Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ»:

«Ինչո՞ւ տաճիկները պիտի այրէին վանքն ու ձեռագիրները», հարցրեց քննիչը:

«Ի՞նչ տարօրինակ հարց եք տալիս,- ասացի,- ի՞նչու 1895ին տաճիկները կոտորեցին երեք հարիւր հազար հայեր Տաճկաստանի մէջ: Ինչո՞ւ Կիլիկիոյ մէջ Ատանա քաղաքում կոտորեցին մինչեւ հարիւր հազար հայեր: Վերջապէս, ինչո՞ւ 1915, 16, 17 թուականներին տաճիկները մօտ երկու միլիոն հայեր կոտորեցին եւ մեր հայրենիքում այսօր հայ չմնաց»:

Զգաց, որ անտեղի էր իր հարցումը:

«Ուրեմն՝ ձեր ոչ եկեղեցւոյ տակը եւ ոչ էլ մէջը որևէ հարստութիւն չկա՞յ: Կը վկայէ՞ք այդ մասին»:

«Այդ ձեռագիրները կը գտնուին թիթեղով պատած արկղների մէջ, որոնք կնքուած են Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանի եւ Սինողի կնիքներով: Մեր առջեւ արկղները չեն բացուած, եւ մեզ հաղորդած են հաստատապէս, որ ոչ մի գանձ կայ նրանց մէջ, բացի ձեռագիրներից»:

Լռելեայն արձանագրութիւն կազմեց, տուեց ինձ կարդալու եւ ես ստորագրեցի: Ասաց, որ ազատ եմ, եւ ես առանց դժուարութեան դուրս ելայ ու խոր շունչ քաշեցի:

Որոշեցի անմիջապէս Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տէր-Գաբրիէլեանին հաղորդել եղածի մասին:

Իմ տան հեռախօսը առած էին երկու տարի առաջ, որպէսզի ես համայնքիս անդամների հետ դիւրաւ հաղորդակցութիւն չունենայի: Գնացի դրացիիս քովը, որը ներքնայարկի մէջ կ'ապրէր: Երբ դուռը բացեց ու ես ներս մտայ, տեսայ, որ Պօղոս Մակինցեանը այնտեղ է: Դիմեցի նրան.

«Պօղոս, մեր ձեռագիրներին լուրջ վտանգ է սպառնում: Եկայ այս առթիւ Ս. Տէր-Գաբրիէլեանին խօսելու, որ առաջն առնէ: Բայց դուք Սահակից անելի լաւ կը հասկանաք, թէ ի՞նչ են մեզ համար ձեռագիրները: Ուստի անելի լաւ է Ձեզ խնդրեմ»:

Պատմեցի նրան եղելութիւնը: Եւ ասացի. «Պօղոս, դուք Դերժինսկիի հետ (Չեկայի պետ) լաւ յարաբերութեան մէջ էք: Շատ պիտի խնդրէի, որ միջոցներ ձեռք առնէք վտանգից ազատելու մեր ձեռագիրները, մինչեւ որ նրանց կը տեղափոխենք Հայաստան»:

Հաստատ խօսք տուեց անմիջապէս տեսնելու Չեկայի պետին ու կարելին ընել:

Յուսադրուած՝ ելայ քովէն: Բայց նամակ ուղղեցի Էջմիածին Վեհափառ Հայրապետին՝ մանրամասնօրէն նկարագրելով կացութիւնն ու խոնարհաբար խնդրելով բանակցութեան մէջ մտնել Սովետական Հայաստանի կառավարութեան հետ՝ ձեռագիրները Մոսկուայից Հայաստան փոխադրելու համար:

Այս դէպքից հազիւ մէկ շաբաթ անց, նորից երեւացին երեք չեկիստներ: Ձեռքերնին ունէին հրահանգ, որով պատուիրում էր բանալ եկեղեցին եւ ցոյց տալ այն սենեակները, որտեղ պահ էին դրուած մեր ձեռագիրները... Մտան եկեղեցի, մանրամասնօրէն քննութեան ենթարկեցին դռները, եւ կարդալով Սովետական Ռուսիոյ Գործկոմի քարտուղարին դռներին փակցուած հրամանը (առանց Գործկոմի թոյլտուութեան չբանալ այդ դռները), հեռացան դժգոհ դէմքերով:

Կռահեցի, որ Պ. Մակինցեանը ոչինչ չէր արել՝ ձեռագիրներին սպառնացող վտանգին առաջքն առնելու համար: Անմիջապէս դիմեցի նոյն երեկոյեան Ս. Տէր-Գաբրիէլեանին՝ պատմելով նրան տեղի ունեցածը: Չգիտեմ ինձ փորձած լինելու նպատակով, թէ՞ կատակով ասաց:

«Տէր հայր, արժէ՞ր այդ ձեռագիրների համար կառավարութեան անդամների գլուխը ցուցնել: Այս օրերս չորս-հինգ երկաթուղային ապրանքատար գնացքներով ալիւր ուղարկեց Սովետական Կառավարութիւնը Հայաստանի բնակչութեան համար: Թողնէ՞ք նրանց հանգիստ»...

«Ի՞նչ էք ասում, Սահակ Միրզոյիչ,- պատասխանեցի,- այդ ձեռագիրների մէկ հատը միայն եթէ վաճառելու լինենք, անելի քան տասն ապրանքատար գնացք ալիւր կ'ունենանք: Բոլոր ձեռագիրներն էլ անգին ու անգնահատելի գանձեր են հայ ժողովուրդին համար»:

«Լաւ, լաւ,- պատասխանեց,- առաջը կ'առնենք»:

Եւ, յիաւի, երկու-երեք օրից յետոյ ինձ յանձնուեց մի գրութիւն Չեկայի քարտուղար Եագոդայի ձեռքով հետեւեալը գրուած.

«Հայոց քահանային: Առանց իմ գիտութեան ու թոյլտուութեան ոչ մէկին թոյլ չտալ մերձենալու այն սենեակներին ձեր եկեղեցոյ մէջ, ուրտեղ պահ են դրուած հայոց ձեռագիրները»:

Չեկայի քարտուղար Եագոդայի կարգադրութիւնը մի առժամանակ ապահովեց մեր ձեռագիրները:

Սակայն ես նորէն դիմեցի Վեհափառ Հայրապետին, որպէսզի շտապեցուի ձեռագիրներու փոխադրութիւնը: Միաժամանակ շեշտեցի, որ Մոսկուա կը գտնուին մի խումբ հայ զինուորներ օդաչու Գուլեանի առաջնորդութեամբ, որոնք մի քանի շաբաթ

առաջ եկած են Երեւանից՝ իրենց հետ բերելով նորոգութեան նպատակով զանազան գործիքներ։ Այդ զինուորներին եւ տեղաւորած էի Հայոց Ս. Խաչ եկեղեցւոյ բակում գտնուող շէնքի մէջ, այն յոյսով որ նրանք վերադարձին կարող են Հայաստան տանել մեր ձեռագիրները։

Վերջապէս, շատ շուտով յայտնի եղաւ, որ նրանց միջոցով պետք է վերադարձուին Հայաստան ձեռագիրները։

Նշանակուած օրը բացինք դռներն այն երկու սենեակների, որոնց մէջ պահուած էին ձեռագիրները։ Ներկայ էին բացման ժամանակ Սովետական Հայաստանի կառավարութեան կողմից նշանակուած Սահակ Տէր-Գաբրիէլեանը, Աշոտ Յովհաննիսեանը եւ Պօղոս Մակինցեանը, իսկ մեր կողմից երեսփոխանական Ստեփաննոս Տէր-Սարգիսեանը, հոգաբարձու Ստեփան Տէր-Մկրտչեանը եւ տողերս ստորագրողը։

Հոս յիշեմ, որ իմ ընկեր քահանայ Սեդրակ Աղբալեանը վախճանած էր արդէն սրտի կաթուածէ դեռ 1920 սեպտեմբերին։

Մէկիկ-մէկիկ հանուեցան սնտուկները, մանրամասնօրէն քննուեցան, որ կնիքները սնտուկների վրայ անեղծ մնացած էին։ Բոլոր 137 սնտուկներին կնիքներն էլ անվնաս վիճակի մէջ էին։ Կազմուեց արձանագրութեան երկու օրինակ, երկու կողմերի ստորագրութեամբ։ Դրանցից մէկը մնաց Սովետական Հայաստանի ներկայացուցիչների մօտ, իսկ միւսը յանձնուեցաւ ինձ՝ ուղարկելու համար Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Զինուորներին միացաւ նաեւ մեր երեսփոխան եւ Լազարեան ճեմարանի նախկին ուսուցիչ, ծերունագարդ Ստ. Տէր-Սարգսեանը իր զուակին հետ, որոնք յանձն առան մինչեւ Երեւան եւ Էջմիածին ուղեկցելու զինուորներին։

Վերադառնալով Հայաստանից՝ Ստ. Տէր-Սարգսեանը պատմեց, որ բաւական երկարատեւ ճանապարհորդութիւնից յետոյ մեր ձեռագիրները ապահով հասած էին Հայաստան։ Քաղաքացիական կռիւները դեռ կը շարունակուէին որոշ շրջանների մէջ եւ յաճախ մի քանի օրով ամբողջ գնացքը կը սպասէ եղեր կանգնած։ Գնացքի բոլոր վագոններն էլ գողերու կողմէ վնասուած էին, բացի մեր ձեռագիրներու երկու վագոնից։ Ստ. Տէր-Սարգսեանը կը վկայէր, որ ինքն ու իր զուակը գնացքի ամէն մի կայարանի մէջ կեցած պահին հսկողութիւն արած էին։

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

ՍՈՆՈՂԻԱ, ՊՈԼԻՖՈՆԻԱ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Յիրաւի բազմաձայն երգեցողութիւնը
սքանչելեաց սքանչելիք է...*

Կոմիտաս¹

Մերօրյա մշակութային պատերազմի բովում, արհեստական, խառնածին երաժշտության համաճարակի մթնոլորտում առավել ևս անհրաժեշտություն է առաջանում արժեքների վերագնահատման: Անխնա կերպով են վարվում Բախի, Բեթհովենի, Կոմիտասի և այլ դասականների ժառանգության հետ. ներկայացնում են ջազային և էստրադային ոճով, նվագարաններով՝ հակասելով դրանց առաքելությանը: Նույն ձևով են վարվում ժողովրդական և աշուղական երաժշտության հետ: Եվ մեխանիկական այս խառնուրդը որակվում է որպես նորարարություն, մշակում՝ խաթարելով նաև այս հասկացության իմաստը: Ստեղծվել է ոճերի, ժանրերի, լեզուների բաբելոնյան մի խառնարան:

Տարաձայնություններ կան նաև հնագույն, հոգևոր երաժշտության մեկնաբանության և կատարման ասպարեզում:

Ումանք պահանջում են «բարոկ» ժամանակաշրջանի երաժշտությունը կատարել միայն թանգարանային նվագարաններով, հին լարվածքով, առանց vibrato, յուրօրինակ տեմպերով, հնչունաբանությամբ և այլն: Ումանք էլ նույն «փաստավավերագրական» մոտեցումը պահանջում են միջնադարյան հոգևոր երաժշտության վերարտադրման գործում:

Հինը տառացի վերարտադրելու ջատագովներին ժամանակին պատախանել է մեծ դիրիժոր Վիլիելմ Ֆուրտվենգլերը. «Կամերային-երաժշտական էֆեկտները, որոնց մասին մենք խոսում ենք այսօր որոշ դարաշրջանների առնչությամբ, այսինքն՝ այն մեկնությունները, որոնք արհեստականորեն և գիտակցաբար սահմանափակվում են հեղինեղուկ հնչողությամբ, սեթևեթ, չոր մաներայով, երբեք և ոչ մի տեղ գոյություն չեն ունեցել, գուցե թե միայն մեր երևակայության մեջ»²:

Նման «պահանջատերերին» անվանելով «փարիսեցիներ», իսկ հինը տառացի վերականգնելու փորձերը՝ «կեղծարարություն», Ֆուրտվենգլերը տարակուսում է, թե նրանք հաշվի չեն առնում, որ ժամանակակից մեծ սրահը եթե չունի եկեղեցու արձագանք, ոչ միայն թուլացնում է, այլև փոխում է հնչողության որակը: Ունկնդիրների հոգեբանությունն էլ այլ է, քան անցյալում: Անշուշտ, միաձայն երգեցողությունն իր հմայքը և կյանքի իրավունքն ունի, սակայն միայն դրանով սահմանափակվելը կադրատացնի մեզ: Ըստ փիլիսոփաների, առանց զանազանության մշակույթը ինքնա-

¹ Կոմիտաս, Նամակներ (Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին), Երևան, 2000., էջ 68:

² Исполнительское искусство зарубежных стран, Москва, 1966, стр. 162.

զարգացում չի ունենա:

Հիրավի, միաձայն շարականի երգեցողությունը համերգասրահում, կտրված արարողությունից, հնչում է մերկ, ոչ այնքան ազդեցիկ, որքան եկեղեցում: Զգացնել է տալիս խունկի բուրմունքի, սրբապատկերների, սրբազան մթնոլորտի պակասը: Մինչդեռ բազմաձայն երգեցողությունը, կարծես, լրացնում է այդ պակասը՝ ուշադրությունը գրավելով հնչյունային «տիեզերքով»:

Այս և նման այլ մտքերը հիմնավորելու և տեղատարափ հարցերի «լաբիրինթոսից» ելք գտնելու համար դիմում ենք դասական անանց արժեքներին: Այդպիսիք են միջնադարյան հոգևոր երգարվեստը և դրանից բխած դասական երաժշտությունը:

Եվ որպես «արիադենի թել», զինվում ենք լույսի շողով, որը անդրադառնում է, ճանաչում սաղմոսներից, խորալներից դեպի Բախի բազմաձայն արվեստը, շարականներից՝ դեպի Կոմիտասի երգարվեստը և անցնում գալիքին...

Սույն աշխատության մեջ փորձում ենք հետևել միաձայն երգից դեպի բազմաձայնություն (լայն իմաստով) տանող ուղիներին, ըմբռնել եկեղեցու հայրերի, փիլիսոփաների, երաժշտագետների գաղափարները և դրանց բախումներն ու զարգացումը: Աղբյուրների զգալի մասը, որոնցից օգտվել ենք, հայերենով դեռ չեն թարգմանված: Սրանով է պայմանավորված մեջբերումների առատությունը, քանզի ջանացել ենք հնարավորինս շատ տեղեկություններ փոխանցել հայ ընթերցողին, դրանով իսկ «ալանատես» և հաղորդակից դարձնել այդ «գաղափարների դրամային»:

* * *

Պոլիֆոնիան՝ բազմաձայնությունը, բխել է մոնոդիայից՝ միաձայնությունից, ինչպես ծիածանի գույները մեկ՝ «սպիտակ» լույսից, ինչպես հասկը՝ ցորենի հատիկից, ինչպես խիտ սաղարթը՝ մանանեխի սերմից: Սրանք լոկ մակերեսային համեմատություններ չեն: Չէ՞ որ ցանկացած հնչյունի հետ միաժամանակ հնչում են նաև իր օբերտոնները՝ վերնահնչյունները: Ահա այդ «թաքնված» հնչյուններից էլ գոյացել են հնչյունաշարերը, որոնք և բազմաձայնության հիմքն են հանդիսանում:

Որոշ ժողովրդական նվագարանների, օրինակ, վարդանի օբերտոնները այնքան լսելի են, որ հիմնական մեղեդին նվագելիս, գոյանում են «օբերտոնային մեղեդիներ»³:

Ըստ 11-րդ դարի փիլիսոփա Էրիզենայի, ներդաշնակությունն, առհասարակ, «երաժշտության էությունն է, ներքին սկզբունքը՝ հիմնված բազմաձայնության վրա»: Նույնը պնդում էր և Հուգոն Սեն-Վիկտոր մենաստանից: «Երաժշտությունը կամ հարմոնիան բազում հակադրությունների միավորված համաձայնեցումն է»⁴: Բազմաձայնության անցած այդ ճանապարհը լի էր դժվարություններով:

Պատմության ընթացքում որևէ նոր երևույթ ընդունվում կամ մերժվում է հաճախ ոչ որպես այդպիսին, այլ՝ գաղափարական կամայական կամ այլ նկատառումներով: Նման բան նկատվում է նաև եկեղեցում նվագարանների գործածության և երգեցո-

³ Музыкальная энциклопедия., Москва, 1976, том 3, стр. 1066.

⁴ Музыкальная эстетика западноевропейского средневековья и Возрождения (ред. Н. Шахназарова и В. Шестова), Москва, 1966, стр. 58.

ղության հարցում: Հին Կտակարանը վկայում է, որ Դավիթն իր սաղմոսներում կիրառել է բազմաթիվ նվագարաններ: Միջնադարում քրիստոնեական Եկեղեցու հայրերը, երաժշտագետները նվագարանների գործածության վերաբերյալ ցուցաբերել են տարբեր մոտեցումներ: Ոմանք դրական էին վերաբերվում, մյուսները դրանք դիտում էին որպես խորհրդանիշներ, այլաբանություն: Ոմանք էլ պնդում էին, թե նվագարանները սատանայից են՝ մատնանշելով վարձակներին, փողոցային նվագածուներին, վկայակոչելով հեթանոսական խրախճանքները:

Աստվածաշունչը վկայում է. «Դավիթը առնում էր քնարը եւ իր ձեռքով նվագում, և Մավուղը հանգստանում և լավանում էր, և չար ոգին նրա վրայից գնում էր» (Ա. Թագ. ԺԶ 23):

Բացի քնարից, Դավթի սաղմոսներում նշվում են բազում այլ նվագարաններ: Սակայն Կղեմենտ Ալեքսանդրացին, Աթանաս Մեծը տաալարանի սաղմոս նվագարանը համարում էին տասը պատվիրանների նշանակը, իսկ եռանկյունաձև քնարը՝ Սուրբ Երրորդության:

Ըստ Բարսեղ Կեսարացու, երգեհոնը խորհրդանշում է մարդու մարմինը, որը լարված է երաժշտության սկզբունքով՝ Արարչին փառաբանելու համար⁵:

Մեկ այլ աշխատության մեջ Կղեմենտ Ալեքսանդրացին միևնույն նվագարանը դիտում է որպես մի քանի խորհրդանիշ՝ »Հավանաբար սաղմոսերգուի քնարը այլաբանորեն նշում էր նախ Տիրոջը, իսկ երկրորդը՝ նրանց, ովքեր Տիրոջ ներշնչմամբ իրենց հոգու լարերից հնչյուններ են բխեցնում... Գուցեն քնարը նշանակն էր փրկության ճանապարհը բռնած մարդկանց, ովքեր Բանի ներշնչմամբ և աստվածճանաչողությամբ գովերգում են Արարչին»⁶: Կղեմենտ Ալեքսանդրացուն համամիտ են Բարսեղ Կեսարացին և իր եղբայր Գրիգոր Նյուսացին և ուրիշ հայրեր:

Դավթի առաջին սաղմոսի մեկնաբանության մեջ Բարսեղ Կեսարացին գրում է. «Թեպետև գոյություն ունեն բազմաթիվ նվագարաններ... սակայն սաղմոսը միակ նվագարանն է, որը մարգարեն հարմարեցրել է սաղմոսերգությանը՝ նշելով, ըստ իս, որ այն օրհնված է ի վերուստ, քանզի այն միակն է, որի հնչյունները բխում են գլխամասից... որպեսզի մենք էլ ձգվենք դեպի Բարձրյալը, այլ ոչ թե հմայվելով մեղեդիով մղվենք դեպի մարմնի կրքերը»⁷:

Հովհաննես առաքյալն իր Հայտնության մեջ երկնքից քնարահարների նվագի ձայն է լսել: Աստվածաշունչը վկայում է, թե առաջին նվագարանը ստեղծել է Ղամբի որդի Հոբալը, որ «քնարահարների եւ սրնգահարների հայրը եղավ»: Ըստ մեկնիչների, Հոբալ անունը նշանակում է «հոբելյան», այսինքն շեփորի ձգվող ձայն: Փաստորեն Հոբալի շեփորը ազդարարեց երաժշտության երկրային պատմության սկիզբը, որը պիտի ավարտվի մեռյալների հարությունը և Ահեղ Դատաստանը ազդարարող Գաբրիել հրեշտակապետի շեփորի կանչով... Ըստ Սուրբ Գրքի, շեփորների ձայնը ազդարարում էր Աստծո էջքը Մինա լեռ: Շեփորներով էին ուղեկցում Ուխտի տապանակը՝ անապատով Երուսաղեմ: Յոթ քահանաների շեփորների «համագարկից» փվեցին մեղքի մեջ թաղված Երիքով քաղաքի պատերը: Փողեր էին նվագում «շե-

⁵ Музыкальная эстетика..., стр. 21.

⁶ Նշված աշխատություն, էջ 99:

⁷ Նշված աշխատություն, էջ 106:

փորների տոնի» և այլ ծեսերի ժամանակ: Արարչի պատվերով էր Մովսեսը պատրաստել երկու արծաթե «հոբելյանական շեփորներ», որոնք պետք է ազդարարեին հոբելյանական տարիները: Պատահական չէ, որ հետագայում Սեբաստիան Բախը իր աղոթերգություններում այդքան շատ էր գործածում բարձրահունչ փողերը: Այսպիսով, նվագարանները ոգեղեն են և տրված են մարդուն ի վերուստ:

Հատկանշական է, որ Հովհաննես Ոսկեբերանը, այլաբանորեն բացատրելով նվագարանները, միաժամանակ ասում է, որ հրեաները «... ծնծղաների, շեփորների, քնարների միջոցով ավելի հասկանալի էին դարձնում սաղմոսների իմաստը»⁸:

Հետաքրքիր հարցադրում է արել Թովմա Աքվինացին. «Եթե նվագարանները մերժել են, որպեսզի չնմանվեն հրեաներին, ուստի կարելի է կարծել, որ երգեցողությունը նույնպես չպետք է ընդունել ժամերգության մեջ»: Այդպես էլ կլինեք, եթե ի կատար ածվեր Բրունո Կարտուզի և եկեղեցում երգն ու նվագը մերժող իր համախոհների ցանկությունը:

Արևմտաքրիստոնեական աշխարհի 13-րդ դարի մի վավերագրում արդեն նշվում է, որ եկեղեցում որպես միակ նվագարան օգտագործվում է երգեհոնը: Հետագայում զգուշացվել է, որ երգեհոնը օգտագործեն չափավոր, որպեսզի չխանգարի քարոզին, չխլացնի երգեցողության խոսքերը:

Նվագարանների մասին մեր շարադրանքն ամփոփենք Ռոջեր Բեկոնի (1214-1292 թթ.) խոսքով, որը միավորում է նվագարանների վերաբերյալ հիմնական երկու մոտեցումները⁹. «... Կատարյալ աստվածաբանը պետք է գաղափար ունենա նվագարանների կառուցվածքից, իմանա օգտվել դրանցից՝ հանուն անթիվ միատիկ իմաստների, էլ չեմ ասում բառացի իմաստների մասին»:

Այժմ անդրադառնանք բազմաձայնությանը:

Ոչ պակաս փշոտ էր բազմաձայնության հաստատման ճանապարհը: Եկեղեցական երգեցողության ավանդույթն ունի վաղեմի պատմություն:

«Քրիստոնեական պաշտոներգության մեջ Սաղմոսի կիրառությունը գալիս է ավետարանական շրջանից, երբ Հիսուս խորհրդավոր ընթրիքից հետո, ավարտելով երգեցողությունը, ուղղվեց դեպի Ձիթենյաց լեռ, իսկ Ջատիկը «կատարեց հրեական սովորույթի համաձայն, ըստ որի պահանջվում էր երգել ՃԺԲ-ՃԺԷ օրհներգական սաղմոսները: Քրիստոսի օրհնակով էլ, առաքյալները եկեղեցիներ հիմնելով... պատվիրել են երգել Սաղմոսը»¹⁰:

Այս ավանդույթը շարունակեցին Սուրբ Իգնատիոսը, ինչպես նաև միլանցի եպիսկոպոս Ամբրոսիոսը (մոտ 335-397 թթ.), ում անվամբ էլ կոչվեց վաղ շրջանի եկեղեցական երգեցողությունը: Այնուհետև Հռոմի Պապ Գրիգորիոս Առաջինը (590-604 թթ.) կանոնացրեց Կաթոլիկ Եկեղեցու պաշտոներգությունը: Ձևավորվեց գրիգորյանական խորալը:

Այս գործընթացի վրա լույս է սփռում նաև երաժշտագետ Վալենտինա Կոնենի հետևյալ պնդումը. «Գրիգորյան խորալը, որը կաթոլիկ պաշտոներգության և դրանով հանդերձ հիշյալ ժամանակի եվրոպական մասնագիտացված երաժշտության հիմքն

⁸ Նշված աշխատություն, էջ 115:

⁹ Նշված աշխատություն, էջ 307:

¹⁰ Толковая Библия, 2-ое издание, Стокгольм, 1987, том 1, Псалтырь, стр. 134-135.

է, ձևավորվել է հայկական Պատարագի ուղղակի ազդեցությամբ»¹¹:

Հայկական ազդեցությանը համամիտ է նաև երաժշտագետ Տ. Լիվանովան¹²:

Բազմաձայնության առաջին «ծլարձակումները» առաջ եկան 9-րդ դարում, կաթոլիկ ժամերգության առաջին դրվագներում: Ստեղծվել է «դիաֆոնիա», «գուգահեռ օրգանում»: Այն բաղկացած է հիմնական ձայնից՝ խորալից, և սրան կցված, գուգահեռ շարժվող 2-րդ ձայնից: Սակայն բուն պոլիֆոնիան սկսվում է այն նմուշներից, որոնցում երկրորդ ձայնը շարժվում է ոչ գուգահեռ, այլ՝ որոշ չափով ինքնուրույն: Պոլիֆոնիայի հետագա զարգացումը ընթացավ ձայների քանակի ավելացման, անհատականացման, երաժշտական տարածության, հորիզոնների ընդլայնման, այսինքն բովանդակության հարստացման ուղղությամբ: Անդրադառնալով «գուգահեռ օրգանումին», երաժշտագետ Յուլիա Եվդոկիմովան գրում է. «Համեմատ մոնոդիային, այն որակապես նոր հնչողություն էր, որն ընկալվեց որպես հրաշք: Հնչյունային արվեստում այն բացահայտեց միանգամայն անսպասելի հնարավորություններ»¹³: Մինչդեռ իսկական հրաշքը դեռ առջևում էր՝ Յոհան Սեբաստիան Բախի արվեստում՝ խորալային պրեյլունդներում, ֆուգաներում և այլ գործերում:

Նախքան Բախի ասպարեզ գալը, բողոքական խորալը արդեն բյուրեղացել էր: Եթե «ավետարանական երգեցողության հայր» Մարտին Լյութերը, Յոհան Վալտերը, Կոնրադ Ռուպֆը և մյուս երգահանները կյանքի կոչեցին այդ խորալները, և դրանք մտան հավատացյալ համայնքի կյանքի ոլորտ՝ եկեղեցի, ապա Բախն իր հորինած ձայներով, պարուրելով այդ միաձայն երգերը, խորալներին տվեց մնայուն կյանք: Սակայն մինչ այդ հնչյունային շատ հոսանքներ, «առվակներ» ու «գետեր» են հոսել դեպի այն ծովը, որին Բեթհովենը անվանել է «Բախ»:

Նվագարանային երաժշտության ժանրի պես, բազմաձայնությունը ևս անցավ փորձությունների բովի միջով: Դեռ Ամբրոսիոսն էր ասում, թե միաձայն երգեցողությունը եկեղեցական միաբանության խորհրդանիշն է: Իսկ Նիկիտա Եպիսկոպոսը անամոթություն էր համարում ընդհանուրից առանձնացող ձայնը: Իսկ ըստ Պրոսպեր Ակվիտանացու, առանձնացող ձայները չեն կարող հաճելի լինել:

Ավելի հանդուրժողական էր Հռոմի Պապ Հովհաննես 22-րդը, ով 1322 թ. իր կոնդակում կշտամբելով «նորաստեղծ գեղեղանքները», խորալին նոր ձայներ, ժողովրդական պարզունակ մեղեդիներ կցելը, այնուամենայնիվ, չարգելեց թեթևակի միջամտությունները: Կոնդակում ասվում է. «Սակայն սրանով մենք չենք արգելում, մանավանդ տոն օրերին, մեսսաներում կամ այլ արարողություններում պարզ եկեղեցական երգեցողությանը հավելել որոշ մելոդիկ կոնստանսներ, օրինակ, օկտավաներ, կվինտաներ, կվարտաներ և այլն... քանզի նման բարեհնչյունները ուրախացնում են լսողությունը, արթնացնում են բարեպաշտություն և չեն հոգնեցնում»¹⁴:

Հատկանշական է, որ մոտ երկուսուկես դար հետո Հռոմի Պիոս 4-րդ Պապը (1559-1566 թթ.) պիտի ջանար պատմության անիվը հետ դարձնել: Նա առաջարկում էր Տրիդենտինյան ժողովին եկեղեցուց առհասարակ վտարել երաժշտությունը: Եվ

¹¹ Советская музыка, 1971, N 10, стр. 51.

¹² Т. Ливанова, История западноевропейской музыки, Москва, 1983, том 1, стр. 29.

¹³ Ю. Евдокимова, Многоголосие средневековья., Москва, 1983, том 1, стр. 29.

¹⁴ Музыкальная эстетика..., стр. 61.

միայն Ֆերդինանդ 1-ին կայսեր միջամտության շնորհիվ կանխվեց այդ աղետը¹⁵: Զարմանալի է, որ այդ ժամանակ արդեն շոշոփում էր Պալեստինայի բազմաձայն փառահեղ արվեստը: Ինչպես նշել է Օսվալդ Շպենգլերը, յուրաքանչյուր մշակույթ կյանքի մասին իր հասկացողությունն ունի, քանզի յուրաքանչյուր մշակույթ ապրում է յուրովի:

Հռոմի Հովհաննես 22-րդ Պապը եթե տոն օրերին թույլ էր տալիս օգտագործել բազմաձայնության որոշ տարրեր, ապա Մարտին Լյութերի համար, կարելի է ասել, բազմաձայն երաժշտությունն ինքնին տոն էր, «Աստծո կատարելագույն հայտնություններից մեկը»: Ահավասիկ. «Երբ բնական երաժշտությունը զարդարվում է և կատարելագործվում արվեստով, այնժամ մեծագույն զարմանքով նկատում ենք... Աստծո մեծ և կատարյալ իմաստությունը, ի դեմս հրաշալի ստեղծագործության, այսինքն երաժշտության: Այնպես որ, ովքեր քիչ թե շատ հասկանում են դա և դրանով ոգեշնչվում, չափազանց զարմանում են և գտնում, որ աշխարհում ավելի հրաշալի բան չկա, քան բազում ձայներով զարդարված նման երգեցողությունը»¹⁶:

Բազմաձայնության զարգացումը ընթացավ ոչ թե ուղիղ գծով, այլ ալիքաձև՝ իր մակընթացություններով ու տեղատվություններով: Պարզվեց, որ ճշմարիտ երգը, նվագարանային երաժշտությունը, ձայների քանակը, որպես այդպիսին, չեն պարունակում որևէ բան, որ հակասեր, վնասեր բարեպաշտությանը, կրոնական զգացմունքներին: Պարզապես խնդիրը չափավոր գործածության մեջ էր: Ճաշակի, չափավորության կողմնակիցներից էր նաև 16-րդ դարի նշանավոր երաժշտագետ Յարլի-նոն, ով վկայակոչելով 50-ձայնանի մի աղմկալից ստեղծագործություն, քննադատել է բազմաձայնության շահարկումը, ինքնանպատակ դարձնելը: Երաժշտությունը այնքան գորեղ է, որ նույնիսկ Ավգուստինոս Երանելին էր մտահոգվում, որպեսզի հնչյունների վայելքը, գեղագիտական կողմը չշեղի աղոթքի խոսքերից: Իսկ դա կախված է ոչ միայն երաժշտության որակից, այլև լսողի, կատարողի ընկալունակությունից:

Օրինակ, ըստ Հռաֆան Մավրի՝ «Երգեցողությունը մի միջոց է, որը խորապես ցնցում է հավատացյալի սիրտը, մինչդեռ խոսքերը չեն հասնում այս աստիճան խորության»¹⁷:

Եվ բազմաձայնությունը, փորձելով իր շառավիղը, եզերքը, կրկին վերադարձավ միաձայնության, բայց ոչ մոնոդիայի, այլ բազմաձայնության մի նոր որակի և տեսակի, որում մեկ ձայնը պարզապես գերիշխող է, իսկ մյուսները հանդես են գալիս որպես լրացում, հարմոնիկ հենարան, նվագակցություն:

Այսպես, միաձայնությունից բխեց երկու տեսակ բազմաձայնություն՝ պոլիֆոնիա և հոմոֆոնիա: Առաջինի կատարելատիպը դարձավ ֆուգան, երկրորդինը՝ սոնատ-սիմֆոնիկ ցիկլը՝ իր «սոնատային ալեգրո» դինամիկ ձևով և զարգացման սկզբունքով:

¹⁵ Նշված աշխատություն, էջ 323-324:

¹⁶ **А. Швейцер**, И. С. Бах, Москва, 1964, стр. 24.

¹⁷ Музыкальная эстетика..., стр. 17.

ՄՈՆՈԴԻԱՆ ԵՎ ՊՈԼԻՖՈՆԻԱՆ՝ ՓԻԼԻՍՈՓՈՍՈՖԻԱՆ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

Եթե միջնադարի որոշ մտածողներ միայն մոնոդիայի մեջ էին տեսնում մարդկանց հոգիների միաբանությունը, ապա տարրական այդ համաձայնությանը հաջորդեց բարձրագույն միաբանությունը, որն արդյունք էր բազմաձայնության սինթեզի, միաձուլի: «Արվեստի փիլիսոփայությունը» աշխատության մեջ Ֆրիդրիխ Շելլինգը գրում է. «... Ընդհանուր առմամբ, ռիթմիկ երաժշտությունը անվերջության ծավալումն է վերջավորի մեջ... մինչդեռ հարմոնիկ երաժշտության մեջ վերջավորը կամ զանազանությունը դրսևորվում է լոկ որպես անվերջություն կամ միասնության այլաբանություն»¹⁸: Տվյալ դեպքում փիլիսոփան նշում է բազմաձայն երաժշտության առավելությունը մոնոդիայի հանդեպ: Ըստ Շելլինգի, ռիթմիկ, այսինքն միաձայն երաժշտությունը ավելի շատ արտահայտում է բավարարվածություն և առողջ զգացողություն, իսկ հարմոնիկը՝ ձգտում և անձկություն: «Ուստի անհրաժեշտ էր, որպեսզի հենց եկեղեցում, որի աշխարհայեցողության հիմքը սպասումն է, բազմազանության ձգտումն է միասնության, որպեսզի հենց եկեղեցում բացարձակի մեջ՝ բոլորի հետ միավորվելու յուրաքանչյուր անհատից բխող ձգտումը վերածվեր հարմոնիկ երաժշտության՝ առանց ռիթմի»...

Ասելով «առանց ռիթմի», Շելլինգը տարբերություն է դնում ժամանակի մեջ կոտորակվող առանձին հնչյունների տարածականության և մեկ ակորդի, համահնչյունի մեջ մի քանի հնչյունների միաժամանակյա տևողության միջև, այսինքն այն, ինչ երաժշտության մեջ հայտնի է որպես հորիզոնական և ուղղահայաց կերտվածք: Այստեղ Շելլինգը, չբացառելով անտիկ երաժշտության ուժը, վկայակոչում է բազմաձայնության ջատագովներին, որոնց համոզմամբ իսկական երաժշտությունը սկսվում է «կոնտրապունկտից», այսինքն՝ պոլիֆոնիայից:

Միաձայնության և բազմաձայնության հնարավորությունների մասին պատկերացում տալու համար Շելլինգը համեմատում է Սոֆոկլեսի «Էդիպ» և Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգությունները: «Էդիպ»-ում «բացի եղելության «մեղեդիից» ոչինչ չկա, մինչդեռ այստեղ՝ դասեր կողմից լքված Լիրին հակադրվում է հոր կողմից լքված որդու պատմությունը»¹⁹:

Միայն բազմաձայնության միջոցով է, որ կարելի է կերտել «զուգահեռ դրամատուրգիա», դրսևորել «ամբիվալենտ»՝ այսինքն հակադրամիասնական զգացմունքներ, համադրել անձի «ես»-ը իր «երկրորդ ես»-ին (alter ego):

Եթե 2-3 հոգու միաժամանակ խոսելը անհեթեթություն է, ապա մի քանի գործող անձանց միասնական երգեցողությունը օպերային ժանրի դրամատուրգիական կարևոր հանգույցներից է: Վառ օրինակներից է հայտնի կվարտետը՝ Վերդիի «Ռիգոլետտո» օպերայից: Գերազանց օրինակ են Լայպցիգում Մոցարտի հորինած երկու կանոնները, որոնց մասին Ռոխլիտցը պատմում է. «Մեկը եղերական էր, մյուսը՝ կո-

¹⁸ Փ. Շելլինգ, *Философия искусства*, Москва, 1966, стр. 204.

¹⁹ Փ. Շելլինգ, *Философия искусства*, стр. 205.

միկական: Յուրաքանչյուրն առանձին հիանալի էր, սակայն երբ այդ երկու կանոնները երգեցին միասին, ապա... ստացվեց միաձուլված հակադրությունների օրգանական միասնություն.. այնքան ցնցող, որ մենք սարսափելի հուզված էինք»... Մեջբերելով սա, Գ. Չիչերինը մեկնաբանում է. «Մենք խորանում ենք տիեզերական ուժերի այնպիսի խորքերը, ուր հակադրությունների միասնությունը իրականություն է»²⁰:

Հատկանշական է նաև Օսվալդ Շպենգլերի դատողությունը. «Հելլենական երաժշտությունը դարձավ հնչյունների պլաստիկա, առանց պոլիֆոնիայի, հարմոնիայի, որոնք արտահայտում են հնչյունային տարածականություն, և իբրև ինքնուրույն արվեստ, անտիկ երաժշտությունը զրկվեց մեծ հնարավորություններից»²¹: Մինչդեռ, ըստ փիլիսոփայի, Արևմուտքում երաժշտությունը գերազանցեց բոլոր արվեստներին: Եվ դա սկիզբ առավ «բարոկ» ժամանակաշրջանից: Ըստ երաժշտագետ Մ. Լոբանովայի, «հենց բարոկ շրջանում կարողացան երաժշտության մեջ «լսել» տարածությունը և տարածության մեջ լսել երաժշտությունը, երաժշտականորեն իմաստավորել և զարդարել տարածությունը»²²:

«Ոչ տարածական երաժշտությունը a priori ոչ փիլիսոփայական է», - եզրակացնում է Շպենգլերը²³:

Բազմաձայնությունը փիլիսոփան համեմատում է գեղանկարչության հեռանկարի գյուտի հետ: «Սակայն, հանձին Բախի, զուտ նվագարանային երաժշտությունը հաղթեց գեղանկարչությանը՝ լինելով աստվածգագության բացահայտման միակ և վերջին միջոցը»²⁴:

Նախքան Շելլինգը, Գեորգ Հեգելը նշել է, որ եկեղեցական երաժշտությունը գործունի ոչ թե սուբյեկտիվ, առանձին զգացմունքի հետ, այլ համայնքի ընդհանրական զգացմունքի հետ:

Կրոնական երաժշտությունը Հեգելը համարում է այն ուժեղագույնը և խորագույնը, ինչը ընդհանրապես կարող է ստեղծել արվեստը: Եվ որպես կատարելատիպ, փիլիսոփան վկայակոչում է Բախի արվեստը, մասնավորապես Քրիստոսի տառապանքները մարմնավորող «պասիոնները»²⁵: Պատահական չէ, որ «Չարչարանքներ ըստ Մատթեոսի» պասիոնը Շպենգլերը, իր հերթին, համարում է «համայն մարդկության զգացմունքների ողջ խորության սպառիչ արտահայտողը»²⁶:

Դժվար է պատկերացնել Բախի արվեստը՝ առանց միջնադարյան արվեստի նախընթաց զարգացման: Անդրադառնալով հոգևոր երաժշտությանը, Ա. Շվայցերը համեմատում է Մարտին Լյութերի և Ժան Կալվինի դիրքորոշումները:

Գերմանական Բարեփոխված Եկեղեցու պաշտոներգության համար Լյութերը ճշգրիտ զգացողությամբ ընտրեց, հարդարեց 14-15-րդ դդ. բանաստեղծության գանձարանից, ինչպես նաև ժողովրդական երգարվեստից քաղված բազմաթիվ նմուշներ

²⁰ Գ. Чичерин, Моцарт, Ленинград, 1979, стр. 102-103.

²¹ О. Шпенглер, Закат Европы, Минск-Москва, 2000, стр. 337.

²² Генрих Шютц, (сборник статей) Москва, 1985, стр. 240.

²³ О. Шпенглер, նշված աշխատություն, էջ 357:

²⁴ О. Шпенглер, նշված աշխատություն, էջ 451:

²⁵ Г. Гегель, Эстетика, Москва, 1971, том 3, стр. 333.

²⁶ О. Шпенглер, նշված աշխատություն, էջ 359:

և կազմեց գերմաներենով երգվող խորալների ժողովածու:

Կալվինը հիմք ընդունեց ռոմանական ժողովուրդներին հոգեհարազատ միայն լատիներեն երգերը: Շվայցերը գրում է. «Գերմանական Ռեֆորմացիայի բախտը բերել է, որ գտնվել է Լյութերի պես մեկը, ով թույլ չտվեց ծառահատեն հին անտառը... Գիտակցեց, որ նոր երգը պետք է աճի հնի ստվերում»²⁷: Իսկ ռոմանական հողի վրա հոգևոր երգը չբարգավաճեց, բացի այդ, Կաթոլիկ Եկեղեցին վտարել էր և երգեհոնը: Ահա թե ինչու հետագայում ստիպված եղան սաղմոսներին գումարել գերմանական խորալներ և անգլիական երգեր: Մինչդեռ խորալի հիման վրա Գերմանիայում ստեղծեցին խմբերգեր, երգեհոնային պրեյլուդներ, ֆուգաներ: Ըստ երաժշտագետ Միխայիլ Դրոսկինի, Բախն իր արվեստում օգտագործել է ավելի քան 389 խորալներ²⁸: Այս և այլ երաժշտականները նախքան Բախը զարգացրել էին Յոհան Պախելբելը, Գեորգ Բյոմը, Դիտրիխ Բուքստեհուդեն:

Շվայցերը առանձնացնում է խորալային մեղեդու մշակման երեք կերպ: Մի դեպքում մեղեդին մնում է անփոփոխ՝ որպես *cantus firmus*: Սա բնորոշ է Պախելբելին: Բյոմը վարվում է այլ կերպ: Նա մեղեդին տարրալուծում է զարդանախշերում, պատաստուկի պես ներհյուսում հարմոնիայի մեջ: Իսկ Բուքստեհուդեն խորալի մեղեդու հիման վրա կերտում է ազատ ֆանտազիա:

Բախը եկավ ամփոփելու և կատարելության հասցնելու նախորդների փորձը: Բացի Լյութերի երգերից, Բախը օգտվել է միջնադարյան Օնդյան, Ջատկական երգերից, թարգմանված լատինական հիմներից, Յոհան Ֆրանկի, Պաուլ Գերհարդտի և այլոց հոգևոր երգերից: Բացի այդ, Բախը ամփոփել է նաև ֆրանսիական և իտալական վարպետների արվեստի ձեռքբերումները: Հատկապես Ջովաննի Գաբրիելիի, Կլաուդիո Մոնտեվերդիի նվաճումները, որոնք նույն Գաբրիելիի մոտ կրթված Հայնրիխ Շյուտցը ներմուծեց Գերմանիա:

Բախի երաժշտության աննախադեպ գորությունը Շվայցերը բացատրում է նաև այն բանով, որ, ի տարբերություն նախորդների, որոնք բավարարվեցին միայն կատարելագործելով ձևերը, Բախը կատարյալ ձևը ծառայեցրեց բովանդակության առավել պատկերավոր դրսևորմանը: Խորալային մեղեդին պարուրող ձայների միջոցով Բախն, ասես, նկարագարող է բանաստեղծական տեքստը:

Շվայցերը Բախի երաժշտությունը բնորոշում է որպես գեղանկարչական և բերում է բազմաթիվ օրինակներ խորալներից, կանտատներից և այլ գործերից: Այսպես, Ադամի անկումը Բախը պատկերում է երգեհոնի բասի վարընթաց թռիչքներով, Քրիստոսի Հարությունը՝ Ջատկական խորալում՝ բասի վերընթաց թռիչքներով: Մեկ այլ տեղ մոգերի երկրպագությունը արտահայտվում է վարընթաց դարձվածների շղթայումով:

«Ձուգահեռ դրամատուրգիայի» վառ օրինակ է «Բոլոր մարդիկ պետք է մեռնեն» խորալը, որում մեղեդին երգում է անխուսափելի մահվան մասին, մինչդեռ մյուս ձայնում, հակառակ սրան, կանխագուշակվում է ապագա փառքը:

Շվայցերը բերում է նաև օրինակներ, որոնցում կիրառված է թվերի խորհուրդը. «Տասը պատվիրան» խորալում մեղեդու առաջին հատվածը տասն անգամ կրկնվում

²⁷ А. Швейцер, նշված աշխատություն, էջ 9:

²⁸ М. С. Друксин, И. С. Бах, Москва, 1982, стр. 185.

է երգեհոնի բասում: Եռաձայն ֆուգաները, նաև եռակի ֆուգաները խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը: Նման և բազում այլ օրինակներով է հագեցած Բախի ողջ արվեստը:

Վերը նշվածը վկայում է այն մասին, թե ինչպիսի հնարավորություններից էր զրկված ոչ միայն անտիկ, այլև վաղ միջնադարյան մոնոդիան, թե, շնորհիվ պոլիֆոնիայի, որքան կարելի է խորանալ և երաժշտության մեջ առավել վառ կերպով արտացոլել աստվածաշնչյան գաղափարները: Պոլիֆոնիան ունի հետաքրքիր մի յուրահատկություն՝ բազմաձայնության միջոցով կարելի է քողարկել նույնիսկ որևէ մի անշուք մեղեդի: Ահա թե ինչպես է նկարագրում «պոլիֆոնիայի այդ հրաշքը» (Շվայցեր) Մարտին Լյութերը. «... Զարմանալի է և արտասովոր հետևյալը. մեկը երգում է մի վատ մեղեդի... և նրա կողքին երգում են ևս երեք, չորս կամ հինգ երգիչներ, որոնց ձայները այդ վատ մեղեդու շուրջը ցնծությամբ խաղում են և թռչկոտում, նույն այդ մեղեդին հրաշալի և պեսպես զարդարում ու պճնում, ասես երկնային շուրջապար են բռնում... Աշխարհում չկա ավելի հրաշալի բան, քան նման երգեցողությունը»²⁹:

Ավելի մեծ հրաշք է, երբ և՛ մեղեդին է լավ, և՛ այն զարդարող ձայների համաստեղությունը: Այդպիսին է Բախի դարակազմիկ «Ֆուգայի արվեստը»:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ «ՊՈԼԻՖՈՆԻԱՆ»

Վերը շարադրվածը մի դրվագ էր պոլիֆոնիայի պատմությունից: Մակայն պատմությունն էլ իր «պոլիֆոնիան» ունի: Նկատի ունենք մշակութային «բազմաձայնությունը»: Ահավասիկ, վերը նշվեց, որ գրիգորյանական խորալը գոյացավ հայ հոգևոր երգի ազդեցությամբ: Խորալը բազմաձայնվեց 9-րդ դարում, մինչդեռ պատմության ելևէջների բերումով հայկական հոգևոր երգի առաջին բազմաձայն նմուշները ստեղծվեցին 19-րդ դարի վերջում:

Կարծես, Եվրոպան իր պարտքը վերադարձրեց Հայաստանին՝ հանձին Կոմիտասի և Եկմալյանի, որոնք իրենց բարձրագույն կրթությունը ստացան Եվրոպայում:

Մեկ այլ գուցահեռ:

Ինչպես Լյութերը, Վալտերը և Ռուպֆը կանոնավորեցին գերմանական խորալները, այնպես էլ երեք դար հետո հայ եռյակը՝ Գևորգ Դ Կաթողիկոսը, Նիկողայոս Թաճյանը և Մակար Եկմալյանը կարգավորեցին Պատարագը, Շարակնոցը և Ժամագիրքը:

Գևորգ Դ Կաթողիկոսի նպատակն էր նոտագրել, խմբագրել հոգևոր երգը և, վերացնելով հայկական եկեղեցիներում տեղ գտած երգեցողության տեղային տարբերակները, ի մի բերել պաշտոնեցությունը:

Հաջորդ քայլը կատարեց Մ. Եկմալյանը՝ այս բյուրեղացրած մոնոդիաների հիման վրա կերտեց իր բազմաձայն Պատարագը, որը լույս տեսավ Լայպցիգում, 1896-ին:

Խրիմյան Հայրիկը անմիջապես ողջունեց Եկմալյանի բազմաձայնած Պատարագը: «...այսու Հայրապետական կոնդակով քաջալերենք զքեզ, զի առաւել եւս ի յառաջադիմութիւն նկրտիցիս:

²⁹ А Швейцер, նշված աշխատություն, էջ 24:

Այդ ոչ միայն մեզ ցանկալի եւ նախանձելի է, այլ եւ համաձայն հայոց եկեղեցասեր ժողովրդեան՝ հոգեզմայլութեամբ լսել զքաղցրաձայն զերգեցողութիւնս, զոր պաշտէ Հայաստանեաց Եկեղեցին»³⁰:

Եկմայանի Պատարագի բազմաձայնությունը ուներ հոմոֆոն-հարմոնիկ կերտվածք, որում գերիշխողը մեղեդին է, իսկ մնացած ձայները լոկ ակորդային հենարան են: Մինչդեռ Կոմիտասի Պատարագի բազմաձայնությունը բուն պոլիֆոնիկ շարադրանք է, որում ձայները ինքնուրույն են:

1912-ին Կոմիտասը հիմնականում ավարտեց իր Պատարագը: Վարդապետը որոշել էր մաքրագրել և ամբողջացնել այն և հասավ մինչև 17-րդ էջը, սակայն վերահաս հիվանդությունը և 1915-ի Հայոց ցեղասպանությունը ընդհատեց ոչ միայն Կոմիտասի գործը, այլև անդունդի եզրին հասցրեց հայ մշակույթի և ողջ ժողովրդի ֆիզիկական գոյությունը:

Հոգևոր երաժշտության զարգացումը խաթարվեց խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Ալեքսանդր Փիրումյանը առաջինն էր, որ Ստալինի մահից հետո, 1954-ին, իր 2-րդ կվարտետում համարձակվեց օգտագործել Գրիգոր Նարեկացու «Հալիկ» տաղի մեղեդին: Նույն տաղը Էդգար Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիայի (1959 թ.) հիմնականությունը հանդիսացավ: Տաղի մեղեդու մասնիկները աննկատ կերպով խմորվում են, հասունանում 1-ին և 2-րդ մասերի «ընդերքում» և հասնելով, այսպես ասած, կրիտիկական մասսայի, մեղեդին իր ամբողջ ուժով և «հասակով» ժայթքում է սիմֆոնիայի 3-րդ մասում: Ժայթքում, ինչպես ծովից բխած հրաբուխ, ու կրկին տարրալուծվում ալեկոծ ծովում: Սրանով հանդերձ, մեղեդին դառնում է մի առանցք, որի շուրջը, կենտրոնաձիգ ուժերի շնորհիվ, համախմբվում է ողջ սիմֆոնիայի հնչյունազանգվածը, ինչպես մոլորակները արևի շուրջ:

Ըստ Ա. Ալշվանցի, թեմագոյացման, ձևակառուցման այս սկզբունքը հիմնել է Բեթ-հովենը: Մինչ այդ, ստեղծագործության թեմաները կոմպոզիտորները ներկայացնում էին պատրաստի վիճակում, ինչպես գեղանկարիչներն իրենց ավարտված կտավները: Մինչդեռ Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայում թեման ծնվում է ունկնդրի ներկայությամբ: Ֆրիդրիխ Նիցշեն կասեր. «Ես լսում եմ երաժշտության գոյացման պատճառները» (Նման երևույթի կարելի է հանդիպել կինոարվեստում: Օրինակ, Դավիթ Սաֆարյանի «Կորսված դրախտ» ֆիլմում կիրառված է հետևյալ հնարքը:

Նկարահանվում է մի շինության պայթեցման ընթացքը, որից հետո ժապավենը հետ են պատեցնում, և, ի հեճուկս ավերիչ ուժերի, դիտողի առջև ցրիվ եղած շինության մասնիկներից և փոշուց հավաքվում ու վերակառուցվում է այն):

Երբ, այսպես կոչված, «խրուշչովյան ձևալից» հետո հնարավոր եղավ նշելու Ցեղասպանության 50-ամյակը, ազգային ինքնագիտակցության վերելքի ալիքի վրա ապարեզ եկան հոգևոր երգերի մի շարք մշակումներ: Սրան նպաստեց նաև Հայաստանի կոմպոզիտորների տան համերգասրահում երգեհոնի տեղադրումը: Ասպարեզ եկավ Վահագն Ստամբոլցյանը, հիմնադրեց երգեհոնային դպրոց, տարածեց Բախի, Հենդելի և այլոց գլուխգործոցները, Լուսինե Զաքարյանի հետ բեմ հանեց հոգևոր երգարվեստը:

³⁰ Ն. Թահմիզյան, Մակար Եկմայան, Երևան, 1981, էջ 31:

1965-ին լույս տեսան միջնադարյան տաղերի՝ Ռոբերտ Աթայանի մշակումները՝ ձայնի և դաշնամուրի (կամ երգեհոնի) համար: Այդ թվում էին նաև Գրիգոր Նարեկացու «Հալիկ», «Հաւուն, հաւուն». «Սայլն այն իջանէր» տաղերը:

1971-ին տպագրվեցին Մեսրոպ Մաշտոցի 8 շարականներ՝ Գևորգ Արմենյանի մշակմամբ, 1974-ին Սահակ Պարթևի շարականները՝ Էմին Արիստակեսյանի կողմից: Ձայնի և դաշնամուրի համար մշակված այս երգերը հիմնականում ունեն հոմոֆոնիկ կերտվածք: «Հալիկ» տաղի բուն պոլիֆոնիկ մշակում 1964-ին կատարել է Լևոն Աստվածատրյանը իր «Պրոլոգ» նվագախմբային գործում: Իսկ 1970-ականների սկզբին Մերգեյ Աղաջանյանը ստեղծեց չորս «Պոլիմոնոդիա»՝ լարային նվագախմբի համար: Սրանք հիմնված էին Գրիգոր Նարեկացու «Հալիկ», «Հաւուն, հաւուն» և Ներսես Շնորհալու «Ստեղծող մանկանց» ու «Տէր յերկնից» երգերի վրա: Որոշ խտացումներով և նոսրացումներով այս մոնոդիաները ամբողջությամբ հերթով անցնում են չորս ձայների միջով:

Ժամանակին վիճահարույց «պոլիմոնոդիա» եզրը առաջարկել է կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը: Այն բառացի նշանակում է բազմամիաձայնություն կամ միաբազմաձայնություն: Երաժշտագետներից ոմանք այս հակասական եզրը ընդունում են որպես լոկ ստեղծագործության անվանում, իսկ մյուսները պոլիմոնոդիան, ինչպես որ կա, համարում են դասական պոլիֆոնիայի իմիտացիոն մի ձև, յուրատեսակ մի կանոն:

Թվում է, թե վեճերը կդադարեն, եթե շեշտը դրվի ոչ թե ձևակառուցման կամ ձայների շարադրման եղանակի (իմիտացիայի), այլ ստեղծագործության բովանդակության, հիմնանյութի վրա, ձայների ֆունկցիայի վրա: Այսինքն պոլիմոնոդիայում սովորական իմիտացիայի է ենթարկվում ոչ թե սովորական չեզոք թեմա, իր մասնիկներով հանդերձ, այլ՝ հատուկ դիմագիծ և կառուցվածք ունեցող հայկական միջնադարյան մոնոդիա, որը չի տրոհվում մասնիկների:

Այս իմաստով պոլիմոնոդիան յուրահատուկ մի «մակրոկանոն» է: «Պոլիմոնոդիա» եզրի հակասությունը մեղմվում է, եթե նկատի առնենք, որ «հոմոֆոնիա» նշանակում է մեկ, միևնույն ձայն, բայց սրանով նշում են բազմաձայնության մի տեսակը: Եվ հակառակը, «մոնոդիա» նշանակում է մեկ մեղեդու կատարումը առանց նվագակցության: Երաժշտական հանրագիտարանում գրված է. «... սակայն օրինաչափորեն է նաև տերմինների այլ գործածությունը՝ հոմոֆոնիա, որպես միաձայնություն, «միահնչողություն», իսկ մոնոդիան՝ որպես նվագակցվող մեղեդի, «երգեցողություն»՝ ձայներից մեկում»³¹:

Մինչ երաժշտագետները վիճում էին, Էդուարդ Փաշինյանը ջանասիրաբար շրջանառության մեջ էր դնում հիշյալ եզրը: Նշելով արևմտաեվրոպական և հայկական երաժշտության լադամտաձողության և բազմաձայնության կերտվածքի տարբերությունները, Է. Փաշինյանը գրում է. «Կոմիտասը այդ հարցը լուծել է պոլիլադային-պոլիտոնալ, պոլիմոնոդիկ ֆակտուրային գոյացումների դիրքերից... հուսալի ճանապարհ հարթելով ազգային կոմպոզիտորական արվեստի հետագա զարգացման համար»³²: Քանի որ խոսքն այստեղ հիմնականում եկեղեցական երաժշտության բազ-

³¹ Музыкальная энциклопедия, Москва, 1973, том 1, стр. 1047-1048.

³² Երաժշտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2000, պրակ 1, էջ 20:

մաձայնման մասին է, ուստի չենք հիշատակում աթեիստական գաղափարախոսության գոհ դարձած կոմպոզիտորներին: Սակայն անհնարին է խոսել հայ երաժշտության մասին և չնշել Արամ Խաչատրյանի անունը, ով թեպետ կրոնական բովանդակությամբ գործեր չի ստեղծել, բայց ի վերուստ նրան տրված էր արարել գեղեցիկը, ներդաշնակը: «Ա. Խաչատրյանի երաժշտությունը,- գրում է Վիկտոր Յուզեֆովիչը,- ներքո է այս գեղեցիկ աշխարհին: Քանզի, ինչպես ասաց ամերիկացի մի քննադատ, եթե լույսը, մաքուր լույսը վերաձուլենք հնչյունի, ապա դրանից ծնված երաժշտությունը կլինի Խաչատրյանի երաժշտությունը»³³: Իսկ գեղեցիկը, ներդաշնակը և լույսը նույնպես աստվածայինի դրսևորումներն են:

Ի դեպ, հայտնի է, Խաչատրյանն իր 2-րդ սիմֆոնիայում մեծ վարպետությամբ միահյուսել է «Dies irae» (Օրը ցասման) գրիգորյանական խորալը և «Ռիսկան ախպեր» երգը:

Ահեղ դատաստանը հիշեցնող այս խորալը հնչում է նաև կոմպոզիտորի 1-ին սիմֆոնիայում: Եվ հատկանշական է, որ այս առիթով երաժշտագետ Գեորգի Խուրովը նշում է. «Այստեղ պատմական էքսկուրսի տեղը չէ, սակայն «Dies irae» միջնադարյան խորալային սեկվենցիայի արևելյան ծագումն, ըստ իս, անկասկած է»³⁴: Այո, լույսը ծագում է Արևելքից և բազմապատկված արտացոլվում Արևմուտքից:

Եթե Գեորգի Խուրովը պատմական էքսկուրս կատարեր, հավանաբար Վ. Կոնենի և Տ. Լիվանովայի պես կեզրակացներ, որ այդ «Արևելքը» Հայաստանն է՝ քրիստոնեական առաջին երկիրը:

Ա. Խաչատրյանին հաջորդող սերունդները հայտնվեցին ավելի նպաստավոր պայմաններում: Եվ նրանք սկսեցին առատորեն օգտվել միջնադարյան հոգևոր երաժշտության ակունքներից:

Նարեկացու և Շնորհալու երգերը շատերն են բազմաձայնել: Բացի վերը նշվածներից՝ նաև Ռուբեն Ալթունյանը, Միքայել Կոկժայանը... Ամենաուշագրավ տաղերից է հիշյալ «Հալիկ»-ը: Պատահական չէ, որ այդքան շատ կոմպոզիտորներ են դիմել այդ երգին: Նարեկացու այս գլուխգործոցը մեզ հասել է Կոմիտասի հարդարմամբ և փոխանցմամբ:

1912-ին ձայնագրության անկատար միջոցներով իրականացված Կոմիտասի ձայնակավառակից այդ տաղը նոտագրել է Մուշեղ Աղայանը: Ժամանակակից տեխնիկայի միջոցներով հնարավորինս մաքրված նույն սկավառակից մի նոր տարբերակ է գրառել Տիգրան Մանսուրյանը: Ահա այս տարբերակն է կոմպոզիտորը մշակել լարային ալտի և հարվածայինների համար: Նախքան այս մշակմանը անդրադառնալը, ներկայացնենք նույն տաղի այլ մշակումները՝ կատարված Երվանդ Երկանյանի և Վարդ Մանուկյանի կողմից:

Անփոփոխ թողնելով տաղի մեղեդին՝ Վ. Մանուկյանը ավելացրել է դաշնամուրի նվագակցությունը, որը մերթ հնչում է որպես եկեղեցական զանգեր, մերթ իր խաղիկներով նմանակում հնագույն նվագարաններին:

Իսկ Ե. Երկանյանը նույն տաղը բազմաձայնել է երգեհոնի համար: Ընդ որում մեղեդու տարբեր հատվածները կոմպոզիտորը բաշխել է և շղթայել տարբեր ձայներում

³³ В. Юзефович, Арам Хачатурян, Москва, 1990, стр. 8.

³⁴ Г. Хубов, Арам Хачатурян, Москва, 1962, стр. 82.

և օկտավաներում: Մեղեդին վերին ուղորտներից իջնում է վար՝ 3-րդ օկտավայից մինչև փոքր օկտավա և վերստին բարձրանում վեր: Այսպիսով, «հալիկը պայծառ» արևի պես վերնից իջնում է վար՝ «մայր մտնում» ներքևի ռեգիստրում և հետզհետե կրկին բարձրանալով պայծառանում: Այս գաղափարի մեծակերտ դրսևորումն է Ռ. Վազների «Լոհենգրին» օպերայի նախանվագը:

Ջութակները բարձրագույն ռեգիստրից սահում են վար, սրանց հետզհետե միանում են մյուս նվագարանները և ողջ նվագախումբը «լուսավորվելուց» հետո, տեղի է ունենում հակառակ շարժում դեպի վերին ուղորտները, որտեղից այն սկսվել էր:

Սա առաքինի ասպետ Լոհենգրինի էջքն էր երկնային դղյակից (Գրաալից), ով ելել էր պաշտպանելու հալածվածներին: Եվ քանի որ ասպետին չհավատացին, ձյունափետուր աղավնին բարձրացրեց նրան երկինք...

Հիմնական թաշխման առումով (բայց ոչ վիրտուոզությամբ) Երկանյանի գողտ-րիկ մշակումը հիշեցնում է Բախի «Ein feste Burg» խորալային պրեյլուդը: Վերջինիս մասին Ա. Շվայցերը գրում է, թե ինչպես Բախը մասնատում է մեղեդին տարբեր հատվածների, որոնք լսողի առջև ընթանում են Բուքստեհուդեի ոգով գրված փայլուն, աշխույժ ֆանտազիայի թևերով:

Առաջին ֆրագը նա հանձնարարում է սուպրանոյին, երկրորդը՝ ալտին, երրորդը՝ տենորին, չորրորդը՝ բասին³⁵:

Այլ կերպ է վարվում Տ. Մանսուրյանը իր «Հալիկ» տաղում: Մեղեդին թողնում է ամբողջական և հաճախ առանց նվագակցության:

Վիբրաֆոնը սկսում է նախանվագը՝ հնչում է Կոմիտասի «Էս առուն ջուր է գալիս» երգի մի դարձված, այնուհետև՝ տաղի մի «ծվեն», որից հետո ալտը սկսում է նվագել տաղը: Ժողովրդական և հոգևոր երգի տարրերը Մանսուրյանը միաձուլում է և «Հալատով խոստովանիմ» երկում:

Իսկ «Հալիկում» գումարվում է նաև գուսանական երգի շունչը: Իր վերծանած մեղեդիում Մանսուրյանը որոշ կիսատոներ ամբողջացրել է և, հակառակը, դրանով իսկ ընդգրծել տաղի հայեցի բնույթը:

Հետաքրքրական է, որ Մ. Աղայանի տարբերակի 9-րդ տակտի կիսատոն ֆորշլագը Մանսուրյանը դարձրել է մեկ տոն, սակայն ֆորշլագի այդ ալտերացված «gis» (սոլ դիեզ) հնչյունը (Մանսուրյանը մեկ տոն բարձր է նոտագրել) ալտի «g» (սոլ) հնչյունի հետ հնչում է միաժամանակ (վիբրաֆոնի «եթերում»)³⁶: Այդ «սոլ դիեզը» «ոե տոնիկայի» հետ կազմում է Տ. Մանսուրյանի նախասիրած «եռատոն» լայտինտերվալը, որը առանցքային է նաև «Հալատով խոստովանիմ» երկում:

«Հալիկի» գործիքավորումը գտնված է, դիպուկ: Վիբրաֆոնը հայկական նվագարան չէ, սակայն օրգանապես միահյուսվում է տաղին: Նրա ձգվող և օդում «հալվող» հնչյունները, զանգակների դողանջները, «փարաջանովյան» գույները պարուրում են տաղի մեղեդին, ինչպես Թեքեյանը կասեր՝ «քուլա-քուլա խունկերով»... Ի դեպ, մի առիթով Տ. Մանսուրյանը տողերիս հեղինակին խոստովանել է, թե «Հալիկ» տաղի հնչողությունը Է. Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիայում չափազանց հզոր է: Եվ ի տարբերություն այդ մեծակերտ մեկնաբանության, Մանսուրյանը շեշտում է տաղի քնա-

³⁵ **А. Швейцер**, նշված աշխատություն, էջ 36:

³⁶ **Կոմիտաս**, «Ազգագրական ժողովածու», «Հայպետհրատ», 1950, հ. 2, էջ 101:

րական, մտերմիկ կողմը: Այս առումով հատկանշական է Կարլ Գեյրինգերի մի դիտարկում՝ կապված Յոհաննես Բրամսի «Գերմանական ռեքվիեմի» հետ:

«Աննաման են... 2-րդ մասի սկզբի տեսիլային ուրախությունը և ցնծագին բերկրանքը, որը վերափոխվում է հեզությամբ լի պայծառացման: Ցանկացած այլ կոմպոզիտոր, Բրամսի փոխարեն, «Թող նրանք լցվեն հավերժական ուրախությամբ» խոսքերը կթնդացներ ամբողջ ուժով, մինչդեռ Բրամսը մինչ այդ հասունացրած «ֆորտիսիմո» հնչողությունը մարում է մինչև «պիանո», նույնիսկ շշուկային «պիանիսիմո», քանզի Բրամսի համար երջանկության գերագույն դրսևորումը մեղմ գործվանքն է»³⁷:

Ահա հենց սա է արվեստի անսպառ ներուժը, շարժիչ ուժը՝ «տարբերակային բազմազանությունը»: «Հալիկ» տաղում մի մշակող կարող է հիմք ընդունել, «զձայնիկըն ողորմուկ», «զաչերն արտասուօք» խոսքերը, մյուսը՝ շեշտել «զաբրիելեան փողոյն նման աննըման» հնչողությունը, և սա կապել նույնիսկ Ահեղ դատաստանի գաղափարի հետ... Սրբազան խորալները, շարականները և տաղերը, ասես, երաժշտության պատմության «լեյտմոտիվներն» են: Հավքերի պես թռչում են դարից դար, մի ստեղծագործությունից՝ մյուսը, յուրաքանչյուր կոմպոզիտորից ստանում յուրովի հանդերձանք և հարատևում մինչև օրս:

Օրինակ, «Dies irae» խորալը կիրառել են Բերլիոզը, Լիստը, Չայկովսկին, 20-րդ դարում՝ Ա. Հոնեգերը, Ս. Ռախմանինովը, Ա. Խաչատրյանը, Դ. Շոստակովիչը, մեր օրերում՝ Է. Միրզոյանը և այլք:

Եվս մեկ օրինակ: 16-րդ դարի կոմպոզիտոր Հայնրիխ Իզակի «Օ՛, Ինսքրուկ, ես պիտի լքեմ քեզ» երգը՝ կերպարանափոխված խորալի, մի քանի տարբերակով բազմաձայնված Բախի կողմից, հնչում է նրա կանտատներում, պասիոններում:

«Օ՛, աշխարհ, ես պիտի լքեմ քեզ» վերնագրված նույն խորալի հիման վրա Բրամսը կերտել է իր 3-րդ և վերջին՝ 11-րդ խորալային պրելյուդները՝ երգեհոնի համար: Այս մասին Կ. Գեյրինգերը գրել է. «Այս ցնցող ստեղծագործությամբ, որում յուրաքանչյուր տողը ավարտվում է արձագանքով, Բրամսը ընդմիջտ հրաժեշտ տվեց իր արվեստին և կյանքին»³⁸: Այսպիսով, անցյալի խորալները, շարականները և տաղերը «կամարակապում» են դարերը, հարատևում ներկայում և ապագայում, ինչպես օրինությունից օրինություն փոխանցվող Սրբալույս Մյուռոնը, միահյուսվում նորանոր երգերին, և ինչպես Գուստավ Մալերը կասեր, թվում է, թե ողջ Տիեզերքն է երգում...

Ավարտելով մեր խորհրդածությունները, կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունը.

Երաժշտության պատմության ընթացքը միաձայնությունից դեպի բազմաձայնություն ոչ միայն զուտ երաժշտության զարգացման խնդիր և արդյունք էր, այլև, առհասարակ, մարդկային ինքնագիտակցության վերելք, կյանքի իմաստի, նպատակի որոնումների արդյունք, միմյանց և Արարչի հետ մարդկության հաշտության անհրաժեշտության գիտակցումը: Մի բան, որի խորհրդանիշը, կատարելատիպն է բազմաձայն, ներդաշնակ երաժշտությունը՝ տիեզերական երաժշտության երկրային դրսևորումը:

³⁷ Կ. Գեյրինգեր, И. Брамс, Москва, 1965, стр. 331.

³⁸ Կ. Գեյրինգեր, նշված աշխատություն, էջ 237:

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մատենադարանի ավագ գիտաշխատող

Արվեստագիտության թեկնածու

ԽՈՍՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԺԱՆԱՀԻՇԱՏԱԿ ՀԱՅԱԳԵՏ ՉԱՐԼՁ ԴԱՌԻՍԵԹԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Օքսֆորդի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր,



Բրիտանական ակադեմիայի և Արքայական ասիական ընկերության պատվավոր անդամ Չարլզ Դաուսեթը հայտնի է հայագիտության ասպարեզում ծավալած իր բազմաբնույթ գործունեությամբ: Հայերենից կատարել է մի շարք թարգմանություններ, գրել բանաստեղծություններ, բանասիրական ուսումնասիրություններ, գրախոսություններ:

1954 թ. Դաուսեթը Քեմբրիջի համալսարանում որպես դոկտորական ատենախոսություն ներկայացրեց Մովսես Կադանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկի գրաբարից անգլերեն կատարած իր թարգմանությունը՝ առաջաբանով և գիտական ստույգ ծանոթագրություններով: Սույն աշխատությունը բարձր գնահատվեց մասնագետների կողմից:

Հուլիս արժեքավոր է նրա՝ «Արտաշես և Սաթենիկ» վիպերգի չորս անհասկանալի բառերի

նոր մեկնաբանությունը: Մեծ է նրա դերը Վենետիկի Մխիթարյան միաբանությունում լորդ Բայրոնի թողած հայագիտական ժառանգության վերհանման գործում: Դաուսեթը գրաբարից անգլերեն է թարգմանել Պողոս առաքյալին վերագրվող Կորնթացիների երրորդ թուղթը և կորընթացիների պատասխանը առաքյալին: Նրա գրչին է պատկանում Ղուկաս Ինճիճյանի «Ամարանոց Բիզանդեան» պոեմի թարգմանությունը:

1986 թ. Երևանում լույս տեսավ 7-րդ դարի բանաստեղծ Դավթակ Քերթոզի «Ողբքի մահն Ջեւանշիրի մեծի իշխանին» ստեղծագործության գրաբար բնագիրը՝ յոթ լեզվով զուգահեռ թարգմանությամբ: Անգլերեն թարգմանությունը կատարել է Չարլզ Դաուսեթը:

Կյանքի վերջին տարիներին բազկաթոռին գամված մեծ հայագետը գրեց «Սայաթ-Նովան՝ 18-րդ դարի աշուղ» («Sayat-Nova. An 18th Century Troubadour») 12 գլխից բաղ-

կացած 505 էջանոց աշխատությունը, որում ներկայացված են Մայաթ-Նովայի գործերի անգլերեն թարգմանությունները: Այս աշխատանքում նա կատարել է ոճաբանական և տաղաչափական հետազոտություններ, փորձել է խաղերի տողերում գտնել նաև կենսագրական տեղեկություններ: Աշխատության մեջ Մայաթ-Նովան դասվել է համաշխարհային գրականության այնպիսի դասականների շարքը, ինչպիսիք են՝ Սաֆոն, Օվիդիոսը, Հաֆեզը, Շեքսպիրը, Ռոբերտ Բյորնսը, Նարեկացին, Քուչակը:

Գերազանց տիրապետելով հայոց լեզվին, ինչպես գրաբարին, այնպես էլ աշխարհաբարին, Դաուսեթն իր իմացությունը փոխանցում էր ուսանողներին, որոնցից շատերը գալով Հայաստան և այցելելով Մատենադարան, խոսում էին մաքուր հայերենով:

Նրան հետաքրքրում էր նաև հայ ժողովրդի կյանքն ու կենցաղը: Հայաստանում անձամբ ծանոթանում էր հայ իրականությանը, շփվում մարդկանց հետ, ձայնագրում էր հայկական ժողովրդական երգերի Կոմիտասյան մշակումները: Լինում էր հայկական ընտանիքներում՝ արժանանալով ջերմ ընդունելության: Փորձում էր ընդօրինակել որոշ կենցաղային սովորույթներ, որպեսզի իր հարկի տակ հավաքվող ուսանողներին հյուրասիրի հայկական ճաշատեսակներով՝ «Կոունկի» և «Դլեյամանի» մեղեղիների ներքո:

Հայ ժողովրդի վիշտն ու ուրախությունը նաև նրանն էր: Ինչպե՞ս չհիշենք Հայաստանում տեղի ունեցած ահեղ երկրաշարժին նվիրված նրա բանաստեղծությունը.

*Այս է - բայց հի՛ մէ՛ ասեմ – ըՍպիտակ էր, այժմ ււերած,
գոր երկրաշարժըն կորոյս, զմեզ թաղելով ընդ նովաւ:
Դէզ է միայն որ մընաց. բընակիչք ի սըմա հանգըչիմք,
Մեզ յիշատակ եղեալ վեմք մեր սիրեալ քաղաքիս:*

Անգլիացի հայագետը բանաստեղծություն է գրել Գարի Կասպարովի՝ աշխարհի չեմպիոն դառնալու առիթով.

*Կասպարով, մեծ վարպետ, Հայկայ պատուական զաւակ,
Ի ձեռին քում Թագաւոր, Թագուհի, Հետեւակ,
Ձիաւոր, Խօլ, Դըղեակ, պատերազմ սաստիկ մըղեն,
Թող ի Լոնդոնի պայծառ լիցի քո յաղթանակ:*

*Առ Հընդիկս այս խաղ ծնաւ. միւս է աշխարհն այսօր.
Ճատրակի ախոյեան, սակայն, դեռ է թագաւոր:
Ջի՛նչ ասաց մեծն Օմար, որ ըզխաղըս զայս խաղայր.
Պարսկերէն զայս տողըս գրեաց, որոց իմաստն է խոր.*

*Աշխարհս է շախմատի տախտակ, ուր Բախտըն անըզգայ
Մարդկամբք իբրեւ սոսկ քարամբք ըզխաղըն զիւր խաղայ,
Աստ եւ անդ շարժէ զնոսա, ըսպառնայ, սատակէ,*

*Եւ ի վերջոյ ի տուփ խաւար զամենեւին տայ:
 Դու սակայն Բախտին իցես ընդդիմամարտ ճարտար.
 Ո՞վ պընդէ, թէ Բախտըն կոյր քան զքեզ է բազմահնար:
 Մեզիւն սէօլէ, մաթ էղան, գոչէ Մայաթ-Նովա:
 Ախոյեան, արի, յաղթեա, արդար և քաջաբար:*

Չարլզ Դաուսթը Մաշտոցյան Մատենադարանում ծանոթացավ նաև միջնադարյան հայ մանրանկարչական արվեստի հետ: Մագաղայայա ոսկեշող գունազարդ պատկերներով հարուստ մատյանները հիացրել էին նրան: Նա մեծ ոգևորությամբ հետևում էր, թե ինչպես մանրանկարչուհին դրանք ընդօրինակում էր մագաղաթի տեսք տրված թղթի վրա: Դա նրան միտք թելադրեց՝ Անգլիայից Մատենադարան ուղարկել ծրարված մագաղայայա մի պատառիկ, որ գնել էր գրավաճառից: Նկարչուհին, իբրև շնորհակալություն, նրան ուղարկեց մի նամակ, որի մեջ տերևի վրա պատկերված էր Քրիստոսի Սուրբ Ծնունդը՝ հետևյալ մակագրությամբ. «Հայաստանից մի ծիրանի տերև»:

Չարլզի պատասխանը եղավ մի սքանչելի բանաստեղծություն, որը տպագրվեց Երևանի պետական համալսարանի հրատարակած «Աստղիկ» տարեգրքում՝ գրաբար, աշխարհաբար և անգլերեն լեզուներով:

Ստորև ներկայացնում ենք այդ բանաստեղծությունը.

ԱՍՏՂԻԿ ԳԵԻՈՐԳԵԱՆԻՆ

*Ի վերայ շէկ տերեւոյ ծիրանին -
 յԱյրարատ ըզծիրանըն Նոյ տընկեաց -
 Աստղիկ իբրեւ ընծայ բարեկամին
 Հովուերգական տեսարան նրկարեաց:*

*Գարուն է. մի հովիւ, երիտասարդ,
 Մեղմիկ զարկանէ զհւր սըրինգ հըլու.
 Գըլխարկ կարմիր է, պատմուճան անգարդ.
 Ընդ ծառով սպիտակ նոխազ ընդոստնու:*

*Կապոյտ են երկինքըն, կանաչ է խոտ.
 Անդաստանն ծաղկի. թեթեւ հով փըչէ.
 Յասմիկ վայրի տարածէ անոյշ հոտ.
 Ի բարձունս ոսկի արեւըն փայլէ:*

*Տեսլարանն է հին, տեսլարանն է նոր.
 Բնութիւնն է խաղաղ, Մարդոյ հընազանդ.
 Աշխարհըն, կեանքն են գեղեցիկ. բոլոր
 Մարդկային երջանկութիւնըն է անդ:*

*Այժմ իրք այնպես միշտ ոչ երեւին.
Երկրաշարժք պատահին, կոխք, ւաւրածք.
զՈր ոչ բերէ ոճրագործ, թըշնամին,
Մարդկանց շընորհեն մոռացկոտ աստուածք:*

*Բարի՛ս ունիմք: Չէ մեծ նոցին թիւըն:
Թերեւըս տեսցուք մեք նոր Ոսկի Դար -
Թէ Մարդ եղիցի որպէս զհովիւըն
Եւ նըկարչուհին նորա՝ բարերար:*

Հայ մշակույթի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը նա պահպանեց մինչև իր կյանքի վերջը: Աշուղական պոեզիայի ամենապայծառ հեղինակին՝ Սայաթ-Նովային նվիրած իր վերջին աշխատությունը Դաուսեթը ուղարկեց իր լավագույն բարեկամներին՝ Մատենադարանից դոկտոր Գևորգ Աբգարյանին և անգլիագետ Ռուզաննա Առաքելյանին, որը հետագայում գրեց «Չարլզ Դաուսեթը հայագետ» ատենախոսությունը:

Չարլզ Դաուսեթի անունը հպարտությամբ ենք հիշում: Այն միշտ վառ կմնա երախտապարտ հայագետների սրտերում:



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ստացան Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Աշոտ վրդ. Մնացականյանը և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Արմաշ վրդ. Նալբանդյանը:

Նախորդ օրը, հունվարի 14-ի երեկոյան, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդանի առջև, կատարվեց ուխտադրության կարգ, որի ընթացքում ընծայացուներն ուխտեցին հավատարիմ մնալ Ս. Ավետարանին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու արքայան կանոններին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, և ստորագրեցին երդմագրերը:

Հայրապետական Ս. Պատարագի ընթացքում Ս. Ստեփաննոսի Խորանի առջև նախ կատարվեց երկու ընծայացուների հավատքի ուղղափառության քննություն: Ձեռնադրվելիք եպիսկոպոսների մասին Վեհափառ Հայրապետին վկայեցին Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճանների ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև ժողովրդի զանազան խավերը ներկայացնող աշխարհականներ:

Այնուհետև Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: Ձեռնադրվողները, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան հոգևոր կյանքին բոլորանվեր նվիրման: Ձեռնադրության Մաշտոցից աղոթքների ընթերցմամբ Նորին Սրբությունն ընծայացուներին կոչեց եպիսկոպոսության, ապա Սրբալույս Մյուռնոնով օծեց ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները, որպեսզի առավել իմաստությամբ, առավել անձնվիրությամբ, որպես Աստծո պաշտոնյաներ, իրենց անձերն ընծայեն և շարունակեն բարի ծառայություն բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Ձեռնադրության արարողության ավարտին նորաօծ եպիսկոպոսներին հանձնվեցին եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գավազաններ և մատանիներ, ինչպես նաև, ի նշան Աստծո Խոսքի անձանձիր քարոզության՝ Ս. Ավետարան:

Օծման ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաօծ եպիսկոպոսներին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**

«Յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ»:

(Բ Կորնթ. Զ 4)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ,

Հոգեպարար զգացումներով առկեցուն է Մեր հոգին այս խորհրդավոր պահին, քանզի այսօր եպիսկոպոսական ձեռնադրության սրբազան արարողությամբ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կյանքում նորովի Հոգեգալուստ է, Սուրբ Հոգու շնորհաց մատուցականություն՝ ի շինություն և ի բարեկարգություն «Սրբոյ Եկեղեցւոյս մերոյ»: Այսօր ձեր աղոթակցությամբ կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրությունը մեր երկու հոգևորականների՝ շնորհելով նրանց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարձրագույն հոգևոր իշխանությունը ներկայացնող եպիսկոպոսության աստիճանը: Նորոգ ձեռնադրյալ եպիսկոպոսները, առաքելական պատվերի համաձայն, թե՛ «յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ» (Բ Կորնթ. Զ 4), ուսամբարձեցին տերունահաստատ առաքելության լուծը՝ «հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ Իւրով» (Գործք Ի 28):

Արդարև, անցյալում են մնացել մոռալ օրերը մեր Եկեղեցու վերջին ժամանակաշրջանի պատմության, երբ Տիրոջ մշակներն իրենց հոգևոր սպասավորությունն իրականացնում էին «համբերութեամբ բազմաւ, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի զանս և ի բանտս» (Բ Կորնթ. Զ 4-5): Այսօր մեր Սուրբ Եկեղեցին իր փրկչական առաքելության շավիղներում անցյալի դժվարությունները հաղթահարած՝ կանգնած է նոր մարտահրավերների առջև՝ ազգային-եկեղեցական կյանքն առավել զորացնելու հրամայականով: Փառք և գոհություն Աստծո, որ Տիրոջ կամք և օրհնությամբ, Եկեղեցու առջև ծառացած խնդիրների լուծմանն ի նպաստ բարի արդյունքներ են արձանագրվում մեր Սուրբ Եկեղեցու առաքելության ընթացքին, և մեր հոգևորականաց շարքերը համալրվում են երիտասարդ նոր սպասավորներով, ներկայիս նաև՝ երկու նորած եպիսկոպոսներով, ովքեր ուխտեցին իրենց եպիսկոպոսական նվիրյալ ծառայությամբ «անխտոր և անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ և պատուիրանաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ»:

Եպիսկոպոսական ձեռնադրության արարողության ընթացքում իբրև խրատ ընթերցում ենք, թե՛ «Եպիսկոպոսը պետք է անարատ լինի, ինչպես Աստծու տնտեսը»: Նաև առաքյալը պատվիրում է. «Յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ», «իբրեւ զպաշտօնեայս Քրիստոսի եւ հազարապետս խորհրդոցն Աստուծոյ» (Ա Կորնթ. Դ 1): Մենք վստահ ենք, որ «յամենայնի» իրենց անձերն ընծայելով որպես Աստծո նախանձախնդիր պաշտոնյաներ, որպես հավատա-

րիմ սպասավորներ ու հոգևորականներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և համայն հայության հավատի վեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, նորոգ ձեռնադրյալ Աշոտ և Արմաշ Սրբազանները պիտի արդյունավետ շարունակեն իրենց առաքելությունը Տիրախնամ թեմերում Եգիպտոսի և Դամասկոսի: Եգիպտոսի և Սիրիո հայ գաղթօջախները հարուստ պատմություն ունեն, որը նշանավորված է հայ համայնքների հավատավոր կյանքի ընթացքով, ազգային գիտակցության պահպանման, մշակութային ու կրթական ձեռքբերումների իրականացմամբ և եկեղեցաշեն ու հայրենանպաստ բազում ձեռնարկումների իրագործմամբ: Ուրախություն է Մեզ համար նշել, որ երկու Սրբազաններն էլ առաջնորդ ընտրվելուց ի վեր իրականացնում են աշխույժ գործունեություն՝ ի բարգավաճումն տիրախնամ թեմերի և ի մխիթարություն հավատացյալ հայորդյաց:

Հայրենիքին և Մփյուռքին ծառայելու առաքելությանն են կոչված երկու նորած Սրբազանները: Աշոտ եպիսկոպոսը ծնվել է Հայաստանում՝ Գորիսի շրջանի Տաթև գյուղում, իսկ Արմաշ եպիսկոպոսը՝ Սիրիայի Հալեպ քաղաքում: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացն ավարտելուց հետո Աշոտ Սրբազանը Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ծառայության անցել 1700-ամյակի տոնակատարությունների իրականացման հանձնաժողովում, մինչև Արմաշ Սրբազանը Երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի տնօրինությամբ մեկնել է Գերմանիա՝ ուսումը շարունակելու, որտեղ և, ձեռամբ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Բեզյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ուսմանը զուգընթաց հովվական ծառայություն իրականացրել Գերմանիայի հայ համայնքներում: 2002 թվականից Աշոտ եպիսկոպոսը ծառայության է անցել Եգիպտոսի հայոց թեմում որպես առաջնորդական փոխանորդ և 2005 թ. ընտրվել է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ: Իսկ Արմաշ եպիսկոպոսը 2004 թ. ընտրվել է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ:

Լիաժույս ենք, որ նորոգ ձեռնադրյալ եպիսկոպոսների նախանձախնդիր գործունեությամբ նոր առաջընթացով պիտի բարեգարդվի ազգային-եկեղեցական կյանքը հավատավոր մեր հայորդյաց:

Այսօր գոհունակությամբ ողջունում ենք Սուրբ Էջմիածնում Եգիպտոսի և Դամասկոսի հայոց թեմերի Թեմական խորհուրդների պատվիրակության անդամներին, ովքեր Մայր Տաճարում իրենց ներկայությամբ ու աղոթքներով մասնակից են այս սրբազան արարողությանը: Հայրապետական Մեր գնահատաքն ենք բերում Տիրախնամ թեմերի թեմական, համայնքային ու ազգային հաստատությունների անդամներին, Մեր հավատավոր զավակներին, ովքեր թեմակալ առաջնորդներին ու հոգևոր դասին պատրաստակամ գորակցությամբ ու աջակցությամբ նպաստում են հայոց հոգևոր կյանքին նորոգ զարթոնք բերելու կարևոր առաքելության արդյունավոր իրականացմանը: Ի դեմս այստեղ ներկա Եգիպտոսի Արաբական Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության դիվանագիտական առաքելության ղեկավարների՝ Մեր ողջույնն ու երախտագիտությունն ենք փոխանցում Եգիպտոսի և Սիրիայի կառավարություններին, որոնց հովանավորությունն ու բարյացակամությունն

են վայելում այդ երկրներում ապրող Մեր զավակները՝ իրենց ներդրումն ու նպաստը բերելով այդ երկրների բարօրությանն ու առաջընթացին:

Միրելի Սրբազաններ, աղոթքով առ Բարձրյալն Աստված մաղթում ենք, որ առավել իմաստությամբ, առավել անձնվիրությամբ «յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ» և շարունակեք բարի ծառայություն բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Վերստին հայցում ենք, որ «լուսաւորեցէ Տէր զաչս մտաց ձերոց և առաջնորդեցէ ձեզ ի գործս բարիս»:

Թող Աստված Ձեզ միշտ պահի քաջատողջ, միշտ արթուն ու անսասան:

Բարձրյալի օրհնությունն ու օգնականությունն ենք հայցում Ձեզ՝ ի պայծառություն և ի գորացումն Հայոց Եկեղեցու և ի փառս Աստուծո:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն»:

Արարողությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Եզիպտոսի և Սիրիայի Արաբական Հանրապետությունների արտակարգ և լիազոր դեսպանները, Եզիպտոսի և Դամասկոսի հայոց թեմերի Թեմական խորհուրդների պատվիրակությունները:

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայոց Հայրապետը նորած եպիսկոպոսներին նվիրեց պանակներ՝ իբրեւ եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշ:



Տ. ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը (ավագանի անունով՝ Գարուն) ծնվել է 1972 թ. նոյեմբերի 4-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում:

1979-1989 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1989-1995 թթ. ընդունվել և ավարտել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ «Հովհան Ռոտունեցու կյանքն ու դավանաբանական հայացքները» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1995-1996 թթ. եղել է Մայր Աթոռի ձեռագրատան պատասխանատուն:

1996 թ. հունիսի 2-ին, ձեռամբ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996-2001 թթ. եղել է Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի՝ Մայր Աթոռի գրասենյակի պատասխանատուն:

2002 թ. մարտին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Անառակ որդու առակը հայ մեկնողական գրականության մեջ» թեմայով, և ստացել վարդապետական աստիճան:

2002 թ. հոկտեմբերի 14-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Եզիպտոսի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:

2004 թ. փետրվարի 21-ին ընտրվել է Եզիպտոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ:

2005 թ. ընտրվել է Եզիպտոսի հայոց թեմի առաջնորդ:



Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը (ավագանի անունով՝ Հակոբ) ծնվել է 1973 թ. հունվարի 29-ին Սիրիայի Հալեպ քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Կիլիկյան ճեմարանում:

1987 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան:

1991 թ. սեպտեմբերին՝ Խաչվերացի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1993 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր ճեմարանը՝ պաշտպանելով «Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի (1911-1930 թթ.) կյանքն ու գործունեությունը» ավարտաճառը:

1993 թ. դեկտեմբերին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գաբեգին արքեպիսկոպոս Բեքչյանի հրավերով և Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի բարձր տնօրինությամբ մեկնել է Գերմանիա՝ ուսման և հոգևոր ծառայության:

1995-2000 թթ. հովվական ծառայության հետ մեկտեղ Նյուրնբերգ-Էրլանկեն Համալսարանում ուսանել է ավետարանական աստվածաբանություն: Այստեղ ուսանել է նաև հին հունարեն և լատիներեն լեզուները՝ միաժամանակ հմտանալով Սուրբ Գրքի մեկնողական մեթոդների մեջ:

1998 թ. նոյեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի բարձր տնօրինությամբ և ձեռամբ Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի, Քյոլն քաղաքում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ստանձնելով Հարավային Գերմանիայի հայ համայնքների հոգևոր հովվությունը:

2000 թ. հետևել է Թյուրինգենի կաթոլիկ աստուածաբանության համալսարանի դասընթացներին:

2003 թ. դեկտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտպանել է «Հայ Եկեղեցւոյ Պատարագը 5-րդ դարէն մինչեւ այսօր» թեմայով վարդապետական թեզը և ստացել վարդապետական աստիճան:

2004 թ. ընտրվել է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ:

Տ. ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ըստ ավանդույթի, նորած եպիսկոպոսը Ուխտի Ս. Պատարագ է մատուցում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդանի առջև:

Հունվարի 21-ին Մայր Տաճարում իր եպիսկոպոսական Ուխտի Անդրանիկ Պատարագը մատուցեց Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը: Նորած Սրբազանի եպիսկոպոսական ձեռնադրությունը տեղի ունեցավ հունվարի 15-ին՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

«...Այսօր մենք իբրև շարունակողը առաքելական քարոզչության, իբրև հետևորդը մեր Տիրոջ մի պահ մտածեցինք, թե՞ արդյոք մենք մեր արժանիքներով է, որ հասանք այս աստիճանին, թե՞ դարձյալ Աստծո ողորմությունը և Աստծո սերն է, որ մեզ ընտրեց և Իր բանավոր հոտին հովիվ պատրաստեց», - եպիսկոպոսական անդրանիկ քարոզում ասաց նորած Սրբազանը՝ փառք և գոհություն մատուցելով Աստծուն՝ աստվածային ողորմությամբ եպիսկոպոսության աստիճանի և կոչման արժանանալու համար (տե՛ս էջ 24): Նորած Սրբազանը աղոթեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության և հայոց ազգի խաղաղ ընթացքի ու փրկության համար: Սրբազան Հայրը նաև իր երախտագիտության խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր հանդեպ դրսևորած հայրական հոգածության համար:

Սուրբ Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Եգիպտոսի հայոց թեմի Թեմական խորհրդի անդամներ:

Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում եպիսկոպոսական ուխտի Անդրանիկ Պատարագը մատուցեց հունվարի 15-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եպիսկոպոս ձեռնադրված Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Սուրբ Պատարագի ընթացքում նորած Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզեց ներկա հավատացյալ ժողովրդին (տե՛ս էջ 28):

Արմաշ Սրբազանը նաև աղոթք բարձրացրեց առ Աստված՝ հայցելով, որ Ամենաբարձրյալը միշտ հաստատուն պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի հերթական պաշտպանությունը:

Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի գլխավորած քննող հանձնաժողովը բանավոր պաշտպանության էր արտոնել Արտակ սրկ. Գրիգորյանի («Հարություն վրդ. Ալամդարյանի կյանքն ու գործունեությունը»), Արսեն սրկ. Հայրապետյանի («Նյու Էյջ» շարժումը և նրա արմատները») և Սամվել սրկ. Մկրտչյանի («Մարդու կյանքի իմաստի հիմնախնդրի փիլիսոփայական, հոգեբանական և քրիստոնեական մեկնաբանությունները») ավարտաճառերը:

Հաջող պաշտպանելով իրենց ավարտաճառերը՝ հիշյալ սարկավագները համալրեցին Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Հունվարի 26-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ նաև Գևորգ սրկ. Դավթյանի ավարտաճառի պաշտպանությունը: Ճեմարանավարտ սարկավագը քննող հանձնաժողովի ուշադրությանը ներկայացրեց «Դրվագներ 5-7-րդ դդ. հայկրացական եկեղեցական փոխհարաբերությունների պատմությունից» աշխատանքը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ԱՆԳԵՂԱԿՈԹԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սյունիքի փոխառաջնորդությունից ներս Սիսիանի Անգեղակոթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում (ԺԲ դար) մեծ հանդիսավորությամբ և առաջին անգամը լինելով՝ վերջին 80 տարիների ընթացքին, տոնվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնը:

Բացի Անգեղակոթի բնակչությունից ներկա էին նաև Սիսիանից, Գորիսից և մոտակա գյուղերից եկած ուխտավորներ ու հարյուրավոր հավատացյալներ, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Ագոյանը, Սիսիանի քաղաքապետ Լավրենտի Սարգսյանը և ուրիշներ: Սիսիանի հոգևոր հովիվ Արժանապատիվ Ս. Գրիգոր քահանա Հովսեփյանի մատուցած Ս. Պատարագի և Ջրօրհների հանդիսավոր արարողությունից հետո, օրվա խորհրդին նվիրված քարոզ խոսեց և իր պատգամը ներկաներին ուղղեց Սյունիքի փոխառաջնորդ Հոգեշնորհ Ս. Աբգար աբեղա Հովակիմյանը: Հայր Սուրբն իր խոսքում հորդորեց առավել նախանձախնդրությամբ ու նվիրումով լծվել իրենց գյուղի եկեղեցաշեն աշխատանքներին ու հավատարիմ մնալ մեր նախնյաց թողած հարուստ ժառանգությանը՝ դրանով իսկ նպաստելով մեր Սուրբ Եկեղեցու զորացման նվիրական գործին:

Խաչի կնքահայրն էր երիտասարդ գործարար Հովակիմ Մնացականյանը:

Հավարտ Ս. Պատարագի Հոգեշնորհ Հայր Սուրբն Արժանապատիվ Ս. Հակոբ և Ս. Գրիգոր քահանաների ու սարկավագաց դասի հետ կատարեց մատաղի օրհնություն, որն այնուհետև եկեղեցու բակում բաշխվեց ներկա հավատացյալներին, ապա կեսօրից հետո Սիսիանի քաղաքապետի և Խաչի կնքահոր կողմից կազմակերպվեց հյուրասիրություն:

ԴԻՎԱՆ ՍՅՈՒՆՅԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԼՈՒՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎ- ԿԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

7 Յունուար 2006-ին, Երուսաղեմի հայ Պատրիարքության Սրբոց Յակոբեանց միաբանությունը նշեց Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տօնը: Առաւօտեան, հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մէջ, մասնակցութեամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկեանի, Սրբոց Յակոբեանց միաբանութեան և Ժառանգաւորաց Վարժարանի ուսանողներուն:

Ընծայարանի դասարաններու տասը ուրարակիրներ և սարկաւագներ, առաջնորդութեամբ սարկաւագապետներ՝ Թէոտորոս վրդ. Զաքարեանի և Իսահակ աբղ. Մինասեանի, քահանայական սաղաւարտներով ի գլուխ և բուրվառներ ու մումեր ի ձեռին, «Փառք ի Բարձունս»-ի ընթացքին, խնկարկեցին և յաջորդաբար ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնությունը: Սուրբ Պատարագի աւարտին, Պատրիարքը զինքն ողջունեց և հիւրասիրեց Պատրիարքարանիս Դահլիճին մէջ:

Երեկոյեան, ժառանգաւորները հաւաքուեցան Վարժարանի ճաշասրահին մէջ տօնախմբական ընթրիքի մը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր և ներկայութեամբ միաբանութեան և Վարժարանիս ուսուցչական կազմին: Պատրիարքի և հոգևորական դասի մուտքի պահուն, սարկաւագները երգեցին Ս. Ստեփաննոս Նախասարկաւագին և Նախավկային նուիրուած շարականը:

Տ. Հայկազուն աբղ. Եղիայեան, Ժառանգաւորաց Վարժարանի փոխ տեսուչը, ողջունեց ներկաներուն, ըսելով. «Կը յուսամ որ պիտի հետնինք Ս. Ստեփաննոսի օրինակին՝ սորվելով և դաստիարակելով, որովհետև թէ՛ աշակերտ ենք և թէ՛ սարկաւագ»: Իրեն յաջորդող խօսքերն, արտասանութիւններն ու երգերը կը յիշատակէին Ս. Ստեփաննոսի նախանձախնդիր նուիրումը՝ մարդասէր, Աստուածահաճոյ ծառայութեամբ իր Տիրոջն ու Փրկչին:

Փակման յորդորով Պատրիարք Սրբազան Հայրը յայտնեց, թէ «Ստեփաննոս անդամ էր առաջին սարկաւագներու դասին: Ան գոհողութեամբ կատարեց պարզ աշխատանքներ, հոգալով կարիքաւորներուն և դժբախտներուն: Բայց որովհետև սիրով կը ծառայէր, հաճոյք էր: Մի մոռնաք թէ բարձրանալը դժուար է, բայց միշտ պէտք է ջանանք բարձրանալ և բարձրացնել»: «Հայր մեր»-ի երգեցողութեամբ և Պատրիարք Հօր «Պահպանիչ»-ով յիշատակելի երեկոն իր աւարտին հասաւ:

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ԱՇՔԵՆԱԶԻ ՌԱԲՈՒՆԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Կիրակի կեսօրէ ետք, Յունուար 22, 2006-ին, Աշքենազի Ռաբունապետ Եօնայ Մէցկէր, և Քնէսէթի Անդամ, Եուդի Շթէռն, այցելեցին Երուսաղէմի հայ Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկեանին: Հիւրասիրութեան ներկայ էին նաև՝ Պատրիարքարանի Միջ-Եկեղեցական և Օտար Յարաբերութիւններու Վարիչ Տ. Արիս եպս. Շիրվանեանը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Տ. Ներսէս արք. Պօղոսեանը: Վերջինս յարգարժան հիւրերուն ծանօթացած էր երբ 2005-ին այց էին տուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

«Մինչ Հայաստան կը գտնուէինք, անդրադարձայ թէ մեր երկիրները, Իսրայէլն ու Հայաստանը, որչափ նման են իրարու և թէ մեր երկու ազգերու սփռուած գաղութները որչափ կապուած են իրենց հայրենիքներուն: Վերջին հարիւր տարիներու ընթացքին մեր երկու ժողովուրդներն ալ շատ են տառապած», ըսաւ Ռաբունապետը. «Ցեղասպանութեան Յուշարձանին այցելութիւննիս խորին յուզմունք պատճառեց, այնքան որ մեր թարգմանը արտասուելով չկարողացաւ շարունակել իր թարգմանութիւնը»:

Պատրիարք Սրբազան Հայրը յայտնեց թէ երբ այցելած էր Երուսաղէմի Եատ Վաշէմ Հրէական Ցեղասպանութեան Թանգարանը, ուժգնապէս տպաւորուած էր, մանաւանդ տեսնելով նկարը երեխայի մը որ, ձեռքերը վերամբարձ, նայուածքով կը հարցնէ թէ ի՞նչ կրնայ եղած ըլլալ իր յանցանքը: «Ամէն մէկ նկարի կողքին, կարելի է Եբրայերէն բացատրութեան քով դնել նոյնը Հայերէնով», ըսաւ ան: Ապա, շարունակեց՝ շեշտելով վերապրելու կամքը հայ ազգին, որ տասնեօթ դարերու տագնապալի զոհողութեամբ պահպանած է իր Քրիստոնեական հաւատքը:

Ի պատասխան Արիս Սրբազանի հարցումին թէ՝ ի՞նչպէս կարելի է ստանալ Հրէաստանի պետական ճանաչումը Հայոց ցեղասպանութեան՝ հարցը ներկայացնելով Քնէսէթին, Տիար Շթէռնը յայտնեց թէ՝ Ծիծեռնակաբերդի Յուշարձանի այցելութեան ընթացքին, Ռաբունապետը արտասանած է այն յատուկ Եբրայերէն թաղման աղօթքը որ կ'ըսուի յիշատակելու հրէաներու ողջակէզը, նաև յիշելով 1915-ի Հայ զոհերը: «Պէտք է շարունակենք մեր աշխատանքը այս ուղղութեամբ», շեշտեց Տիար Շթէռնը. «Մեզ համար բարոյական պարտականութիւն է»:

Ռաբունապետը Պատրիարք Սրբազանին նուիրեց խմբանկար մը, լուսանկարուած Հայաստանի Վարչապետին գրասենեակին մէջ, և Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ միասին: Հիւրերուն նուիրուեցաւ հրէայ հեղինակ Եաիր Օռոնի՝ Անտեղի Ուրացում. Իսրայէլը և Հայոց ցեղասպանութիւնը, (Yair Auron. The Banality of Denial: Israel and the Armenian Genocide), Եբրայերէն լեզուով գիրքը:

ՂԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ԼՈՒՐԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԿԱԼԿԱԹԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հունվարի 5-ին Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցում մատուցվեց ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կալկաթայի եկեղեցական խորհրդի հրավերով և հնդկահայոց հոգևոր հովիվ, Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանի նախաձեռնությամբ Ս. Ծննդյան տոնին մասնակցելու համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հնդկաստան ժամանած Ս. Իգնատիոս վրդ. Մալխասյանը: Օրվա սուրբգրային ընթերցվածները կարդացին Մարդասիրական ճեմարանի սաները: Ս. Պատարագի ընթացքում ներկա բոլոր հավատացյալները Ս. Հաղորդություն ստացան:

Ս. Պատարագին ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

Արարողությունից հետո եկեղեցական խորհրդի անդամները և ճեմարանականները շարժվեցին Մարդասիրական ճեմարան, ուր, հանդիսապետությամբ Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, կատարվեց տնօրինեք, տրվեց Ս. Ծննդյան զատկական ընթրիք:

Հունվարի 6-ին կրկին բազմամարդ էր Ս. Նազարեթ հայկական եկեղեցին: Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Ս. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Հընթացս Սրբազան արարողության Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով Փրկչի Ս. Ծննդյան խորհրդի նշանակությանը յուրաքանչյուր հայորդու կյանքում:

«Հիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան խորհրդի ճշմարիտ գիտակցությամբ են ապրել մեր նախնիք դարերի ընթացքում, որի ակնհայտ վկայությունն են նաև այս հոյակերտ եկեղեցին և Դո՛ւք, սիրելի՛ հնդկահայեր, որ Ձեր հայացքը միշտ հառած եք ունեցել Հայոց Բեթղեհեմին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ Ձեր առաքինի գործերով և կենցաղավարությամբ բարձր պահելով հայ քրիստոնյայի անունը Մայր Հայրենիքից այդքան հեռու: Ուստի, որպես հնդկահայոց հոգևոր հովիվ՝ պատգամս է, որ այսօր ամեն մեկիս սրտում և հոգում կրկին ծնվի Հրաշամանուկ մեր Տերը՝ ամենքիս պարգևելով խաղաղություն, երջանկություն և ամենակարևորը՝ միասնականության ոգի», - նշեց Օշական վարդապետը:

Այնուհետև, ի նշան Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտության, կատարվեց Ջրօրհնեք, և օրհնված ջուրը բաժանվեց ներկաներին: Ջրօրհնեքի խաչքավորն էր Մարդասիրական ճեմարանի սան Արթին Սաֆարյանը:

Արարողությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր, Մարդասիրական ճեմարանի սաները և հյուրեր:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԲՈՄԲԵՅԻ Ս. ՊԵՏՐՈՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունվարի 8-ին կրկին դողանջեցին Մումբայի (Բոմբեյ) Ս. Պետրոս հայկական եկեղեցու զանգերը՝ այս անգամ ավետելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան բարի լուրը: Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որին ընկերակցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ Տ. Իգնատիոս վրդ. Մալխասյանը և Տիգրան սրկ. Բաղումյանը: Վերջին Ս. Պատարագը 1796 թ. կառուցված Ս. Պետրոս հայկական եկեղեցում մատուցվել էր շուրջ երկու տասնամյակ առաջ:

Հընթացս Սրբազան արարողության կատարվեց Ջրօրհնեք, և օրհնված ջուրը բաժանվեց Ս. Պատարագին ներկա մի քանի հայերին և ներկաներին, որոնց շնորհիվ այսօր պահպանվում է հայության ոգին ու շունչը Մումբայում: Պատարագիչ Հայր Սուրբը նաև հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ հայցելով Բեթղեհեմի մսուրի խանձարուրում ծնված Փրկչի զորակցությունը մումբայաբնակ հայերի համար՝ նրանց փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու գնահատանքը:

«Հիշարժան օր է այսօր, որովհետև կրկին աղոթք ենք վերառաքում մեր Երկնավոր Հորը պատմական այս եկեղեցում, որն ակնհայտ վկայությունն է այն անսահման սիրո ու նվիրվածության, որ մեր նախնիք տաժել են առաքելահիմն մեր Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսության հանդեպ: Աղոթքս է, որ Մեր Տիրոջ հրաշափառ Ծննդյան ավետիսը սրտապնդի և զորավիգ լինի Ձեզ՝ պարզևելով աներեր հավատ և քաջառողջություն, այն հույսով և վստահությամբ, որ դեռ երկար տարիներ ու դարեր պիտի դողանջեն մեր եկեղեցու զանգերը՝ ավետելով հայ մարդու ներկայությունը Հնդկաստանի օրհնաբեր հողում», -նշեց Հայր Օշականն իր խոսքում:

Ս. Պատարագին ներկա էին երկու հայուհիներ, ՀՀ պատվո հյուպատոսի Մումբայի խորհրդական Վոամ Աղաջանյանը, Հնդիկ Ուղղափառ Եկեղեցուց Տ. Աբրահամ քին. Ժոզեֆը և մի խումբ ասորի քրիստոնյաներ:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հունվարի 15-ին, Ս. Հովհաննես Մկրտչի Ծննդյան տոնին հաջորդող կիրակի օրը, արդեն իսկ երկար տարիներ ամրագրված ավանդույթի համաձայն՝ ուխտի Ս. Պատարագ մատուցվեց Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցում: Այն Արևմտյան Բենգալիա նահանգի երկրորդ ամենահին քրիստոնեական եկեղեցին է՝ կառուցված՝ 1695 թ.: Չնայած այլևս հայեր չեն ապրում երբեմնի հայաշունչ այդ քաղաքում, սակայն նմանատիպ ուխտագնացությունների միջոցով փորձ է արվում՝ աղոթք բարձրացնելու Ս. Հովհաննես հայկական եկեղեցում՝ շրջակա բնակիչներին ազդարարելով հայերիս ներկայության և մեր նախնիների թողած ժառանգության վերաբերյալ մեր նախանձախնդրության և հավատարմության մասին:

Պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը: Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ընդգծելով Հնդկաստանում մեր նախնյաց թողած ժառանգության պահպանման և հնդկահայ գաղութի վերածննդի անհրաժեշտության մասին:

«Ուխտավոր ենք ամենքս հոյակերտ այս եկեղեցում, ուր դարեր շարունակ աղոթել են մեր նախնիք, ուր հնչել են զանգերը՝ ազդարարելով հայ քրիստոնյայի ներկայությունն այստեղ: Այսօր նույնպես մեր նախնիների օրինակով, Չինսուրայի Ս. Հովհաննես եկեղեցու ուխտի օրը, եկել ենք՝ միասնաբար աղոթելու մեր Երկնավոր Հորը, որ անպակաս անի աղոթքն ու օրհնությունն այս եկեղեցուց, որ ուժ և կորով պարգևի ամենքիս՝ տեր կանգնելու մեր հայրերի ժառանգությանը», - նշեց Օշական վարդապետը:

Այս ուրախալի առիթով Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցուց դուրս էր բերվել նաև Ս. Հովհաննես Մկրտչի մասունքով Ս. Աջը, որով և Ս. Պատարագի ընթացքում կատարվեց անդաստան:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ եկեղեցու բակում ամփոփված հայորդիների հոգիների հանգստության համար, որից հետո ներկաները մոտեցան և համբուրեցին սրբազան մասունքը:

Ուխտագնացությանը մասնակցում էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 26-ին ինչպես ողջ Հնդկաստանում, այնպես էլ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորությամբ նշվեց Հնդկաստանի Հանրապետության օրը: 1950 թ. այս օրը սկսեց կիրառվել Հնդկաստանի Հանրապետության սահմանադրությունը:

Ծափողջույնների ներքո Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը բարձրացրեց Հնդկաստանի Հանրապետության դրոշը, որից հետո ճեմարանականները կատարեցին Հնդկաստանի Հանրապետության օրհներգը:

Այնուհետև օրվա խորհրդի նշանակությանն անդրադարձավ Հայր Օշականը՝ ջերմորեն շնորհավորելով բոլոր ներկաներին այս տոնի առիթով և ընդգծելով ամեն մի ժողովրդի կյանքում սահմանադրության և ի սկզբանե մարդուն տրված ազատության գիտակցության կարևորությունը: Հայր Սուրբն ուրախությամբ նաև արձանագրեց, որ ոգևորիչ և պարտավորեցնող է տեսնել, թե ինչպե՛ս է օրեցօր շենանում և հզորանում Հնդկաստանի նման բազմազգ և բազմակրոն երկիրը՝ առաջընթաց արձանագրելով տարբեր բնագավառներում:

«Այսօր նվիրական օր է Հնդկաստանի պատմության մեջ, քանզի ամենքս հավաքվել ենք մեր խոնարհումը բերելու Մահաթմա Գանդիի և ազատության մյուս նվիրյալների պայծառ հիշատակին: Ճիշտ է, Մահաթմա Գանդին չկարողացավ իր կենդանության օրոք տեսնել այս օրը, բայց նրա հետևորդների և այլ նվիրյալների հետևողական ջանքերի և երկարատև պայքարի շնորհիվ սահմանադրությունը և նրանից բխող դրույթները գործադրվեցին Հնդկաստանում: Մեր աղոթքն ու խնդրանքը պիտի լինի Ամենաբարձրյալին, որպեսզի Աստված յուրաքանչյուրիս մեջ ավելացնի նախանձախնդրության, նվիրումի և սիրո ոգին՝ ամենքիս վստահված առաքելությունն ու պարտականությունները կատարելու համար», - նշեց Օշական վարդապետը:

Վերջում սաներին և ներկաներին իր խոսքն ուղղեց նաև ճեմարանի տնօրեն Ջեյմս Դայասը՝ ընդգծելով, որ անդուլ աշխատանքի և նվիրվածության շնորհիվ է միայն հնարավոր է՛լ ավելի զորացած և բարգավաճ տեսնել Հնդկաստանը:

Հանդիսությանը մասնակցում էին ճեմարանի ողջ պաշտոնեությունն ու բոլոր սաները:

ԴԻՎԱՆ ԿԱԼ ԿԱԹՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(27 - 30 հունվարի 2006 թ.)

Ս. Էջմիածնում 2006 թ. հունվարի 27-30-ը տեղի ունեցավ Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության երրորդ հանդիպումը, որին մասնակցում էին Հայոց, Կաթոլիկ, Ղպտի, Ասորի, Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցիների 27 ներկայացուցիչներ՝ Քրիստոնեական Միության Խրախուսման Պապական Խորհրդի նախագահ Գերաշնորհ Կարդինալ Վալտեր Կասպերի և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Մինդի Գլխավոր Քարտուղար և Դամիթի Մետրոպոլիտ Ամբա Բիշոյի համանախագահությամբ:

Աշխատանքային յուրաքանչյուր օրն սկսվում էր առավոտյան աղոթքով, իսկ նիստերն անցնում էին ջերմ մթնոլորտում: Երկխոսության ընթացքում Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները ունենում էին առանձին հանդիպումներ:

Հունվարի 27-ին հանդիպման մասնակիցներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին ԲՎԵԽԱՓԱՌ Հայրապետը:

Ողջունելով ժողովի մասնակիցներին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների երկխոսության հերթական հանդիպումն ընթանում է հայոց հոգևոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Կարևորելով Եկեղեցիների միջև երկխոսության անհրաժեշտությունը՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Մենք կարևորում ենք այս երկխոսությունը հատկապես ներկա ժամանակներում, երբ ազգերը և Եկեղեցիները կանգնած են բազում մարտահրավերների և մտահոգությունների առջև: Եվ, վստահաբար, միասիրտ, համախորհուրդ, եղբայրական համագործակցությամբ է, որ մենք պիտի կարողանանք որպես քրիստոնյա Եկեղեցիներ մեր առաքելությունը մարդկային կյանքում արդյունավետ իրականացնել:

...Մեր միասնական գործունեությունը այսօր առավել կարևոր է, որպեսզի մենք կարողանանք նաև մերժել և դիմակայել բոլոր այն վտանգներին, որոնց առջև այսօր կանգնում է Քրիստոսի Եկեղեցին: Քրիստոնեական տարբեր հարանվանական Եկե-

դեցիներում այսօր նորամուծություններ են կատարվում, որոնք վտանգում են առաքելական մեր հավատքը: Եվ այս առումով պետք է, որ մենք կարողանանք այդ հարցերը քննության առնել և վերահաստատել մեր հավատարմությունը մեր հայրերի սրբազան հավատքին, մեր առաքելահաստատ կանոններին ու դավանությանը»:

Կիրակի օրը, հունվարի 29-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում երկխոսության մասնակիցները, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, մասնակցեցին Ս. Պատարագի: Պատարագիչն էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: Հավարտ Ս. Պատարագի հոգեհանգստյան արարողություն կատարվեց՝ հունվարի 27-ին վախճանված Հնդիկ Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս Բասիլիոս Մար Թովմա Մաթեոս Բ-ի հոգու հանգրստության համար:

2003 թ. տեղի ունեցած նախապատրաստական հանդիպման ընթացքում հաստատված ծրագրի համաձայն Կաթողիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները զեկույցներ ներկայացրեցին երեք թեմաներով. «Եպիսկոպոսներն առաքելական հաջորդականության մեջ» (Հայր Մեթյու Վելլանիկալ/Հայր Ռոնալդ Ռոբերտսոն և Հայր Ջոն Փանիկեր), «Առաջնորդությունը և ժողովականությունը» (Նարեկ եպս. Ալեմեզյան և Պրոֆ. Դիետմար Ուինկլեր), «Տեղական և տիեզերական ժողովներ» (Ջորջ արքեպս. Սալիբա և Հայր Ֆրանս Բոուեն):

Քննարկումների ավարտին ստեղծվեց հատուկ մի հանձնախումբ, որը հաջորդ հանդիպմանը հանդես կգա զեկույցների վերաբերյալ ամփոփ եզրակացությամբ:

Այդ հանձնախմբի կազմում են Հայր Ֆրանս Բոուենը, Հայր Մարկ Շերիդանը, Հայր Յոհան Բոնին և Պրոֆ. Դիետմար Ուինկլերը՝ Կաթողիկ Եկեղեցու կողմից, և Մետրոպոլիտ Կուրիակոզե Թեոֆիլոզեն, Եզնիկ եպս. Պետրոսյանը, Նարեկ եպս. Ալեմեզյանը և Հայր Ջոն Փանիկերը՝ Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Հաջորդ հանդիպմանը նաև յուրաքանչյուր կողմից զեկույցներ կներկայացվեն «Առաքելություն, վկայություն, ծառայություն և հոգեերսության հիմնախնդիրը» թեմայի շուրջ:

Հանդիպման ընթացքում Եկեղեցիների ներկայացուցիչները մասնակցեցին Անդրկովկասում Պապական Նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտիի կողմից կազմակերպված ընդունելությանը, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողմից տրված ճաշկերույթին և ՀՀ-ում Եգիպտոսի դեսպանատանը կազմակերպված հանդիպմանը: Հունվարի 28-ի երեկոյան նրանք մասնակցեցին նաև Մխիթար Մեբաստացու կյանքին ու գործունեությանը նվիրված միջոցառմանը՝ կազմակերպված Մխիթարյան միաբանության անդամների կողմից, իսկ հունվարի 29-ի երեկոյան այցելեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի:

Միջազգային հանձնախմբի չորրորդ հանդիպումը տեղի կունենա 2007 թ. հունվարի 28-ից փետրվարի 3-ը՝ Կաթողիկ Եկեղեցու հյուրընկալությամբ:

Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներ

Հայ Առաքելական Եկեղեցի

(Ամենայն Հայոց Կաթողիկոսություն) – ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյան, Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանին փո-

խարինում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

(Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն) - ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական արքեպս. Չոլոյան, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Ալեմեզյան:

Ղպտի Ուղղափառ Եկեղեցի - Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի Գլխավոր Քարտուղար և Դամիեթի Մետրոպոլիտ Ամբա Բիշոյ, Հայր Շենուդա Մահեր Իսհակ (Ռոչեսթեր, ԱՄՆ), Սիդնեյի Դանիել եպիսկոպոս՝ որպես դիտորդ:

Ասորի Ուղղափառ Եկեղեցի - Ասորի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի Քարտուղար և Լիբանանի (Mount Lebanon) Արքեպիսկոպոս Թեոֆիլիոս Ջորջ Մալիբա, եպիսկոպոս Կուրիակոզե Թեոֆիլոզե (Կերալա, Հնդկաստան):

Եթովպիայի Ուղղափառ Թևահեդո Եկեղեցի - Հայր Մեզաբե Բիլոյ Սեյֆե Սելասիե Յոհաննես, Պատրիարքության Ուսումնական Խորհրդի անդամ և Լիքուե Հիրույան Գետաչև Գուադիե, Արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն: Եթովպիայի Եկեղեցու ներկայացուցիչները չկարողացան իրենց մասնակցությունը բերել երկխոսությանը:

Մալանկարա Ուղղափառ Ասորի Եկեղեցի - Մետրոպոլիտ Փիլիպոս Մար Եվսեբիոս, Փաթանամթիտայի Մետրոպոլիտ:

Հայր Ջոն Մեթյուսին փոխարինում էր Հայր Ջոն Փանիկերը:

Էրիթրեայի Ուղղափառ Եկեղեցի - Արտաքին հարաբերությունների կոորդինատոր Հայր Քալեբ Ջեբրեսելասիե, որը սակայն չկարողացավ մասնակցել:

Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներ

Գերաշնորհ Կարդինալ Վալտեր Կասպեր՝ համանախագահ և Քրիստոնեական Միությունը Խրախուսող Պապական Խորհրդի նախագահ,

Պոլ-Վերներ Շեելեն, Վյուրցբուրգի եպիսկոպոս,

Ամբա Կիրիլոս Վիլյամ, Եգիպտոսի Կաթոլիկ Եկեղեցու Էկումենիկ Հանձնախմբի նախագահ, Ասիոտի Ղպտի Կաթոլիկ եպիսկոպոս,

Գերաշնորհ Ջուլս Միխաել Ալ-Ջամիլ, Սուրբ Աթոռի Ասորի Կաթոլիկ Պատրիարքարանի պրոկուրատոր և Պապական ներկայացուցիչ Եվրոպայում,

Գերաշնորհ Բուտրոս Մարայաթի, Սիրիայի Կաթոլիկ Եկեղեցու Էկումենիկ Հանձնախմբի նախագահ, Հալեպի Հայ Կաթոլիկ Արքեպիսկոպոս,

Հայր Մեթյու Վելլանիկալ, Չանգանաչերիի թեմի (Հնդկաստան) առաջնորդական փոխանորդ,

Հայր Ֆրանս Բոունեն (Երուսաղեմ), Քրիստոնեական Միությունը Խրախուսող Պապական Խորհրդի խորհրդական,

Հայր Ֆիլիպ Լուիզիե և Հայր Պոդոս Լևոն Զեքյան՝ Հռոմի Պապական Արևելյան Ինստիտուտ,

Հայր Մարկ Շերիդան, Հռոմի Ս. Անսելմի Պապական ինստիտուտի Աստվածաբանության Ֆակուլտետի դեկան,

Հայր Փոլ Ռուհանա, Սուրբ Հոգի Համալսարան, Կասլիկ, Լիբանան,


Պրոֆ. Դիետմար Ուինկլեր՝ Բոստոնի Համալսարանի Աստվածաբանական դպրոցից, ԱՄՆ,

Հայր Ռոնալդ Ռոբերտոն, Էկումենիկ և միջկրոնական հարաբերությունների կենտրոնի տնօրենի օգնական, ԱՄՆ Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանս,

Հայր Յոհան Բոնի (համաքարտուղար), Քրիստոնեական Միությունը Խրախուսող Պապական Խորհրդի անձնակազմի անդամ:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հունվարի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլին՝ ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու պետությունների միջև հարաբերությունների ու համագործակցության զարգացման առիթով:

Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձավ Հայ Եկեղեցու Վիրահայոց թեմի շուրջ ստեղծված վիճակին՝ վստահություն հայտնելով, որ բոլոր դժվարությունները կհարթվեն եղբայրական սիրով, փոխհասկացողությամբ և այն գիտակցությամբ, որ երկու ժողովուրդների բարեկամությունը դարերի համար է:

Իր հերթին, Վրաստանի արտաքին գործերի նախարար Գելա Բեժուաշվիլին, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Համայն Վրաստանի Պատրիարք Իլիա Բ-ի եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբությանը: Նախարարը ներկայացրեց Հայաստան այցի արդյունքները: Վիրահայոց թեմի խնդիրների վերաբերյալ նախարարը տեղեկացրեց, որ այժմ վրաց իշխանությունները փորձում են ինչպես Հայոց թեմի, այնպես էլ երկրի կրոնական դաշտում առկա խնդիրները լուծման առաջնորդել:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Ս. Արշակ Եպիսկոպոս Խաչատրյանը:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐ-
ՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ**

Հունվարի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Օննո Էլդերենբուսին:

Ողջունելով նորանշանակ դեսպանի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը շնորհավորեց և արդյունավետ ծառայություն մատլթեց նրան նոր պաշտոնում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ Հայաստանի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության քաղաքական կյանքին: Խոսվեց նաև առողջ հասարակության կերտման գործում հոգևոր արժեքների և Եկեղեցու կարևոր դերակատարության մասին:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, կիրակի. - Զ. կիր. Յիսնակաց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զավեն արեղա Յազիյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, հինգշաբթի. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոգապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Հունվարի 6-ին, ուրբաթ. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը □Տեսէք որպիսի՛ սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեցուք մեք□ (Ա Հովհ. Գ 1) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

Հունվարի 7-ին, շաբաթ. - Բ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր արեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Հունվարի 8-ին, կիրակի. - Գ. օր Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ արեղա Մաշալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 13-ին, ուրբաթ. - Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարիէլ արեղա Մարգարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 15-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետը «Յամենայնի ընծայեցուցեք զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ» (Բ Կորնթ. Զ 4) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 134):

Հընթացս Ս. Պատարագի կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն:

Հունվարի 21-ին, շաբաթ. - Սրբոց Հայրապետացն Աթանասի եւ Կիրղի:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 24):

Հունվարի 22-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը քաջի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին Իւր Միածին եւս (Հովհ. Գ 16) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 28):

Հունվարի 29-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2006 г.)**

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Святого Рождества и Богоявления Господа нашего Иисуса Христа, 6 января 2006 г. (с. 3-5).
2. Новогоднее поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2005 г. (с. 6).
3. Празднества по случаю праздника Святого Рождества и Богоявления в Первопрестольном Святом Эчмиадзине, 6 января 2006 г. (с. 7).
4. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами Церквей сестер, с иерархами Патриарших престолов Армянской Церкви и с официальными лицами по случаю праздника Святого и Чудесного Рождества Спасителя (с. 8-11).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-же Седе Тиракян по случаю ее награждения орденом «Святой Григорий Просветитель», 5 января 2006 г., № 335 (с. 12-13).
6. Патриаршие награды (пожалование в течение января 2006 г. энциклик, орденов «Св. Нерсес Шнорали» и благословений Его Святейшеством Гарегиниом II, Католикосом всех армян группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви) – (с. 14).
7. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Армии РА, 28 января 2006 г. (с. 15).
8. Соборезнование Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Святому Синоду Православной церкви Чехии и Словакии по случаю кончины Митрополита Николая, главы Православной церкви Чехии и Словакии, 31 января 2006 г. (с. 16).
9. По Патриаршему повелению Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, иеромонах Гарегин Арутюнян был лишен сана, 31 января 2006 г. (с. 17).
10. Кончина Его Святейшества Басилеоса Мар Томы Матеоса II, Католикоса Индийской Малабарской Церкви, 25 января 2006 г. (с. 18-19).

11. Соболезнование Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю кончины Его Святейшества Басилеоса Мар Томы Матеоса II, Католикоса Индийской Малабарской Церкви, 28 января 2006 г. (с. 20).
12. Участие духовного пастыря армянской общины в Индии архимандрита Ошакана Гюлгюляна от имени Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на похоронах Его Святейшества Басилеоса Мар Томы Матеоса II, Католикоса Индийской Малабарской Церкви, 28 января 2006 г. (с. 20).

ПРОПОВЕДИ

13. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии в праздник Святого Рождества и Богоявления, 5 января 2006 г. (с. 22-23).
14. Проповедь Его Преосвященства епископа Ашота Мнацаканяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 15 января 2006 г. (с. 24-27).
15. Проповедь Его Преосвященства епископа Армаша Налбандяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 22 января 2006 г. (с. 28-29).
16. Проповедь Его Преосвященства епископа Езника Петросяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии, 29 января 2006 г. (с. 30-31).

ЦЕРКОВНОЕ ИССЛЕДОВАНИЕ

17. **АКОП КЕОСЕЯН** – Речь «О таинстве Нового Воскресенья» и ее автор (приписывается Овану Одзнецу) – (исследование и текст) – (с. 32-44).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

18. **ЖОРЕС ХАЧАТРЯН** – Градостроительство в эпоху Тиграна II (местонахождение столицы Тигранакерт, исследование) – (с. 45-54).
19. **НЮРА АКОПЯН** – Армяно-сассанидские культурные взаимосвязи (V-IX вв.) по археологическим материалам (историографическое исследование) – (с. 55-65).
20. **АРПЕНИК ГАЗАРОСЯН** – Макенинский центр письменности (историографическое исследование) – (с. 66-70).
21. **КАРИНЕ АРАКЕЛЯН** – Духовный слой творчества Мецаренца (филологическое исследование) – (с. 71-80).
22. **КАРИНЕ АВЕТЯН** – Письма епископа Трдата Паляна Аршаку Алподжяну – (историографическое исследование) – (с. 81-91).

23. **САМВЕЛ АНДРАНИКОВИЧ ПОГОСЯН** – Создание АВБС и его основатель-президент (Погос Нубар паша) – (историографическое исследование) – (с. 92-101).
24. **ВАРДАН ГРИГОРЯН** – Рукописи Эчмиадзинского монастыря в Москве (1915-1922 гг.) – (историографическое исследование) – (с. 102-103).
25. **ПРОТОИЕРЕЙ АРСЕН СИМЕОНЫЦ** – Ценные рукописи Эчмиадзина во время Первой мировой войны (с. 104-113).
26. **ДАНИИЛ МУЗЫКАНТ** – Монодия, полифония и духовная музыка (музыковедческое исследование) – (с. 114-128).
27. **АСТГИК ГЕВОРКЯН** – Слово о светлой памяти арменоведа Чарлза Доусета (по случаю его кончины) – (с. 129-132).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

28. Возведение в сан епископа в Первопрестольном Святом Эчмиадзине, 15 января 2006 г. (помещены слово Его Святейшества по этому случаю и биографии епископов Ашота Мнацаканяна и Армаша Налбандяна) – (с. 133-140).
29. Литургия Обета Его Преосвященства епископа Ашота Мнацаканяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 15 января 2006 г. (с.141).
30. Литургия Обета Его Преосвященства епископа Армаша Налбандяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 22 января 2006 г. (с.141).
31. Защита дипломных работ в Геворкянской Духовной семинарии, 11 января 2006 г. (с. 142).
32. Праздник Святого Рождества в церкви Богородицы в Ангехакоте, 6 января 2006 г. (с. 143).

Новости из Иерусалимского армянского патриархата

33. Торжества в Иерусалимском армянском патриархате на праздник святого Степаноса Первомученика, 7 января 2006 г. (с. 144).
34. Визит Ашкеназийского Главного раввина в Иерусалимскую армянскую патриархию, 22 января 2006 г. (с. 145).

Новости из армянской общины Индии

35. Праздник Святого Рождества и Богоявления в армянской общине Калькутты, 5 января 2006 г. (с. 146).
36. Литургия Святого Рождества в армянской церкви Св. Петроса в Бомбее, 7 января 2006 г. (с. 147).
37. Традиционное паломничество в армянскую церковь Св. Ованеса в Чинсуре, 7 января 2006 г. (с. 148).

-
38. День Индийской Республики в Филантропической академии, 26 января 2006 г. (с. 149).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

39. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – Третья встреча Международной совместной комиссии по теологическому диалогу между Католической Церковью и Древневосточными православными Церквями в Святом Эчмиадзине, 27-30 января 2006 г. (с. 150-153).

АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

40. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Министра иностранных дел Грузии г-на Гелы Бежуашвили, 17 января 2006 г. (с. 154).
41. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Чрезвычайного и Полномочного посла Королевства Нидерландов г-на Онно Эльдеренбоса, 31 января 2006 г. (с. 155).
42. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение января 2006 г. (с. 156).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(January 2006)

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Holy Nativity and Theophany of our Lord Jesus Christ, January 6, 2006 (p. 3-5).
2. New Year’s Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, December 31, 2005 (p. 6).
3. Festivities in the Mother See on the occasion of Christmas, January 6, 2006 (p. 7).
4. Letters of Greeting and Telegrams on the feast of Holy and Miraculous Nativity of the Savior exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and Heads of sister Churches, the Hierarchs of the Patriarchal Sees of the Armenian Church and State officials (p. 8-11).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Seda Tirakian on the occasion of her decoration with the Order of “Saint Gregory the Illuminator”, January 5, 2006, no. 335 (p. 12-13).
6. Patriarchal Awards (Encyclicals, Orders of “Saint Nerses Shnorhali”, Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during January 2006 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 14).
7. Blessing Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the Day of the Army of RA, January 28, 2006 (p. 15).
8. Message of Condolences of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Holy Synod of the Orthodox Church of Czech Republic and Slovakia on the occasion of passing away of Metropolitan Nikolay, Head of the Orthodox Church of Czech Republic and Slovakia, January 31, 2006 (p. 16).
9. By the Patriarchal order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, Father Karekin Harutiunian was defrocked, January 31, 2006 (p. 17).
10. Passing away of Basilios Mar Thomas Matheos II, Catholicos of the Malabar Church in India, January 25, 2006 (p. 18-19).
11. Message of Condolences of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of passing away of Basilios Mar Thomas Matheos II, Catholicos of the Malabar Church in India, January 28, 2006 (p. 20).
12. Participation of archimandrite Oshakan Gulgulian, pastor of the Armenian Community of India, on behalf of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the

funeral of Basilio Mar Thomas Matheos II, Catholicos of the Malabar Church in India, January 28, 2006 (p. 21).

SERMONS

13. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Pozapalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Feast of Holy Nativity and Theophany, January 5, 2006 (p. 22-23).
14. Sermon delivered by His Grace Bishop Ashot Mnatsakanian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of the Oath on the occasion of his ordination as Bishop, January 15, 2006 (p. 24-27).
15. Sermon delivered by His Grace Bishop Armash Nalbandian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of the Oath on the occasion of his ordination as Bishop, January 22, 2006 (p. 28-29).
16. Sermon delivered by His Grace Bishop Eznik Petrossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, January 29, 2006 (p. 30-31).

ECCLESIOLOGICAL STUDY

17. **HACOB KEOSEYAN** – The Homily “On the Mystery of New Sunday” and its Author (attributed to Hovhan Odznetsi) – (study and text) – (p. 32-44).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

18. **JAURES KHACHATRIAN** – Urbanism in the Period of King Tigran II (Location of the capital Town of Tigranakert, research) – (p.45-54).
19. **NURA HACOBIAN** – Armenian-Sassanian Cultural Interrelations (5th-9th centuries) according to archeological data (historical research) – (p. 55-65).
20. **ARPENIK GHAZAROSIAN** – The Scriptorium of Makenis (historical research) – (p. 66-70).
21. **KARINE ARAKELIAN** – The Spiritual Material of Metzarents’ Speech (philological research) – (p. 71-80).
22. **KARINE AVETIAN** – Letters of Bishop Trdat Palian to Arshak Alboyajian (historical research) – (p. 81-91).
23. **SAMVEL A. POGHOSIAN** – The Foundation of AGBU and its Founder and Chairman (Poghos Nubar Pasha) – (historical research) – (p. 92-101).
24. **VARDAN GRIGORIAN** – Manuscripts of the Etchmiadzin monastery in Moscow (1915-1922) – (historical research) – (p. 102-103).
25. **SENIOR PRIEST ARSEN SIMEONIANTS** – Precious Manuscripts of the Etchmiadzin monastery during the World War I (p. 104-113).
26. **DANIEL THE MUSICIAN** – Monody, Polyphony and Sacred Music (musicological research) – (p. 114-128).

27. **ASTGHIK GEVORKIAN** – In Memory of Prominent Armenologist Charles Dowsett (on the occasion of his passing away) – (p. 129-132).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

28. Bishop Ordination in the Mother See of Holy Etchmiadzin, January 15, 2006 (Speech of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on this occasion and Biographies of Bishop Ashot Mnatsakanian and Bishop Armash Nalbandian) – (p. 133-140).
 29. Celebration of the Divine Liturgy of the Oath by His Grace Bishop Ashot Mnatsakanian, January 15, 2006 (p. 141).
 30. Celebration of the Divine Liturgy of the Oath by His Grace Bishop Armash Nalbandian, January 22, 2006 (p. 141).
 31. Defense of graduation theses in the Gevorkian Seminary, January 11, 2006 (p. 142).
 32. The Feast of Holy Nativity celebrated in the Church of Holy Virgin of Angeghakot, January 6, 2006 (p. 143).

News from the Armenian Patriarchate of Jerusalem

33. Feast of Saint Stepanos Protomartyr celebrated in the Armenian Patriarchate of Jerusalem, January 7, 2006 (p. 144).
 34. Visit of Chief Ashkenazi Rabbi to the Armenian Patriarchate of Jerusalem, January 22, 2006 (p. 145).

News from the Armenian Community of India

35. The Feast of Holy Nativity and Theophany in the Armenian Community of Calcutta, January 5, 2006 (p. 146).
 36. Celebration of the Divine Liturgy of Holy Nativity in St. Petros armenian Church in Bombay, January 8, 2006 (p. 147).
 37. Traditional Pilgrimage to the St. Hovhannes armenian Church in Chinsura, January 15, 2006 (p. 148).
 38. Celebration of the Day of the Indian Republic in the Philantropical Academy in Calcutta, January 26, 2006 (p. 149).

INTERECCLESIASTIC CONNECTIONS

39. **GAYANE ALEXANIAN** – Third meeting of the International Common Commission for Theological Dialogue between the Catholic Church and Ancient Oriental Orthodox Churches in Holy Etchmiadzin, January 27-30, 2006 (p. 150-153).

AUDIENCES IN THE MOTHER SEE

-
40. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gela Bezhuashvili, Minister of Foreign Affairs of Georgia, January 17, 2006 (p. 154).
 41. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Onno Elderenbos, Extraordinary and Plenipotentiary Ambassador of the Kingdom of Netherlands to Armenia, January 31, 2006 (p. 155).
 42. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January 2006 (p. 156).

**“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D’ETCHMIADZINE
(Janvier 2006)**

1. Message de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion de la Nativité et de la Fête de la Théophanie de Notre Seigneur Jésus-Christ, 6 janvier 2006 (p. 3-5).
2. Félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du Nouvel An, 31 décembre 2005 (p. 6).
3. Fêtes de Noël et de la Théophanie au Saint-Siège d’Etchmiadzine, 6 janvier 2006 (p. 7).
4. Lettres et télégrammes de félicitations échangés entre Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, et les Primats des Eglises sœurs, les chefs des Patriarcats de l’Eglise Arménienne et les personnalités officielles à l’occasion de la fête de la Sainte et Miraculeuse Nativité du Sauveur (p. 8-11).

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

5. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à Mme Séda Tirakian à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Grégoire l’Illuminateur», 5 janvier 2006, N° 335 (p. 12-13).
6. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Nerses Chnorhali» et messages de bénédiction) accordées par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne au mois de janvier 2006) – (p. 14).
7. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du Jour de l’Armée de la RA, 28 janvier 2006 (p. 15).
8. Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, au Saint Synode de l’Eglise Orthodoxe de la Tchéquie et de la Slovaquie à l’occasion du décès du Patriarche Nikolaï, Primat de l’Eglise Orthodoxe de la Tchéquie et de la Slovaquie, 31 janvier 2006 (p. 16).
9. Par ordre de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, le Père Garéguin Haroutunian a été défroqué, 31 janvier 2006 (p. 17).
10. Décès de Sa Sainteté Basilios Mar Thomas Mathéos II, Catholikos de l’Eglise Indienne de Malabar, 25 janvier 2006 (p. 18-19).
11. Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du décès de Sa Sainteté Basilios Mar Thomas Mathéos II, Catholikos de l’Eglise Indienne de Malabar, 28 janvier 2006 (p. 20).
12. Participation, au nom de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, de l’archimandrite Ochakan Gulgulian, Chef du Diocèse arménien d’Inde, aux obsèques de Sa Sainteté Basilios Mar Thomas Mathéos II, Catholikos de l’Eglise Indienne de Malabar, 28 janvier 2006 (p. 21).

SERMONS

13. Sermon prononcé par Son Eminence l'archevêque Nerses Pozapalian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe servie à l'occasion de la Nativité et de la Fête de la Théophanie, 5 janvier 2006 (p. 22-23).
14. Sermon prononcé par Son Eminence l'évêque Achot Mnatsakanian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe du vœu à l'occasion de son ordination comme évêque, 15 janvier 2006 (p. 24-27).
15. Sermon prononcé par Son Eminence l'évêque Armach Nalbandian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe du vœu à l'occasion de son ordination comme évêque, 22 janvier 2006 (p. 28-29).
16. Sermon prononcé par Son Eminence l'évêque Eznik Pétrossian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe, 29 janvier 2006 (p. 30-31).

ETUDE ECCLESIOLOGIQUE

17. **HACOB KEOSSEYAN** – L'Homélie «Sur le Mystère de la Résurrection» et son auteur (attribué à Hovhan Odznétsi) – (étude et texte) – (p. 32-44).

ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

18. **JAURES KHATCHATRIAN** – L'urbanisme à l'époque de Tigran II (sur la localisation de la capitale Tigranocerte, recherche) – (p. 45-54).
19. **NIURA HACOBIAN** – Interrelations culturelles arméno-sassanides (Ve-IXe siècles) d'après le matériel archéologique (recherche historique) – (p. 55-65).
20. **ARPENIK GHAZAROSSIAN** – Le scriptorium de Makénis – (recherche historique) – (p. 66-70).
21. **KARINE ARAKELIAN** – Le matériau spirituel de la langue de Mézarents (recherche philologique) – (p. 71-80).
22. **KARINE AVETIAN** – Les lettres du Catholicos Trdat Palian à Archak Alboyadjian (recherche historique) – (p. 81-91).
23. **SAMVEL A. POGHOSSIAN** – La fondation de l'UGAB et son fondateur et président (Poghos Noubar Pacha) – (recherche historique) – (p. 92-101).
24. **VARDAN GRIGORIAN** – Les manuscrits d'Etchmiadzine à Moscou (1915-1922) – (recherche historique) – (p. 102-103).
25. **PROTOPRETRE ARSENE SIMEONIANTS** – Les précieux manuscrits d'Etchmiadzine au cours de la Première Guerre mondiale (p. 104-113).
26. **DANIEL LE MUSICIEN** – La monodie, la polyphonie et la musique sacrée (recherche musicologique) – (p. 114-128).
27. **ASTGHIK GUEVORKIAN** – En souvenir de l'éminent arméniste Charles Dowsett (à l'occasion de son décès) – (p. 129-132).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

28. Ordination d'évêques au Saint-Siège d'Etchmiadzine, 15 janvier 2006 (Intervention de Sa Sainteté à cette occasion et biographies des évêques Achot Mnatsakanian et Armach

Nalbandian) – (p. 133-140).

29. La Sainte Messe du vœu de Son Eminence l'évêque Achot Mnatsakanian à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 15 janvier 2006 (p. 141).
30. La Sainte Messe du vœu de Son Eminence l'évêque Armach Nalbandian à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 22 janvier 2006 (p. 141).
31. Soutenance de thèses de fin d'études au Séminaire Guévorkian, 11 janvier 2006 (p. 142).
32. Fête de Noël à l'église de la Sainte-Vierge d'Anguéghakot, 6 janvier 2006 (p. 143).

Nouvelles du Patriarcat arménien de Jérusalem

33. Cérémonie au Patriarcat arménien de Jérusalem à la Fête de Saint Etienne Protomartyr, 7 janvier 2006 (p. 144).
34. Visite du Rabbin Achekénazi au Patriarcat arménien de Jérusalem, 22 janvier 2006 (p. 145).

Nouvelles du Diocèse arménien d'Inde

35. Fêtes de Noël et de la Théophanie dans la communauté arménienne de Calcutta, 5 janvier 2006 (p. 146).
36. Messe de Noël à l'église arménienne Saint-Pétros de Bombay, 8 janvier 2006 (p. 147).
37. Pèlerinage traditionnel à l'église arménienne Saint-Hovhannes de Chinsuari, 15 janvier 2006 (p. 148).
38. Le Jour de la République d'Inde au Séminaire Mardassirakan, 26 janvier 2006 (p. 149).

RELATIONS INTERECCLESIASTIQUES

39. **GAYANE ALEXANIAN** – Troisième rencontre de la Commission internationale commune pour le dialogue théologique entre l'Eglise Catholique et les Eglises Orthodoxes anciennes d'Orient à Saint-Etchmiadzine, 27-30 janvier 2006 (p. 150-153).

AUDIENCES AU SAINT-SIEGE

40. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Guéla Béjouachvili, Ministre des Affaires étrangères de la Géorgie, 17 janvier 2006 (p. 154).
41. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Onno Elderenbos, Ambassadeur Extraordinaire et Plénipotentiaire du Royaume des Pays-Bas en RA, 31 janvier 2006 (p. 155).
42. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois de janvier 2006 (p. 156).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով	6
Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	7 8

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սեդա Թիրաքյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	12
Հայրապետական գնահատություն	14
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը ՀՀ Բանակի օրվա առիթով	15
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Միստոփին՝ Չեխիայի և Սլովակիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Միտրոպոլիտ Նիկոլայի վախճանման առիթով	16
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալուծ է հռչակված Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը	17
Վախճանվեց Հնդիկ Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Մար Թոմա Մատթեոս Բ-ն	18
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հնդիկ Մալաբար Եկեղեցու գահակալ Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի վախճանման առիթով	20
Հնդկահայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանն Ամենայն Հայոց Հայրապետության անունից մասնակցեց Հնդիկ Մալաբար Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Բ-ի հուղարկավորությանը	21

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

- S. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Ծննդյան և Աստվածահայտնության Ճրագալույցին մատուցված Ս. Պատարագին 22
- S. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում եպիսկոպոս ձեռնադրվելու առիթով մատուցված ուխտի Ս. Պատարագին 24
- S. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում եպիսկոպոսական ձեռնադրության առիթով մատուցված ուխտի Ս. Պատարագին 28
- S. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին 30

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

- ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ** - «Ի խորհուրդ Նոր Կիրակեին» ճառը և նրա հեղինակը 32
- Ի խորհուրդ Նոր Կիրակեին 37

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ** - Քաղաքաշինությունը Տիգրան II-ի ժամանակ 45
- ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ** - Հայ-սասանյան մշակույթի փոխառնչություններ (V-IX դդ.) ըստ հնագիտական նյութերի 55
- ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ** - Մաքենիսի գրչության կենտրոնը 66
- ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ** - Մեծարենցյան խոսքի հոգևոր ատաղձը 71
- ԿԱՐԻՆԷ ԱԻԵՏԵԱՆ** - Տրդատ եպիսկոպոս Պալեանի նամակները Արշակ Ալպոյաճեանին 81
- ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ** - ՀԲԸՄ ստեղծումը և նրա հիմնադիր-նախագահը 92
- ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Էջմիածնի վանքի ձեռագրերը Մոսկվայում (1915-1922 թթ.) 102
- ԱՐՄԷՆ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ** - Էջմիածնի թանկարժեք ձեռագիրները Առաջին Մեծ Պատերազմի ընթացքին 104
- ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ** - Մոնոդիա, Պոլիֆոնիա և հոգևոր երաժշտությունը 114
- ԱՍՏԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - Խոսք՝ նվիրված արժանահիշատակ հայագետ Զարլգ Դաուսեթի հիշատակին 129

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	133
S. Աշոտ եպիսկոպոս Մնացականյան	137
S. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյան	139
S. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանի ուխտի Պատարագը Մայր Տաճարում	141
S. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի ուխտի Պատարագը Մայր Տաճարում	141
Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում ..	142
Ս. Ծննդյան տոնը Անգեղակոթի Ս. Աստվածածին եկեղեցում	143

Լուրեր Երուսաղեմի հայոց Պատրիարքությունից

Հանդիսություն Երուսաղեմի հայ Պատրիարքարանին մեջ Սուրբ Ստեփաննոս Նախավկայի տոնին առթիվ	144
Աշքենազի Ռաբունապետի այցելությունը Երուսաղեմի հայ Պատրիարքարան	145

Լուրեր Հնդկաստանի հայ համայնքից

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնը կալկաթահայ համայնքում	146
Սուրբ Ծննդյան Պատարագ Բոմբեյի Ս. Պետրոս հայկական եկեղեցում ..	147
Ավանդական ուխտագնացություն Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցի	148
Հնդկաստանի Հանրապետության օրը Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանում	149

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Կաթոլիկ եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնաժողովի երրորդ հանդիպումը	150
--	-----

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գաբեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի Արտաքին գործոց նախարարին	154
Գաբեզին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանին	155

Եկեղեցական բեմ. լուրեր	156
“Եչմիադզին” официальный журнал Эчмиадинского Католикосата	158
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	162
“Etchmiadzine” organe officiel du Saint- singed 'Etchmiadzine.....	166